7796

762

911.1
Д-43

BIBLIOTHÈQUE NUBAR
Nº
COTE III. 8. 3.
U.G.A.B

B

aej
18.8.39

12019

9111
Գ-43

# ՋԱՎԱ

## ԿԱՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱԿՂԶԻ
ԾՈՎՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱՑ՝ ՈՒՐ ՇԱՐԺԻ
ՀՈԼԱՆԴԱՑԻՈՑ ՏԷՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ ԶԿԸՂ-
ԶԵԱՑ ԵՒ ԶԲՆԱԿՉԱՑ՝ ԶՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ
ԵՒ ԶՎԱՐՈՒՑ ԱԶԳԱՑՆ. ԶԲՆԻԿ ԵՒ ԶՕՐԻ-
ՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ՝ ԵՒ ԶԱՅԼ ԵՒ
ԱՅԼ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆՑ.

ՀԱՄԱՌՕՏԻՒ ԱՌԵԱԼ ՅԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵՆԷ
ՀՆԴԿԱՑ ՀՈԼԱՆԴԱՑԻՈՑ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ Ի ՆԱ ԸԶ-
ՊԷՍՊԷՍ ՊԻՏԱՆԱՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՍ Ի ԶԱՆԱ-
ԶԱՆ ԳՐՈՑ, Ի ՀԱՒԱՏԱՐԻՄ ԼՐՈՑ ԵՒ ՅԱԿԱՆԱՏԵՍ
ԱՆՁԱՆՑ

Ի ԳԷՈՐԳԱՅ Ա. ԶԱՔԱՐԵԱՆՑ

ՅՕԳՈՒՏ ՄԻՐԵԼԻ ԱԶԳԻ ԻՒՐՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ
Ի ԿԱԼԿԱԹԱ
1852

70529 - ա.հ.

2004

1268-82

ԱՌ

# ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՄԱԶԳԻՍ ԻՄ

## ԲՆԱԿԵԱԼՍ Ի ՋԱՎԱ

### ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՔ ԻՄ

[illegible]

[illegible]

կղզին ՃԱՎԱ. և նշանաւոր եղելոյն յընթացս երեք և կէս դարուց.

Իսկ յերկրորդում՝ Աշխարհագրութիւն իմն տեղագրութեան ԲԱԹԱՎԻԱՅ և շանազան պիտանաւոր գիտելեաց ցնմանէ՝ բովանդակեալ յերեւան հարցափորձ.

Ի վերջոյ աղաչեմ. զի և դուք ընկալջիք զայս իբրև ընծայ փոքր զոր նուէր յաւելուածոյ իմոյ ի դադարմանց փոխարէն հատուցանեմ հպատակութեան յերաց. որ ընդ այնչափ երկար ժամանակ ածանի արարի իմ հայելեաց անձկեալ անարգ աչօք. Ամէն

ՍԻՐԵԼԻ ՀԱՄԱԶԳԻՔ ԻՄ

ՊԱՏՈՒԵԼՈՒԹԵԱՆ ՁԵՐՈՒՄ

Խոնարհ ծառայ

ԳԷՈՐԳ ԱԻԵՏԵԱՆ ՋԱՔԱՐԵԱՆՑ

Ի ԲԱԹԱՎԻԱ
1849 Յունիսի 18

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

## ԳԼՈՒԽ Ա

### Սահման և Տարածութիւն Թագաւորական Ծովային Արևելեան Հնդկաց.

Հոլանդացւոց իշխանութիւն յԱրևելեան Հնդկաստան՝ ձգի ի վերայ առաւելագոյն կղզեացն. որոց հարաւային արևելեան կողմն անկանի ի ցամաքն Ասիոյ. Հիւսիսային՝ և հիւսիսային արևմտեան կողմն ի Նոր Հոլանդա. յորս կայանան բազմաթիւ մեծ և փոքր կղզիք զանազան ազգաց.

Ըստ ոմանց՝ այս կղզիք անուանին Հնգերորդ մասն աշխարհի. և ըստ ոմանց՝ միայն արևելեան կղզիք. Բայց ստուգագոյն հայեցեալ՝ է սա մասն ինչ Ասիոյ միայն. որ ի Հոլանդացւոց յորջորջի Օոստինդիշը արշիպել *. այսինքն բազմակղզի ծով արևելեան Հնդկաց. Որոց

* Արշիպեղագոս.

միայն հիւսիսայինն՝ այսինքն Փիլիպպեան կղզիք են ընդ օտար իշխանութեամբ․ զի մասն ինչ իշխի ի Սպանիացւոց․ և մասն ինչ յանկախ տէրութեանց․ նաև ի տեղիս ինչ ի հարաւային կողմանս իշխէ ինքնագլուխ տէրութիւն Սօլօայ․

Հոլանդացւոց բազմակղզի ծով հնդկաց սահմանի ի հիւսիսոյ՝ ծովու Չինէացւոց․ Սօլօայ և մեծն ովկիանոսիւ․ Իսկ յարևելից՝ ովկիանոսիւ և ի Նոր Գուինէայ․ որոյ կէսն արևմտեան իշխի 'ի Հոլանդացւոց․ իսկ 'ի հարաւոյ՝ ծովու Նոր Հոլանդայ և ովկիանոսիւ հնդկաց․ այլ յարևմտից՝ նոյն ովկիանոսիւ հնդկաց։

Իսկ տարածութիւն իշխանութեան նոցա ձգի ընդ երկայնութիւն 'ի Գրինվիչայ յարևելս կոյս 'ի 95 երրորդ աստիճանէ մինչև ց141 երրորդ աստիճանն․ յոր պարունակի և բովանդակ Սումատրա։ Իսկ յեօթն աստիճանէ հիւսիսոյ մինչև ցինն աստիճան հարաւոյ ընդ լայնութիւն նորա։ երկայնութիւն նորա ձգի ի հիւսիսային ծայրէ Սումատրայ՝ մինչև ցնեղուցն Տօրէսայ․ որ է 920 մղոն․ և լայնութիւն նորա ի Բոռնէ կղզւոյ՝ մինչև ցԲալամբանգան․ որ է 330 մղոն։

Պատմիչն Ռաֆլայ պէսպէս վկայաբանութեամբ հաստատէ թէ՝ մեծամեծ կղզիքն ի մէջ բազմակղզի ծովու արևելեան հնդկաց՝ որպիսի են Սումատրա՝ Բօռնէօ՝ Ճաւա՝ Մակասար և այլն․ ի հնումն միաւորեալ էին ընդ ցամաքին

Ասիոյ. որք երկարաւոր ողողմամբ 'ի ջուրց՝ այժմ բաժանեալ են 'ի նմանէ. զորոյ մեք զանց արարաք յառաջ բերել աստ զվկայութիւնս. զի մի երկարեսցի առաջիկայ գործ մեր.

## ԳԼՈՒԽ Բ.

### Եղանակք Տարւոյ և Հողմք.

ԵՐԿՈՒ են եղանակ այսոցիկ կղզեաց 'ի բոլոր տարին. մի չոր, և միւսն՝ թոռ կամ անձրևային.

Արևելեան հողմն փչէ 'ի չոր եղանակի. և արևմտեանն՝ 'ի թոռ կամ յանձրևային եղանակի.

Հասարակաբար՝ չոր եղանակն սկսանի 'ի 15 Ապրիլ ամսոյ, և տևէ մինչև ց15 Նոյեմբերի. որ երբեմն գայ ագան. և երբեմն՝ անագան.

'Ի փոխել չոր եղանակին յանձրևայինն՝ յառաջեն փոթորիկք, որոտմունք և կայծակունք մինչև ցԴեկտեմբեր ամիս. յորում հաստատի արևմտեան հողմն. և իջանեն յորդ անձրևք.

Բայց 'ի տեղիս ինչ այլայլին այս եղանակք 'ի պատճառս յանդիմանակաց կղզեացն և շրջապատ լերանցն. որպէս 'ի Սումատրա յարևելեան և յարևմտեան կողմն անհաստատ է եղանակն. և յոյժ փոփոխական հողմն. զի 'ի թոռ եղանակի յոյժ սակաւ անձրևէ անդ՝ քան 'ի Ջ ամս. և 'ի չոր եղանակի բազում անգամ փչէ հիւսիսային

արեւելեան հողմն յոյժ սաստիկ՝ խառն ընդ յորդանձրեւոց ։ Նմանապէս 'ի Միջերկրեան կղզիս՝ յարեւելեան կողմն է անձրեւային եղանակ ․ եւ յարեւմտեան կողմն՝ չոր եղանակ ։

Բայց 'ի յայսց երկուց հաստատուն հողմոց՝ որք փչեն 'ի չոր եւ 'ի թաց եղանակի ․ են եւ այլ երկու կանոնաւոր հողմք ․ որք փչեն 'ի մէջ կղզեաց ։ Մին կոչի Ծովային՝ եւ միւսն՝ Ցամաքային ։

'Ի հիւսիսային եզերս Պալայ՝ մշտապէս ծովային հողմն սկսանի 'ի տասներորդ ժամու առաւօտեան , եւ տեւէ մինչեւ ցվեցերորդ ժամ երեկոյի, կամ ցմուտ արեւոյ ։ Իսկ ցամաքայինն սկսանի յութն ժամու երեկոյեան, եւ տեւէ մինչեւ ցութն ժամ առաւօտոյն ։ Ուր ուրեք եւ իցէ ․ ամենայն բեռնակիր նաւակք՝ որք թափեն կամ առնուն զբեռինս՝ կախեալ են յայս երկուց հողմոց ․ զի ցամաքային հողմովն խաղան 'ի ծով ․ եւ ծովային հողմովն դառնան 'ի ցամաք ։

Երբեմն 'ի չոր եղանակի՝ վասն սաստիկ ջերմութեան եւ եռացման հրաբուղխ լերանց՝ լինին գետնաշարժութիւնք ․ որք եւ բազում անգամ մեծ վնաս գործեն շինուածոց եւ տանց քաղաքաց 'ի զանազան տեղիս ։

## ԳԼՈՒԽ Գ.

### ԹԻՒ ԵՒ ԱԶԳՔ ԲՆԱԿՉԱՑ ։

Թիւ բնակչաց բազմախուռն կղզեացս՝ են աւելի քան երեսուն և չորս միլիոն հոգիք . յորոց երկոտասան միլիոնք կառավարին կամ իշխին ՚ի Հոլանդացւոց *. իսկ մնացեալքն են միայն հնազանդ կամ հպատակ նոցին տէրութեան ։

Բաց յԱրաբացւոց և ՚ի Չինէացւոց՝ որոց հայրենիք արտաքոյ են այսց կղզեաց , ազգք բնակչացն բաժանին ՚ի Մալայացիս՝ ՚ի Ճավացիս՝ ՚ի Սելեբեսացիս՝ ՚ի Մոլուկսեանս՝ ՚ի Սերամացիս՝ յԱլֆուրեանս՝ ՚ի Պապուացիս կամ ՚ի Խաբշիկս և Թիմուրացիս ։

ԱՐԱԲԱՑԻՔ՝ որք կարի սակաւ են թուօք , արտաքին տեսլեամբ և բնիկ զգեստիւք իւրեանց զանազանին ՚ի բոլոր ազգացն՝ որք բնակեն ՚ի սոյն կղզիս ։

Սոքա եկեալ են յԱրաբիոյ ՚ի մէջն չորեքտասաներորդ դարուն յառևտրութիւն՝ կամ ՚ի ծովահենութիւն . որոց սկիզբն բնակութեան

---

* Կարծեմք՝ Պատմիչն Ճավայ ոչ ուղիղ հաշիւ առնէ զթիւ մասին բնակչաց՝ որ ընդ կառավարութեամբ Հոլանդացւոց . քանզի Ճավա միայն՝ որ բոլորովին իշխի ՚ի նոցանէ , ըստ իւրոյ ազգահամարի ունի տասն միլիոն բնակիչս . իսկ ՚ի մնացեալ կղզեաց՝ յորոց ոմանք միանգամայն , ոմանք կիսով և ոմանք մասամբք ինչ կառավարին ՚ի նոցանէ , կարէ միայն երկու միլիոն լինել , թէ յոյժ բազմօք առաւել ։

եղև 'ի Գորէսի՝ որ 'ի Քաղա, մօտ 'ի Սուր-բայեա. Նոյն տեսանելով նոցա զդիւրահաւա-նութիւն և զմիամտութիւն բնակչացն՝ զուն գոր-ծեցին տարածանել 'ի նոսա զկրօն Մահմետին, և տիրել նոցա. որպէս 'ի սուղ ժամանակի յա-ջողեցաւ նոցա երկուքինն ևս. Զի տեսանեք 'ի նոցանէ համբաւեցին զինքեանս զօլ 'ի սերնդոցն Մահմետի, որք ոչ միայն ընկալան զգերապա-տիւ հոգևորական իշխանութիւնս, այլ զաշխար-հային տիրապետութիւն՝ զանձն կայսերութեան և թագաւորութեան ազգացն. որպէս մինչև ցայժմ իսկ գոն թագաւորք և իշխանք 'ի զանա-զան տեղիս 'ի սերնդոց նոցա.

ՉԻՆԱՑԻՔ՝ որք բազմութեամբ սփռեալ են 'ի բոլոր կղզիս, և են վաճառականք և զանա-զան արուեստաւորք. նաւաշէնք՝ ոսկերչք՝ վարձկանք՝ երկրագործք՝ հանքագործք և այլն, եկեալ են 'ի Գանտոնայ, 'ի Ֆոքինայ և յԱ-մուայ. և ուր շատ են՝ անդ առաւել ծաղկեալ տեսանի վաճառականութիւն և արուեստ. և գլխ-րին է գտանել զամենայն պիտոյս կենաց.

ՖՕԿԻՆԱՑԻՔ են բարեբնոյթք, խաղաղասէր և համառատուն բնակողք 'ի զանազան տեղիս. Գանտօնացիք՝ կռուասէրք են, և յոյժ խաղա-սէրք. որք 'ի միում գիշերի վատնեն զամենայն ինչս իւրեանց 'ի խաղս քուէից կամ թղթոց. Իսկ Ամուացիք են ծախուածականք, և հագեւ-

ուրեք անհնին դժուարատանն բնակութիւն . յարոց և բազումք պատահան 'ի Հայրենիս իւրեանց . յորժամ սաստկան զբաւականն ինչս վասն ապրանաց իւրեանց .

Այս ազգ որչափ և գովելի է վասն պիտանութեան և յաջողաձեռնութեանն՝ այնչափ և պարսաւելի է վասն խորամանկութեան և խաբեբայութեանն . զորս 'ի կիր առնուն յամենայն գործառնութիւնս իւրեանց . յատկապէս՝ ընդ մեծամեծ երկրականացն՝ որք և այնպէս միշտ խաբանօք կողոպտեալ լինին 'ի նոցանէ . քանզի 'ի չափս . 'ի կշիռս և յամենայն առ և առութիւնս իւրեանց չիք բնաւ ուղղութիւն և արդարութիւն ընդ ո և իցէ անձին . վասն զի դիտումն նոցա է հարստանալ միայն . այլ թէ որով . չէ փոյթ նոց .

ՄԱԼՌՅԱՑԻՔ . որ նշանակէ Թափառականք , որք յանուանց կարծին լինել 'ի րէ առապատկինք և ծովահէնք , ունին զբուն հայրենիս իւրեանց զՍումատրա՝ զՄալայա՝ և զմերձակայ կղզիս նոցա . բայց և սփռեալ են 'ի Ջաւա՝ 'ի Սունդա՝ 'ի Թիմոր՝ 'ի Բոռնէօ , և 'ի Մոլուկասեան կղզիսն :

Բազումք կարծեն թէ՝ 'ի հնումն Մալայացիք էին 'ի փառաւոր վիճակի քաղաքականութեան . և ամենայն տարբերութիւնք կղզեաց էին 'ի ձեռս նոցա . լսի 'ի զալ Արաբացւոց՝ ի

տարածանել զկրօնս իւրեանց. և 'ի համբաւել յիշխանութիւն՝ տիրեցին 'նաև տուրևառութեանց նոցա։ Եւ այս եղև առաջին նոր վիճակի նոցա. մինչ ապա 'ի գալ Եւրոպացւոց՝ իսպառ անկան 'ի յետնութիւն։

Այնչափ տեղիս սփռեալ և բնակաւորեալ. Մալայացիք՝ չեն ամենայնք և յամենայն ուրեք 'ի նոյն կենցաղավարութեան. և ոչ միապէս բնաւորեալք. Օի են՝ որք ունեալ, ուշիմ և ճարտարք. և են՝ որք անուս, բիրտ և յիմար. Բայց 'ի բնէ գոգցես ամենեքին են նենգաւորք՝ անհաւատարիմք՝ դիւրագրգիռք՝ նախանձայոյզք և քինախնդիրք. յաւակապէս 'ի նախանձ զուգիւր բազում անգամ բառնան զկեանս ըլկողին, կամ կասկածելոյն այնպէս։

Երկրագործութիւն, արուեստ և գիտութիւն չեն այնչափ ցանկալի նոցա, որչափ տուրևառութիւն, նաւարկութիւն և ծովահէնութիւն. որով երևի թէ՝ ազգս այս ըստ բուն զօրութեան անուան իւրոյ, առաւել սիրէ զթափառական կեանս, քան թէ զհաստատուն և հնազանդուն։

Տեղի ապաստանի ծովահէնն Մալայացւոց են ժայռապատ և նաւարկողաց անմատչելի փոքրիկ կղզիքն. յորոց 'ի պարապ ժամու՝ յորում խաղաղ է ծովն՝ կամ ընդդէմ հողմն, ելանեն բազմութեամբ բազմամարդի նաւակաց ոչ միայն 'ի վերայ երկրական կամ չինացի նաւուղաց,

այլև բազմիցս ի վերայ Եւրոպացի նաւարկողաց զորս ևթէ անպատրաստի գտանէն, յափշտակէին զնաւն և զինչսն. և զմարդիկն կամ գերէին, կամ սպանանէին, և կամ առեալ զփրկանս՝ արձակէին.

Այսպէս արարին և ընդ հայկազն նաւապետին Յովհաննիսի Գրիգորեան. որ մինչ 'ի 1837 յամսեանն Սեպտեմբերի յԱմպանանց Բալւոյ ելանէր առ Չինս, եղև զոհ անաստուածիցս. զի 'ի նեղուցն Բալի կղզւոյն հասեալ 'ի վերայ նորա երկուց ծովահէն նաւակաց՝ և գտեալ զնա յանպատրաստի, յափշտակեցին զնաւն, և գերեցին զբոլոր նաւաստիս. և զնաւապետն տարեալ 'ի ցամաք 'ի կղզի ինչ՝ և կապեալ զծառոյ՝ հրացանահար սպանին.

Թէ և ցաւալի համբաւ սոյն արկածոյ փութով տարածեցաւ 'ի Բալի, 'ի Թիմուրդէլի և 'ի Ջաւա. բայց ոչ ոք գտաւ իբրև ականատես վկայ 'ի հաստատել զզարհուրելի վախճան նաւապետին մինչև 'ի 1846 գտան երկուք 'ի նաւաստեաց նորա 'ի Սուրբայեա, յորոց հաստատեցաւ այն առաջի ատենի տեղւոյն. և վճռեցաւ հաստատութիւն մահուան նորա 'ի մեծի ատենին Բաթավիոյ.

Բնակիչք Սումատրա թէ և հասարակ անուամբ կոչին Մալայացիք՝ բայց բաժանին 'ի զանազան ցեղս. այսինքն 'ի Մալայացիս՝ յԱչինացիս՝ 'ի Բատտաս՝ 'ի Ունջանդէր՝ 'ի Լամբո-

նացիս՝ 'ի Պատլիս կամ՝ 'ի Հաջիս *, և 'ի վայրենաբնակս ․ որք են Օրանգ-Կոբու՝ Օրանգ Գուզու և Օրանգ Աբունգ ․ ամենեքեան զանազան յերկրաց ընտելեամբ ․ վարուք և ծխօք ։

'Ի մէջ սոցա Մալայացիք՝ Աչենացիք և Լամբունացիքն են երևելիքն ․ Մինանգկաբացիքն՝ բարեկրօնք ․ քաղաքավար և աշխատասէրք ․ որք սերունդք ասին լինել Ջավացւոց՝ կամ 'ի Հնդկացւոց ․ Իսկ Բատտացիք են կարի անուսք և վայրենաբնոյթք ․ յորոց և բազումք ուտեն զմիս մարդոյ ։ Պատլիք կամ Հաջիք՝ են պատուաւորք ․ խռովայոյզք և պատերազմասէրք ․ որք և բազմիցս յարուցին զաղմուկ ․ խռովութիւն և պատերազմունս ընդդէմ Հոլանդացւոց ․ բայց այժմ խաղաղ ընկճեալ են ։ Մինչև ցարդ իսկ գոն 'ի Սումատրա զանազան թագաւորութիւնք ․ յորոց ոմանք են ինքնագլուխ ․ որպէս Աչին՝ Սիակ՝ Կամպարջամբի ․ և 'ի ներքին վայրս Մինանգկաբու ․ և ոմանք ընդ պաշտպանութեամբ Հոլանդացւոց՝ որպէս Ինդրագիրի ․ Կլմանտան և այլք ․ Հպատակ Հոլանդացւոց ։

ՋԱՎԱՅԻՔ են երևելի ազգ մի 'ի մէջ բոլոր բնակչացն բազմակղզի ծովու արևելեան Հնդկաց ․ և համբաւեալ քան զայլսն քաղաքականու-

* Ուխտաւորքն 'ի Մաքքա ։

թեամբ. վարուք՝ ծխօք և աշխատասիրութբ՝ որոց սերունդ ասի լինել յազգաց Հնդկաստանեաւ։

Գիտութիւն և արուեստ չեն գլխովին անծանօթ 'ի նոցանէ և երկրագործութիւնն կարի ծաղկեալ է. տակաւին ծանր աշխատանաց։

Աղքատութիւն և ծուլացնութիւնք ասելի են նոցա. զի սիրեն յաւէտ զխաղաղ և զդիւր կեանս։

Հեռ. նախանձ և քինախնդրութիւն չեն այնպէս բնաւորեալք 'ի նոսա՝ որպէս 'ի Մալայացիս. սակայն և ծանր է նոցա տանել անարգանս։

Հայրենասէրք են յոյժ. և հաւատարիմ տեարց իւրեանց. հպատակք են իշխանաց. և հնազանդ ծնողաց։ Պատուեն զամուսնութիւնս նախնեաց իբրև զօրէնս սուրբս. և զգերեզմանս նոցա՝ իբրև զպաշտօնարանս։ Եւ այս վերջին էր. որ եղև պատճառ հնգամեայ ապստամբութեան բնակչացն Ջօկջօկարտայ՝ որ 'ի յարևելեան կողմն Ջաւայ։

Ի յամին 1823 մինչ տէրութիւնն կամէր անդ արքունի ճանապարհ հանանել. և գերեզմանք նախնեաց նոցին անկանէին զայնու գրաւթեամբ. իշխանք և մեծամեծք տեղւոյն բազում անգամ աղաչեցին զգործակալսն. փոխել զհետ ճանապարհին առ այլ կողմ՝ առանց վնասելոյ գերեզմանացն. այլ նա՝ ապախտ արար զխնդիրս նոցա. և կամէր միանգամայն աւերել

զտեղին ։ Սուտի չկարացեալ նոցա տանել այսպիսի անարգանաց՝ ի Յուլիսի 18 ապստամբեցան առ հասարակ ․ որոց գլուխ էր իշխանացն ԳՈՒԳՕՆԷԳՕՐՕ ։ Եւ այս կարի քաջ յաջողեցաւ նոցա ․ քանզի զայսու ժամանակաւ ամենայն զօրք և զօրապետք Գաղայ չուեալ էին 'ի պատերազմն Սակասարայ ․ վասնորոյ չկարացին առժամայն զդէմ ունել ապստամբողացն ․ որք արարին և զայլ բազում համախոհ իւրեանց ․ և հազարօք և բիւրաւորօք հասանէին յամենայն տեղիս ։ Հրով և սրով կործանէին զշէնս և զմարդիկ, և կողոպտէին զամենայն ինչս և զստացուածս նոցա ։

Մեծ էր առ երամա թիւն և արի նահետութի նոցա ընդ ամենայն տեղիս ։ Ամենայն երկերի քաղաքք՝ յառաջագոյն Սամարանդ և Սուրբաջէա էին 'ի ծայր կործանման վտանգի ․ յորս առհասարակ Քրիստոնեայք՝ 'ի մեծաց մինչև ցփոքունս ․ և 'ի ծերոց մինչև ցտղայս ․ զինուորեալ զցայգ և զցերեկ զգուշանային արշաւանաց նոցա ․ որոց 'ի ժամէ առ ժամ ակնկալեալ մնային ․ Մինչ յայսպիսի վիշտ տագնապի տարակուսեալ էինէին ամենեքեան՝ ձեռն Տեառն հասոյց յօգնութիւն զքաջ սպարապետն ՓԱՆԴԷՆ հանդերձ մեծհարիւր արամբք ․ որ առժամայն խաղաց յերկրամէջսն 'ի վերայ նոցա ․ կոտորեաց զբազումս 'ի նոցանէ , և զմնացեալսն ցիրեցան

արար յանտառս և 'ի լերինս . Ապա հասին և մնացորդ զօրք Մակասարայ՝ օգնական զօրք Մադուրայ և Սմնապայ , և զօրք 'ի Հոլանդայ . Կալան զամենայն առաջս ապստամբողաց . կատուցին յամենայն ուրեք զպատնէշս . և եղին զգունդս և զպահս 'ի պահպանութիւն ամենայն տեղեաց . մինչև 'ի 1830 ձեռբակալ եղեն Դիպօնէգօրօ և ամենայն համախոհք իւր . և ապա դադարեցաւ խռովութիւն և աւերածութիւն աշխարհին .

Թէպէտ այս խռովութիւն պատճառեաց մեծ վնաս և զկորուստ տէրութեանն . որոյ հետևանք եղեն աւերածութիւն բազում տեղեաց . արիւնահեղութիւն բիւրաւոր անձանց . վնաս եկամտից . և ծախք մեծագումար դրամոց . որոց ամենայնի առիթ էր մի միայն անխոհեմ պաշտօնատար մի . բայց և յետոյ շնորհեաց նոցա զմեծամեծ օգուտս . Քանզի միանգամայն ընդ բառնալ արկին զիշխանութիւն կայսեր Սօլօայ . և թագաւորութեան Դջօկջակարտայ . և տիրեցին զբոլոր կալուածս նոցա՝ և զմեծամեծաց նոցին . յորոց այժմ քաղեն զանբաւ արդիւնս . Խստիւ արգելեալ է ամենայն օտարաց՝ բնակութիւն առնել յերկրամիջի անդ .

'Ի վնասուց և 'ի կորստեանց ասոր՝ մասն և բաժին անկաւ մերոց հայկազուն բնակելոց 'ի Սամարանգ . զի երկուք 'ի նոցանէ՝ Խաչիկ

Աստուրեան Տէր Մարգարեանց, և Յակոբ Մարտիրոսեան. որք էին ժողովրդական նորակերթ հեծելազօրք, կորուսին զկեանս ծաղկափթիթ պատանեկութեան իւրեանց՝ 'ի սկիզբն ապստամբութեան՝ յառաջնում մարտի 'ի դաշտին Պեմակայ. որ է իբր և 32 մղոնօք հեռի 'ի Մամարանդայ. Եւ մեծ մասն ստացուածոց եղև մեծարու Պարոն Տովանփայ Յովհաննէսի Ամիրեանց՝ այժմ հանգուցելոյ. որ զայսու ժամանակաւ վարձեալ ունէր զմենավաճառութիւնն ափիոնի մինչև ցվերջ 1826 ամին. Որով՝ ոչ միայն զի խափանեցաւ վաճառ իւր 'ի խռովեալ տեղին՝ և 'ի շահուց զրկեցաւ, կորոյս զմեծ գումարի ափիոն, զխահփէ և զուտ դրամս 'ի հուր և յաւար ապստամբողաց, այլև տուժեաց յետոյ գհարկ նոյն տեղւոյն. զոր 'ի սկիզբանէ խռովութեանն մինչև ցաւարտ մենավաճառութեան իւրոյ չէր հատուցեալ, գոլով 930'000 Պիւլըր, որ է իբրև 310000 Սպանիոյ Մաչիլ՝ ըստ այժմեան հաշուի.

Սա 'ի գալ Ֆրանգէնին և 'ի խաղալ յերկրամէջն, մեծ առատասրտութիւն եցոյց տէրութեանն 'ի պարծանս հօյկազանց, բայց և շահեցաւ ոչ ինչ. զի առաքեաց զկնի նորա զարջառս՝ զոչխարս՝ զգոմէշ՝ զհաց՝ զգինի՝ զցքի, և բանջարեղէնս 'ի պաշար զօրաց նորա վասն միոյ շաբաթու.

Բուն Հայրենիք ազգին՝ է բազմամարդ, բազմարդիւն և ամենայն իրօք երևելի կղզին Ջաւավայ. որ գրեթէ թագուհի է բովանդակ կղզեաց արևելեան Հնդկաց։ 'Ի սոյին սերնդոց են նաև բնակիչքն Լուբօկայ, Բալեայ, և Լոմբօկայ. որպէս և ազգն Մատուրայ. բայց ամենայն իրօք յետնեալ 'ի Ջաւացւոց։

'Ի Հնումն՝ 'ի մէջ ազգիս էին կայսերք և թագաւորք, որք ոչ միայն իշխէին Ջաւայ՝ այլև հեռաւոր ազգաց 'ի Սումատրա, 'ի Բօրնէօ և յայլ զանազան տեղիս. այլ 'ի գալ Եւրոպացւոց՝ սակաւ առ սակաւ երասանակալ եղեալ 'ի նոցանէ՝ կորուսին իսպառ զիշխանութիւն իւրեանց։

Թ. Է. Եւ վերջին Պատմիչն Ջաւայ Հարևանցի գրէ զպատմենէ Եւրոպացւոց այսր. բայց զոր ինչ ստուգեալ իմ՛ եմ յայլ գրչաց՝ ոչ զանց արարից յիշել աստանօր։

Առաջինք յԵւրոպացւոց՝ որ մուտ արարին Ջաւա, էին Լուսիտանացիք՝ այսինքն Փորթուքէշք՝ յամին 1510 վասն շահավաճառութեան. որք և ընդ երկար ամս խաղաղութեամբ և առատաբար վայելէին զբերս սորա. զի ամ՛ յամէ հանէին աստի առ աշխարհ իւրեանց զվաճառս համեմից և այլոց արժանաւոր իրաց, և անտի տարեալ ընդ ամենայն տեղիս յԵւրոպիա, քաղէին մեծամեծ շահս։

Եւ մինչ այս տուրևառութիւն սոցա օրաւուր ծաղկէր, և գիտէին 'ի պարապ ժամու ընդարձակել այսր նաև զիշխանութիւն իւրեանց. Հոլանդացիք դադարեալ յութսուն ամեայ պատերազմէ իւրեանց ընդ Սպանիացւոց՝ և թափեալ զինքեանս 'ի լծոյ նոցա, անդէն և անդ ուղղեցին զառագաստս իւրեանց դէպ առ Ջաւա. ձգել յինքեանս զտուրևառութիւն Փորթուգէզաց. կամ միանգամայն՝ կամ մասամբ. Որոց եկեալ հասին 'ի Կայսերանիստ քաղաքն Բանթամ 'ի 1595. որ զայսու ժամանակաւ էր տեղի տուրևառութեան օտարաց. և ամենայն բերք աշխարհին էին 'ի մենավաճառութեան կայսեր. Գտին սոքա շնորհս առաջի կայսերն, և եղեն առաջինք քան զնախորդ Վաճառականս տեղւոյն. Իսկ Լուսիտանացիք զշարեալ ընդ այս նոր ճիւղ տուրևառութեան՝ պատրաստեցին զքառասուն պատերազմական նաւս, և առաքեցին 'ի Ջաւա, առ 'ի բառնալ խաղու զՀոլանդացիս անտի. բայց՝ այնինչ ժամանեալ նոցա 'ի նեղուցն Սունդայ 'ի 1601 հանդիպեցան հնգից նաւուց Հոլանդացւոց, պատերազմեալ պարտեցան. զի տասքն 'ի նոցանէ ջրասոյզք եղեն. հինգքն՝ ընդ օդս ցնդեցան. և մնացեալքն մազապուրծ փախեան յետս 'ի Փորթուգալ.

Այս յաղթութիւն Հոլանդացւոց երևելի արար զնոսա յաչս բանթամացւոց. որոց և յե-

տոյ զուն գործեալ՝ Հանրին անտի և զՄիացորդան փութեքեշաց, կալան զտեղի նոցա, Հաստատեցին զընկերութիւն մի Արևելեան Հնդկաց. և առնէին զշահավաճառութիւնս ընդ ամենայն եզերս նորա՝ և ընդ այլ կղզիս. Ապա՝ զկնի սակաւուց տիրեցին և Ջակատրայ, որ այժմ կոչի Բաթավիա, այն է մայրաքաղաքն Ջաւայ. և այնու հետև սկսան տարածանել զիշխանութիւն իւրեանց նաև յայլ և յայլ տեղիս 'ի Ջաւա՝ և 'ի կղզիսն.

Այս ընկերութիւն խաղաղութեամբ վայելէր զարդիւնս շահավաճառութեան իւրոյ. օրաւուր ծաղկեցուցանէր զտուրևառութիւն ամենայն տեղեաց. ամրացուցանէր զզօրութիւն իւր. և ընտելացուցանէր զազգսն քաղաքական օրինաց՝ մինչև ցվերջ ութն և տասն երրորդ դարուն, յորում Գաղղիացիք տիրեցին Հոլանդայ. ապա ընդ իշխանութեամբ նոցա էանց և Ջաւա՝ մինչև 1811. Իսկ յամին 1808 Կուսակալ կարգեցաւ այս կողմանց Ջեներալ Գանդելսն, այր քաջ և մեծահամբաւ յոյժ. Սա արար զբազում փոփոխութիւնս օրինաց, զկարգադրութիւն գործակալաց, զշինութիւն ճանապարհաց, զթափագնացութիւնս երկրամիջոց. և մեծ սաստ և երկիւղ էած 'ի վերայ կայսերաց և թագաւորաց. Բայց 'ի կոչել սորա յետս 'ի Փարէզ՝ 'ի 1811 և 'ի կարգել 'ի տեղի նորա Ջեներալ Ջանսէ-

նայ՝ որ էր ազգաւ Հոլանդացի․ իսկոյն Անգ-ղիացիք պաշարեցին զԲաթավիա․ և առանց դըժ-ուարութեան երեք տիրեցին Ճավայ․ զոր և ընդ իշխանութեամբ իւրեանց պահեցին մինչև յազատել Հոլանդացւոց ՚ի լծոյ Նաբոլէոնին․ ապա ՚ի 1816 առեալ զամենայն ծախս տարեալս յինքեանց, յանձնեցին վերստին զաշխարհն Հոլանդացւոց․ և յորէ այնուհետէ ոչ ևս իշխէ աստ Ընկերութիւն Արևելեան Հնդկաց, այլ թագաւորն Հոլանդացւոց՝ Պրինս Օրանժոյ, սկսեալ ՚ի Վիլեմոյ Առաջնոյ՝ մինչև ցայժմ․ որք առաւել ևս ընդարձակեցին զիշխանութի իւրեանց աստ՝ և յամենայն ուրեք ՚ի կղզիս արևելեան Հնդկաց․

Ազգս այս ունի և զանազան զբօսանս զուար-ճալի խաղուց ՚ի տօնի տարեկանաց, ՚ի դրան մե-ծամեծաց և ՚ի հրապարակս քաղաքին․ որք են ձիարշաւանք՝ մենամարտութիւնք՝ զինախաղու-թիւնք՝ և մարտ անասնոց և գազանաց․ այն է՝ գոմշոյ ընդ առիւծու՝ շանց ընդ խոզի․ և այլն․ զորս և կատարեն մեծաւ հանդիսիւ․

Ունին և զթէատրոնական խաղս նախնի առասպելեալ քաջաց իւրեանց․ զորս անուա-նեն դիւցազունս․ և ցուցանեն ստուերօք պատ-կերաց ՚ի յետուստ պաստառուց զշահատակու-թիւնս նոցա՝ հանդերձ ծիծաղաշարժ բանիւք․

Նաև ունին զպարաւոր կանայս․ զշիմակա-

խաղս՝ զուտակերպերկուս՝ գերգս՝ և զնոյն ագա-րանս ․ բայց կարի անախորժ են ձայնք և եղա-նակք նոցա ․ զորոց տատակելի թէ՝ եղանակ ե-րաժշտականաց առեալ է ՚ի ձայնէ գորտանց ։

Նուագարան նոցա կայանայ ՚ի բաղում մեծ և փոքր ․ կամ՚ ՚ի զիլ և ՚ի բամբաձայն պղնձեայ անօթոց ՚ի ձև կոնքոց կամ կաթսայից ․ ընդ որս են և մեծ տաշտ մի ․ փոքրիկ թմբուկ՝ եւ երկու-սրնարի ջութակ ինչ ։ Է և նուագարան ինչ՝ կազմեալ ՚ի մեծ և ՚ի փոքր՝ ՚ի նուրբ և ՚ի հաստ եղեգանց՝ Բամբայ կոչեցեալ ․ որ յարմարեալ է յեղանակաւոր ձայնս սաստիկ հնչման ։

Առաջին նուագարանն կոչի գամբլանգ ․ որ է մեծածախ յոյժ ․ զի ոմանց գին հասանէ մինչև ցհինգ կամ վեց հազար գիլդր ․ որ և հարկանի գնդաձայր գաւ ագանաւ ․ և ունի կարի աՀեղա-սասն ձայն՝ անըմբռնելի լսելեաց ։ Իսկ երկ-րորդն՝ կոչի անկլօնգ ․ որոյ ՚ի նուագել՝ ձեռամբ շարժեն ․ թէև ձայնն կարի միօրինակ է քան զառաջնոյն ․ բայց և ոչ տայ զհաճութիւն լսե-լեաց ։

ՍԵԼԷԲԷՍԱՑԻՔ են բնակիչքն Սելեբեսեան կղզեաց ․ զորոց ասեն՝ լինել ՚ի սերնդոց Մանգարացւոց՝ կամ ՚ի զանազան ազգացն՝ բնակելոց ՚ի բազմակղզի ծովու արևելեան Հնդկաց ։ Այլ ինքեանք համբաւեն զանձնէ զոլ ղեւցազունս ․ և տաստակելին զբազում ինչ ․ որք և առաջին

համարին զինքեանս 'ի բովանդակ ազգացն բնակերոց 'ի սոյն կղզիս. վասնորոյ և բնաւ չկարեն տանել ո և լիցէ անարգանաց միոյն ։

Այս ազգ բաժանի յերիս դասս, 'ի քաղաքայինն՝ 'ի լեռնայինն և 'ի ծովեզրայինն. յորոց առաջինն՝ կամ գլխաւորագոյնքն են Սակասարեանքն և Բոնէացիք՝ կամ Բուզիոք ։

Լեռնականք և ծովեզրականքն են կարի խաղաղասէր և աշխատասէրք. յորոց առաջինն աշխատի յերկրագործութիւն. և երկրորդն՝ 'ի ձկնորսութիւն, Այլ են ըստ ամենայնի հպատակ իշխանաց և գլխաւորաց իւրեանց՝ իբրև զստրուկս ։

Իսկ քաղաքայինքն ևս բաժանին յերիս դասս. յիշխանս, յիշխանազունս՝ կամ ազնուականս և 'ի հասարակս ։

Իշխանքն են, որք տիրեն՝ կամ կառավարեն զքաղաք՝ կամ զգաւառ ինչ. և կոչին 'ի նոսանէ ռաջաք ։ Իշխանազունք՝ կամ ազնուականքն են, որդիք կամ ընտանիք իշխանաց. որոց պարգևեալ է զկալուած ինչ՝ կամ զմի և զերկու գիւղ վասն ապրուստի իւրեանց. որք իշխեն 'ի վերայ նոցա. և վայելեն զեկս նոցին ։ Իսկ հասարակքն են վաճառականքն՝ արուեստաւորք՝ նաւաշէնք՝ և նաւավարքն, որք առնեն զբազմութիւն յոյժ, յատկապէս 'ի վաճառականաց դասն ։ 'Ի մէջ սոցա վաճառականքն են համեստ, ժրա-

ջան և մարդավար՝ վասն կենակցութեան իւ-
րեանց ընդ այլևայլ ազգս ։

Սոքա գլխովին բազմաթիւ նաւակօք առ զա-
նազան կղզիս 'ի շահավաճառութիւն , որպէս
այժմէ երթային բազմութեամբ նա և 'ի Սին-
կափուր ․ բայց այժմ կարծեմ՝ խափանեալ է
այս՝ կամ խափանելի ունիցի ․ քանզի Հոլանդա-
ցւոց տէրութիւնն 'ի 1847 ազատ և ապաւինքս
արար զՄակասար վասն օտարաց՝ և վասն ա-
մենայն վաճառաց ։

Մակասարեանքն և Բուգիսեանքն որչափ և
երևելի են 'ի մէջ Սելեբեսացւոց և տիրեն ըն-
նականացն և ծովեզրային բնակչացն , և են համ-
բաւեալք իբրև առաւել հմուտ քաղաքականու-
թեան և նախնի ծխից ․ սակայն և այնչափ են
բռնաւորք՝ անիրաւք՝ կողոպտիչք՝ քինախնդիր և
մարդասպան ․ յորս է և ծովահէնութիւն , սա-
պատակութիւն և գերեվարութիւն ։ 'Ի սոսա
կաշառօք սպանանի մարդ ․ և տուգանօք փրկի
սպանօղն ։

Գրական գիտութիւնն բնաւ անծանօթ է 'ի
նոսա ․ բայց են քաջ ձիավար և պատերազ-
մօղք ․ որք և կարի վարժ են 'ի զինաշարժութիւնս
և 'ի հրազինութիւնս ։

Երկու հզօրագոյն թագաւորք են 'ի մէջ ազ-
գիս ․ յորոց և կոչին Սուլթանք , մին է 'ի Մա-
կասար՝ 'ի հարաւային արևմտեան կողմն , և

միւսն՝ 'ի Բօնի յարեւելեան կողմն . Յառաջ իշխանութիւն երկուց թագաւորացս ընթանայր 'ի վերայ բոլոր Սելեբեսեան կղզեաց .

Սոքա բազմից յառաջ ցին ըղխռովութիւն ընդդէմ Հոլանդացւոց , յատկապէս Բօնէացիք , որոց վերջին խռովութիւնն պատահեաց 'ի 1825 և աւարտեցաւ յամսեանն Մարտի 'ի ձեռն ըս-պարապետին Վանգէնայ , որ 'ի մէջ երից ժամուց զամուրս և զամենայն պատնէշս նոցա փլատակ արար . զերեւելի քաղաքս նոցա մատնեաց 'ի հուր , եւ կործանեաց զանթիւ նաւս նոցա . այսպէս զիջան 'ի խաղաղութիւն , եդին ըղ-դաշն , և եղեն հպատակ Հոլանդացւոց . Այլ և մեծ հոգ տարաւ՝ և տանի դեռ տէրութիւնն՝ 'ի բաց բառնալ յազգէս զբռնութիւն՝ զմար-դասպանութիւն՝ զչերբեմորութիւն՝ և զայլ ամենայն անկարգութիւնս նոցա .

ՄՈԼՈՒԿԿՈՅԱՑԻՔ են բնակիչքն Թեռնատեան , Ամբոյնեան և Բանդայ կղզեաց .

'Ի զանազան տեղիս զանազանին յիրերաց բնութիւն և ձեւ ազգին . զի են՝ որք բարե-սիրտ , հլու և հաւատարիմք են իշխանաց իւրեանց , և են՝ որք փոփոխական , խռովարար և ապստամբք .

Դարձեալ են՝ որք աշխատասէր՝ համեստ ուղիղ և հիւրընկալք . և են՝ որք գործատեաց , նենգաւոր և խորթաբոյք՝ բայց սակաւ 'ի միջի

եօթն և տասներրորդ դարուն՝ յորում Հոլան-դացիք աճեցուցին զտունկս համեմանց, և չա-փաւոր գին հատին բերոցն. այլ եւս ոչ լինի խառնակութիւն և ապստամբութիւն. զի ամենե-քեան զբաղին յերկրագործութեան և 'ի տուրև-առութեան.

Գիտութիւն կամ արուեստ անծանօթ է 'ի նոսա.

Նախ քան զգալ Եւրոպացւոց չորս հզօր թագաւորք էին 'ի Մօլուկս. այսինքն՝ 'ի Թեռ-նատ՝ 'ի Թիտօր՝ 'ի Գիլօլօ՝ և 'ի Պաչան. որոց իշխանութիւն ձգէր մինչև 'ի մասն Սելե-բեսացւոց, Սերամացւոց և Խուրշեաց աշխար-հին. յորոց 'ի վեշտասաներրորդ դարուն Թեռնա-տեանն ամբարձաւ գահազլուխ ամենեցուն.

'Ի 1599 յորժամ Հոլանդացիք մտին առին այսր, արդէն Սպանիացիք 'ի Փիլիպպեան կղզ-եաց՝ և Փորթուգէզք 'ի Գոայ եկեալ՝ կա-լեալ ունէին զբազում տեղիս, որք պատերազ-մօք 'ի բաց վանեցան անտի. ուստի բոլորն՝ թէ հաս և թէ գաւ՝ ձեռաց Հոլանդացւոց.

Թէ և մինչև ցայժմ գոն աստ թագաւորք երկրակալնոց, բայց են հպատակք և դաշնա-գրեալք Հոլանդացւոց. որք առանց խորհրդոյ և հրամանի տէրունեան Պաշտօնատարին՝ ոչ անգամ, չկարեն առնել ինչ. և նախնի խիստ սովորութիւն տուգանաց, պատժոց՝ և բռնու-թեանց արգելեալ է.

ՍԻՐԱՄԱՑԻՔ են բնակիչք Սերամեան կղզեաց. որք են ի զանազան սերնդոց . այսինքն՝ 'ի Հոլամանհեայցւոց՝ յԱմբոնեան ազգաց՝ յԱմբուրեանց՝ և ի Մալայացւոց Մունդա կղզեաց. Այլ և են բազում գերիք 'ի Խաբշիկ , 'ի Բալիացի և 'ի Սումբաւայի ազգաց .

'Ի մէջ սոցա միայն Հոլամանհեայցիք են ազգ մի բարեխառն և խաղաղասէր . իսկ մնացեալքն՝ խռովարարք՝ ծովարարք՝ ծովահէնք՝ ապատակիչք և գլխահատք . զորոց ասեն թէ՝ ուրեք ուրեք ուտեն նաև զմիս մարդոյ . և ունին զվայրագասուն կեցութիւնս .

Գիտութիւն և արուեստ ոչ գոն 'ի նոսա . միայն յերկրամէջեան սակաւք 'ի նոցանէ գիտեն զերկրագործութիւն , զխաշոր կտաւագործութիւն և զհաստ երկաթագործութիւն . իսկ 'ի ծովեզերեան՝ զձկնորսութիւն և զնաւարկութիւն . 'Ի հնոց անտի ոչ էին թագաւորք ազգին . այլ ծերք և գիւղապետք կառավարէին զնոսա . յորոց և բազումք էին ընդ իշխանութեամբ թագաւորացըն Մոլուքասց . Իսկ այժմ կառավարին ընդ իշխանութեամբ գաւառապետացն Ամբոնայ և Բանտայ . Օրէնս և սովորութիւն նախնեաց իւրեանց պատուել 'ի նոսա իբրև զօրէնս սուրբ .

ԱՆՖՈՒՐԻԱՆՔՆ են առանձին ազգ մի՝ բնակեալք յերկրամէջեան արեւելեան կղզեաց . և ուրեք ուրեք 'ի Կառնատեան և յայլ կղզիսն .

որք և կեան կարի սուղ և աղքատիկ ։

Բնութիւն և արուեստ բնաւ անծանօթ է ՚ի նոսա ․ միայն աշխատին ՚ի սակաւ երկրագործութիւնս ։ Բնութիւն և վարք նոցա բնաւ զանազանք են ՚ի միւս ազգաց ։

Սոքա ատելին ՚ի ծովեզերեայ բնակչացն ․ որք են Մալայացիք՝ կամ Սելեբեսացիք ․ որոց բռնի կալեալ ունին զտեղեան՝ և իշխեն ՚ի վերայ նոցա ։

ԲՕՐՆԻԱՑԻՔ են բնակիչքն Բօրնէոյ կղզւոյն ․ որք են բնիկ և օտարեկք ։

Բուն բնակիչքն բաժանին ՚ի չորս՝ կամ ՚ի հինգ յատկացեալ ազգս կամ ցեղս ․ որք հասարակ անուամբ կոչին Դայեակք ։ Բայց դայեակ են միայն բնակիչքն արեւմտից՝ և մասին հիւսիսային արեւմտեան եզերցն ։ Եւ այնք՝ որք բնակեն ՚ի հիւսիսային արեւմուտս՝ և ՚ի հիւսիսային եզերս՝ կոչին Իդանք ․ որոց սերունդք են ՚ի Չինէացւոց ։ Իսկ որք բնակին յարեւելեան եզերսն՝ կոչին Տիդունք ․ և են ՚ի Սելեբեսացւոց ազգէն ։ Եւ որք բնակին ՚ի հարաւային կողմն՝ կոչին Բիջանք ․ որոց սերունդք են խառն ՚ի Ջաւացւոց և ՚ի Մալայացւոց ։ Այլ՝ որք բնակին ՚ի հարաւային եզերսն՝ կոչին Բանջարացիք՝ բնաւ զանազանք ՚ի միւսոցն ։

Արդ՝ բաց յայսցանէ՝ են և բազումք ՚ի Մալայացւոց՝ ՚ի Չինէացւոց՝ ՚ի Սօլօացւոց՝ ՚ի Բուգիսացւոց՝ և յայլոց ազգաց՝ իբրև 550·000

Թուով ք․ ընդ որոց են և սակաւ Մորաւացիք և Լուսատացիք․

Սերբք՝ այսչափ տարածեալ մարդիկ բնակեալ 'ի միում աշխարհի՝ ոչ միապէս ունին զբնութիւն․ զսովորութիւն և զկենաց կերպանց․

Օ՟ի որք բնակեն 'ի ներքին վայրսն և յանտառային տեղիսն՝ են միանգամայն վայրենիք․ բնաւ չգիտեն գործել, այլ՝ կեան բնական բերովք աշխարհին և որսեղինօք՝ յորս են և բազում մարդակերք և գլխահատք․

Գոյնակք և Խանջարացիքն են միայն պետանաւորքն 'ի մէջ երկրականաց, զի են աշխատասէր և բարեխառն բնութեամբ․ զբաղին յերկրագործութիւնս և 'ի պերճել զանդաստանս․

Կարի սիրելի են նոցա զբօսանք որսորդութեան, որ և 'ի մեծամեծաց կատարի երբեմն մեծաւ հանդիսիւ․ Նաև ունին զայլ և այլ զուարճալի խաղարկութիւնս, յորս հանդիպեցանեն զերգ, զքնար և զպարաւորս․

Մալայացիք՝ որք նստեալ 'ի Սումադրայ՝ 'ի Լինգայ՝ 'ի Բիոայ՝ և 'ի Ջօհօայ այսր՝ և արաբեալ զբնակութիւն կերպանց՝ ունին զնախկին չար բնութիւն և սովորութիւնս կերպանց․ զի են նենգաւոր, խաբեբայ և ծովահէնք․ յորոց սակաւք միայն զբաղին 'ի տուրևառութիւնս․

Ձինէացիք՝ որք են իբրև 200000 հոգիք, ըստ ամենայնի պահեն զսովորութիւն և զծէս

ազգի իւրեանց · գործեն ՚ի հանդէս ոսկւոյ ։ և տա-
նեն զտար ընտանութիւնս ։

Բուգիսք զանազանին ՚ի բոլոր ազգացն ընա-
կչաց ՚ի Բօրնէօ աշխատասիրութեամբ · չափա-
ւորութեամբ և համեստութեամբ · որք և զբա-
ղին ՚ի տուրևառութիւնս · ՚ի նաւարկութիւնս և
՚ի ձկնորսութիւնս ։

Իսկ Արաբացիք՝ որք են Թագաւորք՝ կամ
իշխանազունք · են բռնաւորք · պատուասէրք
և արծաթասէրք ։

Այս կղզի թէ և սա վեց և կէս անգամ մեծ է քան
զԳաղղիա · և յոյժ ճոխ ոսկւ · ադամանդեաւ
և այլ հանքայնօք · բայց կարի սակաւ է քան զնա
ընակչօք · բերովք և տուրևառութեամբ · որոց
առիթ են սպանութիւն · ծուլութիւն և բռնու-
թիւնն ։ Քանզի նախ՝ բազումք որս լինին
վայրագասուն ընակչացն · որք առաւելապէս
ելանեն յորս մարդոյ՝ քան անասնոյ · զի որով-
հետև մեծ պատիւ և նշան քաջութեան համա-
րին զգլխահատութիւնն ։ և նա է մեծ և երևելին
յազգի իւրում՝ որ հատեալ է՝ կամ ժառանգեալ
ունի ՚ի հայրենեաց զբազում գլուխս մարդոյ ·
որոց թիւ յոմանս հասանի մինչև ցհինգ հա-
րիւր հատ ։ Եւ որոց ամուսնանալ կամիցին ·
նախ՝ պարտ է ցուցանել զայս վայրենաբարոյ
արիութիւն՝ հատանելով զմի՝ կամ զերկու գը-
լուխս մարդոյ ։

Երկրորդ՝ բազումք սովորած մեռանելին վասն ծուլութեան և անբանութեան իւրեանց ։ Երրորդ՝ բազումք յափշտակելին ստամբք և ընչօք 'ի բռնաւորաց 'ի ստրկութիւն և 'ի ծառայութիւն յաւիտենական ։ Այս երեքինք են պատճառ յետնութեան և անշքութեան այն լայնատարած աշխարհի՝ մինչև ցարդ իսկ ։

Դաւացիք անդ 'ի դարուն հեթանոսութեան տարածեցին զիշխանութիւն իւրեանց նաև այսր՝ 'ի վերայ ծովեզերեայ բնակչացն ․ զորս բաժանեալ էին յեօթն կառավարութիւնս ըստ իշխանութեանն եօթն Դաւացի կառավարչաց կամ կուսակալաց ․ բայց 'ի գալ Մալայացւոց և Արաբացւոց՝ բարձաւ այս իշխանութիւն ․ և տիրեաց նոցա խառն տէրութիւն ընդ Արաբացւոց և եւրոպական մեծամեծաց ․ որ և յետոյ բաժանեցաւ յերիս հզօր կայսերութիւնս ․ այսինքն՝ 'ի Բօրնէօ Յատուկ ․ 'ի Սուկադանա և 'ի Բանջարմասինդ ․ յորոց ումանց իշխանութիւն ձգի մինչև ցներքին մայրն ։

Թէ և Եւրոպացիք 'ի զանազան ժամանակս մտին 'ի սա յետ այսր սակս տուրևառութեան ․ բայց անշահութիւն տեղեացն՝ և խարդախութիւն մեծամեծացն ․ որոց բազում անգամ կրեցին զնենգս և զթշնամանս ․ յետս կացոյց զնոսա ․ Այլ՝ 'ի վերջոյ 'ի 1816․ խնդրանօք ումանց մեծամեծաց կամ թագաւորաց՝ նեղեալ 'ի կայսերաց անտի ․

Հոլանդացիք մուտ արարին այսր . և կալեալ զբազում ծովեզերեայ տեղիս՝ Հաստատեցին զխաղաղութիւն իւրեանց ։ Ուր օր աւուր յառաջ ընթանայ իշխանութիւն նոցա , և անխրախութիւն և բնակալութիւն մեծամեծացն ընկճի ընդ օրինօք արդարութեան . և մարդասիրութիւն և ժրաջանութիւնն ծանօթանայ յամենայն վայրս , որոց տիրեն նոքա ։

ՊԱՏՈՒԱՑՈՒՔ կամ Խաբչիք ազգն են բնակիչքն ՝Նոր Գուինէայ՝ և նորին մերձակայ հիւսիսային և արևմտեան կղզեաց ։

Տուրեատութիւն խաբչիք գերեաց առաւելապէս լինի առ՝ յարևելեան կղզիս , որոց բնակիչքն անբան և անգութ գոլով՝ վաճառեն զմանկունս իւրեանց և զայլոց , զորս հնար է նոցա յափշտակել՝ առ ի լինել զգլխոյս իւրեանց ։

Գիտութիւն և արուեստ բնաւ անծանօթ է ի նոսա . միայն սակաւ ուրեք . և սակաւ անձինք գիտեն զերկրագործութիւն ։

Համբաւի են՝ թէ ուրեք ի ներքին վայրսն ուտեն զմիս մարդոյ ։ Այլ և՝ թէ բնակիչք արևմտեան ծովեզերեայ կարի նենգաւոր են . ուր եթէ պատահի՝ օտարականի ուրեմն ՚ի խնդիր ելանել այսր , յարձակին ՚ի վերայ , յայտնի կամ անյայտ . և սպանանեն զնա ։ Սոքա են ազգ մի զօրեղ՝ խռովայոյզ և պատերազմասէր . գերեն զիրեարս և զարևմտեան սերամացիս՝ և տարեալ

ուրեք վաճառեն , կամ ծառայացուցանեն զիւ-քեանց :

Երևելի տեղիք արևելեան կողմանցն են 'ի ձեռս Պօմարայեւոյ, Կամֆինայեւոյ և Սաջուանայեւոյ · որք են իշխօղք և մենավաճառք տեղեացն : Եւ հիւսիսային կողմունք և եղերքն են ընդ իշխանութեամբ Սուլթանին Տիդորայ , յորս պատուի և դրօշակ Հոլանտացւոց · իսկ մնացեալքն կառավարին՝ կամ իշխին 'ի ծերոց և 'ի գիւղապետաց :

ԹԻՄՈՒՐԱՑԻՔ են բնակիչքն Թիմուրեան կղզեաց · որք են բազմաթիւ մեծ և փոքր կղզիք · յորոց գլխաւորք և թագաւորանիստքն են Թիմուր՝ Ռօտի՝ Սօմբօ՝ կամ Սանդալվուդ · Ֆլօրիս՝ Սօլօր՝ Մակիսէր՝ Լէտէ Տըրանա՝ Պամպէր՝ Սամպավա՝ Լօմբօկ և Բալի :

Բնակիչք սոյն կղզեաց են 'ի զանազան սերնդոց · այսինքն 'ի Հնդկաց , 'ի Ճաւայեցւոց և յԱլֆուրեանց , Պարձեալ՝ 'ի Մոլուկացւոց խառնեալ ընդ իրերաց · նաև 'ի Մալայեցւոց և 'ի Չինէացւոց՝ խառնեալ ընդ Ալֆուրեանս :

Ըստ պէսպէս ազգացն՝ պէսպէս են և սովորութիւնք , ծէս և բնութիւնք · զի յարևմտեան կղզեան այրեն զդին մեռելոյ՝ ընդ նմին և զայրի նորա կենդանովին : Ուրեք սուրբ համարին զեղջերաւոր անասուն , և ուրեք ուտեն զնոսա : Ուրեք զարշին 'ի խոզենւոյ , և այլ ու-

րեք ունին զշուն՝ զկապիկ՝ չղջիկ՝ և այլն ։

Սոքա չեն այնչափ չարաբարոյ և խռովա-
կոյզ ․ որպէս նախայիշատակեալ ազգքն ․ թէ
եւ՝ է և ՚ի նոսա սովորութիւն գլխահատութեան,
բայց ունին զայն լոկ ընդ թշնամիս իւրեանց ։

Գիտութիւն և արուեստ բնաւ անծանօթ է
՚ի նոսա ․ միայն սակաւք գիտեն գործել զկաշիր
կոտաւս ․ զմետաղագործութիւն ՚ի զանգուածումն
կամ ՚ի զառումն ․ և բամբակագործութիւնս պէս-
պէս անօթոց ․ Գիտեն եւս զերկրագործութիւն ,
բայց չէ ծաղկեալ ։

Փոքրիկ կղզիքն կառավարին ՚ի ծերոց և ՚ի
գիւղապետաց ․ և մեծամեծքն ՚ի դատաւորաց ․
յորոց ոմանք են հզօրագոյն ․ Եւ ունին զեն-
քեանս ոչէր ամենեցուն , և ժառանգ ստացուած-
ոց ․ կնոջ և զաւակ առն հանգուցելոյ ․ և ոմանք
անկեալ ՚ի ներքոյ կամաց իշխանաւորաց՝ կամ
ժողովրդոց ․ որք առանց խորհրդոյ՝ կամ ընդու-
նելութեան նոցա չառնեն ինչ ։

Նախ քան զգալ Հոլանդացւոց այսր՝ ար-
դէն Փուրթուգէզք կալեալ էին զՍոլոր և զԹի-
մոր ․ և Հոլանդացիք բազմիցս ջանացան ՚ի բաց
վարել զնոսա անտի՝ և չկարացին ․ քանզի ոչ
կամէին մեծաւ զօրութեամբ յառնել ՚ի վերայ ․
որոյ օգուտն չարժէր ծախուցն ։ Եւ յատկապէս
զի՝ ամենայն զօրութիւն նոցա բարձեալ էր ՚ի
բազմակղզի ծովու Արշիպելան Հնդկաց ․ վան-

որոյ խապառ անփոյթ եղեն. և միայն ամրացուցին զեզերս ինչ ընդդէմ ծովահէնից՝ և գողօնի տուր և առութեան համեմաց Մոլոկասեան կղզեաց.

Այլ 'ի վերջ ութևտասներորդ դարուն՝ յառում օր աւուր նուազիւր կարողութիւն Ընկերութեան Արևելեան Հնդկաց, բարձան այս ամրութիւնք, և մնաց միայն Թիմոր յիշխանութեան նոցա. Ապա 'ի 1816 և 'ի 1817 յորժամ կրկին հաստատեցաւ իշխանութիւն Հոլանդացւոց 'ի բազմակղզի ծովու արևելեան Հնդկաց, արկին ընդ իշխանութեամբ իւրեանց և զբազում 'ի սոյն կղզեաց.

Թէ ևս մինչև ցարդ Փորթքէշք ունին ըզտեղի ինչ հիւսիսային Թիմորայ, բայց են յոյժ սակաւաթիւք՝ և բնաւ անզօրք.

'Ի Թիմոր այնչափ յոլովագոյք և թագաւորութիւնք՝ ընդ այնչափ ժամանակս ոչ էին առեալ զփոքր զօրութեան Եւրոպացւոց. այլ՝ այսր 'ի վերջումն 1846 ամին՝ 'ի փոքր մասնաւ Բալի Բելիլէնգն, որ է բազմամարդ կղզի ինչ 'ի Սունդա Նեղուցին.

Սա ոչ միայն սիրէր զանկախութի իւր, այլ և բնաւ ոչ կամէր խոնարհել բարձրագահութեան Հոլանդացւոց, վասնորոյ ապախտ արար զդաշինսն վասն բարեկարգութեանց ինչ, զորս նորոգ Կուսակալ ՌՈՒԽՍՈՆՆ պահանջել կամէր, և անարգանօք 'ի բաց վարձոյց զթուղթ նորա.

ուստի ծագեցաւ խռովութիւն եւ պատերազմ։ Բայց երից աւուրց պաշարմամբ ՚ի սակաւութիւ զօրաց Հոլանդացւոց՝ թափեցան ամենայն զօրութիւնք նոցա, և իջին ՚ի խաղաղութիւն. ընդունեցին զամենայն դաշինսն՝ ընդ նմին և զծախս պատերազմին։

Բայց ոչ անցին աւուրք բազում. յորում կրկին դարձաւ նա առ առաջին թշնամութիւնն, զի ոչ միայն չհատոյց զյանձնառեալ ծախս պատերազմին, և չպահեաց զդաշինսն կնքեալս ՚ի նորոյ, այլ և սպառնացաւ ՚ի պատերազմ։ Ուր պարտաւորեալ Հոլանդայեցւոց՝ կրկին յարեան ՚ի վերայ սակաւութիւ զօրօք և թեթև պատրաստութեամբ. բայց չորագլխու է̃ անհմուտ սպարապետին Փանդըրվէյկայ՝ (որոյ ոչ հայեցեալ զտեղին՝ կամ զժամանակն՝ կարի յոյժ շուտափոյթ յաղթող հանդիպանալ բաղձայր,) կորուսին ՚ի միում աւուր իբրև զչորս հարիւր զօրականս և զքանի մի երևելի զօրապետս, և կորագլուխ դարձան Ջաւա։

Արդ՝ այս կորուստ թէպէտ ՚ի խոր խոցեաց զկուսակալն. բայց վասն խռովութեան Եւրոպիոյ առ ժամանակ մի թոյլ ետ Բալի Բուլէլէնգայ պարծիլ ընդ այս պարտութիւն իւրոյ կողմանն, մինչև ՚ի պատեհ ժամու դարձուցէ զամենայն վրէժս ՚ի գլուխ նորա։ Ուր ահա եհաս ժամանակն, և պատրաստի ամենայն զօրութե̃

'ի գլուխ հարկանել նմա յամենայն Անգլիէ. որպէս բազմութիւն զօրաց՝ զինուց և պարենից գումարէ 'ի Մադրասիա, զի անտի հրամանատարութեամբ քաջամարտիկ Կօլօնէլ Միխէլ-սըն չուեսցին 'ի Բալի Յուսամէ՝ զի սա՝ որպէս 'ի բազում մրցմունս ընդդէմ բազմամբոխ և մարտախօղող Պիտարիականաց Սումատրայ յամենայնի յաղթող գտաւ. նաև սա սանձեաց ընդ դրօշակաւ Հոլանդացւոց զանհնազանդութիւն Բալիացւոցն՝ 'ի սատ և յերկիւղ մեծս բա բա-րոս ազգաց բնակչաց շուրջ զանդրութեամբս.

---

## ԳԼՈՒԽ Դ

### ԲԱԺԱՆՈՒՄՆ ԿՂԶԵԱՑ. ԸՆԴ ՆՄԻՆ Ն ՍԱՀՄԱՆ՝ ՉԱՓ Ն ԹԻՒ ԲՆԱԿՉԱՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՂԶԵԱՑ.

Որպէս 'ի վերոյ գրեալ ազգացն յայտ եղև, թէ այս բազմակղզի ծով արևելեան Հնդկաց բաժանի յութն սահմանս որ կղզիս. որք են Սումատրա՝ Ջավա՝ Սելեբէս՝ Սերամ՝ Բօրնէօ՝ Պապուասան՝ և Թիմոր. ընդ որոց են նաև Բալի և Բանքա.

ՋՍՈՒՄԱՏՐԱ յարևմտից և 'ի հիւսիսոյ սահմանէ ովկիանոսն Հնդկաց. յարևելից՝ նեղուցն Մալաքայ. ծովն Ջավայ, և Նեղուցն Բանկայ. իսկ 'ի հարաւոյ՝ Նեղուցն Սունդայ.

Երկայնութիւն նորա է 500 մղոն, և լայնու-

թիւն նորա 67 մղոն․ որ առնէ 10600 քառակուսի մղոնս ։ Բնակիչք նորա են եօթն միլիոն հոգիք ։ Ունի ընդ իւր մեծ և փոքր կղզիս 50․ որոց երևելագոյնն է ՚Նիասայ կղզին․ որ է 100 քառակուսի մղոն, և ունի 200000 հոգի բնակիչս ։

Սումատրա բաժանի յերիս իշխանութիւնս․ այսինքն՝ յանկախ տէրութիւն․ որք են Աչէն՝ Սիակ՝ Կամպար՝ և Ճամբի ։ ՚Ի պաշտպանութեան Հոլանդացւոց, որք են Ինդրագիրի և Կվանտան ։

Իսկ ՚ի հպատակութեան Հոլանդացւոց, որք և բաժանին ՚ի վեց կառավարութիւնս՝ կամ Գաւառապետութիւնս, այսինքն ՚ի Պադանգ՝ յերկրամէջն․ յԱյերբանգիս՝ ՚ի Բէնքուլէն՝ ՚ի Պալէմբանգ․ և ՚ի Լամպօնգ ։

ՃԱՎԱ յարևմտից սահմանէ ծովն Ճավայ․ ՚ի հիւսիսոյ՝ նեղուցն Մադուրայ․ յարևելից՝ նեղուցն Բալեայ, և ՚ի հարաւոյ՝ Ովկիանոսն Հնդկաց ։

Երկայնութիւն նորա յարևմտից յարևելս է 88 մղոն․ և լայնութիւն նորա՝ ուրեք է 15 և ուրեք 34 մղոն․ որ առնէ 4000 քառակուսի մղոն ։ Բնակիչք նորա են տասն միլիոն հոգիք․ և ունի ընդ իւր յաւելի քան զքառասուն մեծ և փոքր կղզիս․ որոց երևելին է կղզին Մադուրա, յորում գոն իբրև 525000 հոգի բնակիչք ։

Ճավա բաժանի 'ի քսան մ. ձ, և յերկու փոքրիկ կառավարութիւնս կամ գաւառապետութիւնս, այսինքն 'ի Բանտամ և 'ի Բաթավիա՝ ընդ որով է և փոքր կառավարութիւն Բօգօռայ կամ Բօյտէնզօրգայ. 'ի Կրավանգ. 'ի Չէրիբօն՝ 'ի Թէգալ՝ 'ի Պակալօնգան՝ 'ի Սամարանգ. 'ի Ճապարա՝ 'ի Ռամբանգ՝ 'ի Սուրբայեա՝ 'ի Պասուրվանգ 'ի Բեզուկի՝ 'ի Չիանջօր՝ կամ 'ի Պրեանգան, 'ի Բանյիւմաս՝ 'ի Ճօկջօկարտա՝ կամ Մատարամ. 'ի Սուրակարտա՝ կամ 'ի Սօլօ, ընդ որով է և փոքր կառավարութիւն Պաչիտան 'ի Մադիօն՝ և 'ի Կեդիրի.

ՃՍԵԼԵԲԵՍ յորեւմտից սահմանէ Նեղուցն Մակասարայ. 'ի հիւսիսոյ՝ ծովն Մոլուկայ և Սօլօայ՝ և նեղուցն Բուտօնայ. և 'ի հարաւոյ ծովն Ճավայ. Երկայնութիւն և լայնութիւն նորա բովանդակին իբրև 'ի 3400 քառակուսի մղոնս. և ունի հինգ միլիոն բնակիչս.

Սելեբես բաժանի յեօթն մ. ձ. մեծ տէրութիւնս, այսինքն՝ 'ի քաղաքապետութիւն՝ կամ 'ի փոխ կուսակալութիւն Մակասարայ, և 'ի նորին վերաբերեալ քաղաքն.

'Ի գաւառս՝ և 'ի քաղաքս Մանդահարայ. որք են ընդ իշխանութեամբ եօթն դաշնակից թագաւորաց.

'Ի դաշնադիր քաղաքն Գալօայ.

Յանկախ նահանգսն հիւսիսային կողման

Պալըստայ · յորս են Տօմբօ՝ Գօմպալիս՝ և Սա-վի քաղաքն ։

'Ի հպատակեալ տէրութիւնն Տօնտօլի ։

Յանկախ գաւառն Բուլուլ և Կատիբանդ · և 'ի տէրութիւնն Անդօսայ ։

Ընդ իշխանութեամբ քաղաքապետութեան Մակասարայ են հինգ փոքր կառավարութիւնք 'ի հիւսիսային և 'ի հարաւային կողմանս · որք են Բալէ · Կումբալ · Բօնտէն · Սալէր և Բիմա ։

ՄՈԼՈԿՈՍԵԱՆ կղզիքն բաժանին յերիս կառավարութիւնս · որք են Թեռնատա · Ամբոն և Բանդա ։

ԶԹեռնատա յարևմտից սահմանէ նեղուցն Մոլուկայ և Գրէհօնդայ · 'ի հիւսիսոյ՝ Սալիբաբու ծովն · յարևելից՝ անցքն Գիլօլօյ · և 'ի հարաւոյ՝ ծովն Սերամայ և Բուտօնայ ։

'Ի մէջ Թեռնատեան կղզեաց երևելիքն են Թեռնատ՝ Գիլօլօ՝ Ալմահերա՝ Մօրտայի՝ Թիդօր՝ Մարհէ՝ Մօտիր՝ Մակեան՝ Կայօ՝ Պաչան՝ Տավալի՝ Մանդօլանդ՝ Օբի և Սուլա · որք առնեն 880 քառակուսի մղոնս · որոց բնակիչք են 400000 հոգիք ։

Այս կողմն բաժանի 'ի Թեռնատ՝ 'ի Թիդօր՝ 'ի Պաչան՝ 'ի Գիլօլօ՝ 'ի Սուլայ կղզիս՝ 'ի Մակ-ջան՝ և 'ի Մօտիր ։

ԶԱմբոն յարևմտից սահմանէ Սելեբեսայ և Բուտօնայ ծովն · 'ի հիւսիսոյ՝ ծովն Սերի

կամ Սերամայ · յարեւելից՝ ծովն Բանդայ · եւ 'ի հարաւոյ՝ ծովն Մոլուկասայ · Սոյն նշանաւոր կղզիք են Ամբոն, եւ Ուլեասեան երեք կղզիքն. այսինքն Օմա՝ Հօնիմօա՝ եւ Նուսալաւտ · որք եւ անուանին մեխակեան կղզիք · եւ 'ի յարեւմտեան Սերամայ՝ մեծն Բուրօ՝ եւ Ամբլաւ · 'ի հարաւ եւ 'ի հիւսիսային արեւելս նորա՝ Մանիպա՝ Կէլանգ՝ Բօնօա եւ Բուվանգ · որք առնեն 360 քառակուսի մղոն, եւ ունին բնակիչս 165000 հոգիք ·

* Այս կղզին բաժանի յԱմբոն՝ յՈւլեասեան կղզիս՝ 'ի Բուրօ՝ 'ի Մանիպա եւ 'ի Կէլանգ ·

Բանդա առ յարեւմտեաւ իւր ունի զՌիհօն, առ հիւսիսային արեւելս՝ զԱյ · առ յարեւելս՝ փոքր հեռի զԳունունգ ապի (հրաբուղխ լեառն) եւ զՆէրա · առ հարաւ՝ զմեծն Բանդա՝ կամ Լօնթօր, եւ առ երի յարեւելից՝ զՌօսինգան · որ է 28 քառակուսի մղոն · եւ ունի 6000 հոգի բնակիչս · Սա բաժանի 'ի Նէրա, 'ի մեծն Բանդա՝ 'ի Այ՝ 'ի Ռիհօն՝ 'ի Ռօսինգան՝ եւ 'ի Գունունգապի ·

Սերամեան կղզիք բաժանին յարեւելակողմանն փոքրիկ եւ յարեւելեան եռագումար կղզիս ·

Յարեւելակողման փոքր կղզիս 'ի հարաւոյ սահմանէ ծովն Բանդայ, եւ 'ի հիւսիսոյ՝ ծովն Մոլուկասայ, որ է 750 քառակուսի մղոն, եւ ունի 624000 հոգի բնակիչս ·

Արեւելեան Եռագումար կղզիքն բաժանին ի Կէյ, յԱրու եւ ի Թիմորլաութ. եւ ընդ իւրա-քանչիւրովք են բազմութիւն փոքր կղզեաց. զորս ի յարեւմտից սահմանէ ծովն Բանդայ. 'ի հիւ-սիսոյ եւ յարեւելից՝ ծովն Պապուացւոց. եւ 'ի հարաւոյ՝ ծովն Նոր Հոլանդայ. որ է 600 քա-ռակուսի մղոն, եւ ունի երեք հարիւր հազար հոգի բնակիչս։

Բոլոր Սերամեան կղզիք բաժանին յեր-կուս. յորոց մեծամեծքն են 'ի ներքոյ իշխա-նութեան կառավարչին Ամբոնայ. եւ փոքունքն ընդ իշխանութեամբ կառավարչին Բանդայ։

Օ ԲՕՐՆԷՕ յարեւմտից սահմանէ ծովն Կա-րիմատայ եւ Չինէացւոց. 'ի հիւսիսոյ՝ ծովն Չինէացւոց եւ Սօլօյ. յարեւելից՝ ծովն Սօ-լօյ՝ կամ Սելեբեսայ եւ նեղուցն Մակասարայ. եւ 'ի հարաւոյ՝ ծովն Սունդայ՝ կամ Ջաւայ. որ է 25600 քառակուսի մղոն, եւ ունի վեց մի-լիոն հոգի բնակիչս։ Ընդ սովաւ են եւ իբրեւ 70 փոքր կղզիք. յորոց երեւելիքն են Կարիմատա եւ Սուբատոն։

Բօրնէօ բաժանի յանկախ եւ 'ի Հոլանդա-ցւոց հպատակ տէրութիւնս։

Անկախ տէրութիւնն բաժանի յերկս իշխա-նութիւնս, յորոց առաջինն է բոլոր հիւսի-սային արեւմտեան ծովեզերքն՝ մինչեւ 'ի սահ-մանագլուխ Մալուդուայ, յորս երեւելի քա-

ղաքքն են Բօրնիօ Յաւաւկ, Սօկա և Պա-տալ. որք են ընդ իշխանութեամբ Բօրնիոյ Սուլթանին.

Երկրորդն է Հիւսիսային և Հիւսիսային արև-ելեան ծովեզերքն՝ սկսեալ 'ի ծովահէն խորշէն մինչև ցՍուսանդ. յորս երևելի քաղաքքն են Սալուգու, Պատան և Սանդիգօրա, որք են ընդ իշխանութեամբ Սօլօայ կայսեր.

Եւ երրորդն է արևելեան եզեր գաւառքն, այսինքն են՝ Տիրօնգ, Բանջար՝ Բարօ՝ Կօտի՝ Պասիր՝ Պօգաստան՝ և Լաւօտալուլու. որք են ընդ իշխանութեամբ Մաջօրայցւոց և Սալա-յացւոց.

ՀՈԼԱՆԴԱՑԻՈՑ Հպատակ տէրութիւնն բա-ժանի յերկուս կառավարութիւնս. Մին՝ յա-րևմտեան ծովեզերն, և միւսն՝ 'ի հարաւային՝ և 'ի յարևելեան ծովեզերին՝ կամ Բանջար մա-սինգ. յորս են երկու մեծ՝ և մի փոքր գործակա-լութիւնք Հոլանդացւոց.

Յարևելեան ծովեզրն են տէրութիւնքն Սամ-բաս՝ Կոլակա՝ Սարիբա՝ և Սեգանդ. նաև Սամ-պավա՝ Պօնտիանակ՝ և Սուկադանա՝ հանդերձ ներքին գաւառօքն Սիխանդու ի՝ Սկադաւ՝ Լան-դակ՝ Սօնտարագօ՝ Տայեան՝ և Սինտանգ.

'Ի հարաւային և 'ի յարևելեան ծովեզերն են քաղաքքն Կօտարինգին, Պիլէյ՝ Լիլէյ՝ Կումէյ՝ Պամբօհան՝ Սամպիտ՝ և Սանդաւէ.

նաև գաւառքն՝ Տանալաւօտ՝ Միրանջան՝ և մեծ և փոքր Գուայեակք · ընդ որոց են և նեղքն նահանգն՝ Բկոմբէ՝ Կարրօլ՝ Միհունգ՝ Գուայու Լաւանդանգ՝ և Գուռսօն · Իսկ փոքրիկ տէրութիւնն Բմօտայի , Կունանդ և Բառուլիչինգ ։

ԶՊԱՊՈՒԱՍՏԱՆ՝ որ է Նոր Գուինէ , և զնորին մերձակայ կղզիսն յարևմտից սահմանեն անցքն Գիլոլոյ և ծովն Մերանիայ · յարևելից՝ արևելեան կողմն Նոր Գուինէայ · և 'ի հիւսիսոյ ծովն Պապուացւոց ։ Որ է 15000 քառակուսի մղոն · և ունի ութ հարիւր հազար հոգի բնակիչս · և իբրև 70 մեծ և փոքր կղզիս ։

Գլխաւոր տեղիք սորա , որպէս Բմիոցն Գը-բիւս , են 'ի ձեռս Հոլանդացւոց ։

ԹՈՒՄԱ և Բառնի , են 'ի ձեռս Գօմարացւոց և Կափրինացւոց ։

Օմի տէրութիւնն , և Գօրի և Սուաւակ են հպատակ Սուլթանին Թիտօրայ ։

ԶԹԻՄՈՒՐ ի հիւսիսոյ սահմանէ ծովն Սունդայ՝ կամ Բանդայ · յարևելից՝ և մասամբ 'ի հարաւոյ՝ ծովն Նոր Հոլանդայ · 'ի հարաւոյ՝ մեծն Ովկիանոս · և զարևմտեան կղզիսն Նեղուցն Բալայ · որ է 13540 քառակուսի մղոն · և ունի չորս միլիոն հոգի բնակիչս ։

Թիմուրեան կղզեք բաժանին յերիս մասունս · այսինքն՝ 'ի Կառավարութի Թիմուրայ · 'ի հարաւային արևելեան կղզիս , և 'ի Սունդա կղզիս ։

Ի կառավարութեան Թիմուրայ են Փլօրիս Բուսարաջա և Բուսայլինդուտի, Գուափէրօ և Բասսարդէ կղզիքն 'ի Հիւսիս. Տօվէր և Ա.-լօսս 'ի Հարաւ. Սանդալ վու դ և Սափօ կղզիքն Սաբրաօ՝ Օգինարօ՝ Բասսուրարի՝ Լօբլէմ՝ և կանաչ կղզիքն. Օմբէ՝ Կամբինգ՝ Թ. իմուր՝ Սմու՝ Տիօս մեծ և փոքր Բօտի՝ Գ.աւ, Գուանա և Սավլու կղզիքն.

Հարաւային արևելեան կղզիքն են իբրև թուով 28. այլ աննշանք.

Իսկ Սունդա կղզիքն են Բալի, Գ.իլիբօն և այծեման կղզիքն. Լօմբօկ՝ երկարեակ կղզին՝ Սումբավա՝ կամ Բիմա՝ Սաջու՝ Սելուգա՝ Գլաւ՝ Ս. էսլար. բազմաթիւ փոքրիկ կղզիք 'ի խորշս Տօմբօրօսոյ. Հրաբուղխ կղզին՝ Գ.իլիբանդէ՝ Սատտօսէ՝ Սինտուգու՝ և Կամարա փոքրիկ կղզիքն Գլիկ և Կօմօբօ.

Ի մէջ Սունդա կղզեացն երևելի է Բալի, որ բաժանի յեօթն թագաւորութիւնս. որոյ գլխաւորագոյն տեղիքն են՝ Բիլէլինգ՝ Ք.էմբանա՝ Կալունկօնգ՝ Բադօնգ՝ Բանգլի՝ կամ Տանա բալի՝ Ս.նջար՝ Սնգուլի՝ և Տամբօնան. և ունին 1160000 հոգի բնակիչս.

Օ.րիօ 'ի հիւսիսոյ սահմանէ նեղուցն Ս.ալայոյ և Սինկափուրայ. յարևելից ծովն Բօրնէոյ. 'ի հարաւոյ ծովն Բանկայ և Սումատրայ. և յարևմտից՝ կղզին Սումատրայ.

՚Ի սահմանամէջ սորուն են կղզիքն՝ Բին-տանգ՝ Կալանտ՝ Բատամ՝ Լինգայ՝ և այլ աննշան մերձակայ կղզիք ևս . որք են 300 քառակուսի մղոն . և ունին 135000 հոգի բնակիչս .

Այս կղզիք բաժանին ՚ի Լինգայ կղզիս .

ԶԲանկա ՚ի հիւսիսոյ սահմանէ Լինգայ և Կարիմատայ ծովս . յարևելից և ՚ի հարաւոյ ծովն Ջավայ . և յարևմտից նեղուցն Բանկայ . ընդ որում են և Բիլլիտօն և զանազան փոքրիկ կղզիք .

Բանկա է 1800 քառակուսի մղոն , և ունի 15000 հոգի բնակիչս . որք են ՚ի սերնդոց Մալայացւոց , և բաժանին ՚ի լեռնայինս՝ և ՚ի Միկասադ . յորոց առաջինք են երկրագործք և մետաղահանք . և երկրորդն՝ նաւակավարք .

Այս կղզիք բաժանին ՚ի Բանկա և ՚ի Բիլլիտօն . և Բանկա բաժանեալ է ՚ի զանազան գաւառս , այսինքն ՚ի Բլինջու՝ ՚ի Ջիբուս՝ ՚ի Մունդի՝ ՚ի Կլաբաւ և այլն . որոյ և մայրաքաղաքն է Մէնտօկ .

## ԳԼՈՒԽ Ե .

### ՈՐԱԿՈՒԹԻՒՆ ՕԴՈՅ .

ԹԷ և ես եղանակ տարւոյ գրեթէ ՚ի բովանդակ կղզեաց ծովու արևելեան Հնդկաց միապէս կատարի . սակայն օդն չէ այնպէս . քանզի՝ է տեղի՝ յորում առողջարար է օդն , և բարեխառն

ջերմութիւնն . և է տեղի՝ յորում անառողջ է մին , և տագնապիչ միւսն ,

՚Ի Սումատրա յարևելեան եզերսն՝ ուր են ցած և ճախճային տեղիք , և յատկապէս՝ ուր գոն անտառային վայրք՝ օդն է խոնաւ և շոգեխառն , վտանգաւոր և անառողջ : Իսկ յարևմտեան եզերսն՝ ուր երկիրն բարձր է , և ՚ի ջրշեղջ տեղեաց ազատ , անդ օդն է չոր և առողջարար , և ՚ի գիշերի փչէ հողմ զովարար :

Ըստ ել և էջ ջերմաչափ ստորիճանի ՚ի 24 ժամս զանազանի 16՝ և երբեմն 20 ստորիճանօք . յորում ցրտագոյնն իջանէ մինչ ց75՝ բարեխառնն ելանէ մինչ ց82՝ և ջերմագոյնն՝ մինչ ց95՝

՚Ի Ջավա ՚ի հիւսիսային եզերսն վասն ճախճային և ջրշեղջ տեղեացն օդն է շոգեխառն , խոնաւուտ և անառողջ . բայց 2 կամ 3 մղոնօք հեռի ՚ի ծովափանց՝ ուր գետինն բարձրանալ սկսանի , օդն է չոր և առողջարար . յատկապէս ՚ի ներքսագոյն տեղիս Հարաւահողման . որոյ գետինն որչափ հեռանայ ՚ի ծովափանց , այնչափ բարձրանայ . զի ՚ի քանի մղոն հեռաւորութեան հարիւրաւոր ոտ զանազանութիւն գտանի :

Յառաջ ժամանակաւ՝ համբաւ վատառողջութեան օդոյ Ջավայ՝ և յատկապէս Բաթավիոյ քստմնելի էր հեռաւորաց . մինչ անուանել զնա գերեզման օտարականաց . նաև և առասպելէին թէ՝ ՚ի հասանիլն օտարականի ումեմն ՚ի Նաւա-

հանդիստ սորա՝ առժամայն փորէին զգերեզ-մանն՝ և պատրաստէին զգաղտաղ նորա ։ Բայց ոչ յայնժամայնչափ դառնաշունչ էր օդն զգուշա-ցողոց , որպէս կարծէին՝ և ոչ այժմ՝ քաղ-ցրտաշունչ անզգոյշ կեցողաց · զորմէ անկասկած լիցին ։ Թ.էև այժմեան օդն յոյժ զանազան է ՚ի յառաջնոցն · զորոյ զպատճառն գրել ունիմք յերկրորդ մասին ՚ի յօդն Իթալիոյ , բայց և չէ պարտ խապառ անփոյթ կեալ ։

Աստիճանք ջերմաչափութեան ՚ի Իտալիա ։ որք կարէ օգ-տանուլ նաև ՚ի հերայ ազնուայն ենեայ ։

՚Ի ՏՈՎԵՋԵՐՍՆ՝ ՚ի Իթալիա՝ ՚ի Սամօրանդ · ՚ի Սուրբայնա՝ և յայլ տեղիս՝ յառաւօտուն և յերեկոյին է 74է ց76 · ՚ի միջօրէին 84է ց86 · և ՚ի ջերմ ժամանակի 90է ց95 ։

՚Ի Բօլինանզօրդ՝ ՚ի Սօլօտիկա՝ և յայլ քանի մի բարեխառն տեղիս՝ յառաւօտուն է 71 է ց74 ՚ի միջօրէին 83 · ց87է յերեկոյին 76է ց78 · և ՚ի մէջ գիշերին 73է ց76 ։

՚Ի կատար Պանգէրանգօ լերան՝ որ է ՚ի գաւառին Զինջօրայ , և է 9645 ոտ բարձր ՚ի ծովէն , յառաւօտեան 6 ժամուն է 45 · յինն ժամուն 54 · ՚ի միջօրէին 56 · յերեկոյեան երեք ժամուն 54 · վեց ժամուն 48 · և ինն ժամուն 46 ։ Ըստ զուաւ երբեմն և սառն ։

'Ի ՍԵԼԵԲԷՍ՝ վասն ընդ արձակ լայնութեան աշխարհին, և հեռաւորութեան լերանցն, որով ընդ ամենայն ուրեք անարգել փչէ հողմն ծովու և ցամաքի, չէ այնչափ ջերմ. և օդն է չոր և առողջարար։

'Ի Մոլուկեան կղզիսն՝ Թեռնատա ունի չոր և առողջարար օդ։ Սան մերձակայ փոքր կըղզեաց և լեռնային տեղեացն՝ ծովեզերքն են կարի ջերմ. բայց յերկրամէջսն՝ ուր բարձր է գետինն և պակաս 'ի լերանց, անդ յառաւօտուն, յերեկոյին և 'ի գիշերի ցուրտ է և բարեխառն։

Ամբոն վասն քարաժայռ դետնին ունի դժոր օդ՝ և գրեթէ առողջարար, Թէ և վասն բարձրութեան անդի այն՝ և լեռնային գոյոյ պարտ է լինել ջերմ. այլ ծովային հողմն մեղմէ զայն։

'Ի Բանդա բնական օդն է բարեխառն և առողջարար, բայց դետնաշարժութիւն, և շոգի և ծուխ հրաբուխ լերան նորա ապականէ զայն։

'Ի Սերամեան կղզիսն՝ ուր դետինն բարձր է և քարախիտ, յոր ծովային հողմն փչէ ազատ, անդ՝ օդն բարեխառն է և առողջարար. բայց 'ի ներքին վայրսն՝ ուր են ճախճայինն և ծծմբային տեղիք. անդ՝ օդն է խոնաւ, շոգխառն և անառողջ։

'Ի Բօրնէօ՝ որ թէ և անկեալ է 'ի ներքոյ հասարակածին, չէ այնչափ ջերմ. այլ 'ի ծովեզերսն՝ ուր Եւրոպացիք բնակին, վասն ցած

և Ճախճային գոլոյ՝ օդն է խոնաւ, շոգ խոնաւն և ջերմ. բայց որպէս փորձիւ գիտացին, ոչ է անառողջ ։

Պաղուասատան գոլով մերձ Հասարակածին՝ կարի ջերմ է. և վասն Ճախճային՝ ջրչիղջ և անտառային տեղեացն՝ օդն բազում ուրեք անառողջ է. միայն մերձ 'ի հիւսիսային եզերսն՝ ուր գետինն բարձր է և ազատ 'ի Ճախճեաց, անդ օդն է առողջարար, և ջերմութիւնն բարեխառն ։

'Ի Թախմուր բնական անառողջ է օդն՝ և ջերմութիւնն սաստիկ. բայց 'ի զանազան տեղիս՝ ուր գետինն բարձր է, և ծովային և ցամաքային հողմն ազատօրէն փչէ, անդ՝ առողջարար է օդն, և բարեխառն ջերմութիւնն ։

'Ի Բիօ՝ վասն ցածութեան գետնոյն, գետորէից՝ առուաց՝ և անտառաց՝ օդն է խոնաւ, շոգխառն և անառողջ. և չունելով ընդ արձակ փչումն ծովային հողմոց՝ ջերմ է ։

'Ի Բանկա՝ 'ի միջին վայրսն՝ վասն անտառախիտ տեղեացն, և 'ի ծովեզերսն՝ վասն ցածութեան գետնոյն՝ և Ճախճային գոլոյ, օդն է անառողջ, և ջերմութիւնն սաստիկ ։

## ԳԼՈՒԽ Ջ·

[illegible]

| ԱՄԻՍՔ | | Սկիզբն լուսանալոյ | | Ծագումն Արեւու | | Մուտ Արեւու | | Վերջ Նսեմանալոյ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաւօտեան | | Առաւօտեան | | Երեկոյեան | | Երեկոյեան | |
| | | Ժամ | Րոպէ | Ժամ | Րոպէ | Ժամ | Րոպէ | Ժամ | Րոպէ |
| ՅՈՒՆՎԱՐԻ | 20 | 4 | 33 | 5 | 50 | 6 | 10 | 7 | 27 |
| ՓԵՏՐՎԱՐԻ | 19 | 4 | 40 | 5 | 54 | 6 | 6 | 7 | 20 |
| ՄԱՐՏԻ | 21 | 4 | 48 | 6 | 0 | 6 | 0 | 7 | 12 |
| ԱՊՐԻԼԻ | 20 | 4 | 52 | 6 | 6 | 5 | 54 | 7 | 8 |
| ՄԱՅԻՍԻ | 21 | 4 | 53 | 6 | 10 | 5 | 50 | 7 | 7 |
| ՅՈՒՆԻՍԻ | 22 | 4 | 53 | 6 | 12 | 5 | 48 | 7 | 7 |
| ՅՈՒԼԻՍԻ | 23 | 4 | 53 | 6 | 10 | 5 | 50 | 7 | 7 |
| ՕԳՈՍՏՈՍԻ | 23 | 4 | 52 | 6 | 6 | 5 | 54 | 7 | 8 |
| ՍԵՊՏԵՄԲԵՐ | 23 | 4 | 48 | 6 | 0 | 6 | 0 | 7 | 12 |
| ՀՈԿՏԵՄԲԵՐ | 24 | 4 | 40 | 5 | 54 | 6 | 6 | 7 | 20 |
| ՆՈՅԵՄԲԵՐԻ | 22 | 4 | 33 | 5 | 50 | 6 | 10 | 7 | 27 |
| ԴԵԿՏԵՄԲԵՐ | 22 | 4 | 29 | 5 | 48 | 6 | 12 | 7 | 31 |

## ԳԼՈՒԽ Է.

### Ուսումն և Հաւատ Բնակչաց.

Թէ ուսումն և որքան սկիզբն էառ Եւրոպա-ցւոց գայ 'ի սոյն կղզիս արևելեան Հնդկաց. արդէն ծանուցաք 'ի գլուխն 5. յերես 15. այլ աստ ասասցուք թէ՝ որչափ են. քանզի ազգք են և զինչ կեան. Եւրոպացի բնակիչք և նոցին սերունդք 'ի հոլանդական կղզիսն՝ չեն աւելի քան 19000 հոգիք. յորոց իբրև 16000 հոգիք բնա-կին 'ի Ճաւա, և մնացեալքն յայլևայլ կղ-զիս. 'Ի սոցանէ իբրև 6000 հոգիք են արք, և մնացեալքն կանայք և մանկունք. Նաև 'ի սո-ցանէ իբրև 2900 հոգիք են մեծ և փոքր քա-ղաքային պաշտօնատարք. և մնացեալքն՝ վա-ճառականք՝ արուեստաւորք՝ գրագիրք՝ նաւա-վարք՝ և այլն. Թող զԵւրոպացի զօրս և զօրա-պետս. որք են իբրև 6000 հոգիք և երբեմն յա-ւելուն՝ կամ պակասին.

Թէ և ամենայն ազգաց Եւրոպացւոց գտա-նին աստ, բայց երևելագոյնքն և բազմաւորա-գոյնքն են նախ՝ Հոլանդացիք. երկրորդ՝ Գեր-մանացիք. երրորդ՝ Անգղիացիք և չորրորդ՝ Գաղղիացիք.

Հոլանդացիք են պաշտօնատարք. վաճառա-կանք և գրագիրք. նոյնպէս՝ են և Գերմանա-ցիք. յորոց ոմանք են և արուեստաւորք. Անգ-

Չինացիք են վաճառականք , նաւավարք և գրագիրք . իսկ Պուգինացիք՝ վաճառականք և արուեստաւորք : 'Ի թուին 1834 կարգեցան օրէնք , որ արգելու ամենայն նորեկ օտար ազգ Քրիստոնէից անցանել 'ի Բաթաւիոյ յայլ տեղիս 'ի Ճաւա՝ կամ յայլ կղզի ինչ յիշխանութեան Հոլանդացւոց՝ վասն տուր և առութեան կամ բնակելոյ անդ . բայց եթէ առաքեալ իցէ ոք վասն կարևոր գործոց ինչ , ոչ թոյլ տայ նմա յապաղել ուրեք աւելի քան զմի շաբաթ՝ և այս միայն 'ի ծովեզերեայ քաղաքսն : Քանզի երկրամէջն՝ միանգամայն արգելեալ է վասն օտարաց . վասնորոյ օր աւուր բազմանան Եւրոպացիք 'ի Բաթաւիա : Ոչ երկբայիմ՝ եթէ Ընթերցողն զայս գրուիս զարմանալ ունիցի ընդ սակաւութիւն բնակչաց Եւրոպացւոց . որք յետ երից և կէս դարուց յայնչափ կղզիսն և յայսչափ տարած տէրութեան չեն աւելի քան ըզտասն և ինն հազար ոգիս հանդերձ սերնդովք իւրեանց : Բայց երեք են գլխաւոր պատճառք սորա , զորս հարկաւոր համարիմ նշանակել այսր . առաջինքն նախ՝ զի մեծամեծ և շահաւոր տուրևառութիւնք բերոց գրաւեալ գոլով 'ի Տէրութենէ՝ Միացեալքն՝ որք մի ծանին , չեն բաւական բազմաձեւեան տուր և առուոյ 'ի լնուլ ըզպէտս նոցա . այնքան և այնչափ ծանր է մաքս վաճառուցն մտելոյ այսր , մինչ ոչ միայն մեծի

շահն, այլ և բազմիցս մեծ վնաս պատճառէ. վասնորոյ բազումք տուրևառութեամբ հազիւ աշխատեն զառօրեայ հաց իւրեանց:

Երկրորդ՝ խստագին արգելն վասն օտարականաց 'ի Բթավիոյ անցանել առ այլ տեղիս. որով և 'ի գալ ումեմն այսր՝ եթէ չիցէ որդէն միջակեալ 'ի գործ ինչ, չէ դիւրին նմա 'ի Բթավիա միայն գտանել զապրուստ իւր. որում պիտին նախ՝ յաւուրն հինգ գիլդր 'ի պէտս բնակարանի և ուտելեաց. 110 գիլդր վասն բնակագրի՝ հանդերձ երկու երաշխաւորօք, զորս գտանելն մեծ բան է. և ապա այլևայլ ծախք, որոց տոկալ անհնար է: Եւ նախքան զգտանել նորա զգործ ինչ՝ անկանի 'ի ներքոյ ծանր պարտուց, յորոց ազատիլ գուցէ դժուարին լիցի. կամ բնաւ ոչ յաջողեսցի: Եւ երրորդ՝ վատառողջութիւն ումանց տեղեաց՝ որ կարի հակառակ է չափազանց, զրդաւէր և անզգոյշ կեցողաց՝ յատկապէս բուն Եւրոպացւոց. յորոց բազումք անփորձ գոլով օդոյս՝ ոչ փոյթ տանեն վայելուչ կեցութեան. վասնորոյ կամ փութով զրաւին 'ի կենաց՝ կամ երկարատև հիւանդութեամբ զգլխովին ցաւագարին. որոց դեղ է կրկին դարձ առ հայրենիս իւրեանց: Բայց ասա՝ ո՞ւր մեր դարձ առ տեղի առողջութեան, որք ոչ հայրենիս ունիմք և ոչ մայրենիս, զի մին է ստրուկ և միւսն՝ գերի. Ճիշտ քննեալ զաո.ք աստ 'ի

տարեկան աղգահամարս Եւրոպացւոց միշտ մահն սաստկեալ քան զծննդն հարիւր յիսուն կամ երկերիւր թուօք. որոյ պակասութիւնն ըստ կամ յաւելու թիւ եկողացն յԵւրոպիոյ կամ յայլ տեղեաց. Եւ զայս զհաստատութենէ ասեմ. իսկ զզօրաց և զօրապետաց միայն զգայն այսր տեսանեմք, որք յամին հազարօք իջանին ՚ի ցամաքն Բաթավիոյ. բայց զգառանայն յաւէտ ՚ի տուն յաւ խտենից՝ քան կրկին ՚ի հայրենիս.

Թէ և ամենայն ուրեք և ամենեքեան՝ որոց պահպանել կամին զառողջութիւն իւրեանց, պարտին ընտրանօք կեալ և չափաւորութեամբ վայելել. բայց առաւել հարկաւոր է փոյթ տանել այնց տոտ ՚ի կղզիս արևելեան հնդկաց. յորս ջերմութիւն աւուրն և խոնաւութիւն գիշերոյ կարի վնասակար է անբարեխառն վայելողաց. յառակապէս չափազանց արբեցողաց. յորոց զբազումս տեսաք ծիւրական ախտիւ կամ որովայնալու ծութեամբ զրաւեալ ՚ի կենաց. կամ խելագարեալ և կամ անբժշկելի ցաւօք վնասեալ ՚ի կեանս.

Ընտրութիւն ոյժման ներհուն բժշկաց մեծ օգուտ համարի առողջութեան լոկ ցուրտ ջուրն՝ եթէ յըմպել և եթէ ՚ի լուանալ. քանզի ջերմ ըմպելիք՝ որպիսիք են օղի և այլ ըքանիւթք, սեն՝ բառնան զկարողութիւն ստամոքսաց, յաւելուն զմաղձ և զմաղաս, ուրոյ և ապականեն

չնչերակունք, և յառաջ գայ ախտ ծիւրական կամ ոյլ հիւանդութեան։ Իսկ գինին յաւելու զջերմութիւն արեան, ծախէ զհիւթ մարմնոյ և մաշէ զծուծ ոսկերաց, որով և բազմիցս պատճառի որովայնալուծութիւն արեան. զոր կարի դժուարին է առոտ ապաքինել։ Այլ ընդ հակառակն սորա ասեն՝ ցուրտ ջուրն կարողացուցանէ զըստամոքսն, բառնայ զջերմութիւն արեան և պնդէ զջիղսն, վառանոյ և մեծապէս օգնէ առողջութեան։ Բայց զարմանալին այն է. զի ունինք 'ի բժշկաց փոխանակ դեղոյ 'ի կիր առնուլ զցուրտ ջուրն 'ի բժշկել զհիւանդն. և այսպէս եղանակաւ։ Թէ և դեղ 'ի խելաց հեռի. բայց ականատես գոլով վկայեմք, որք զցաւ և զբեկումն ոսկերաց, զմէջս՝ զգլխացաւ՝ զաչացաւ՝ զհարբուխ՝ զջերմախտ՝ զյաւելուած մաղձի և մաղասի՝ և այլն՝ ջրով ցրտով բժշկեցին։

Աստ որ ուտէ 'ի կեալ՝ քաղէ զերկուս օգուտս. զերկարութիւն կենաց՝ և զառաւելութիւն ընչից. բայց որ կեայ յուտել, կորուսանէ զերկոսին ևս։

Ռ.ՋԳ. ՀԱՅՈՑ 'ի սկիզբն ութեւտասներորդ դարուն սկսան բնակութիւն առնել 'ի Պօլիս զործով առևտրութեան. որոց նախապէս սկզբ էր Իթալիա։ Առաջինքն եղեն Փորտոնայք Մարտան Գասպարեան և Մանուկ Յակոբջանեանն. որք կացեալ այսր 'ի բազում ամս՝

գործան ՚ի Մատրաս անուաւ Ճոխութեամբք ։ Յետ որոց եղև Պարոն Գէորգ Մանուկեան . որ եկաց մինչ ց1827, հանգեաւ ՚ի 63 ամաց հասակի . և եթող իբրև զերկու միլիոն գիլտըր ժառանգաց իւրոց ։

Սա էր այր մի ժրաջան և քաջ հմուտ վաճառականութեան ։ Յընկերական խօսակցութիւնս միշտ առակս որ և զուարճաբան ։ Ատելի էր նմա պճնումն . զարդարանք և նորաձևութիւն զգեստուց . յատկապէս՝ մեծածախ վայելչութի ։

Իւր ապա յետ սորա եղև Պարոն Յակոբ Յարութիւնեանն, որ եկաց մինչ ց1844 և հանգեաւ ՚ի 76 ամաց հասակի ։ Սա էր այր մի բարեխոհ, բարեկեցիկ և բարեկամասէր ։ Զծէս և զսովորութիւն նախնեաց մերոց սիրէր . և զզուանութիւն եկեղեցւոյ մերոյ պատուէր . որ և հաստատեաց զՄատուռն մի հայոց ՚ի Բթավիա ՚ի 1831 . և յորէ անտի սկսաւ միճակաւորել հայոց քահանայից ՚ի Ջաւա ։ Տէր հանգուսցէ զհոգի նորա յօթևանս արդարոց . որ այսպիսի հոգևոր բարեաց պատճառ եղև . և եթող մեզ վայելել զպտուղ հոգեշահ արդեանց իւրոց ։

Իսկ սա օրինօք եղբայր կամ քեռայր հանգուցեալ Պարոն Գէորգայ Մանուկեան . որ ձեռնտուութեամբ սորա կամ միջնորդիւ գտեալ էր օգնականութիւն ՚ի Տանէ Համբրեանց և կարգեալ բանակատար նոցա սա ՚ի Բթավիա՝

յայտնի բազմաշահ ժամանակի · յորում Կալկաթու և Մադրասայ ապրանքն աստ հասարակաց գործածելի էր · և գրեթէ հարիւրին հարիւր և երկերիւր շահ տայր · վասնորոյ և այնչափ հարստացաւ ։ Նաև սա յետոյ եղև միջնորդ աւարտման համարոց և բաժնից շահուց ստացեալ տանն ընդ Պարոն Գէորգայ · որ 'ի փոխարինութիւն այս ամենայն եղբայրասիրութեանն հրաւիրեալ էր նմա միայն հինգ հազար գիրշ ։ Բայց Տէր' որ ամենեցուն տայ ըզփոխարէն բարեաց բազմապատիկս ։ ոչ եթող զնա զուրկ և անվարձ · այլ յետ մահու նորա անակնունելի և անկարծելի իմն եղանակաւ լիութեամբ փոխարինեաց սմա ։ Օ ի առանց կամաց և գիտութե կտակագրողին կարգեցաւ տէր եւ ժառանգ երկուց բաժնից յերից անտի ստացուածոց հանգուցելոյն ։ Որոյ պատահածն էր այսպէս ։

Պարոն Գէորգ Մանուկեանն արարեալ էր կտակ, այլ չգիտեմ երբ · և զմին 'ի կտակակատարաց և ժառանգ միւսոյ ստացուածոցն կարգեալ էր եղբայր իւր զՊարոն Մելքում Մանուկեանն' որ 'ի Կալկաթա · իսկ վասն երկուց քերցըն ապահովեալ միայն զվաշխ միհարիւր և յիսուն հազար սքայ Ռուփիոց' 'ի վայելել ցորչափ կենդանի իցեն · բայց կտակակատար և ժառանգն եթող զաշխարհս ամաւ միով յառաջ քան զկտակագրողն ։ Ըստ արարեալ նորա զյաւել-

ուածս կամ կրկնակտակ՝ փոխեաց միայն զկտակարանութիւն եղբօրն՝ 'ի տեղի նորա կարգելով զՄէսկամն տեղւոյս · բայց զոչինչ փոփոխութի՛ արար ժառանգութեանն · զուցէ կարծելով թէ ժառանգութի՛ հօրն տալոց էր որդւոցն · և կամ որպէս բազմիցս ասէր · զուցէ հաստատել կամէր 'ի Լոռւոն զՀայոց Պալատուն մի անուամբ Մանուչարեանց · զոր կանխահաս մահն խափանեաց ։ Բայց զմնացեալ ստացուածն օրէնք տեղւոյս բաժանեաց յերիս · մին՝ եղբօրորդւոց և դստերացն · և երկուքն՝ երկուց քերց հանգուցելոյն · և այս երկուց բաժնից տէր կարգեցաւ Պարոն Յակոբ Յարութիւնեանն ։

'Ի ժամանակս Պարոն Գէորգայ Մանուկեան եղեն և ոմանք յազգէ մերմէ տուր և առողք · որք հետ զհետէ եկին և գնացին՝ ոչինչ օգտեալք յայնմ բարեբաղդ ժամանակէ · յորում շահավաճառութիւնն լեութէ ձեռնտոյր նոցա ։ Յորոց էին Ամիրջան Ոսկանեանն · Յարութիւն Զաքարեանն · Զատուր Աւետեանն՝ Ստեփաննոս Մկրտչեանն · և ընկերք Խաչիկ Զատուրեանն · Յակոբ Մկրտչեանն և Յորդանան Յովհաննիսեանն · որ ձախորդութեան դիպեալ չոքան ստոի առ այլ նշան ։

Յայսմ ժամանակի երևելի էր և մեծահամբաւ 'ի Սմարանդ՝ արժանաւոր այրն՝ Պարոն Յովսէփ Յովհաննէս Ամիրեանց՝ Ջուղայեցի ։

Սա ՚ի բազում ամս շրջեալ ՚ի Հնդիկս՝ ՚ի վերջոյ եկեալ էր այսր ՚ի Մանիլայ կարօտ օգնականութեան Պարոն Գէորգայ Մանուկեան. այլ յորժամ ծանեաւ զլեզու և զաշխարհն, ծանեաւ և զգուշն մեծամասն շահուց մենավաճառութեն ափիոնի. զոր վարձեալ ՚ի տէրութենէ՝ ամ յամէ ստանայր անտի զառատ բերս գանձուց. որով և այնչափ բազմացաւ ճոխութիւն նորա, մինչ զի միայն տուն և կարասիք տան նորա՝ զարդք տիկնոջն, կառք, երիվարք և ջորիքն արժէին անդր քան զհինգ հարիւր հազար գիլդրս. թող զմեծամեծ կալուածս, զերկս նաւս, զոսկիս և զարծաթիսն.

Գերիք նորա էին աւելի քան զութսուն՝ հաճոյնք ՚ի պիտանաւորաց և մեծագնոց. Երբեմն երեսուն Ջուղայեցի և Հայաստանցի հայազունք կախեալ էին ՚ի շնորհաց նորա. Եօթն էին սեղանք կերակրոց նորա աստ և անդ, յորս ամենայն օր՝ ուր չորս՝ և ուր հինգ ոգիք կերակրէին.

Բայց յետ թուոյն 1826 այս ամենայն փառք և յաջողութիւնք նորա սկսան խոնարհիլ. և կարկտեցին ՚ի վերայ նորա ձախորդութիւնք յամենայն կողմանց. որոց սկիզբն եղև ՚ի խռովութենէ Ջավայ, յորմէ ոչ միայն կրեաց զբազում վնասս, այլ և յետոյ տուժեաց զհարկ խըռովեալ տնդեայն ընդդէմ պաշին տէրութեան,

զորմէ և 'ի վեր անդր ծանուցաք *։ Այս թիւր խորհրդով բարեկամաց ենթող և զվարձումն մենավաճառութեան ափիոնի. ուստի կորոյս իսպառ զյաջողութիւն իւր։ Այլ և պարտեցաւ 'ի դատաստանի և տուժեաց զքանի մի մեծամեծ վէճս անիրաւ պահանջմանց. ծախեաց ամ՛ յամէ զանթիւ դրամս 'ի վերայ կալուածոյ իւրոց 'ի ձեռն անհմուտ վերակացուաց՝ և քաղեաց անտի զոչինչ։ Ընկան երկուք 'ի նաւուց նորա, և դժրբեցին նմա ամենայն փոխառուք նորա։ Այսպէս սպառեցան ամենայն դոյք նորա՝ ընդ նմին և կեանք իւր վշտօք և ծերական ախտիւ 'ի 1834

* Դաշն մի գնելոյ զմենավաճառութիւն ափիոնի էր այսպէս, զի եթէ ուրեք 'ի վարձեալ տեղիսն ծագեսցի խռովութիւն ինչ՝ մինչ արգելեալ լիցի վաճառումն ափիոնի՝ տէրութեան պարտականութիւն լիցի յաղդութիւն ածել զայն տեղիսն. և ցորչափ խռովութիւնն ևս է յայնս՝ վարձողն ափիոնի ազատ լիցի 'ի հարկաց. Զայսպիսի իրաւացի դաշն մի ունելով Պարոն Յովսէփայ ընդ տէրութեանն՝ յետ պահեալ զտասն և ութն ամսոց հարկ ապստամբելով դաւառացն. որ բովանդակէր 'ի վերայ յիշեալ գումար՝ իբրև հարիւր և երեսուն հազար գիլդրացն. Թէպէտ Կուսակալ Բարոն Ֆանդր Կապէլըն և խորհրդականք նորա յուսադրեալ էին ազատ կացուցանել զնա 'ի հատուցմանէ անտի. բայց 'ի գալ Կուսակալին Ֆ՛նրալ 'Պըրխուին ամենայն խոստմունք առաջնոցն առ ոչ ինչ գրեցան. զի փոխելով նորա զաչս և զականջս ընդդէմ զաշինն և իրաւանց՝ թէ ամբաստանան և թէ խիստ բանիւ էած զՊարոն Յովսէփն 'ի հաւանութիւն հատուցման. Որ թէև յետոյ շատ ջանացաւ. և մեծ գումար փողոյս ծախեաց՝ կրկին 'ի ձեռս բերել զայս կորուստ, բայց ընտարուս՛ առակն է թէ, "Որ ինչ եմուտ յարկղ Հոլանդացւոց՝ այլ ոչ տեսանէ զելս." ոչ ինչ շահեցաւ.

'ի հասակի 55 ամաց․ թողլով զամենայն սիրելիս իւր 'ի սուգ և 'ի դառն տրտմութեան ։ Աւստի յայնչափ ընչից նորա մնացին մի միայն կալուածքն, և այնք ես 'ի գրաւի․ զորս նորին խահեմ՝ անդրանիկ որդին Կուռնէլիոսն, և ժրագլուխ այրի ամուսին՝ այժմ հանգուցեալ * թափեցին յետոյ․ և պահեն մինչև ցարդ՝ տուեալ 'ի վարձու յիշեալ անդրանիկին ։

Սա 'ի բարեբաղդ վիճակի իւրում ոչ խնայեաց մատակարարել զբարիսն՝ որոց արժանացեալ էր՝ կարօտելոց առատաձեռնութեամբ․ և հաղորդել զվայելչութիւն բարօրութեան իւրոյ բազմաց առատատրութեամբ ։ Տուն նորա էր տեղի ապաստանի հայրենակցաց մերոց․ և սեղան նորա բաց վասն ամենայն քաղցելոց ։

Ոչ սակաւ ցաւ էր մեզ կորուսանել զայսպիսի գթասէր այր, որոյ նմանն հազիւ ուրեք գտա-

---

* Սա էր միամօր դուստր ազնուամիտ գերմանացւոյ՝ ծնեալ և սնեալ 'ի Սամարանդ․ ազնուաբարոյ, համեստ և նման առն իւրոյ գթասէր․ Որ մայրական ականք հայէր առ ամենեսին՝ որք էին 'ի խնամս առն իւրոյ․ Սա յայնչափ ձոխ և շքեղ հանդերձից և մեծագին և պատուական զարդուց միշտ զհասարակն և զոսկին զգենայր․ որ և յետ մահու առն իւրոյ վաճառեաց զամենայն ընտիրսն զարդուց իւրոց 'ի թափել զկալուածսն յապրուստ զաւակաց իւրոց․ Երանի առն՝ որում վիճակեալ է այսպիսի կին․ և երանի մանկանցն՝ որք ունին զայսպիսի խոհական մայր ։

նիւր յազգի մերում․ Յիշատակ նորա օրհնեալ եղիցի. և բարեխօսութիւն նորա գրեսցի ՚ի սիրտ և ՚ի միտս մեր ամենեցուն բարերարելոց ՚ի նմանէ՝ անմոռաց շնորհակալութեամբ մինչ ցյետին շունչ մեր ։

Արդ՝ այնքան անձինք յազգէ մերմէ՝ որք ՚ի խնամս նորա վայելէին զբարութիւն տան նորա․ կարծելով՝ թէ միշտ դարուն լինէր, եւ գեան յորդեալ դայր կարմիր խնձորօք․ զհետ եղեն միայն առժամանակեայ բերկրութեանցն․ որք իբրև զստուեր կամ՝ զերազ անցին փութով՝ թողեալ զամենեսին թափուր ձեռօք ՚ի խոր տրտմութիւնս և ՚ի հեծութիւն կորստեան ոսկեդարուն Յովսեփայ․ որ ոչ ևս դայ․ և ոչ տեսանէ ոք զայնպիսի բարեբաղդ օրեր, զորս մեք տեսաք և ոչ իմացաք զարժանաւորութիւնն ։

Եթող սա զչորս ուստերս և զհինգ դստերս, որք խնամօք Բարերարին կեան ողջ․ և խաղաղութեամբ վայելեն զբերս իւրեանց․ որոց յուսամք Տէր տացէ զշնորհս ողորմութեան իւրոյ․ լինել յիշատակ բարի արձանացուցանելով զանուն հօր իւրեանց յազգաց յազգս ։

Այժմ ազգ Հայոց ունեմք ՚ի ՋԱՎԱ՝ Ջուղայեցիք այր և կանայք և սերունդք նոցա՝ են իբրև 110 ոգիք․ յորոց քառասուն և երկուքն են այրք, ինն հայազգի և տասն Հոլանդացի հայուհիք․ իսկ Մնացեալքն օրիորդք

տղայք և մանկունք․ յորոց զնշանաւորսն յիշեսցուք զկնի․ այսինքն են՝

Ի ԲԹԼԻՍ

ԵՐԿՈՒԲԻՆ քորքն՝ Տիկին Մարիամ Յակոբ Յարութիւնեան և Օրիորդ Թագուհի Մանուկեանն՝ հռչակեալք գթասիրութեամբ յազգի մերում յամենայն ուրեք․ որք մայրական գթով բազմաց կարօտելոց խնամ տանեն․ և 'ի գործ ազգասիրական յամենայնի առաջաձեռն լինին․ զորս յուսամք Տէր պահեսցէ 'ի խնամս իւր՝ երկարելով զկեանս նոցա հանդերձ ամենայն բարեմասնութեամբ 'ի մխիթարութիւն ազգի մերոյ։

Ազգասէր Պարոն Գէորգ Զօրաբեան՝ ծանօթ բազմաց 'ի Հնդիկս։

Եւ վաճառականք՝ Պարոնայք Յովհաննէս Սէթ Մկրտչեանն և իւր եղբայր Յակոբն․ երկոքին եղբարք Գրիգոր և Բարսեղ Յովսէփեանք՝ այժմ 'ի Սիամ․ Յովհան Յարութիւնեանն․ Աղանուր Պետրոս Աղանուրեանց․ Մինաս Յովակիմեանն և գրիչ սորա։

Ի ԲԱՆԻԽՄԱՍ

ՎԱՃԱՌԱԿԱՆ՝ Պարոն Մարգար Մ․ Ճէհրիմանեանն․ և տէրութեան պաշտօնատար Պարոն Մկրտիչ Կարապետ Հայրապետեանն։

Ի ՍԱՄԱՐԱՆԳ

ԵՐԵՔԻՆ եղբարք Պարոնայք Պօղոս, Բարսեղ և Կարապետ Անդրէասեանք, որք ունին

զշուքարանոցս. և միջինն ունէ նաև զտուրևա-ռութիւն ընդ Ջաւա և Պարսկաստան.

Նաև Պարոն Կօռնիլիոս Յ. Ամիրխանն և եղբարք նորա հայրենի կալուածոց տեարք.

Ի ՃԱՊԱՐԱ

ՊԱՐՈՆ Մարգար Մուքիասեանն, որ ունի զկալուածս ինքեան և զտէրունեան շուքարա-նոցս. իսկ եղբայր նորին Պարոն Գաւրիթն վա-ճառական է.

Ի ՍՈՒՐԲԱՅԵԱ

ՊԱՐՈՆԱՅՔ Գաղար Յովհաննեան և Գա-լուստ Մարտիրոսեանն. որք ունին զշուքարա-նոցս. և առաջինն ունէ նաև զտուրևառութիւ ընդ Ջաւա և Պարսկաստան.

Ութն ամսօք յառաջ երևելի վաճառական էր աստ ևս Պարոն Մանուկ Արդանանեանն. որ վասն առողջութեան իւրոյ եթող զՋաւա. ևս պարապէր 'ի ձեռնապարհորդութիւնս Եւրոպի-ոյ. Այլ այժմ դարձեալ է անտի ողջամբ և բը-նակի 'ի Սուրբայես.*

* Թէ և ս ամենայն երախտագիտութեամբ պարտական եմ բոլոր մերազանց բնակելոց 'ի Ջաւա. բայց առաւել և ս նմա՝ որ ընդ մտերմութեանն եցոյց ինձ և զքրիստոնէական եղբայր-սիրութիւն. քանզի ոչ միայն սիրով հաճեցաւ արդեամբ իւ-րով 'ի լոյս ընծայել 'ի Վենետիկ զփոքրիկ Թարգմանութիւն իմ՝ կոչեցեալ Ցնծութիւն Մարդկային Կենաց, այլ և ըստ բանի Տեառն՝ որ ասէ, "Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո." վերագրեաց զայս ազգասէր բարեգործութիւն իւր յիմ անուն. որ բնաւ չէր այս դիտաւորն իմ.

Են և ՚ի Զերիբան, ՚ի Թագալ և ՚ի վեր յիշեալ տեղիսն քանի միանձինք յազգէ մերմէ, որք զբաղին ՚ի զանազան գործս՝ այսինքն՝ ՚ի տուրեւառութիւնս. ՚ի բեռնակրութիւնս և ՚ի յերկրագործութիւնս ։

Ոչ տեղեացս այնպէս վնասակար է առողջութեան մերազանց՝ որպէս և Եւրոպացւոց. այլ չափաւոր կենցաղավարութիւն նոցա յաղթէ վնասակարութեան օդոյն ։ Թէպէտ գրեթէ չիք ոք որ զկատարեալ առողջութիւն վայելէ յանձին, բայց և ՚ի վերն յիշատակեալ անձինքն են տասն քսան և երեսուն ամաց բնակիչք Պ. աղայ. որոց յուսամ՝ Տէր յաւելցէ զկեանս հանդերձ բարօրութեամբ և պայծառ արասցէ զանուն նոցա յազգս յազգս ։

## ԳԼՈՒԽ Ը.

### Բեէր.

՚Ի ՍՈՑՆ կղզեան՝ յամենայն ուրեք երկիրն է արգաւանդ և բազմաբեր, յորոց եթէ բնականաբար և եթէ մշակութեամբ ելանեն բազմատեսակ պտուղք եւ արմտիք յոյժ առատութեամբ ։ Իսկ եթէ յամենայն ՚ի կղզեաց ոչ գտանիցի այս ինչ որպէս ՚ի միւսում. կամ՝ պակասիցի առատութեամբ քան զայլ միւսոյն, պարտ է վերագրել զայն տանբանութիւն բնակչացն. որք կամ ծոյլ՝ կամ

անփոյթ գոլով՝ ոչ մշակեցին զերկիր իւրեանց ըստ պատշաճի ։ Այլ այժմ թէ ոյք են բերք կղզեացս՝ ասասցուք զկնի ։

ԳՏՈՒՂՔ

Լերինքք՝ զոր Սալայացիք հասարակ անուամբ կոչեն Ջուօկ ։ որոց բազումն են տեսակք ։ այսինքն՝ ջուօկ լիմաւն՝ — տիպիս՝ — տաամ՝ — մանիս՝ — ջպօն՝ — չինա՝ — բանթամ՝ — սամարանգ ։

Փամփուլմաս կամ ջուօկ բթավլի ։ որ է ազնիւ տեսակն ։ միսկին՝ — դլիմա՝ — պուուտ՝ — մաչան՝ սիտրուն ։

Թիլա՝ որ ասի Պիսան ։ որոց բազումն են տեսակք ։ այսինքն՝ պիսան մաս՝ ռաչա՝ ամբօն՝ ասէ՝ բատու՝ տանդուկ՝ մէրա՝ սուիրու՝ գօմբօր՝ և այլն ։

Ամբ՝ որ ասի Մանգա ։ որոյ ազնուագոյնքն են՝ մանգա կայըր՝ վանգին՝ սինգիր՝ տըօր՝ ռօռօլ՝ բնգալա՝ մառու՝ բապան ։ և այլ բազումք որք չեն ՚ի յարգի ։

Ջամբու՝ որոյ բազումն են տեսակք ։ այսինքն՝ ջամբու մալաբ՝ մանիս՝ պուտի՝ մէրա՝ իջօ՝ բօլ՝ բիջի՝ մանեա և այլն ։

Ռամբուտան՝ որոյ ազնուագոյն տեսակն են ռամբուտան աչէ՝ պապուա և մանիս ։

Մանգիստան՝ դուքու՝ լանսա՝ անանաս՝ նանքա՝ կամջակ ։ չպուա՝ սալակ՝ նանքահօյանդա՝ սիտաֆոււլ՝ բլիմբին՝ բլիմբին բուի ։ փնդրիա՝

գուրիան՝ փիփայեա՝ բուտսամ՝ սալՖիլա՝ Ջամ-բլան՝ Ջուտ՝ չիքօլատ՝ կլապա՝ կամ Նարգիլ՝ Նուշ՝ տապա՝ չամին՝ բինդարաչինա՝ կամ բեր․ սագու՝ սամ կամ ամբլի ։

Էն և խիար՝ ձմերուկ, Նաև սեխ 'ի Մ՚ադուրայ․ խաղող՝ Թուզ՝ տանձ՝ խնձոր՝ դեղձ եւ շլոր 'ի ցուրտ տեղիս ։

ԱՐՄՏԻՔ

Բրինձ՝ Խահվէ՝ Շաքար՝ Չայն Լեղակ՝ զանազան տեսակ ընդոց․ Բամբակ՝ Օ․խախտ․ Աղք՝ որք առատութեամբ ելանեն 'ի Ջաւա, այլ Բամբակն 'ի Սումատրա ես․ եւ Օ․խախտն՝ 'ի Թ․ռնատ ։ Ցորեան՝ ի սահմանին Սօ-լօայ՝ որ 'ի Ջաւա ։

Քաթ կամ Գամբիր՝ որ առատութեամբ ե-լանէ 'ի Րիօ, յամին իբրև 70·000 փիքուլ․ 'ի Պալէմբանգ ես, բայց սակաւ և ընտիր ։ Բենիամին կամ Բխօր՝ Քափուր՝ Ներկախէժ որք գտանին 'ի Սումատրա և 'ի Բօրնիօ ։

Մեղր՝ ուստի և մեղրամոմ, որ առատութբ ելանէ 'ի Թիմորայ ։ Պինանգ՝ կամ սփաւի, Սիրի՝ կամ փան, որէ տերև ինչ ծառաքելի յեր-կրականաց․ զոր ուտուն 'ի բերան ընդ քաթի, պինանգի և մեռեալ կրոյ ։

Սարանգ՝ որ է ծիծեռնաբոյն ինչ․ և գտանի 'ի Ջաւա և յայլ կղզիս ։ Երեք են տեսակք սորա ․ առաջինն արժէ փիքուլն 7000· երկրորդն

4500. և երրորդն՝ 2500 գիլդր. զոր շինեցիք գնեալ ագարակսն ի Չէյն ։ Հազարան՝ կամ րէնթ, որոյ ազնուագոյնն և առատն գտանի ի Բանջար-մասինգ՝ որ ՚ի Բօրնէօ ։ Արարուտ ՚ի Բօյտէն-զօրգ ։ Մուրցուրեան՝ կամ զուառ՝ յամենայն ուրեք առատութեամբ ։

Անդալ փայտ առատութեամբ գտանի ի Թի-մուրեան կղզին ։

Նարգիլ հասունացեալ՝ յորմէ հանի իւղ, առատութեամբ գտանի ՚ի Ջավա, ՚ի Սմնապ և ի Բալի ։

Գամամ՝ չոր խէժ ինչ, որ առատութեամբ գտանի ՚ի Լամպօնգ և յայլ տեղիս ի Սումատ-րա, զոր տանին յԵւրոպիա ։

Գամալաստիկ՝ առաձգական խէժ ինչ, որ առատութեամբ գտանի ի Բանթամ՝ որ ի Ջա-վա. նաև ի Լամպօնգ ։

Ատամն փղի ՚ի Սումատրա. և խեցի կրեայ ՚ի Սելեբեսեան կղզին. մետաքս՝ կանեփ՝ պըր-տու՝ ՚ի Ջավա ։

Գուլա Ջավա՝ որ է գուռ, զոր առնեն ՚ի հիւթոյ Արէնգի ծառոյ ։ Ցքի՝ հանեալ ի հիւ-թոյ շաքարի, օճառ ջուղի՝ և ձարպ կովու և գոմշոյ յոյժ առատութբ գտանին ի Ջավա ։

Այլև փայտք քարշեալ ՚ի գերան և ի տախ-տակս, զորս ՚ի կիրառնուն ի պէտս շինութեան նաւուց, տանց՝ կահից և կառաց, յորոց ազնուա-

ագոյնքն են Ջաւի եւ Սոնոյ · որք առատութեամբ գտանին 'ի Ջաւա :

Ամբոնեան փայտք · որք որոշին զանազան անուամբք , եւ են սպիտակ՝ դեղին՝ կարմրաշորթ եւ ծաղկէնկար · զորս կիրառնուն 'ի պէտս կահից :

ՀԱՄԵՄՈՒՆՔ

Ջաւզ՝ Ջախտարի կամ Ջաւզի ծաղիկ · եւ մեխակ · որք գտանին յԱմբոն՝ 'ի Բանդա՝ 'ի Թեռնատ եւ 'ի Բենկուլն :

Սպիտակ եւ սեւ Բիբար՝ առատ է 'ի Լամպօնգ · Չինդ բիբարն՝ որ Մալայերէն ասի Ջա-բէջաւա · դումուկոս՝ կամ պոչաւոր բիբար · կի-նամոն կամ դարչին , կոճապղպեղ կամ տաք կոճ եւ դեղին կոճ՝ զարդաչու կամ հալդի՝ 'ի Ջաւա :

ԲԱՆՋԱՐՔ

Կաղամբ՝ սոխապղին՝ բողկ՝ դդում՝ ձմերուկ՝ շաղգամ՝ բադրիջան՝ ծնեբեկ՝ աղցան՝ կամ թա-ռա , քինձիձ՝ կարօտ՝ ռեհան՝ փիփերմ՝ սոխ՝ խստոր՝ մաշ՝ անանուխ՝ բաղուկ՝ ալուքրա՝ զա-նազան տեսակ ոլոռք՝ կամ եամիք , Գանագաւ-չակ :

Քաչանտանայ՝ որ է գետնանուշ , յորմէ հա-նեն զձէթ առատութեամբ յոյժ՝ 'ի Ջաւա եւ 'ի Սիամ :

ԻՒՂՔ

ՆԱՐԳԻԼԻ՝ Քաչանի՝ զոր կիր առնուն 'ի ձի-թաձրագս · գանագաւչակի՝ զոր 'ի կիր առնուն

է

ի կոճկել զնաւակս, զտակառ և այլն ։

Մ՚ելանիկ՝ Գ. աւզի՝ Կայու պուստոյ՝ Մ՚ակասա-րայ՝ Կուշիլամանզի և Մաէլի՝ զորս կիր առնուն վասն ջերմ գեղորէից՝ ի շինել կամ յլմպել ։ Եւ Ամբոնեան իւղք անուշունք՝ զորս կիր առնուն վասն անուշահոտութեանցն ։

ԾԱՂԻԿՔ

ՀԱՐԻՒՐԱՒՈՐ են տեսակ ծաղկանց ՚ի Գ. աղա և յայլ երևելի տեղիս . յորոց միայն ազնուագոյնքն և հոտաւորքն են՝ վարդն՝ չմիակա-պուտի՝ Զմիակակունինգ՝ Մ՚լաթի՝ մարխամա-ծաղիկ՝ Տանջօն՝ Կնանդա՝ Կնանդաչինա՝ Զըմ-փակակօնդէ՝ Մ՚լաթխօկէ՝ Մ՚լաթխուսուն Մ՚աստարածաղիկ՝ փուշպակ ծաղիկ՝ Պլապ-րին՝ Կմինի՝ Բ՚մբանդլիլին՝ Կրակնասի՝ Պա-չար և այլն ։

ԾԱՌՔ

Գ ԱԹԻ՚որ է կաղնի կամ նոճի՝ Զմբակի՝ Եան-քի՝ Ամբի՝ Եարգլի՝ Պինանգի՝ Գուրխանի՝ Ա-րէնգի՝ Կ. րնգի՝ Բամբակի՝ Ասամի կամ Ամլու՝ Գարխանի կամ Գառչնի՝ Բաղամի՝ Սագուի՝ առատ ՚ի Մ՚ոլուքեան կղզին . Բամբու՝ յոյժ առատ յամենայն տեղիս , Բամբուսանի՝ Գ.ըն-դրիյ՝ Գուքուի՝ Մ՚անգխստանի՝ Բխօրի՝ Բա-փուրի՝ Մանգալի՝ Կալամբակի՝ որոյ փայտ ու-նի անոյշ հոտ . Երբէնոսի՝ Մօնօի՝ և այլ զանա-զան անտառային ծառոց , յորոց ոմանք ունին

զկարծր՝ և ոմանք զկակուղ փայտ․ և ոմանք ըղթունաւոր հիւթ՝ զպտուղ կամ զարմատ ։*

ԱՆԱՍՈՒՆՔ ԵՒ ԳԱԶԱՆՔ

Կով՝ զոմէշ՝ ոչխար՝ այծ՝ խոզ՝ ձի՝ որոյ ընտիրն գտանի 'ի Մակասար՝ 'ի Թիմուր՝ 'ի Բիմա՝ և 'ի Սանդլվուդ ։

Փիղ՝ խոզափիղ՝ գետաձի, որք գտանին միայն 'ի Սումատրա ։

Ընդեղջիւր՝ առիւծ՝ վագր՝ ընձառիւծ՝ ընտանի և վայրի շուն և կատու՝ կապիկ բազմատեսակ ։

Օրանգուտանգ՝ յուլազ՝ արջ, որք գտանին 'ի Բօրնիօ ։

Մշկակատու՝ մշկամուկն՝ մրջիւնակեր կամ յարալէզ, վայրի զոմէշ՝ կինճ՝ այծեմունք՝

* 'Ի մէջ թունաւոր ծառոց առաւել զօրաւորն է Ուպաս կամ Անչարն անուամբ և բարձր ծառ մի, որ առատութեամբ գտանի յանտառս Բղուկոյ՝ որ 'ի Ճաւա ։ Հիւթ սորա կամ խէժ խառնեալ ընդ այլ դդալուղթիւն ինչ 'ի անկոյ՝ լինի կարի զօրաւոր թոյն ինչ, որ յայժ փութով մեռանէ զթունաւորեալն, որպէս փորձիւ ծանեան 'ի կատու և 'ի զոմէշ ։ Յորոց առաջինն եկաց ցհնգետասան րոպէս, և վերջինն՝ յերկոտասան ժամս և 'ի տասն րոպէս ։ Զրայմանէ առասպելին թէ ոչ ինչ տունկ կամ բոյս աճիլ կարէ 'ի ներքոյ կամ 'ի շրջակայ վայրս նորա մինչև ցյայժ հեռաւոր տեղիս և ոչ անասուն կամ մարդ կարէ մերձենալ 'ի նա, զի թունաւորեալք 'ի մահ լուծանին․ մինչ զի չիք անտառ ինչ 'ի Ճաւա, յորում ոչ գտանիցի այս տունկ և ոչ ուրեք անտառ է այնպէս բազմածառ՝ որպէս առ 'ի Բղուկի, որում յայժ առատ է այս տունկ ։

Նապաստակ՝ Ճագար՝ կոկորդիլոս , պէսպէս մողէսք՝ մուկն՝ մկնաքիս՝ մեծ եւ փոքր օձք ,

ԹՌՉՈՒՆՔ

ԸՆՏԱՆԻ , վայրի և ջրային հաւք՝ աղաւնի, ընտանի և վայրի բադ՝ սագ՝ լորամարգի՝ ձկնկուլ՝ ընտանի և վայրի Ծիծառն ,

Ընտանի Ծիծառն կազմէ զբոյն իւր ի ծղօյ և յարդից , որ բաց ի յաղտեղութենէ և ի գարշահոտոյ՝ չունի զայլ ինչ օգուտ ; Բայց վայրին կազմէ զբոյն իւր ի փրփրոյ իւրոյ խոկ բերանոյ, զոր անուանեն Սարանոց բունն , և վաճառի մեծագնոյ , որպէս ի վեր այսր գլխոյ յիշեցաք ,

Արագիլ՝ անգղ՝ բազէ՝ և Չղջիկն՝ որոյ մի տեսակն կոչի Կալօնգ , որ ունի զմեծութիւն Բազէի , բայց իւրաքանչիւր թեւ նորա է իբրև երկու և կէս ոտն երկայն, և կերակուր նորա են պտուղք միայն ,

Բէու՝ տեսակ ինչ սարեկի , որ թոթով ուսանի զլեզու . Թութակ՝ Կակատու՝ Լօռու՝ Հիրամին՝ Դրախտահաւ . որք գտանին միայն յԱմբոինեան կղզիս և ՚ի Պապուասատան . այլ վերջինն ՚ի Բորնէօ ևս ; Ագռաւ՝ գտանի միայն ՚ի Ջավա՝ բայց յոյժ սակաւ , որք հազիւ երբեք երևին ,

ՁԿՈՒՆՔ

ԱՆՀԱՄԱՐ են տեսակք ձկանց ծովու և գետոց , այլ ազնուագոյնքն են՝ Կակալ , Թմբօն՝ Սու-

սու՝ Գաքուս՝ Գօրամի՝ Անէպ՝ Ալիրենգ՝ Փամփ-
փլ՝ Պատւա՝ Բանդան՝ Օձաձուկն՝ Լեզուա-
ձուկն՝ Կոխայ՝ Սարդէ՝ Խոշափառ՝ Կարխան
կամ Բենգա՝ և այլն ։

Տրեխպան՝ մեծածախ որսն ինչ ծովու , զոր ամ
յամէ մեծաւ քանակութեամբ հանեն 'ի Սերա-
մեան կողմեաց առ Բալա . և անտի առ Չին ։

Մարգարիտ՝ որ գտանի 'ի Մելիքեանեան ծովու
եւ ի հարաւային ծովափունս Բալոյ , բայց գունէ
ու պլուծ և անփայլ , ուստի և սակաւագին ։

## ՃՃՄՈՒՆՔ

ՃԱՆՃ՝ մժեխ , մոծակ , ճռեչկ , իշամեղու ,
մեղրաճանճ , սարդ , կարիճ , բազմոտանի , մըր-
ջիւն , լու , ոջիլ , մլիկ ճճի , գետնացեց՝ որ է
սպիտակ մրջիւն ինչ՝ կոչեցեալ առա Աւայար ։
Եղ ցեց կարի վնասակար է տանց և կայից , յու-
մէ և զգուշանալ պարտ է ։ Օ ի յորժամ եղանեն
Հազարաւորք են , և ուր մտանեն՝ 'ի միում գիշե-
րի ծախեն զամենայն զորս գտանեն . յանկարծ ևս
նեխէ կտաւեղէնք իցեն ։

Են և գոյնզգոյն թիթեռունք և շերամ ։

## ՄԵՏԱՂՔ ԵՒ ՀԱՆՔԱՅԻՆՔ

'Ի ՍՈՒՄԱՏՐԱ ելանէ ոսկի յոյժ առատ ,
պղինձ , անագ , երկաթ , ծխածուխ , ծծումբ ,
նաւթ , օձառահող և ներկահող ։

'Ի Բալա՝ Պորփիւրեան կիճ , յասպիս ,

կիտամետաղ, ապակեքար, կրաքար, նաւթ, ծը-խածուխ և գոյնզգոյն մարմարիոն։

'Ի Սիբերիա' ոսկի, պղինձ, երկաթ, կլեկ, ծխածուխ, բորակ, կճահող և յախճապակահող։

'Ի Իօրինիօ' ոսկի յոյժ առատ, կիտամետաղ, երկաթ, անդամանդ' առատ և ընտիր, վանա-քար, անթիմոն, կիճ և ծխածուխ։

'Ի Թ.խմուր' ոսկի, պղինձ, անագ, կիճ և նաւթ։

'Ի Իանիկա' անագ յաւելն իբրև 4000 մի-քուլը. և 'ի Իիլիաօն' երկաթ *։

## ԳԼՈՒԽ Թ.

### ԳԻՏԱՆՈՒԹԻՒՆ ՆԱՐԳԻԼԷ ԾԱՌՈՅՆ.

'Ի ՄԷՋ ամենայն ծառոց' զորս յիշեցաք 'ի նախընթաց գլուխն' յոյժ պիտանաւոր է ծառն Նարգիլէ. զորոյ հարկաւոր համարիմ ծանուցանել 'ի ներքոյ զօգուտսն, զորս քաղեն երկրա-կանք 'ի նմանէ' առ 'ի հիացումն ընդ բարեխը-

* Ջատկութենէ անծանօթ պտղոյ և բերոց յիշատակելոց 'ի սոյն գլուխ' արդէն յիշեն ծանուցեալ գոլով դերապա-տիւ Պարոն Մեսրովբայ Դաւթեան Թաղիադեանց 'ի գրքոյկն կոչեցեալ Մեսրովբայ Առաջնորդ Մանկանց. և տպագրեալ 'ի Կալկաթա 'ի 1847. զիմ կրկնաբանելն առա ասելոյ համա-բեմ. Եւ զխնդրողսն այնպիսեաց ծանօթութեանց աշխատ-ասնեմ մատչել առ նոյն Առաջնորդ Մանկանց. յորում ա-մենայն լուսաբանեալ է։

նամ Արարչին բնութիւն․ թէ որչափ զօրու-
թիւնս եդ 'ի մի միայն տունկ մի՝ յօգուտ մարդոյ ։

Բայց նախ տեսցուք․ թէ զիարդ աճեցու-
ցանեն զայս տունկ․ ապա զօգուտ կամ զպիտա-
նութիւնս նորա ։

Առեալ զհասունացեալ և զչորակեղև Նար-
գիլն՝ զորչափ և կամին․ դնեն 'ի ծմակ և 'ի բա-
ցօթեայ տեղի․ ուր մնացեալ այնց յաւուրս քա-
ռասուն՝ ծլին․ և այս ծիլք յերկս ամիս հասա-
նեն 'ի չափ երկուց կամ երից ոտից ։ Ապա ըստ
թուոյ 'նոցա պեղեն զերկիր՝ յերկոտասան ոտնա-
չափ հեռի յիրերաց․ մի և կէս ոտնաչափ խոր՝
և նոյնչափ բոլորակ ։ Եդեալ յայնս գծեալ
նարգիլն՝ թողուն այլ ևս ցմի ամիս․ ապա
ծածկեն հողով․ և յուրաքանչիւր յերկս ա-
միս բրեալ փորփրեն զմիջոցսն․ և մաքրեն 'ի
խոտոց և յայլ վնասակար բուսոց ։

Այս ծառ այսպէս խնամեալ՝ զկնի հինգ կամ
վեց ամաց սկսանի տալ զպտուղ․ զոր լինի ան-
գամ 'ի տարւոջն քաղեն․ և յուրաքանչիւր ան-
գամում գտանեն զտասն՝ կամ զերկոտասան նար-
գիլս․ յորոց հնար է հանել զեւղ երկու և կէս
շիշ՝ կամ բօտլ ։

Այս ծառ առաւել փութով աճի յաւա-
զուտ երկրի՝ քան յայլ տեղիս․ որ և ուղղաձիգ
և հաստատ բարձրանայ մինչև ց50 կամ ց60
ոտն․ և ոմանց բարձրութիւն հասանէ մինչև ց72

տասնաչափ, և հաստատութիւն ոմանց ցկէս՝ և ոմանց ցմի գրկաչափ.

Ոտք և պտուղքն են 'ի ծայր նորին, յոր յելանելն 'ի վեր՝ հատանեն զանգի կամ կէս ո-տից աստիճանաձև մինչև ցծայր նորա.

Ամենայն անգամ՝ յետ քաղելոյ զպտուղն՝ յապաւեն զաւելորդ ճիւղսն, և մաքրեն զծա-ռըն 'ի խնշերանաց.

Արմատ ծառոյս է բազմաթել կամ բազմերակ՝ կից և պատատ ընդ իրեարս, և ձգեալ առ խորս. որով այս բարձրաբերձ ծառ՝ որոյ գլուխ այն-չափ ծանրաբեռնեալ է պտղովք և ոստովք՝ դի-մանայ սաստկաշունչ հողմոց.

Յարմատոյ նորա (ակար պուհօն կլապա) առ-նեն զդեղ որովայնալուծութեան. զի առեալ 'ի նմանէ զմի ըթաչափ՝ և լուեալ ընդ փոքր անի-սոնի և պուլասարւոյ եփեն մի թաս ջրով. ապա պարզեալ տան ըմպել յառաւօտուն. և շարու-նակեալ զայս զեօթն օր՝ բժշկի.

'Ի հաստ կեղևոյ արմին (բու.քու. բու.քու.) կազմեն զլար ուռկանի կամ առասան.

Արմ կամ բուն նորա (բատան) 'ի կիր առնուն 'ի պէտս կամրջաց, ախոռոց և անանց տանց. նաև այրեն, որ ունի զօրաւոր բոց՝ բայց ոչ զկրակ.

Օ բուն անրևոյն կամ զոստ նոցա (պապա) որ է իբրև զերկոտասան ոտնաչափ երկայն և յոյժ կարծր՝ այրեն, և 'ի կիր առնուն 'ի պէտս

ցանկոց ։ Իսկ 'ի ծղոյ տերևոցն (լեղի․) գոր-ծեն զուէլ ախտոց ։ Օ տերևն՝ (գալծն,) առնեն ծածկոց ատմց և նուաղոց ․ և կազմեն զամբիւղ կամ զկողով ․ 'Ի չոր տերևոցն՝ (բլա-րակ․) յօրինեն զջահս ․ և 'ի թարմ տերևոցն՝ (կտաւպատ) գործեն զկողովկորեղս ․ և 'ի համ-գիստաւոր աւուրսն յօրինեն զկամարակապս և ըղ-մեծամեծ հովանոցս ։

'Ի նարաբոյս պտղոց նորա (բունգուն լ․) առնեն զդեղ որովայնալուծութեան արեան ․ զի առեալ 'ի նմանէ զերեք համ և քերեալ՝ կոլնուն ըղ-հետ թ նորա ։ Ապա արկեալ 'ի նա զփոքր անի-սոն , զկոտր մի պղլուսալի և ջամուբմերա , նաև զդարչին ամփին ․ լաեն ընդ իրեար 'ի վերայ քարի ․ և քամեալ կոլնուն զջուր նորա , և յատաւօտու և յերեկոյի տան ըմպել յիւրան-չիւր անգամ զերկուս դրգալս ․ զայս արարեալ յերիս աւուրս ապաքինի ցաւն ։

Պարձեալ 'ի նոյնոյ առնեն զդեղ ուռուցոց ատից կամ ձեռաց 'ի հարուածոց ինչ ․ զի առեալ զերիս համս 'ի նմանէ քերեն ․ և արկեալ 'ի նա զկոտր ինչ մնտօկ (կեղև ինչ ,) զկոտր մի ջամու բ մերա , զքան համ մեխակ և զմի համ ջուզ , լաեն 'ի վերայ քարի ․ ապա շաղախեալ ընդ փոքր ինչ քացախի կամ՝ ցքույ՝ քսեն զուռուցեալ տե-ղեաւն , և ողջանայ ։

'Ի բացեալ ծաղկանց (կոմբանդ․) առնեն զդեղ

հաղի ծիրոյ . զի առեալ 'ի նմանէ զմի հատ՝ ծեծեն ընդ բուռն մի զուռ շաքարի , ապա արկեալ 'ի նա զկտոր մի լանկուսա , բուռն մի աղ , և երեք մատնաչափ զաւօն կնտուա կնտուա՝ (տերև լինչ ,) լոսեն 'ի միասին 'ի վերայ քարի , և արկեալ յամանն լինչ , ածեն 'ի վերայ նորա զերկու սրրուակ ջուր , և շարժեն ցքառորդ ժամու միոյ , ապա քամեալ զջուրն տան ըմպել յամենայն առաւօտու իբրև զկէս սրուակ . ապաքինի հաղն ,

'Ի բաց հատանեն զգեռաբաց ծաղիկ նորա , (կալուպինգ .) և զկանթ նորա (բազալ) թողուն 'ի ծառի , և թակեալ զծայր նորա փայտիւ կախեն առ նովաւ զաման լինչ . և ժողովեալ ըզջուր նորա ըմպեն ։

Այս ջուր՝ (տուակ մանխ կամնիրա .) յառաւօտուն է ըմպելի լինչ քաղցր , բարեհամ և զովարար . և 'ի միջօրէին՝ փոխի յըմպելի լինչ զօրաւոր ։ 'Ի սմանէ յօրինեն նաև քացախ և սեւակ . զի լցեալ 'ի նմանէ զթակոյկ մի՝ և արկեալ 'ի նա զանթակ կորիզ բուռն մի՝ զնեն յարևու , որ 'ի քանի աւուրս լինի քացախ ։ Կամ արկեալ 'ի նա զխեշերանս երկաթի՝ պահեն յերկս աւուրս , և փոխի 'ի սևակ . զոր կաշեգործք 'ի կիրառնուն 'ի սևացանել զմորթ կամ զկաշիս ,

Զտուակ մանխն կիրառնուն նաև հացարարք և ցքահանք , մին՝ փոխանակ խմորոյ , և միւսն՝ 'ի հաստացանել զցքանիւթն .

Հատեալ զգլուխ ծառոյն՝ գտանեն զբազմա-
թերթ փունջ ինն՝ իբրև զկաղամբ՝ և կակուղ՝ նիւթ
ինչ (օմբատ,) զոր ուտեն հում կամ եփեալ. և
առնեն թթուջէն ևս, որ կարի անուշահամ է։
Բայց զայս առնեն, յորժամ կամին հատանել
զծառն. Օ վերին կեղև նարգլին թակեալ՝ հանեն
ի նմանէ զկանեփանման զգուած ինչ՝ (սամբօկ,)
զոր կիրառնուն ի նատարանս կառաց փոխանակ
բամբակի. և գործեն զչուան, զլուցկիս՝ զմա-
լուխ կամ խարսխաչուան մակուկաց՝ և այլն։

'Ի ներքին հասունացեալ կեղևոյ (բատօկ
կլապա) կազմեն զգրգալս՝ զշերեփս՝ զըմպանակս
և այլն. և զգեռահասն՝ (չինգիր,) վառեն։ Բզ-
թարմ միջուկ նարգլին՝ (կլամբիր,) որ է մածու-
ծախառն և անուշահամ ճաշակելի ինչ՝ ուտեն.
Իսկ զհասունացեալն (խնկլապա)՝ որ է կարծր
իբրև զմիջուկ նշոյ, կամ քերեալ շաքար ցա-
նեն ի վերայ և ուտեն. և կամ հանեալ զկաթն
նորա (Սանտան,) ի կիր առնուն ի կերակուրս
վասն համեմոց։

'Ի կաթնէն հանեն զիւղ նարգլի (մինեակ կլա-
պա,) զոր կիր առնուն ի կերակուրս և ի ճիթաճը-
րագս. նաև երկրականք յօծումն հերաց զլը-
խոյ. որ երկայնէ զմազս։

Բայց ասելիէ թէ զիարդ հանեն զկաթն, և
որպէս զիւղն։

Առեալ զհասունացեալ միջուկ նարգլին քե-

րեն՝ և արկեալ 'ի նա զՋուր իւր՝ ձմլեն ։ Ապա անցուցեալ 'ի պաստառ ինչ պարզեն՝ կամ՝ քամեն ։ և զայս Ջուրն ( սանտան) ածեն 'ի պուտան և եփեն մինչև աւարտեսցի Ջրոյ մասն , և ելցէ խուղն ։ Իսկ զքամուածսն կամ՝ զքըլքանքն (ամպաս) տան խոզից 'ի պարարել ։

Ջուր հաստնացեալ Նարգլեն (այէր կլապա) ունի զհամ՝ հանքային Ջրոյ ։ զոր ըմբու ոչ ըմպեն ։ այլ միայն կիրառնուն 'ի հանել զկաթն կամ՝ զխուղ նորա՝ որպէս արդ ծանուցաք ։

Բայց Ջուր Թարմ՝ կամ՝ կխահաս Նարգլեն՝ (այէր կլապա խջօ ։) որ կարէ լինել սրուակ մի՝ է քաղցր և անուշահամ՝ ։ զոր ըմպեն նախ 'ի չեՋուցանել զծարաւն ։ երկրորդ՝ առնեն և դեղ Ջերմութեան ստամոքսի՝ յամենայն առաւօտ ըմպելով զմինն ։ եւ երրորդ՝ առնեն դեղ հազի և զողկապի ։ զի արկեալ 'ի նա զկատր մի վանաշաքար՝ Թողուն մինչև հալեսցի ։ ապա տան հազողին ըմպել յիւրաքանչիւր քառորդ ժամու զերկուս կամ՝ զերիս ումպս ։ Կամ՝ արկեալ 'ի նա զկատր մի վանաշաքար՝ և եդեալ 'ի վերայ հրոյ ։ Թողուն մինչև ցեռալ ։ և ապա առեալ անոթ դընեն 'ի ցօղուն տեղի զբոլոր գիշերն ։ և յառաւօտուն ըմպեն ։ օգնէ զողկապին ։

## ԳԼՈՒԽ Ժ

### Մէկ-ոյ Արեւ-ելեան Եւրոպ-իայ

ՅԱՌԱՋԻՆ ի գլուխն երրորդ մերում ի շատէ ծանու-ցաք զմիջոցս ապրուստի իւրաքանչիւր ազգաց . բայց կամեցեալ 'ի մի գլուխ ժողովել զայնս եւ լիագոյն խօսել' դնեմք աստ զնին .

Ուղղեալ զմայրենաբնական եւ զանտառա-բնակս' որք բնական բերմամբ աշխարհին' եւ որ-սեզինօք մայրենեաց եւ նմանակցացն ազգին . եւ զծովահէնսն' որք յափշտակութեամբ եւ աւա-զակութեամբ լինին զգեստ կենաց . մնացելոցն միջոց ապրուստի են քրտունք երեսաց' կամ որ-դիք վաստակոց իւրեանց . Յորոց զերեթէ երեք մասն են ձկնորսք' նաւաստիք' նաւակավարք եւ երկրագործք . իսկ մնացեալ մի մասն' արուես-տաւորք' վաճառականք' մշակք' կամ վարձկանք բնակիչք եւ ծառայք .

Թէ եւ ամենայն ուրեք զատանին ձկնորսք ան-թիւ բազմութեամբ . բայց առաւելագոյնքն են ի Նորվեկիա' ի Սիբերիա' ի Սկոտլանտ եւ ի Թէլ-մուրեան կղզիս . որք բաց յամենայնական ձկանց անտի' որսան նաեւ զարփիան . եւ ուրեք ուրեք զկէտս' որոյ իւղն է արժանաւոր վաճառ ինչ այն կղզեաց . Նա եւ զմարգարիտս եւ զապակի' կամ բոյն մարգարտի . բայց 'ի վերայ այսր ամե-նայնի' Հայքն աշխատին զհաց իւրեանց . յառա-կապէս 'ի [illegible] . ուր յամենայն երեւելի ծո-

վեզըեայ տեղիս՝ մաձոռ ձկանց տուեալ է 'ի վաճա-
ռու. և մարձողքն որք են Չինէացիք, այնչափ
ծանր հարկս բառնան 'ի վերայ առաւապեալ ձըկ-
նորսաց. մինչ բազում անգամ հազիւ կարողա-
նան լնուլ զչափ հարկին.

Նաւաստիք և նաւապետք ոչ ուրեք գը-
տանին այնպէս յաջողաձեռն և պիտանաւորք.
որպէս 'ի Ջաւա. Ջաւացիք կամ մալայացիք.
անթիւ բազմութեամբ ծառայեն այսմ պաշտօ-
նի 'ի բազմաթիւ նաւս և յանհամար նաւակս.
զի եթէ յայլ ուրեք եւս կայցեն, հազիւ մնանեն
'ի ծառայութեան օտարաց. միայն 'ի անակամս ծա-
ռայեն նաւուց և նաւակաց յերթևեկս թիւնս.

Սարձ նաւաստեաց կամ նաւակավարաց ոչ
հատանի աւելի քան 8 կամ 10 դեկեր. որ հա-
զիւ բաւական առնէ կերակրոյ և սակ հանդեր-
ձից. վասնորոյ և սոքա աղքատ և տնանկք են
առ հասարակ.

Այնպէս և երկրագործք անթիւ բազմու-
թեամբ գտանին յամենայն ուրեք. բայց ոչ
միապէս ժրաջանք և աշխատաւորք. և ոչ յա-
մենայն ուրեք միապէս մշակեալ և բազմաբեր.

Կարի ծաղկեալ և բեղմնաւորեալ է երկրա-
գործութիւնն 'ի Ջաւա. ուր ելանեն բրինձ
բիւրաւոր հազար կոյեաւոք *. խաղող և շա-

* Մի կոյեանն է 30 փիքուլ. մի փիքուլն 100 ջաթի կամ 125 պօնդ. մի ջաթին է 16 դահիլ. և մի պօնդն 12 դա-հիլ. մի դահիլն 1 2 մասն չորեքաշ կամ 9 մսխալ.

քար մըլխնաւոր փիրքու լօք. լեղակ՝ կինամոն՝ կօշնիլ՝ որդան կարմիր կամ ղրմըզ և չոր մըլխ- նաւոր պօնդիք. այլ և անբաւ քանակութիւն պէսպէս ունդք՝ ծխախոտ՝ աղ՝ բամբակ՝ քաչան՝ և նարգիլ՝ յորոց հանեն գձէթ, Քաոխ, սօնօ և բաղամ փայտք, զանազան պտուղք և բանջարեղէնք. արջառոր և երկայն բեհեզ, և այլն. Բայց խըղ- ճալի երկրականք հարկս թէ գՀնդկանորէն ստա- նան ՚ի վարձ ամենայն վաստակոց իւրեանց, յորոց և զմեծ մասն վատնեն ՚ի ծուխ ափիոնի. Բանզի Քամացիք կարի մոլեալ են այսմ մոլութեան. եթէ կանայք Քամացւոց չէին մեծ օգնական արանց իւրեանց՝ որք դժուարաւ լնուին զպէտս գերդաստանի իւրեանց. որք միայն թոռ կամ չոր ձկամբ, աղեալ ձուով՝ կամ ընդեղինօք ընդ բրնձի շատանան.

Բաց յայսցանէ բերոց՝ զորս յիշեցաք այսր, են և միջոց ապրանի բաղմոց տուրև արութիւնք ձիոց՝ կովուց՝ գոմշոյ՝ և այլ անասնոց և հաւուց. Նա և կաշւոյ՝ Ճրագու ի՝ պողից՝ տաւարոյ՝ քացա- խի՝ ցքւոյ, բամբակի և վառելոյ փայտից ոչ սակաւոց.

Բաց ՚ի Բօրնիոյ՝ Սերամեան կղզեաց և Փա- պուաստանայ՝ որք կարի ՚ի յետնութեան են եր- կրագործութե. մնացեալքն՝ Սումատրա՝ Սելե- բես՝ Մոլուկոս՝ և Թիմօր չեն ՚ի սորին ստո- ւճանի. բայց և ոչինչ իրօք համեմատին բազմա

հարուստ և բերրութին Պալեայ · այլ միայն են ՚ի սոսա և այլոն՝ քանի արժանաւոր բերք · որք ՚ի Պալա ոչ գտանին , զորս արժան համարիմ առաջին առնել · որք են՝ ՚ի Սումատրա՝ ազնիւ քափուր՝ ընտիր ոսկի՝ կինամոն անտառի՝ ջաւզ մեխակ՝ սեաւ և սպիտակ բիբար՝ զանբեր՝ կամ քաֆ · զամար՝ ներկախեժ և ներկափայտ ։

՚Ի Սելեբես՝ առատ ոսկի և ընտիր երկաթ ։

՚Ի Մոլուկոս՝ մեծ քանակութեամբ ջաւզ և մեխակ , և ընտիր փայտք ՚ի պէտս կահուց ։

՚Ի Թիմուր՝ սանդալ և սոճ փայտք · մեղ-րամոմ և ընտիր երկաթ ։

՚Ի Բորնէօ՝ առատ ոսկի և ադամանդ , յո-րոց պէտքն յամէն աւելի քան երկու բիւր մի-լիոնի արժողութեամբ · բայց շատ նոցին Չինե-ացիք և երկրագործաց գլխաւորք վայելեն · իսկ մշակքն միայն զհաց իւրեանց ։ Են ՚ի սմա և ըն-տիր ընտիր՝ քափուր՝ սագու՝ զամար՝ և ընտիր ռոտան կամ բէդ · յորմէ առնեն յամենայն ուրեք անբաւ քանակութեամբ ։ ՚Ի սերամեան կղզիսն՝ առատ սագու և նաւշ փայտ ։ ՚Ի սա-գուոյ առնեն հաց , և ՚ի նշոյ՝ զեղ ։

՚Ի Պապուաստան՝ զոյնզգոյն փետրօք դեղա-զարդեալ դրախտահաւք՝ խօսուն նուրիք՝ կամ թութակք , և այլ թռչունք · նաև ընտիր փայտք ՚ի պէտս կահուց ։

Եւ այն մեծագին սարանգն՝ զորմէ ՚ի գլուխն ը-

յերկս 70 յիշեցաք՝ գտանին յամենայն կղզիս ։

Բայց այսու ամենայնիւ՝ 'ի սոսա եւս չիք երկրագործ ոք լիածեան յաջողութեամբ ․ զի 'ի միոյ՝ կամ՝ 'ի միւսոյ բռնութեանց եւ ճնշմանց կողոպտեալք սնանկանան ։

Նախքան զբազմանալ չինեցւոց ազգին՝ եւ յառաջանալ եւրոպացի վաճառաց՝ էին 'ի Ջավա՝ 'ի Սումատրա եւ 'ի Սելեբեսեան կղզին բազմութիւնք զանազան արուեստաւորաց ․ որք թէ չէին անուանիք՝ եւ ոչ խոպան յետինք ։ Դարբինք՝ պղնձագործք՝ ոսկերիչք՝ հիւսունք՝ ոստայնանկք՝ անդրիագործք՝ նաւաշէնք՝ սրակալք՝ դերձակք եւ այլք ։ Բայց այժմ բազմօք նուազեալ են, եւ եթէ ուրեք կան եւ երեւին՝ ոչ են կատարեալ ․ միայն թերեւս ոսկերչութիւնն է յառաջին համբաւոյն 'ի Սումատրա, ուր բազումք աշխատին 'ի սոյն գործ, եւ զարմանալի նրբութեամբ արուեստակեն զպէսպէս զարդս ոսկւոյ եւ արծաթի ․ եւ հանեն 'ի զանազան տեղիս՝ յառաջապէս յԵւրոպա՝ իբրեւ զպատուական ինչ ։ Չէ 'ի յետնութեան նաեւ ոստայնանկութիւն 'ի Ջավա՝ 'ի Սումատրա՝ 'ի Սելեբեսեան եւ 'ի Թւմուրեան կղզիսն ․ յորս գործեն զպէսպէս նուրբ եւ խոշոր զգեստացուս երկրականաց ․ զգունաւոր կտաւս՝ զփաճանեկին՝ զթաշկինակս՝ զկերպաս եւ զխալիս ոսկեհուռն հիւսուածովք ։

Սար մինոյրք զհաստուց երկրակամաց ոստայ-նանկեալ ի Սակառար՝ արժէ 500 դեկեր · զորս մեծամեծք ագնուն ։

'Ի Քալս կարիճնուտ են և մամազործ արուեստի , որ զդեղգոյն ծաղկենկար յօրինմամբ արտեստուրկեալ 'ի վերայ ազնուակ պաստառի և կերպասի՝ առնեն զափանակըն՝ զթաշկինակս և զայլ իրս · որով և ընդունուրք աշխատեն զհոյլ կերեանց ։ Օ այս կաշեն քաղաքի · և զմանուանուրք և զեղեցիկս յօրինեալ մեծի գնոյ վաճառեն ։

Սրագործն թիւնն չէ խապուռ բարձեալ՝ բայց և չէ յառաջին փառսն · զի ուր ընկճեալ է անքուեթի երկրակաց ընդ բռամբ Հոլանդացւոց , անդ չունի երես այս արուեստ ։ Բայց և գտանին պէսպէս զէնք 'ի հնոց կազմեալ՝ որք են զարդաձև դաշոյնք և աշտէք , զանակք՝ տապարք և փքէք՝ համայնք թռչնաորսալք ։ 'Կան մախապատ և երկճղանի հատ բիրք , դղոյնք ձկանց , տաղարթագործ վահանք՝ փայտեայ և ղղսղ արտ և այլն ։ Էն և հրացանք և թնդանօթիկք 'ի Սելեբեսեան կղզին · զորոց մինչև ցայրդ խոկ զատանեն գործողք ։

Մինչև ցարդ խակ զոն նաւաշէնք 'ի Ջավա՝ 'ի Բոռնէօ՝ 'ի Սելեբես և 'ի Սերամեան կղզզեան · որք մեծ կառուցանեն զնաւակս ձկնորսաց և բեռնակրաց · զորս և անուն անեն Ցօղօ՝ մալեան՝ պնչալնա՝ ստամպան՝ տամբանկան , և

այլն․ յորոց մեծագոյնն կրէ մինչեւ 930 կշռեան բեռին ։

Արդէն ծանուցեալ եմք 'ի վեր անդր՝ թէ նախ քան զգալ Արաբացւոց եւ Եւրոպացւոց տուրեւառութիւն կղզեացս էր 'ի ձեռս մալայա-ցւոց․ որք ապա կորուսին զամենայն․ այլ այժմ թէպէտեւ յարեւելեան կողմն Ճ. ավայ՝ Ջամայիք․ 'ի Սումատրա՝ եւ ուրեք ուրեք 'ի ծովեզերեայ տեղիս՝ մալայեցիք․ 'ի Բորնէօ՝ վաճառականք․ 'ի Սելեբես՝ բուգիսք․ եւ յայլ կղզիս՝ բնակիչք տեղեացն առնեն զտուրեւառութիւն, բայց չեք համբաւաւոր ոք 'ի նոսա․ զի առաւել փերե-զակք ասին՝ քան վաճառականք․ 'Ի զուր աշխատ լինի ոք գտանել աստ զհարուստ երկրական ոք․ բայց եթէ զչինէացիս բազում յոյժ․ զոլով ամե-նայն տուրեւառութեանց՝ եւ վարձման վաճառա-տեղեաց եւ զանազան արուեստից անցեալ 'ի ձեռս նոցա․ որք միշտ խաբեն եւ կողոպտեն զերկրականս։ Վարձկանք՝ կամ մշակք անթիւք են 'ի Ճ. ա-վայ, որք աշխատեն 'ի զանազան կալուածս ա-ղատականաց, 'ի բամբուսագործութիւնս՝ եւ 'ի փայտահատութիւնս․ այլ վարձ նոցա յամին է իբրեւ 6 կամ 8 գիլդր․ որ հազիւ այլ եւ բրնձի բաւական առնէ․ եւ յամին մի կամ երկու սար-ղգեստուց*․ Սոյնպէս են եւ բազմութիւնք բնա-

* Ծախք երկու սար զգեստուց տեղական երկրականաց կարէ լինել իբրեւ 12 կամ 15 գիլդր․

նակրաց յամենայն երևելի տեղիս՝ և ծառայից վարձկանաց, բայց զոչինչ առնելի աշխատանն՝ քան զառօրեայ հաց խուրձանց և զխոշոր զգեստ. այլ 'ի վերայ այսր ամենայնի չիք ուրեք ողջանդամ ոք մուրացիկ.

## ԳԼՈՒԽ ԺԸ

### ՆԵՐՔԻՆ ՋՈՒՐՔ՝ ԼԵՌՆԻՔ և ՀՆՈՒԹԻՒՆՔ

#### ՋՈՒՐՔ

Ա՛ՆԲԸՒ է առատութիւն և յորդութիւն ջուրց 'ի կղզիսն արևելեան Հնդկաց, յորս են մեծ և փոքր գետք՝ առուք՝ աղբիւրք՝ լիճք՝ և կարկաջասահանք. զորոց զերևելիսն նշանակեսցուք զկնի.

'Ի Սումատրա՝ երևելի են գետքն Սիակ և Տապուս. Սիակն գայ 'ի բարձրագոյն վայրէ, և ընթացեալ իբրև 80 կամ 100 մղոն՝ թափի 'ի ծովն արևմտեան. Սիակն զբաղում ձկունս գետոց, յոր և նաւարկի մինչև յներքին վայրսն. Սաւսանգ՝ որ գայ 'ի նահանգէն Բէնկուլոյ՝ և ընթանայ իբրև 100 մղոն դէպ առ ծովն արևելեան. նմանայ յիշէ զգետսն Խամաանգ՝ Օղան՝ Ինդ-րանգ՝ Իլիոս՝ և այլ քանի զանազանս. և Պա-նայ մեծ և երևելի գետ մի, որոյ լայնութիւն ուրեք է իբրև 2000 ոտն, և խորութիւն բաւական վասն մեծամեծ նաւուց. Ջամբի և Ինդրագիրի՝ որոց երկայնութիւնն է իբր և 80 մղոն, և ըստ չա-

փու խոր և լայնք ։ Կամպար և Սիբոյօնոց 50 մղոն առանձինն ընթացեալ՝ խառնին ընդ իրեարս, և առնեն երևելի գետ մի․ և ապա 28 մղոն 'ի միասին խաղացեալ՝ Կամպար բառ (մեծ կամպար) անուամբ թափին 'ի ծովն արևելեան ։ Սիակ՝ կամ Տաքօնգ՝ որ գայ 'ի Սինանգ կաբաւայ, ունի ըստ չափու խորութիւն․ և լայնութիւն նորա ուրեք ուրեք է իբրև 1600 ոտն․ որ ընթացեալ 80 մղոն՝ թափի 'ի նեղուցն Մալագայ ։ Ռոկան՝ կամ Իրական գայ 'ի նահանգէն Պասամանայ, որ մերձ 'ի բերանն է ըստ չափու խոր մինչ տանել մեծամեծ 'նաւուց ։ Դրանգք՝ կամ գետ Պալէբանգայ՝ Մունդաանց կոչեցեալ, է ժողով զանազան գետոց․ որոյ լայնութիւնն է իբրև 3000 ոտ, և խորութիւնն բաւական 'ի նաւարկել մեծամեծ նաւուց ։

Բազում են լիճք 'ի Սումատրա, որոց երևելիքն են Սինգարա և Տինկօաաս, իբրև 6 մղոն երկայն՝ և 2 մղոն լայն ։

Են 'ի մէջ բազմաթիւ կարկաջասահան ջրոյն որք 'ի բարձանց լերանց թափին 'ի վայր, երևելիքն են Պուգօնգայ լերանն և Սէնուաչարայ կղզւոյն․ իսկ աղբերց բարեհամև քաղցր ջրոյ ոչ գոյ թիւ ։

'Ի ՋԱՎԱ՝ երևելի գետքն Զիգուրխան՝ կամ Զքանդի, Պօնանոնգ՝ Տանգարանգ՝ Զիլիմօնգ՝ կամ Կալի բառ (մեծ գետ.) Ընդէ՝ Կալիկրու-

կամ ո՛ Կրաւոնդ՝ Զմմանօկ՝ Լամբանդան՝ Լօ-
ւարի՝ Պօմայի՝ Գանդա՝ Պակլօնդան՝ Պարլան՝
Պեյէրի՝ Բենդալ՝ կամ Վունդու՝ կամ Սամա-
րանդ և Դամեկ. Զինդուան՝ Բապանա՝ կամ
Բեմբանդ՝ Լաւէմ՝ Բեգէլի՝ կամ Մաա՝ կամ
Սօյօ՝ և այլ բազումք. յորոց ոմանց երկայնութիւն
ձգի մինչ ց50. 50 կամ 70 մղոն. և լայնութիւն
և խորութիւն նոցա բնանկիր նաւակաց տանե-
լի. Այր և ի Բէթավիա՝ ի Սամարանդ՝ ի Սուր-
բայեա՝ ի Մադիուն՝ և ի Բանդջէն երթևեկ առ-
նեն նաւակոնք ընդ երկրամէջն.

Այլ գիտելի է. զի ոմանք յայս գետոց են
ճիւղք՝ կամ գետատաւք միայն. և ոմանք ժո-
ղովք զանազան փոքր գետոց. որք ի յերկրամէջն
յայլ անուն յորջորջին. զորոց զանց առնեմք
մի ըստ միոջէ յիշել. Բազումեն և լիճք ի Ջա-
վա՝ բայց երևելին է Գուունու՝ որ 'ի Բանթամ,
իբրև 6 մղոն երկայն և 40 ոտ խոր. իսկ մնա-
ցեալքն են աննշանք. յորոց և ոմանք բաղու-
մնդամ 'ի ջուր եղանակի ցամաքին.

Երևելագոյն 'ի կարկաջասահանք ջրոց գը-
տանի 'ի սահմանին Զինդջօրայ՝ 'ի Բանդօնգ.
որ կոչի զարմանալի և ահաւոր երևի. զի ուժգին
զօրութեամբ ձգի 'ի վեր իբրև 40 ոտ՝ ապա-
տառխութեամբ թափի 'ի վերուստ 'ի վայր յըս-
տորոտ բարձանցս. յորմէ ելանէ ահեղասաստ
ձայն սօսափանաց՝ զարհուրելի անցողաց.

Անթիւ են և աղբերք բարեհամ, ջերմ և հան-քային ջրոց․ յորոց մերձի երկուքն ի կիր առնուն յաւէտ վասն առողջութեան․ զմին՝ 'ի Լոյ ղա-նայ, և զմիւսն՝ յըմնկի․ Են և ի Բօխտնզորգ՝ 'ի մէջ լերանցն Բինոտանց և Բատու՝ 'ի 600 ոտ բարձրութեան՝ 'ի բարեբեր գետնի մօտ երկու աղբերք․ որք ունին զզօրութիւն քարացուցա-նելոյ զփայտ․ և այլ երկու աղբերք մինրալ (հանքային) ջրոյ․

'Ի ՍԷԼԷԲԷՍ՝ անթիւ են գետք, առուք և աղբիւրք․ որք բղխեն ի մեծամեծ լճից՝ կայե-լոց ի մէջ լերանցն․ Երկու են նշանաւոր գետք 'ի սմա․ Չինրանո և Սարանգ, որք են ըստ չափու խոր և լայն, և 34 մղոնօք ձիգ, է առ և մեծ լիճ մի աղի․

'Ի Մոլուկեան՝ ի Սիրամեան՝ ի Պապուա-սեան և 'ի Թիմօրեան կղզեաց ոչ գոն նշանաւ-որ գետք կամ լիճք արժանի յիշման, Թ․է ևս են՝ յոր գտանին քանի մեծ և փոքր գետք, և բազում գետակունք և աղբիւրք․ բայց շատն անպիտան են․ Այլ 'ի Բօռնէօ անթիւ են մե-ծամեծ գետք, լիճք և կարկաջահոսանք, զորոց երևելին առաջի արասցուք․

'Ի յարևմուտս են Կաւադանգանց և Կատա-պանգ՝ կամ Մատամ, Սիմպանգ, Պօնտիանակ և Սինտանգ, Մինչև ցարդ ոչ կարացին տու-գել զերկայնութիւն Պօնտիակ գետոյն․ բայց

զխորութիւն նորա գտին ուրեք 10 և 12 գրկաչափ, և լայնութիւնն՝ անհաւասարելի ՚ի կուսէ ՚ի կոյս ։ Ի սա երեւելի գետք՝ Միճիզանգ ․ Պօնտիակ և Մինասանգ եօթն բերանօք թափին ՚ի ծովն չինեչացւոց ․ Լճն և Մանիթուլա ․ Սագինաւ և Իօրոնիօ ․ որք խաղան ՚ի կարի հեռաւոր տեղեաց ․ և են բաւ չափու խոր և լայն ։

Յորնելս են Կօտէ և Պլասիր ․ առաջինն՝ է իբրև 100 մղոն երկայն․ և երկրորդն՝ յոյժ լայն ։

՚Ի հարաւոյ է Ուանջարմաինգ ․ որ իջանէ ՚ի բարձր լերանց ․ և ընթանայ 200 մղոն ․ Սա- խաղայ նախ ընդ հարաւային յարևելս ․ ապա ՚ի հարաւ ․ և առեալ յինքն զերկուսին մեծամեծ գետսն՝ զՍօլօլի յարևմտից՝ և զՏէլէ յարևելից՝ երեք բերանօք՝ մեծ և փոքր Պոյետկը և Բոլխօ անուանք թափի ՚ի ծով ․ Լճն և Խանդավէ՝ 160 մղոն երկայն․ և Լիմանդու՝ յոյժ խոր և լայն ։ Սօլօկօ՝ որ գայ յարևելից ․ և խաղայ ընդ հարաւ ՚ի ծով ․ և Տաքենիօ՝ որ գայ ՚ի հեռաւորին հիւսիսոյ ․ բաւ կարի լայնք և խոր ։

Բազումք են և մեծ և փոքր լիճք ․ որք կայանան ՚ի կարկաջահոսան ջրոց ․ ՚ի լեռնային աղբերաց և յորդ անձրևաց ․ յորոց նշանաւորքն են Մալէյու ․ որոյ տարածութիւն է 30 քառակուսի մղոն ․ և բաւ կարի խոր ․ եւ ․ Բոնի-բօրու՝ յորմէ ծագին բազում գետակք ․ և խաղան ՚ի հիւսիս և յարևելս ։

## ԼԵՌԻՆՔ

Անթիւ են լերինք, բլուրք և բարձր գետինք՝ կամ լեռնադաշտք ՚ի բոլոր կղզիս ծովուն արևելեան Հնդկաց. բայց սակաւ են ՚ի բարձր լերանց գտանին ՚ի Ջաւա. յորոց ոմանց բարձրութիւն հասանէ մինչև ցերեքտասան հազար ոտն. և բլրոց և լեռնադաշտացն՝ մինչև ց5000։

Յայսցանէ ոմանք են ապառաժ, ոմանք դիւրաբեկ. և ոմանք հրանիւթք։ Գրութիւնք նոցա ուրեք է միաշար՝ և ուրեք երկաշար. ուրեք՝ տարանջատ, և ուրեք միացեալ՝ կամ ՚ի յետուստ իւրերաց կացեալ. որոց կարգ շարակցութեանցն է զարմանալի տեսարան մի անցորդաց։ ՚Ի մէջ սոցա են և բազում հրաբուղխ լերինք, յորոց ոմանք լի են եռացուն կամ անեռ ջրով.

Յայս հրաբուղխ լերանց են՝ որք երբեմն սասկանան յարտաշնչել իւրեանց, յորոց լսի ձայն ահեղաստատ որոտմանց. և ելանէ հուր, ծուխ և մոխիր այնչափ սաստկութեամբ՝ մինչև խաւարել զլոյս արևու։ Նաև երբեմն ելանէ ծծմբախառն ջուր՝ կամ լաւա, և պատճառէ զմեծամեծ վնաս և կորուստ մերձակայ բնակչաց և բուսոց. որպէս ՚ի 1815 պատահեցաւ ՚ի Սումբաւա կղզւոջ, ուր ՚ի յարտաշնչել Տոմպորօ հրաբուղխ լերանն զլաւա՝ կորեան աւելի քան զերկոտասան հազար անձինք, անթիւ անասունք, և ապականեցան բազում տունք և արմտիք։

Այն նման և բազում անգամ վնաս և կորուստ պատահեցան 'ի Ջաւա, 'ի Սումատրա և 'ի Մոլուկեան կղզիսն՝ արտաշնչութեամբ հրաբուղխ լերանց. որք կամ գետնաշարժութեամբ՝ կամ լաւայիւ՝ և կամ ծծմբաշունչ մոխրով մեծ աւերածութիւնս պատճառեցին շինուածոց, բընակչաց և տնկոց.

ՀՆՈՒԹԻՒՆՔ

'Ի ՄԷՋ բոլոր կղզեաց միայն 'ի Ջաւա գըտանին անթիւ հնութիւնք. որք են՝ քարեայ կամ պղնձեայ արձանք կռոց ձեւացուցելոց 'ի զանազան դէմս և յիրանս. Աւերանք Բուդհօ կրօնի, որբայցուցեալ գերեզմանք նախնեաց, պալատք կայսերաց և թագաւորաց, զբօսանոցք դուարճալեաց, ստորերկրեայ տեղիք, ջրհորք, աւազանք և այլն. Յորոց երևելագոյնքն են պալատն կայսեր Սուրուկարտայ՝ կամ Սօլօյ, և ջրապատ ամրոցն Ջօկջօկարտայ. զորոց արժան համարիմ տալ սակաւուք զծանօթութիւն.

Պալատն կայսեր Սուրուկարտայ է լայնատարած և երևելի շինուած մի. յորոյ 'ի միջին տեղւոջ են բազմաթիւ բնակարանք ընտանեաց և հետևորդաց կայսեր՝ բաւական 10000 անձանց. Շրջապատ որմունք սոցա բաժանեն զհրապարակս և զանցս ճանապարհաց, որք աստի և անտի ձգին. 'Ի մէջ հրապարակացն կան աւազանք ձկանց, լուացարանք՝ կամ բաղանիք ծառայից, պար-

տեղիք գալարեաց · բուրաստանք ամենատեսակ ծաղկանց , և այգիք համեմոց և այլ զանազան պտղատու և անպտուղ ծառոց · ուր միահաղոյն առնեն զնա դրախտ մի ցանկալի , յոր մտանողն ըմբռնի 'ի սքանչացումն ,

Այլ 'ի հիւսիսային կողմն պալատիս կայ ընդարձակ դաշտ մի՝ կոչեցեալ Ալունալուն · ուր միանգամ'ի շաբաթոջն ելանէ կայսրն 'ի ցուցանել զինքն հպատակաց · և ուր է տեղի զբօսանաց նոցա · յոր լինին զանազան խաղարկութիւնք ձիարշաւանաց · մենամարտութեան՝ զինաշարժութեան և այլն ; Զկնի որոյ է լայն և ընդարձակ դահլիճ մի · զոր կոչեն Պասէքան . և անցեալ ընդ այս՝ գտանի բարձր և ընդարձակ գետին մի՝ իբրև տեղի ճեմելոյ · ուր կառուցեալ է փառաւոր նստարան մի վասն կայսեր՝ Պօնդօպօ կոչեցելոյ , Յաւուրս հանդիսից՝ աստ բազմի կայսրն՝ 'ի տեսանել զպարզանս մեծամեծաց իւրոց ; Անցեալ աստի և իջեալ 'ի խոնարհ՝ մտանի 'ի կամարաշէն լայնարձակ մուտսն և դըրունսն , ուր հանեն առ մեծակառոյց և գեղեցկաշէն Պալատ կայսերն · որ զարդարեալ է գեղեցիկ նկարիւք և մեծագին կահիւք ; Ձև շինուածոյս է հնական · որ թէ և անարուեստ՝ բայց մեծագործ և ահարկու ;

Ջրապատ ամենայն Ջօկջօկարտայ շրջապատեալ է աստի և անտի հաստահիմն պարսպօք , և

յարտաքուստ նորա արարեալ սարեկիկեայ ճանապարհ կամ՝ անց ՚ի ներքոյ ջուրց՝ և ընդ սմենայն ուրեք քարամբք և կրօք ամրացուցեալ ։ յոյր վերայ խուղայ լիճ մի , և պատէ զբոլոր պարիսպն ։ Փոքր հեռակայ իւրեայ կառուցեալ կան աշտարակք ՚ի վերայ սարեկիկեայ տեղւոյն իբրև լուսանցք նորա , որոց գաղտնածածուկ լուսամուտքն նշողէ լոյս տղօտ ՚ի ներքս ։

Անտանելի է ժահահոտ օդն , ընչարգել խոնաւութիւն և խաւարամթութիւն տեղւոյս ․ յարում ուրեք՝ լռութիւն ․ և ուրեք արձագանգ յորուցանեն զարհուրանս ։ Իստորի անցանողն ընդ այս ․ զի տանէ՞ն անդր պատնայ , և չգիտէ թէ յո՞ երթայ ։ Եղէնախումբ Չղջիկքն՝ որք բունաւորեալ են՝ յայս խաւարչտին նեղուց , և անդադար այարէն անդր թռչին , արգել և սարսափ պատճառեն անցորդաց , որոց և զարշահոտութեանն տանել դժուարին է ։

Արդ՝ յորժամ ՚ի սոյն գետնափոր՝ կամ սարեկիկեայ տեղի խարխափի ոք ․ և յենլէջ և ՚ի խաւարնակ անցան մոլորի , կարծի թէ անկանիլ ուրեք ՚ի մահ խորխորատ ․ բայց երբ ընդ նեղ սատիճանն ելանէ ՚ի վեր՝ դառնէ զինքն իբրև ՚ի մէջ դրախտի ․ զի ընդ լուսոյ տեսանէ միանգամայն և զուարճալի տեսարան իմն բնութեան , գեղեցկացուցեալ ճարտար արհեստիւք ձեռագործաց մարդկան ․ այն է՝ զի յետ անցանելոյ ընդ այս

զարհուրելի գետնաւոր՝ որ ՚ի յատակ լճին ․ գը-տանէ զցանկալի պարտէզ մի զանազան ծառոց ․ և զգեղեցիկ և զերևելի պալատ արքունի ․

Այս ջրապատ ամրոց ՚ի հնումն էր տեղի ա-պաստանի Թագաւորին Պօկջօկարտայ ․ զի ՚ի ժամանակի խռովութեան յետ համբարելոյ անդ զպարէնս իւր և զօրացն ․ և ամրացուցանելոյ զի-նուքն՝ մտանէր ՚ի ներքս հանդերձ արամբք իւ-րովք ․ և լնոյր զանցանս նորա ջրով ․ որում ան-հնար էր համազօր Թագաւորաց տիրել ․ Քանզի թշնամիք նախ պարտ էին անցանել ընդ լիճն և ապա ելանել ՚ի պարիսպն ՚ի վեր ․ բայց նե-տաձիգ զօրքն՝ որք ՚ի մէջ աշտարակացն զգու-շանային ․ յամենայն կողմանց նետահար արա-րեալ սատակէին զդիմողսն ․ և ինքեանք բնաւ զերծ մնային ՚ի վնասուէ թշնամեաց ․

Թէ և ՚ի մէջ հնութեանց Պալայ նշանա-ւորքն միայն այս երկուքն իցեն ․ այսրէն յիշե-ցեալքս ․ (որք համեմատելով ընդ մեծագործ և ճարտարարուեստ շինուածոցն Եւրոպիոյ ․ կամ Ասիոյ իբրև կաթիլ մի ՚ի դուլէ ․) բայց բնական հնութիւնք ձեռագործ Արարչին՝ որք ոչ փթթանան և ոչ հնանան ․ այլ կան և մնան միշտ ՚ի նոյնութեան ․ որպէս ՚ի բնէ ստեղծան՝ կարծեմ ՚ի բովանդակ աշխարհի ոչ գտանին ․ որք իցեն այնպէս զարմանաքանչ ․ սրտառուչ և ըղ-մայլողական՝ որպէս ՚ի Պալա ․ Օհ ՚ի բա-

զուարճալից շարք լերանց , դաստաւորութիւնք բլրոց , երեւէջ պալարագեղ անդեաց , խոր ու ձորոց , և 'ի նմին կայացեալ բազմութիւն բըլ-բակաց՝ յորդութիւնք ջուրց անթիւ լճակաց և կարկաջահոս առուաց , լայնատարած և կա-նաչափիւռ շարայարութիւն դաշտաց , և նմին կայեալ խիտ կամ ցաք ու ցիր՝ բարձր կամ ցած բազմամատ կամ ոստաքանց տունկք ծառոց , որք միով հայեցողութեամբ անկանին ընդ աչօք՝ յա-փշտակելն զմիտս մարդոյ 'ի սքանչացումն ընդ մեծագործութիւն և ընդ փառս Ամենազօրին Աստուծոյ . որք և տան ուշ ածնուլ , զի եթէ անցաւորն այսչափ սիրալի և զարմանալի արար՝ ապա որչափ և զանանցն , զոր միտք մարդկան չէ բաւական ըմբռնել յաստի կեանս իւր .

ԳԼՈՒԽ ԺԲ .

ԼԵԶՈՒ

ԲԱՑ 'ի լեզուաց Եւրոպացւոց՝ Չինէացւոց և Արաբացւոց՝ որք օտարք են . բնիկ լեզուն՝ զոր ի կիր ածեն կամ խօսին բոլոր բնակիչք կըղ-զեացն ծովու Արեւելեան Հնդկաց , են եօթն . այսինքն՝ Մալայացւոց՝ Ջաւայացւոց՝ Սուն-դայ՝ Բուգիսեան՝ Հոմամնեւեան՝ Թիմու-րացւոց և Պապուացւոց կամ Խարչկացն .

Մալայացւոցն է բնիկ լեզու բնակչաց Սու-

մատրայ եւ նորին մերձակայ կղզեաց · արեւելեան եւ արեւմտեան եզերց Բօրնիոյ · որ ի բաղմաց հնաց սփռեալ է նաեւ ի հիւսիսային եզերս Ճավայ · 'ի Մոլուկս և յայլ տեղիս ։

Նոյս լեզու է առհասարակ ամենայն օտար ազգաց գործածելի · զոր 'ի կիր առնուն ընդ ամենայն տեղիս՝ յամենայն գործառնութիւնս իւրեանց ։

Այս լեզուիս խրթին է և պարզ ·

Խրթինն է խառն ընդ Սանսկրիտ՝ Ճավացի Արաբացի և այլազգական բառից · և պաճուճեալ անսովոր նախադրութեամբք · բաղադրական և ածանցիչ մասնկամբք · զոր և 'ի կիր առնուն միայն 'ի մատենագրութիւնս և 'ի թըղթագրութիւնս երեւելեաց · այլ է բազմաց անհասկանալի ։

Իսկ պարզն · զոր սակ և ընկիկ կամ սովորեալ բառիւք վարեն 'ի խօսս՝ գրեթէ ամենայն բառիւք երկվանկի է · և ըստ որում՝ հնչումն կամ արտասանութիւն հեշտընկալ՝ վայելուչ և ամենեցուն դիւրուսանելի ։

Պատմիչքն համառօտն թէ՝ Մալայեցիք ի բնէ անտի չունէին գրաւոր տառս · այլ յետ ընդունելոյ զդէն Մահմեդի՝ սկսան 'ի կիր առնուլ զգիրս Արաբացւոց՝ որ է կարի յարմար լեզուի իւրեանց · միայն յաւելին 'ի նա նգա՝ 'ի էյին · պա՝ ի ֆէն · և նեայ՝ ի նունն դնելով ըղերիս նօխտաս ։

Թէ ևս բազում են գրական պատմութիւնք և ստանաւոր բանաստեղծութիւնք յազգի այսմիկ, սակայն մի միայն երևելի մատեան 'ի նոսա է Թաջուս Սըլաթին՝ կամ Մակոտա Րաջա (Թագ արքայի.) որ արարեալ է յումեմնէ հեղինակէ նորա՝ Բօխարի անուն. զոր և վասն արժանաւորութեանն թարգմանեալ են 'ի լեզու Հոլանդացւոց ։

Խորագիր այս մատեան 'ի հեղինակէն կոչեցաւ Թագ արքայից. քանզի է գլուխ ամենայն մատենից Մալայացւոց, որոյ բանքն են ընտիր, ոճն գեղեցիկ և բանքն լի իմաստութեամբ. որ բաժանեալ է 'ի քսան և չորս գլուխս, և իւրաքանչիւր գլուխ ուսուցանէ զպիտանաւոր իմաստ ինչ հանդերձ օրինակօք և վկայութեամբք գրոց.

Արդ՝ որովհետև այս է պիտանաւոր լեզուն վասն ազգի մերոյ տեղեկոյ 'ի Ջավա, զոր առհասարակ 'ի կիր առնուն 'ի գործառնութիւնս իւրեանց ընդ օտար ազգս, վասնորոյ հարկաւոր համարիմ տալ սակաւ ինչ ծանօթութիւնս զկանոնէ ուղիղ դասաւորութեան գլխաւոր բառից, որով լինի բան՝ կամ ասութիւն ինչ. Բայց քանզի հիմն՝ կամ գլխաւոր մասունք բանի են գոյական անունն և բայն. նախ՝ ասասցուք զհոլովմանց անուանց և զխոնարհմանց բայից. և ապա զշարամանութենէ նոցա համառօտիւ ։

Անուանք ոչ փոփոխին 'ի հոլովս իւրեանց,

միայն Տրականն՝ Բացառականն՝ Գործիականն և Ներգոյականն յատկանուն նախադրութիւնքս ատա , իչտա կամ՝ աչըն . տէրէ կամ՝ տէրէ դարը . օլուր կամ՝ տանտան . և տի կամ՝ տիտանէն զոր օրինակ ։

Ուղ. և Սեռ. բուն , պաան. պան.

Տր. սամս կլայըս կամ՝ անկան բունս , պան , ամ պաան , 'ի պաան ։

Հայց. բուն մս , չպաան .

Բաց. դէրի կամ՝ դէրի պաղա բունս , 'ի պանէ .

Գործ. օլէն իւս դանդան բունս . պանէ .

Ներ. դի իւս դիդալէմ բունս , 'ի պան ։

Աշխարհական կազմի միջարկութիւնքս է . և յոգնականն՝ կրկնմամբ մի և նոյն բառին . զոր օրինակ , է բունս , ով պան . բունս բունս , պանս . օրանդ օրանդ , համբէն . պուհօն պուհօն , ծառս . և այլն ։

Բայց քառ ինքեան չունենալով զդէմս զթիւ և զժամանակ՝ չկարեն առանց էական դերանուանց եւ օժանդակ բայից կամ՝ բառից վարիլ· ուստի հարկ է միշտ 'ի կիր առնուլ յառաջոյ 'նոցա զէական դերանուանս գուա կամ՝ ակու , է. ։ Նա նոյնոյ կամ՝ համբաւ, նաատպ . կամս կամ՝ անկաւ՝ կամ՝ լու ( ասորական բառ ) տի . դիա , նա . կիսա կամ՝ կիսաօրանդ , դէ . կամս օրանդ . տանա . դիաօրանդ , նտա , 'Ի յայս առնել զդէմս եւ զթիւ նոցա՝ վարեն զօժանդակ

բայս համբառս՝ որպս, է. լզի, դէմն, սու-
դա, առաջնէւ. լամն սուդա՝ կողմն և առաջնէւ.
բոլէ, ներէմ. մոռւ, նամս, և նանուի, ապառնի.
և ջնկալը համ կալը, եթէ՝ 'ի կալմիլ զժա-
մանակս նոցա. Օ ի այդ յայս առնէ զներկայն
թէպէտ երբեմն անանց սորա և. ըստ՝ զանկա-
տարն. ապառ՝ զկատարեալն, և երբեմն անանց
սորա. ըստ ապառ՝ զանցեալն. Բոլէ, համ Տօն
և նանի՝ զապառնին. և ջնկալ համ կալ՝ զըս-
տորագասական եղանակն. զոր օրինակ,

Գուշա համ անու, ապյեայ համ
Համբառ կարու համ անկաւ, համ
լու, և դիա ադա կրջա,
} գործեմ. գործես, գործէ.

Աքիտա համ կիտա օրանդ,
կամուօրանդ համ լու օրանդ,
դիա օրանդ ադա կրջա,
} գործեմք, գործէք, գործեն.

Գուշա և այլն՝ լազի կրջա, գործէի, գործէիր.
Գուշա և այլն՝ սուդա կրջա, գործեցի, գոր-
ծեցեր.
Գուշա և այլն՝ լամն սուդա կրջա. գոր-
ծելոց եմ, գործելոց է.
Գուշա և այլն՝ Բոլէ համ մոռւ և համ նանուի
կրջա, գործեցից գործեսցես.
Գուշա և այլն՝ ջնկալը կրջա, գործիցեմ, գոր-
ծիցես.

Հրամայական

Կրջա, գործեա. ջանգան կրջա, մ՛ գործեր.

Բխար զու ա, կամու, դիա կրջա, Գուրծէնէն, Գործէւոյէ․ Գործէւոյէ․ և այլն․

Որպէս խոնարհին և այլ ամենայն բայք մասնայացուոց․ և որպէս ՚ի վեր անդր ասացաք՝ երբեմն ներկայն և կատարեալն վարին առանց օժանդակ բառիցս՝ ―դ― և ―――դ―․ զոր օրինակ․ Գիտա կրջա գանգան մայլն, Նա Խաշուրն Գործէ, Գիտա ամբէլ գանդխա մաքան, Նա Էա Ն Էկէր,

Արդ՝ ըստ որում նշանակեցաք թէ՝ բայն և գոյական անունն են հիմն և գլխաւոր մասունք բանի, որովհետև առաջինն ցուցանէ զառս կամ զկիրս․ և երկրորդն լինի տէր կամ անուն, և ենթակայ կամ խնդիր առնելոյն կամ կրելոյն, և ստանայ զածականս․ լինի յատկացուցիչ կամ յատկացուցեալ՝ և բացայայտիչ կամ բացայայտեալ․ այժմ ասասցուք թէ՝ որպէս շարամանին նոքա ընդ իրեարս․ կամ զիարդ զետեղին զկնի միմեանց․

Ընտիրն կանոն ՚ի շարամանել զբառս՝ որով լինիցի կատարեալ բան ինչ՝ կամ անսղալ ասութիւն, է անուն բային նախադասել բային․ բայն՝ խնդրոյն․ գոյականն՝ ածականին․ յատկացեալն՝ յատկացուցչին, և բացայայտեալն՝ բացայայտչին․ որոց սղալ զետեղմամբն՝ սղալին կամ այլայլին միանգամայն միտք բանին․ Զանզի՝ յորժամ ներգործական բայ ինչ նախադասի անուանն՝ անունն լինի սեռ ի խնդիր նորա․

որպէս՝ օրանց բեկէն, [illegible] . և բեքէն օրանց . [illegible] ։ Օրանց պուկուլ անջին, [illegible] . և՝ անջին պուկուլ օրանց, [illegible] ։ Բապա աջար անակ, [illegible] . և՝ անակ աջար բապա, [illegible] . և այլն ։ Փոփոխ զետեղմամբ բայից, անուանց և խնդրոց՝ փոփոխին և միաք բանին. զոր օրինակ, Տուան սուգա պատանդքի բուժա, [illegible] . և դի բուժա սուգա պատան տուան, [illegible] . կամ՝ Սուգա պատան դի բուժա տուան, [illegible] . և այլն ։ Եւ բայք ոմանք նախադասեալ անուանն՝ բազմիցս փոխին 'ի դոյական անուն. զոր օրինակ, տուան ջալան, [illegible] . և ջալան տուան, [illegible] ։ Օրանց կրջա, [illegible] . և կրջա օրանց, [illegible] ։ Անջին գիգիտ, [illegible] . և՝ գիգիտ անջին, [illegible] ։

Յորժամ՝ածականն նախադասի դոյականին, փոխի այն 'ի մերադական անուն. և դոյականն լինի յատկացուցիչ նորա. զոր օրինակ, պուհօն տինկի. [illegible] . և՝ տինկի պուհօն, [illegible] ։ Օրանց բապաւս, [illegible] . և բապաւս օրանց. [illegible] ։ Բուժա բասր, [illegible] . և բասր բուժա. [illegible] ։ Բայց յայսպիսիս բազում անգամ 'ի կէր առնու և [illegible] . զոր օրինակ Տինկի պու-

Հօն. սբաղու ս օրանգ. սբատր բուժա. և այլն։

Ծածկանք յորժամ ցուցանեն զորպիսութիւն իմն գոյականի առաւելեալ կամ նուազեալ. քան զմի սոյն. սմանօն զբառս լեր. առաւել. և. յերբանեակ. արլեր. արլալու բանեակ. և արլալու ամնա. Եւ առաւել չար. լաւ չար. զոր օրինակ. լեր բազում. գեղեցկագոյն. առաւել գեղեցիկ. լեր բանեակ. արլեր. արլալու բանեակ կամ արլալու ամնա բազում. լաւ գեղեցիկ. ամենագեղեցիկ. և այլն։ Ոսքա յարիւն ՚ի գոյական անուն՝ զնոյն կանոն պահեն. որպէս դրական ածականքն. և ՚ի բաղդատելն ընդ այլս մ՚բառի սմանօն զնախադրութիւնս դէրի. որ է իբրև զմեր քան. զոր օրինակ. ինի բուժա լեր անինկի դէրի սու անպունեայ. այս գաղտն Եղբայրադայն է քան Եղբայրն. ինի կամար լեր բատր դէրի լային. այս ոեղեցն առաւել ճեճ է քան լայն. կամ քան ղզմն։

Իսկ յորժամ յառկայու ցիւն նախադասի յառկայացուցելոյն. բաղում անգամ փոխի այն ՚ի Հրամայական բայ. և յառկայացուցեալն լինի անալ խնդիր նորա. զոր օրինակ. Մէջա մնքան, ոեղան ճաղելոյ. և մնքան մէջա. լեր ղեղան. այեր մինումն. ջուր ըմպելոյ. և մինումն այեր. ըմպելջուր. Մանգ բլանջա. տըամ ծախոյ. և բլանջա մանգ. ծախեա տըամս. Կամ որ մին լինի փոխանակ մի սոյն. զոր օրինակ. պասան լամպու կամար. ըսպ ղըպտել ոենելի. և պասան կամար լամ-

պու, [illegible]։ Ճանկատ լամպու պին-տու, 'ի [illegible]. և Հանկատ պինտու լամպու, 'ի [illegible]։ Բայց կարէ յատկացուցիչն նախադասել յատկացուցելոյն՝ յորժամ յարեսցի 'ի նա ստացական դերանուն՝ Փունիկեայ, [illegible], [illegible], [illegible]. Զորօրինակ, կամ-արպունեայ լամպու, պինտուպունեայ լամպու-փոխանակ՝ լամպու կամ տրլամպու պինտու, և այլն։ Բայց ոչ լինի առնել՝ մարքանալունեայ մէջա, այերպունեայ մենամ. բլանջապունեայ վանդ. որով իմանի թէ՝ այն անուանք՝ որոց 'ի նախադասելն յատկացուցելոյն փոխին 'ի բայ, չկարեն առնուլ զայս դերանուն։

Բացայայտելի անուանն միշտ նախադասի բացայայտչին. զորօրինակ. Եգրի Մակաար, [illegible]. առնա Բեկաւի, [illegible] ա-ջա իբրահիմ, [illegible]։

Արդ՝ յետ ասելոյ զբայից՝ անուանց և ածականաց՝ արժան է գիտել նաև՝ զի յորժամ բայ մի ունիցի զերկուս խնդիրս՝ մին՝ անուն, և միւսն բնութեան. կամ մին բնութեան, և միւսն երկրորդական կամ պատահական, որն դնի մերձ բային։ Իսկ ստացական դերանուանք՝ զուսպունեայ, [illegible]. կամնապունեայ. [illegible]. զխապունեայ, [illegible]. կխապունեայ, [illegible]. կամնօրանգպունեայ, [illegible]. զխօրանգպունեայ, [illegible] կամ [illegible]։ Իսկ ցուցական դերանուանք՝ խիխ, [illegible], [illegible]. խառ

[illegible] ։ Իսկ ժամանակական և տեղական մակբայք և նախադրութիւնք ո՛ւր զետեղին ՚ի բանս ։ Հուսկ ապա՝ ասասցուք և ըզկրաւորական բայից ։

Ներգործական բայք առեալ զերկուս խնդիրս՝ մին սեռի և մին բնութեան ․ սեռինն միշտ նախադասի բնութեան խնդրոյն ․ զոր օրինակ ․ կասի խաւ չինչին սամա սայեայ ․ [illegible] ։ Իսկ չէզոքական բայից բնութեան խնդիրն նախադասի երկրորդականին՝ կամ պատահականին ․ զոր օրինակ ․ կալու տաւանպունեայ ասւզարա պու լանգ դի բուսմայ դէրի կօսակասի ինի սուրաա ականդիա գանգան տաբէ սայեայ ․ [illegible] ։ Իսկ երբեմն երկրորդական խնդիրն նախադասի բնութեան խնդրոյն ․ զոր օրինակ ․ Պախա պրգի դէրի Իթամի դի Սմբանդ ․ [illegible] ։

Ստացական և ցուցական դերանուանքն միշտ նախադասին ստացուածոյն և ցուցանելի անուանցն ․ զոր օրինակ ․ Պուապունեայ ․ կամուպունեայ և դխապունեայ բուսմա ․ [illegible] ։

Իսկ և ստացական դերանուն ինչ երորդ դիմի՝ նեայ ․ որ յարեալ ՚ի վերջս բառից՝ ցուցանէ [illegible] ․ կամն ․ զոր օրինակ ․ բուսմանեայ՝ [illegible]

[illegible] · Հարտանեայ , [illegible] [illegible] · պակիանեայ , [illegible] [illegible] · բռոպանեայ , [illegible] կամ՝ [illegible] [illegible] · տանակնեայ · [illegible] կամ՝ [illegible] [illegible] և այլն · զոր օրինակ · ըհետ խոսու օրանց զանզան բրանինեայ · [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] · Ջուայ բառմա սամա սամա բկականնեայ · [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

Ինչի և խոսու բառմա , [illegible] [illegible] և [illegible] [illegible] · ինչի օրանց , [illegible] [illegible] · խոսու օրանց , [illegible] [illegible] · և այլն ։

Ժամանակական մակբայն միշտ նախադասի անուան և բային · եւ տեղականն բազմիցս գնի զկնի բային և խնդրոյն , և յորժամ բայն չունիցի զխնդիր՝ գնի զկնի բային · զոր օրինակ՝ ինի Հարի սայեայ բրհանկատ գերի սինի , [illegible] [illegible] [illegible] ։

Ստորադրութիւն միշտ նախադասի անուան · զոր օրինակ՝ Գրիլուար բառմա , [illegible] [illegible] · գիզալեմ բառմա , 'ի [illegible] [illegible] · գի մասխա մէջա , 'ի [illegible] [illegible] · գիաաաա մէջա , 'ի [illegible] [illegible] ։

Ներգործական բայ մի փոխի 'ի կրաւորական 'ի ձեւն բայիս՝ կնա , [illegible] · և որպէս 'ի Հայումն է , անուն ներգործական բային յուղղական հոլովոյն փոխի 'ի բայառական , և սոյն խնդիր ներգործական բային 'ի Հայցական հոլովէն՝ փոխի յուղղական և լինի անուն կրաւորական բային · զոր օրինակ՝ բաղա պու կուլ անակնեայ [illegible] [illegible] [illegible] [illegible] · և անակ կնա պու կուլ

գէրի բաղանեայ ․ ուրէ հաւքանէ 'ի հօղէ էողէ ․

Եւ է ևս համառօտութիւն գործոյ մերոյ ոչ ներեաց մեզ՝ զայսպիսի ինչ յառաջ բերել ․ բայց և ոչ անտեղի համարեցաք վասն այնոցիկ ․ որք զաշխարհաբար լեզու մեր թարգմանեալ 'ի Ա՛-լայներէն՝ ձախձաւուն խօսին ․ որ որպէս ներհակէ գրաբառի մերում ․ նոյնպէս ներհակէ և Ա՛-լայներէն լեզուին ․ զոր յողն մեծագամայն շնորհի և բազմիցս ողայ հանկանոյ զառացեալն ․

Պալացւոյն՝ է բնիկ լեզու Պալանեան ազգին՝ բնակելոց յարևելեան կուսէ Լօտարի գետոյն ․ սկսեալ 'ի սահմանագլխոյն Զէրիբօնայ ․ որք են իբրև եօթն միլիոն հոգիք ․ Այս լեզու խօսին նաև բնակիչք Լուբօկայ ․ Բօլոյ և Լամբօկայ և Ամաւրա ․ բայց փոքր տարբեր արտասանութեամբ ․ մանաւանդ որպէս 'ի Սումատրա ․ 'ի Բօրնէօ և յայլ տեղիս ինչ ուր 'ի հնումն իշխէին ազգ Պալացւոց ․

Այս լեզու կարի ձոխ է՝ յատկապէս համամիտ բառիւք ․ որ և բաժանի յերկուս ցեղս՝ 'ի Նգօկօ և 'ի Կրօմօ ․ Նգօկօ է հրամայական կամ իշխանական լեզուն ․ որով իշխանք կամ մեծամեծք խօսին ընդ հպատակս՝ կամ ընդ փոքունս ․ Իսկ Կրօմօ է խոնարհական կամ յարգական լեզու ․ որով հպատակք կամ փոքունք խօսին ընդ իշխանս կամ ընդ մեծամեծս ․

Ունին սոքա գլխաւոր տառս թուով քսան ․

և զնշանագիրն՝ կամ զձայնաւոր նշանս մեծատառանս զորս 'ի կիր առնուն ընդ ամենայն տառս . և 'ի ձախոյ գրեն առ յաջն ։

Առ 'ի քաջ գիտել զայս լեզու , պարտ է ուսանել զլեզու նախնեաց նոցին՝ կոչեցեալ ԿԱՎ.Ի· որ խառն է ընդ անհամար Սանսկրիտ բառից . և նոցին մեծամեծ մատեանք նախնի պատմութեանց բանաստեղծութեան և օրէնք գրեալ են 'ի նոյն լեզու ։

'Ի Սոնդայոյ լեզու խօսի ազգն Ջաւա՝ որ բնակեալ է յարևմտեան կողմն Լօսարի գետոյն մինչև ցնեղուցն Սոնդայ . որք են իբրև երեք միլիոն հոգիք ։

Թէև սոքա ևս կոչին Ջաւացիք , բայց միանգամայն յատուկ են լեզուով՝ ծիսով սովորութեամբ և զգեստուք . որով իմանին՝ եթէ յայլ սերնդոց իցեն . զորոց ոմանք կարծեն լինել 'ի Հարաւային բնակչացն Սումատրայ ։

'Ի հնումն այս ազգ էր ընդ իշխանութեամբ Պաջաջարան կայսրութեան՝ որ 'ի Բանթամ: և միւսն՝ ընդ իշխանութեամբ Մաջապահիտ կայսրութեան՝ որ 'ի Սուրա կարտա ։

Ոչ գոյ յատուկ տառ 'ի նոյն լեզու , և ոչ գրական գիտութիւն ինչ . զի ամենք 'ի կիր առնուն զՋաւայեցւոց տառս . և ամենք զՄալայեցւոց ։

Այս լեզու գոլով աղքատիկ և անօգուտ՝ ոչ ոք յօտար ազգաց հետամուտ լինի յուսանիլ ։

Ճուղխեան լեզու խօսին բնակիչք արեւմըտեան կողմանց Սիբերեայ՝ ի Տակաստ․ բայց այլազգ արտասանութեամբ․ Նոյ յարեւելեան և ի Հիւսիսային արեւելեան կողմանս Սիբերեայ՝ ի Ճօնի․ ի Ճինստանից և յայլ մերձակայ կըղզեաց նորա․ նաեւ յարեւելեան ծովեզերին և յայլ տեղիս ինչ Ճօրնիոյ․ որ Ճուղխուք կային ըղբնակութիւն և զբաղեալ են ի տուրեւառութիւն․

Համամահներեան լեզու խօսին բնակիչք Սերաստեան կղզեաց․ յԱմերն ի Ճանգա․ ի Թ․ լընաս․ և ի Հիւսիսային արեւմտեան կղզիս ինչ Սիբերեայ․

Թ․ խմուրեան լեզու խօսին ի Թ․ խմուր և ի մերձակայ մեծ և փոքր կղզիս նորա․

Այս լեզու բաժանեալ է ի զանազան ազգս լեզուաց․ յորոց ոմանք կարի զանազանք են յիրերաց․

Պապուացւոց լեզու խօսին ի Նոր Գ․ինէ․ ի Սիսօլ և ի մերձակայ հիւսիսային արեւմտեան և հարաւային եղերս նորա․

## ԳԼՈՒԽ ԺԴ

### Կրօն

Ի ԶԱՆԱԶԱՆ կղզիս եւ ուրեք ուրեք ի ներքին մայրն գետնու տիրէ խաւար հեթանոսութիւն․ Յորոց ոմանք այնպէս անկեալ են ի խոր ա-

գիտութիւնս՝ մինչ զի ոչ միայն չճանաչէին զա- րարիչ իւրեանց, այլև և զմարդկային բնութե իսկ չցուցանէին բնաւ զնշան. զի իբրև վայրենիս ծնանէին, սնանէին և մեռանէին. կամ՝ գերեզման լինէին իրերաց. Ամենք ունէին զանկատար կար- ծիս միայն զբարի և չար հոգւոց. Իսկ ոմանք զգան զգոյ գերագոյն Էութեան միոյ. զոր պաշ- տել արժան է՝ ասեն. և ցուցանէին զատուեր իմն աստուածպաշտութեան. բայց ոչ գիտէին ստու- գապէս զանիմանալին էից՝ Ստեղծող ամենայնի.

Բաց յայսոց երից դասուց մոլար հեթանոսաց՝ գոն և այլ երեք գլխաւոր կրօնականք. այսինքն՝ Քրիստոնեայք, Մահմետականք և Բուդհիք կամ՝ Բուդհօեանք.

Նախքան զտիրել Հոլանդացւոց զայս բազ- մ. կղզի Արևելեան Հնդկաց՝ 'ի միում անգւոջ միայն քարոզեալ էր քրիստոնէութիւն 'ի Փորթ- քէշից. իսկ 'ի հաստատել ընկերութեան Արե- ւելեան Հնդկաց՝ սկսան տարածանել զայն և յայլ և յայլ տեղիս. Ապա 'ի սկսանել Նա- ցա առաւել ևս փոյթ կալան 'ի գլուխ հանել զայս տքնութիւն. ուր և յաջողեցաւ նոցա շահել զհիւսիսային կողմանս Սանգիր և Սալիբաբի կղզեացն. զարևելս Արու կղզեաց. զհարաւային կողմանս Թիմորայ և զնորին մերձակայ փոք- րիկ կղզեաց. նաև զարևմուտ Սելեբեայ և զծո- վեզերս Կորամանդելայ. յորս և կարգեցին զայ-

ցելու քահանայս և զքարոզիչս, և հաստատե-
ցին զգլուխ դպրանոց վասն հանից նոր հաւատա-
ցելոց ՚ի լնուլ զկարօտութիւն նոցա՝ և կրթել
զմանկունս նոցին ՚ի քրիստոնէութիւն ։ Որոց
՚ի պէտս ՚ի սկիզբն տասնևեօթներորդ դարուն
տպեցին զմալայերէն զաղօթամատոյցն և զգիրս
քարոզութեան. և թարգմանեցին զհին և զնոր
Կտակարանն. նաև ՚ի զանազան տեղիս կառու-
ցին զեկեղեցիս և հաստատեցին զդպրոցս ։

Մինչև ցայսօր իսկ խնամ տանին այսմ. զի միշտ
առաքեն ՚ի Պրոտեստանդ միաբանութենէ զքա-
րոզիչս, որք եկեալ բնակին ՚ի հիւսիսային արե-
ւելեան կղզին Սելեբեսայ, և ՚ի փոքրիկ կղզ-
զիս Թիմուրայ՝ ՚ի քարոզել և ՚ի քահանա-
յագործել ։

Մահմետական կամ Իսլամեան կրօնն մու-
ծաւ յայս կղզիս՝ սկսեալ ՚ի միջոց տասն և չո-
րորդ դարուն. և որպէս յայտարարութեան անդ
ասացաւ՝ նախ ՚ի Պորնէօ. որոյ և առաջին քա-
րոզիչքն էին Շիխէդ Աբդուլլա և Շէխ Մու-
լանա ։ Այս վերջինն ոչ միայն ընկալաւ ՚ի Ջա-
ւացւոց իբրև զմարգարէ կամ զսուրբ ոմն, այլ և
ստացաւ զհոգեւորական և զաշխարհային գահա-
պետութիւն. զի արարին զնա Սուսուհունան
Գունունգ Ջատի և Թագաւոր Չերիբոնայ
յամի Տեառն 1574 ։

Յայսու ժամանակաւ որդի նորա՝ Հասան

Սեդրինն կալեալ զաւերութիւն Պաջաջարան՝ եբարձ զիշխանութիւն հեթանոսաց. և կալաւ զաթոռն Պրաբու Սեդայ 'ի Բանթամ։

Ընդ համբաւոյ սորա յաթոռ թագաւորութեան՝ խոկ և խոկ տարածեցին զկրօն Մահմետին 'ի Ճաւա՝ 'ի Սումատրա՝ 'ի Բօրնէօ՝ և յայլ բազում տեղիս, ուր իշխէր տէրութիւն նոցա։

Սան Շեխ Մուլանայ պատմի թէ՝ էր նա ութերորդ ծնունդ 'ի Մահմետէ՝ ծնեալ 'ի Բաղդատ. որ 'ի Հնդկաստան անցց հասակի իւրում 'ի տեսլեան էառ հրաման 'ի մեծ պապէն իւրմէ՝ 'ի Մահմետէ՝ երթալ 'ի Մաքքէ, եւ անդ կրթել զինքն 'ի կրօն իսլամեան. Յետ չուելոյ նորա անդ և կատարելոյ զհրամանն՝ կրկնի տեսիլ պապին. և հրամայէ նմա երթալ 'ի Ճաւա և քարոզել հեթանոսաց. Եւ ասի 'ի նաւարկել իւրում զխաղեալ սաստիկ ալէկոծութեան՝ և խորտակեալ նաւու նորա, մազապուրծ անկանի յեզերս Կորամանդելոյ. յորմէ անցեալ գայ 'ի Չերիբօն որ 'ի Ճաւա. ուր քարոզեալ զկրօն Մահմետին՝ ընկալեալ լինի իբրև զմարգարէ անմն. որ և կարգի տէր և իշխան աշխարհին։

Այլ վասն Հասան Սեդին որդւոյ նորա պատմի այսպէս. թէ առաքեցաւ նա 'ի հօրէ իւրմէ առ Բանթամ 'ի քարոզութիւն. որոյ եկեալ էջ 'ի Բանթան Պուլանգ իբրև զմիայնակեաց

ոմն ․ և արար անդ զմենաստան մի ․ ուր կեայր խստակրօն վարուք իբրև զսուրբ ոմն ․ և համբաւեալ էր թէ՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր ․ և երբ կամէր՝ աներևութանայր ։ Այսպիսի սուտահամբաւ սուրբ վարուք 'ի փոքր ժամանակի դարձոյց աւելի քան զերեք հարիւր հազար հոգիս 'ի դէն Մահմետի ․ և գտեալ իւր զբազում համախոհս 'ի մեծամեծաց՝ եւ պատերազմ ընդ վերջին Թագաւորի Պաջաջարանայ ․ յաղթեաց նմա , և տիրեաց զաթոռ նորա ։

Այս կրօն յայլ ուրեք ոչ այնչափ պատուի որչափ 'ի Ճավա և 'ի Սումատրա ․ ուստի և յամենայն տարւոջ բազմութիւնք ուխտաւորաց երթեալ 'ի Մաքքէ ․ և անտի դարձեալ 'ի հայրենիս՝ ստանան զսրբակրօն անուն Հաջի՝ մեծարին 'ի ռամկաց , և գահագլուխ լինին յամենայն հանդիսի ։ Բայց հազիւ ուրեք գտանի ոք ․ որ պաշտէ զայս կրօն առ խառն 'ի նախնի դիւցապաշտութեանց՝ և յայլ հեթանոսական սնոտի կործեա ․ ուր և բազումք անուամբ միայն են Մահմետականք ․ և եթէ զինչ Ղուռանն՝ կամ աւանդութիւն կրօնի իւրեանց՝ բնաւ ոչ գիտեն ․ այլ՝ այսու ամենայնիւ՝ զարշին 'ի խոզենեաց ․ և առաւել ատելի են նոցա Քրիստոնեայք քան Հեթանոսք ։

Բուդհի կամ Բուդհօեան կրօնն է մին 'ի կըռապաշտական կրօնից Բրահմանցւոց 'ի Հնդ-

կոստան ։ Եւ զԲուդհի խոստովանին գոլ իններորդ մարդեղութիւն Վիշնու աստուածոյն ։ Ոմանք ասեն, այս կրօն սկսաւ վեցհարիւր. և ոմանք՝ հազար ամօք յառաջ քան զՔրիստոս. և տարածեցաւ յարեւելեան կղզիսն Ճաւայ, 'ի Չին և 'ի Ճապան 'ի սկիզբն դարուն մարդեղութեան Տեառն մերոյ ։

Յոմանց կարծի թէ ծանօթութիւն Բրահմա աստուածոյն նախ եղև 'ի Ճաւա. որ հազար ամօք յառաջ քան զայս խափանեցաւ ծագմամբ Բուդհի աղանդոյն՝ միայն պահելով զանուանութիւնն. որ սուրբ էր 'ի Բրահմանեանս՝ և արգելեալ 'ի Բուդհօեանս ։

Գերապատիւ պաշտելին 'ի սոյն աղանդաւորաց է աստուածն Սիվա կամ Սիբա. որ 'ի Հնդկացւոց համարի մին յերից ինքնագոյ էիցն. այսինքն՝ Բրահմայ՝ արարչի՝ Վիշնու՝ պահպանչի՝ և Սիբայ կամ Մահադէվայ՝ կործանչի.

Համապատիւ պաշտին նաև կին Սիվա աստուածոյն՝ Դուրգա, և որդի նորին Գանէսա ։

Մինչև ցայս վայր ի բազում տեղիս տեսանին արձանք այսց կռոց՝ ձևացուցեալ 'ի պէսպէս նմանութիւնս. այսինքն՝ Սիվա յեզն թեւաւոր, որ է հեծարան նորա, 'ի նշան թռչելոյ յերկինս ։ Գանէսա՝ 'ի գլուխ փղի՝ 'ի նշան իմաստութեան. և Բուդհի՝ 'ի դէմս փափկասուն կնոջ՝ 'ի նշան գթութեան, և այլն ։

Այս աղանդ մինչև ցարդ գտանի 'ի բազում տեղիս. այսինքն՝ 'ի Ճավա, 'ի ներքին մայրս ինչ Հարաւակողման Բանթամայ. ուր են սակաւաթիւ ազգ մի կոչեցեալ Բադուին. Սոքա խորշին 'ի մսոյ արջառոյ՝ գոմշի՝ խոզի՝ ոչխարի և բադ թռչնոյ. բայց յոյժ սիրեն զմիս ընդեղջեր և կապկի. 'Ի Մադուրա 'ի սակաւ աւուրս. բայց 'ի Բալի՝ գրեթէ բոլոր բնակիչքն 'ի սոյն աղանդոյ են.

Այս աղանդաւորք կարի հակառակ են Մահմետական դենին.

Չինացիք պաշտեն միայն չաստուածն Հայրենեաց իւրեանց զՖօ, զոր բերին ընդ իւրեանս յայս կղզիս. և բնաւ ոչ փոփոխեցին զաւանդութիւն և զծէս նախնեաց իւրեանց. զի զմի և նոյն տօնախմբութիւն՝ զատիկ զոհ՝ զնուէր՝ ըղպատակ և զթաղումն կատարեն՝ որպէս 'ի Չին. և զմի և նոյն մարս՝ զզգեստ՝ զկերակուր՝ զձևտան՝ զկարասի և զխաղարկութի պահեն՝ որպէս 'ի Հայրենիս անդր իւրեանց.

Մնին և գտանին երևելի մեհեանս 'ի Ճավա, ուր գտնին կուռք սքանչելի արձանօք՝ պատկերք և պատգամք պաշտելիք, և մոխիրք ցեղից իւրեանց.

Չինացիք ոչ են հարկադրեալ երթալ 'ի կատտունս, յոր թէ երթայ ոք՝ է 'ի քննել ըղբաղոս, կամ՝ զոհ մատուցանել վասն յաջողեալ

փորոց . զոր ու խոտեալ էր յառաջագոյն . բայց ումանք անխախտ յամենայն ամսի 'ի ծնունդ և 'ի լրումն լուսնի մատուցանեն զոհս , և վառեն զմոմեղէնս և զթուղթս նուիրանաց 'ի տան իւրեանց վասն չար հոգւոց , զի ազատ լիցին 'ի չարեաց :

Սոքա ունին և զպահոց օրս և զօր մեռելոց . այլ այս վերջինս կատարեն մեծաւ հանդիսիւ . քանզի առ հասարակ ելանեն 'ի գերեզմանատունս զոհիւք , մոմեղէնօք եւ նուիրական թղթովք . պաշտեն զգերեզմանս հին և նոր մեռելոց :

Բնաւ ոչ խորշին սոքա յօտար ազգաց , ուտեն և ըմպեն զամենայն ինչ , և ընկերակցին ընդ ամենայն ոք՝ բնակեալ յայս սակի կղզիս :

## ԳԼՈՒԽ ԺԴ

### ԲՆԷՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՈՐՊԷՍ յայլ ամենայն ազգս և 'ի կողմանս աշխարհի , նոյնպէս և 'ի բնակիչս սոյն կղզեաց 'ի հնոց անտի եղեն զլխաւորութիւնք ազգաց 'ի զանազան սահմանսն , 'ի կառավարել զամբոխըն 'ի բարօրութիւն հասարակութեան . Յորս են կայսերք , թագաւորք , գաւառապետք , կուսակալքն այլ ստորակարգեալ մեծ փոքր իշխանք :

Կայսրն՝ որ Սոսո Հունան կամ Սահառաջա կոչեցեալ , է միահեծան տէր ամենեցուն . կամք նորա ընթանան առանց գրաւորական օ-

ընոց · բայց ոչ արտաքոյ սովորութեանն նախնեաց · որ մինչև ցայժմ յամենայն ուրեք պահի · և կոչի ադատ , այսինքն՝ սովորութիւն ։

Այս սովորական օրէնք նախնեաց զրեթէ ՚ի բոլոր կղզիս առաւել ակնածի՝ քան զգրաւորական և գերադասեալ օրէնսն յայլուր · վասնորոյ նոր օրէնք կամ կարգադրութիւն բնաւ ոչ տեսանի ՚ի նոսա ։

Բայց և զայս նախնական սովորութիւն ոչ միապէս կիր առնուն ընդ ամենայն ուրեք · զի այլ է սովորութիւն ՚ի Ջաւա · այլ ՚ի Սումատրա · և այլ ՚ի սերամեան և յայլ սահմանաւոր կղզիսն ։ Իսկ եթէ ՚ի միում տեղւոջ տեսանիցի միւսոյ սովորութիւն , անդ կամ ազգն՝ կամ կառավարութիւնն է ՚ի մի և նոյն ազգէն ։

Ըստ սովորութեան նախնեաց՝ անդրանիկ որդի թագաւորին առնու զանուն Պանգէրան Ադիպատի ( թագաժառանգ · ) որ պարտ է յաջորդել հօրն · բայց ըստ դիպման զնոյն ժառանգութիւն տան երբեմն կրտսեր որդւոյն՝ կամ եղբօր որդւոյ թագաւորին ։ Հազիւ տեսանի՝ թագուհի ոք ամբառնալ յաթոռ իշխանութեան ։

Այլ այժմ չկարէ ոք ուրեք յաջորդել թագաւորին , եթէ չիցէ նախ ընտրեալ ՚ի կուսակալէն Ջաւայոյ · որ յետ ընտրութեանն շքով և մեծաւ պատուով նստուցանի յաթոռ ՚ի ձեռն փոխ կուսակալին ։

Ամենայն տէրունական գործ և պատասխանատուութիւն կառավարութեան թողու առ հօգս եպարքոսին միայն . որ է ընդհանուր հըրամանատար տէրութեան և պաշտպան թագաւորին ։

Ուրեք ուրեք կառավարութիւն տէրութեանն է ՚ի ձեռս նախարարաց կամ պայազատաց . յորս առանց նոցին ընտրութեան չկարէ թագաւորն առնել ինչ ։

Եւ ուրեք ուրեք կառավարին յազգային գըլխաւորաց կամ ՚ի ծերոց . որք կոչին օրանկ կայեայք . և որք ՚ի կարգադրութիւն հասարակաց օգտի կամ կարևոր գործոց ինչ ժողովին ՚ի մի վայր ծերք , երևելիք և կամ բազմանդամ ժողովուրդն և խորհուրդ արարեալ միաբան կամօք ընտրեն զօգուտ առաջարկեալ խնդրոյն . որք և միշտ պաշտպանեն զազատութիւն հայրենական իւրեանց ։

Եկամուտ աշխարհին՝ զոր պալատականք՝ ազատարեայք և մեծ և փոքր պաշտօնատարք վայելեն , են առուրք ժողովրդոցն . յորոց ոմանք վճարին զհնգամասորդս յամենայն արդեանց և պտղոց . ոմանք զվարձ գետնի , ուր բնակին և վայելեն զերկրս նոցա . և ոմանք զհարկադրեալ կամ զանձնաւոր ծառայութիւնս , որ է ժամանակաւոր և մշտական ։ Բայց և են ՚ի քաղաքամտեղս որ ոչ հայեցեալ ՚ի կարգ և ՚ի սովորութիւն նախնեաց՝ կեղեքեն զժողովուրդն . որք ոչ միայն

զամենայն արդիւնս վաստակոց նոցա առնուն յարքունիս, այլ երբեմն յափշտակեն զկին և զմանկունս նոցա՝ և վաճառեն։ Այլ այժմ բարձեալ է այս վերջին անկարգութիւն ՚ի հպատակս և ՚ի դաշնակիցս Հոլանդացւոց։

## ԳԼՈՒԽ ԺԵ

### Օրինական կառավարութեան

ՔԱՂԱՔՔ եւ թագաւորութիւնք ՚ի մէջ բազմակղզի ծովու արևելեան Հնդկաց՝ որք ճանաչեն զտիրապետութիւն Նեդըրլանդացւոց՝ են անմիջաբար ՚ի ներքոյ իշխանութեան նորին վեհափառ տէրութեան՝ թագաւորին Նեդըրլանդայ. առանց ձեռնամուխ լինելոյ վերատեսչին տէրունեան արտաքին գործոց։ Եւ ուր բնակիչքն անձնաւորապէս ոչ կառավարին ՚ի պաշտօնատարացն Հոլանդացւոց, այլ ՚ի թագաւորաց իւրեանց, և անդ ոչ կայացանին թագաւորք առանց հրամանի նորին վեհափառութեն Նեդըրլանդայ՝ և խորհրդեամբ կուսակալին Ճավայ։

Ըստ սահմանադրութեն նոր օրինաց՝ որ հաստատեցաւ ՚ի 1835 ամին կառավարելոյ զՀնդիկս Նեդըրլանդացւոց. կուսակալն է փոխանորդ թագաւորին, և իշխանութիւն իւր ընթանայ զօրէն նորին վեհափառութեան։ Ընդ նմա կացուցեալ է և ատեան մի՝ կոչեցեալ խորհրդարան

Հնդկաց . յորում են գահափոխան մի . չորս ան-դամք և մի ատենադպիր . ամենեքեան արք երեւե-լիք . ընդ որոց կուսակալն առնէ զխորհուրդ վասն ամենայն կարգադրութեան աշխարհին և վասն նորոգ սահմանադրութեան օրինաց ․

Կուսակալն ունի զկարողութիւն դարձուցա-նելոյ զվճիռս . թողլոյ զյանցանս մեղմելոյ զպա-տիժս և շնորհելոյ զկեանս մահապարտին ․ Կարէ և վճարել և նորոգուցանել զդաշինս . տալ պա-տերազմ և խաղաղութիւն առնել, անուանել թա-գաւորին . նաև զաշխինս կալել՝ կամ միաբանել ընդ այլ Եւրոպայի սահմանակիցս ․

Այլ և կարէ տալ՝ ում և կամիցի . զհրաման ժամանակաւ որ կամ միշտական բնակելոյ 'ի սոյն տէրութեան . կամ արտասահման առնել տարի զխռովարարն ժողովրդոց ․ Եւ նա ընդհանուր հրամանատար ծովու և ցամաքի . ունի իշխանու-թիւն բարձրացուցանել կամ առնուլ զաստիճան ս և իսկ պաշտօնատարաց . զօրապետաց և զօրա-կանաց ․

Զօրութիւնք ցամաքային հանդերձ ամե-նայն պատերազմական պատրաստութեամբք ըն-ցուցանին 'ի Ենգլանդայ ․

Զօրք և զօրապետք 'ի զանազան դասուց և 'ի պաշտօնէից առաքին անտի ժամանակաւ որ ․ Վարձեալ ունին նաև զօրս յԱփրիկացւոց եւ յերկրականաց անտի ․

Այժմ ծախամուրակ զօրութիւնք ոչ գոն ասա․ բայց են տէրութեան նաւք, շոգենաւք և նաւակք վասն հարկաւոր ժամանակի հաստատեալք 'ի պէտս այլ և այլ գործոց․

Հաստատեալ է և յամենայն ուրեք զինաշարժութիւն քրիստոնեայ ժողովրդոց, յորոց կատարի այն երկիւղ 'ի միում ամսոջ․ սկսեալ յԱպրիլէ մինչև ցվերջն Սեպտեմբերի․ այլև զգուշութիւն հրկիզութեան է պաշտօն սոցա, որք երթան յապահովել զկողոպուտ հրոյ․

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ատենացն օրինազանցք՝ յանցաւորք՝ պատժապարտք՝ պարտապանք և այլ և այլ խառն վէճք են 'ի ներքոյ քաղաքական օրինաց․ Բայց նախ գիտելի է, զի ամենայն ազգք բնակեալք 'ի Հնդիկս Հոլանդացւոց՝ բաժանեալ են յերկուս դասս․ այսինքն՝ յեւրոպացիս և յերկրականս․

Ընդ Եւրոպացւոց են և երկրածին կամ ասար Քրիստոնեայք․ և ընդ երկրականաց՝ Արաբացիք․ Չինեացիք և այլ ամենայն Մահմետականք և հեթանոսք․ Ասորին ուրոյն կարգեալ են ատեանք դատաստանի․ վասն Եւրոպացւոց՝ այլ․ և վասն երկրականաց՝ այլ․

Մի է բարձր՝ և երեք մեծ ատեանք են վասն Եւրոպացւոց՝ հաստատեալ 'ի Բատավա․ ատենին՝ կոչի Հօխխրէխտհօֆ, և միւսն՝ Րաադվան Յուստիցի․ Յորոց մի բարձր և մի մեծն

են 'ի Բժավլիա . և մի ան՝ 'ի Սամորանդ և 'ի Սուրբայեա : Նաև բայց 'ի յայսցանէ՝ են երեք մեծ տանանք հաստատեալ արտաքոյ Քավլոյ . 'ի Պաղդանդ , 'ի Սկուտար և յԱմբէօնիա :

Նաւանք երկրականաց են վերին , միջին և ստորին :

Վերինն՝ որ կոչի Բէխորանքն Փան(Օ)մանիս (տանան շրջագայու թեան ,) են չորս՝ կարգեալ ի զանազան տեղիս Քավլոյ :

Միջինն՝ որ կոչի Նանդրատ (տանան երկրականաց .) և Ստորինն՝ որ կոչի Պուլիս (տանան ապահովութեան Հասարակաց ,) են կարգեալ յանմնոյն գաւառս կամ 'ի ուխրդէնութեան՝ 'ի Քավլա և արտաքոյ Քավլոյ :

Նյլ այս վերջինն՝ Պուլիս կոչեցեալ , երեք են յիւրաքանչիւր գաւառի . այսինքն՝ Սին՝ ուխրդէնուին , մին՝ երկրականաց գլխաւորին . և մի ան՝ նաւահանգստաց կամ վեճակաւորաց գաւառին . յորոց ներքոյ կարգեալ են և օգնականք , գիւղապետք և թաղապետք , և այլ պաշտօնատարք՝ սխաւորք և ջահկայք անուանեալ , (կոչմամբ տաճկական Պոլսոյ) հօգաւք (արբանեակք ներքին ,) և մասամասայք (չըրտեսք Պուլիսի :)

'Ի Բարձր դրանն են մի գահակլուխ կամ գաստաւոր մի . գահափոխան և հինգ անդամք . մի ընդհանուր հոգաբարձու կամ պաշտպան օ-

րինաց և մի ընդհանուր փաստաբան . մի ատե-նադպիր և երկու տեղակալ ատենադպրի .

'Ի մեծ ատեանն Բաթաւիոյ են մի դատաւոր և չորս անդամք , մի պաշտպան օրինաց ( Ֆիս-կալ . ) մի փոխանորդ , մի ատենադպիր և եր-կու փոխանորդք .

Յատեանն Սամարանգայ են մի դատաւոր և երեք անդամք , մի պաշտպան օրինաց և մի փո-խանորդ , մի ատենադպիր՝ և մի փոխանորդ նորա .

Նոյնպէս է և յայլ ատեանսն Սուրաբայեայ, Պադանգայ , Մակասարայ և Ամբոնայ . Որոց ա-մենեցուն պարտ է լինել չափահաս Նէդըրլան-դացի և կատարելապէս ուսեալք զօրէնս և զա-տենական գիտութիւնս .

'Ի վերին ատենի երկրականաց են մի դատա-ւոր և մի ատենադպիր Նէդըրլանդացիք . չորս ան-դամք 'ի գլխաւորաց երկրականաց . մի պանդհո-լու ( դենալիտ երկրականաց . ) և մի Ջակսա . ( կոլանաւորակալ պուլիսի կամ պաշտպան օ-րինաց՝ 'ի յերկրականաց . )

Միջին ատենի երկրականաց դատաւոր է ռէսի-դէնտն՝ կամ փոխ ռէսիդէնտն . ատենադպիր՝ նո-րին սէկրետարն . և անդամքն՝ մի կամ երկու Եւրո-պացիք . ընդ որոց են և գլխաւորք երկրականաց և չինէացւոց . մի պանդհուլու և մի Ջակսա .

Յատեանն Պլ․ լեւի առաջնոյն դատաւոր է ռէսիդէնտն . ատենադպիր՝ իւր սէկրետարն . ան-

դամք՝ մի կամ երկու գլխաւորք յերկրականաց. ուր ներկայանան նաև ջահս մի՝ և սխաւոք: Երկրորդին դասու որ է գլխաւորն երկրականաց և անդամք իւր են այլ ստորին հրամանատարքն:

Իսկ երրորդին դասու որ է նահանգապետն Եւրոպացի կամ երկրական. և անդամք նորին են այլ ստորին հրամանատարք տեղւոյն:

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՕՐԷՆՔ ՎԱՍՆ ԱՏԵՆԱԿԱՆԱՑ

ԱՏԵՆԱՑՆ պաշտօնատարք մեծ և փոքր ատենի նախքան զառնալն զպաշտօնն՝ պարտին երդնուլ ըստ սովորութեան ազգի կամ հաւատոյ իւրեանց *. խոստանալով՝ կեալ հաւատարիմ՝ արքային Նէդրլանդացւոց և կուսակալին Հնդկաց Հոլանդացւոց. կեալ անխարդախ ի պաշտօնի իւրեանց. լինել ուղիղ. ժրաջան և անաչառ. ոչ ընդունել զկաշառ կամ զընծայս. ոչ առնել զեղծանս. ոչ յայտնել ումեք զխորհուրդ ատենին. ոչ աչառել կամ կողմնապահել ումեք:

* Երդումն սոր կատարի ի Հոլանդացւոց ի վեր բառնալով զերկուս մատունս աջոյ ձեռին (ցուցամատն և միջամատն) անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. յայլ Քրիստոնէից զձեռն դնելով ի վերայ սուրբ Աւետարանին. ի Մահմետականաց՝ համբուրելով զՂուրանն. և ի Չինացւոց՝ հատանելով զգլուխ հաւու. Իսկ ստորին երդմնահարութիւն Չինացւոց կատարի ի կռատան առաջի բեմին Թամիէքօնի իւրեանց (կռոց) խնդրելով զնզովս անձին ստողին կամ անիրաւողին:

Որպէս ամենայն պաշտօնատարք՝ նոյնպէս և ամենայն ատենականք չկարեն տուրևառութիւն առնել, մտանել ՚ի բաժին ընկերութեան ինչ, լինել երաշխաւոր ումեք՝ կամ գործակալ և կառավարիչ կալուածոց այլոց։ Եւ ոչ կարեն ընդունել զպաշտօն հոգաբարձութեան կամ կտակատարութեան այնորիկ, որ ոչ իցէ ազգական իւր՝ մինչև ցերրորդ գիծ արենակցութեան. բայց եթէ իցէ գլխաւոր առիթ՝ պարտէ առնուլ զարձակութիւն ՚ի կուսակալէն։

Ոչ կարեն երկու մերձաւոր ազգականք լինել պաշտօնատարք ՚ի միում ատենի. բայց եթէ հրամանաւ կուսակալին. և այն՝ ըստ ստիպման հարկին։

Ըստ մերձաւոր ընտանիք համարին սերունդքն ՚ի միոյ հօրէ մինչև ցերրորդ ծնունդն։

Յամին երկիցս փակի կամ դադարի դատողութիւն Բաձր և մեծ ատենիցն. զի մին՝ սկսանի ՚ի վերջին շաբաթ օրէ նախ քան զքսան և հինգ երրորդ օրն Դեկտեմբերի. և տևէ մինչև ցերկրորդ երկու շաբաթ օր Յունվարի։ Եւ երկրորդն՝ սկսանի յառաջին շաբաթ օրէ Յուլիսի ամսոյ, և տևէ մինչև ցերկրորդ երկուշաբաթ օր Օգոստոսի։

Նաև ՚ի Զատկի և ՚ի Հոգեգալստեանն փակին մինչև ցառաջին չորեքշաբաթ օրն։

## ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՕՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՏԵՆԻՑ

ԲԱՐՁՐ ատեանն է վերագոյն ատեանն 'ի Ամերիկս Նահանգացւոց, որոյ իշխանութիւնն ընթանայ 'ի վերայ բոլոր ատենից ։

Սա մեծաւ հոգողութեամբ հրամայէ զմատակարարութիւն օրինաց 'ի բովանդակ իշխանութեան իւրում. եւ փոյթ կալնու՝ զի ստասցի այն պատշաճապէս առանց յանդգնութեան ։

Սա մեծաւ արթնութեամբ հսկէ 'ի վերայ ամենայն ատենից եւ դատաւորաց, զի ճիշդ եւ ուղղութեամբ տեղի առնուցու գործառնութիւն եւ գործադրութիւն արդար օրինաց առ ամենայն անձնական, գործնական եւ պատժական վէճս ամբաստանողաց ։

Սա որոշէ, հաստատէ եւ արձակէ զամենայն քաղաքական օրէնս առաջարկեալս 'ի կուսակալէն 'ի բարօրութիւն հասարակաց բնակելոց 'ի Ամերիկս Նահանգացւոց ։

Սա հերքէ կամ հաստատէ՝ յաւելու կամ նուազէ զվճիռ միւսոց ատենից՝ բողոքելոց առ ինքն. որոյ եւ դատակնիք անդառնալի է եւ անջնջելի. զի վճռեալն ատեան չկարէ բողոքել յայլ ուրեք ։

Ամենայն օրինազանցք եւ յանցաւորք 'ի մեծամեծ պաշտօնէութեան՝ սկսեալ յատենականաց 'ի մեծ եւ 'ի փոքր կառավարչաց եւ վերատեսչաց, 'ի փոխ կուսակալաց եւ գործակալաց կամ

գաւառապետաց՝ մինչև ցպաշտօնափոխան բարձր ատենի և ցամբաման խորհրդարանի Հնդկաց՝ են ՚ի ներքոյ դատողութեան սորա․ որ ունի իշխանութիւն արձակելոյ՝ բանդարկելոյ՝ տուգանելոյ՝ պատժելոյ և աքսորելոյ ։

Մանաւանդ սա զբողոք դատապարտելոց ՚ի մեծ ատենից․ յորժամ զանազանութիւն քաղաքական, անձնական և գործնական խնդրոյն աւելի իցէ քան զհինգ հարիւր դիլըր ։

Յորժամ տուգանք օրինազանց խնդրոց աւելի իցեն քան զհինգ հարիւր դիլըր․ կամ պատահգումն ընչից աւելի քան զտասն հազար դիլըր ։

Եւ յորժամ պատիժ մեսաադարտ խնդրոյ կարի ծանր իցէ․ որպէս եթէ դատապարտեալ իցէ ոք ՚ի մահ, ՚ի մահամերձ պատիժ ինչ, ՚ի շղթայ, ՚ի գնդան և յաքսորանս ։

Բազում անգամ տեսաք և լուաք, զի իրաւացի և անիրաւացի վէճք իւր՝ մնեալ ՚ի մեծ ատենանն․ առա շրջեցան ՚ի ներհակ կողմն․ զի են՝ որք շահեցան յայնս, և կորուսին ՚ի սմա․ և են՝ որք կորուսին ՚ի նոսա, և շահեցան ՚ի սմա ։

՚Ի շաբաթն միանգամ կամ երկկիցս առնէ ըդդատողութիւն․ և ՚ի միացեալ աւուրն կատարէ զքննութիւն և զվերահասութիւն առաջադեալ խնդրոյն ։

Իշխանութիւնք մեծ ատենից բաժանեալ են

'ի գաւառս և 'ի կղզիս․ զորս յատկութեամբ նշանակեսցուք 'ի ներքոյ։

Ընդ իշխանութեամբ մեծ ատենին Բաթավիոյ 'ի Ճավա՝ են Բանթամ՝ Բօյտէնզօրգ՝ Կըրավանգ՝ Չիանջօր և Չիրիբօն։ Այլ արտաքոյ Ճավայ՝ Բօրնէօ, Բանկա՝ և (բայց 'ի Պադանգայ) Սումատրա՝ Րիօ՝ և գործակալքն Չինոյ և Ճապանոյ։

Ընդ իշխանութեամբ մեծ ատենին Սամարանգայ են Թեգալ, Փեկալօնգան՝ Բանջիւմաս՝ Բագլէն՝ Քէդու՝ Ճօկջօկարտա՝ Սօլօ՝ Ճապարա՝ Սամբանգ՝ Մադիուն և Պաճիտան։

Իսկ ընդ իշխանութեամբ մեծ ատենին Սուրաբայեայ՝ են Գրէսիկ, Քէդիրի՝ Պասուրուան՝ Բըզուկի՝ Բանջու՝ Վանգի՝ կղզին Մադուրա՝ և կառավարութիւնն Թիմուրայ։

Այլ իշխանութիւն մեծ ատենին Պադանգայ ընթանայ միայն 'ի վերայ կառավարութեան կամ ռեզիդէնտութեան Պադանգայ, և Ամբոնոյն և Մակասարայն՝ 'ի Սերամեան և 'ի Սելեբեսեան կղզեաց վերայ․ որք և են 'ի ներքոյ իշխանութեան բարձր ատենին Բաթավիոյ։

Յատուկ ատեանս դատին և վճռեն ամենայն քաղաքական՝ անձնական՝ գործնական և խառն վէճք Եւրոպացւոց կամ Քրիստոնէից, եթէ փոքր իցէ գումար խնդրոյն, և եթէ շատ։

Ամենայն պարտականութիւն՝ զանազանուէք՝

ներհակութիւնք և սխալութիւնք հաշուոց, դաշնադրութեանց, գործակալութեանց, հոգաբարձութեանց, տուրևառութեանց և այլն՝ 'ի սոսա աւարտին ։

Ամենայն զրկանք, խաբէութիւնք, թշնամանք զրպարտութիւնք և այլն՝ սոքօք ուղղին ։

Ամենայն օրինազանցք, յանցաւորք և պատժապարտք 'ի սոսա դատապարտին 'ի տուգանս, 'ի կալանաւորութիւն ընչից, 'ի մահ, 'ի մահուարժան պատիժս, 'ի շղթայս, 'ի բանտ, 'ի զնդան և յաքսորանս ։

Յայսցանէ դատապարտեալն կարէ բողոքել առ բարձր ատեանն. յորժամ զանազանութիւն քաղաքական՝ անձնական գործնական և խառն խնդրոյն անցանիցէ քան զհինգ հարիւր գիլդըս ։

Յորժամ տուգանք օրինազանցութեան աւելի լինին քան զհինգ հարիւր գիլդր, և պատանդումն ընչից աւելի քան զտասն հազար գիլդր ։

Եւ յորժամ պատիժ մահապարտութեան կարի ծանր իցէ ։

'Ի շաբաթն մի անգամ կամ երկիցս առնեն զդատողութիւն. և 'ի մնացեալ աւուրսն կատարեն զքննութիւն և զվերահասութիւն առաջիդեալ խնդրոյն ։

Իշխանութիւնք վերին ատենից երկրականաց բաժանեալ են 'ի զանազան կողմանս Ջավայ. որոց պաշտօնատարք են տարևոր դատա-

ւորք՝ համայնք ընտրեալ 'ի կուսակայէն՝ խոր-հրդով բարձր ատենին ։

Սոքա 'ի յերկուս ամիս միանգամ կատարեն զօր դատողութեան 'ի հարկաւորեալ տեղւոջ · որք և դատեն և վճռեն զամենայն եղեռնաւորս երկրականաց · որք են արժանի մահու կամ մահու չափ պատժոց · որպիսի են մարդասպանք՝ մահավիրողք՝ գերեվարք՝ հրարկողք՝ սուտերդ-րումնահատք կամ յապաւողք դրամոց՝ դրամաթու ղթ կեղծողք կամ այլայլողք՝ մատնիչք՝ խռովարարք՝ ապստամբիչք՝ յափշտակիչք , և այլ սոյնանման յանցաւորք ։

Ամենայն վճիռ դատապարտութեան և ներողութեան այսց ատենից են ընդ վերահասութեամբ բարձր ատենին ։

Իշխանութիւն խորաքննիչեր ատենի երկրականաց ընթանայ 'ի վերայ գաւառին միայն՝ յորում և հաստատեալ է ։

Ընդ ատենին դատողութեամբ են ամենայն անձնական և գործնական վէճք երկրականաց · որոց գումար խնդրոյն 'ի վեր է քան զյիսուն գիլդր ·

Ամենայն խաբէական յանցանք՝ չարիք՝ և զրկանք՝ որոց պատիժ է արգելան , շղթայ և աքսորանք ։

Եւ ամենայն օրինազանցք՝ որոց պատիժ է տուգանք և բանտ ։

Ընդունելին և զամբաստանութիւն երկրակա-

նաց ընդդէմ Եւրոպացւոց յանցաւորաց և պարտապանաց. եթէ յանցանքն չէ մեծ, և պարտականութիւնն ոչ աւելի քան զհինգհարիւր գիլդր.

Յայսցանէ կարէ դատապարտեալն բողոքել առ Իշխանաւոր մեծ ատենանն, յորժամ զանազանութիւն գործնական և անձնական խնդրոյն աւելի է քան զհինգհարիւր գիլդր. Պատիժ յանցաւորութեանն՝ ծանր, և տուգանք օրինազանցութեանն՝ անդր քան զհինգ հարիւր գիլդր.

Անգամ'ի շաբաթոջն կատարեն զօր դատողութեան.

Իշխանութիւն դատաստանին կամ'ախնդէնտին՝ ընթանայ 'ի վերայ բովանդակ դաւառի նորայ, հրամայէ 'ի վերայ եւրոպացի և երկրական բնակչաց. ուղղէ զանկարգութիւն ժողովրդոց, կարէ սաստել և պատժել զփոքր յանցաւորսն եւրոպացւոց և երկրականաց 'ի տուգանս և 'ի բանդարկութիւն, և զխռովարարսն 'ի բաց առաքել յիշխանութենէ նորմէ.

Որոշէ զօր դատողութեն երբ և պահանջեսցի.

Ունի իշխանութիւն դատելոյ զամենայն անձնական և գործնական վէճս երկրականաց ընդդէմ եւրոպացւոց. յորժամ զումար խնդրոյն չիցէ անդր քան զերկու հարիւր գիլդր. և յորժամ պատիժ յանցաւորաց չիցէ աւելի քան ութն օր բանդարկութեան կամ հարիւր գիլդր տուգանս.

Յայսմանէ դատապարտեալն կարէ բողոքել

առ իշխանաւոր մեծ տանանն · յորժամ՝ տուգանքն անցանիցեն քան զքսան և հինգ գիլդըր · և պատիժն քան զութ օր բանդարկութեան ։

Տուգանք օրինազանց երկրականաց յայսմ՝ ատենի չեն առաւելի քան զքսան և հինգ գիլդըր ։

Իշխանութիւնք գլխաւորին երկրականաց և նահանգապետացն 'ի միում՝ գաւառի ընթանան միայն 'ի վերայ երկրականաց · յորոց առեանս պատիժն և վճռին գոյզն գործնական վէճք ևս՝ փոքր յանցաւորութիւնք՝ վերաբերեալք առ կարգապահութիւն և շինութիւն քաղաքին և առ խաղաղութիւն և անդորրութիւն ժողովրդոց ։

Նոքա՝ յառնեն առաջին պաշտօնատարին պատիժն և վճռին գործնական վէճք · որոց զումար խնդրոյն չէ պակաս քան զքսան գիլդըր · և ոչ առ ելի քան զվաթսուն գիլդըր · Եւ այսպիսի յանցաւորք՝ որք վիրաւորեսցեն զանասունս ընկերին, անփոյթ եղեն զնորոգութեանց կամրջաց · պահապանաց · ցանկապատից · փողոցաց և արքունի ճանապարհաց ։ Մաքրութեան ջրանցից և առուակաց քաղաքին · նաև որք ծուլացան 'ի հարկատրեայ գործ արքունի և 'ի պահ գիշերոյ · որք թոյլ տան անասնոց իւրեանց մտանել 'ի ցանկ դրացւոց և վնասել · որք հարին զընկերս կամ՝ զօտարս · որք շորթեսցեն զինչս ընկերին կամ՝ զօտարին · և այլ նոյնանման յանցանք ։

Պատիժ այսպիսեաց է կամ՝ տուգանք 'ի մի-

ոյ մինչև ցտասն գիլդր ․ կամ՝ բանտարկութիւն 'ի միոյ մինչև ցվեց օր ։ Իսկ ծանրագոյն քան զայս մնանի 'ի Լանդրատ ։

Եւ յատեան երկրորդ պաշտօնատարին գաւառին և վճռեն զգործականն վէճս ․ որոյ գումար խնդրոյ չիցէ աւելի քան զքսան գիլդր ․ և զայնպիսի յանցանս ․ որք խառնեն զխաղաղութիւն ընկերին ․ որք Թշնամանեն և բանսարկուին ընդ իրեարս ․ որոց պատիժ է տուգանք 'ի միոյ մինչև ցերեք գիլդր ։ Այլ ծանրագոյն քան զայս յանձնի ատենի գլխաւորին երկրականաց ։

Գիւղապետք և Թաղապետք * են 'ի զգուշանալ խաղաղութեան ․ աղմկաց և անկարգութեց ժողովրդոց բնակչաց 'ի վիճակի իւրեանց ․ որք և հարկաւորեալ են յայտնել՝ փութով ծանուցանել այս իշխին ։

Ոստիկանք և Աւագաւորք են 'ի կալանաւորել զխառնակարարս ․ զգողս ․ զապստամբս և զայլ չարարս ։ Իսկ մնացեալ այք են՝ 'ի լուսեալ յամենայն անկիւնս քաղաքին ․ 'ի հրապարակս և

* Թաղապետաց պաշտօն է նաև իւրաքանչիւր տարւոջն 'ի վերջ Դեկտեմբերի ամսոյ տալ տանէ 'ի տուն զանդորրակ մի ․ յորում գրին անուն իւրաքանչիւր անդամոյ տան ․ հասակ և տեղի ծննդեան նոցա ․ եթէ բնակութիւն 'ի նոյն օրինաւորութեան՝ զործն ․ ամուրի կամ ամուսնացեալ գոլն և զաւակունս եթէ ունիցի ․ ընդ նմին հաւանել տալ և զայլ միւս տետրակ 'ի գրել զծախս և զելս ․ զորս յետ կատարմանն մատուցանէ յատեան օրինականին ․ Այսպէս ամենայն և ամենայն գիւղապետք տալով զԹիւ բնակչացն վիճակի իւրեանց ։

և յայլ տեղիս դանդաղողն օրինաց, զզուղու-նիս և զխախտեալս մտասպարտան ;

Են և ատեանք զօրաց յամենայն երկրի տե-ղիս, բայց գլխաւորագոյն ատեանն է 'ի Բժա-միա, որ կոչի զինուորական բարձր ատեան ;

'Ի սոսա դատեն և վճռեն զամ զպարտս զօրս և զօրապետս 'ի բանդ, 'ի շղթայ, 'ի ծանր պա-տիժս և 'ի մահ. Բայց վճիռ մահու թէ յայսմ ատենի և թէ այլ յամենայն ատեանս ոչ կատա-րի առանց յատուկ ընդունելութեան բարձր ա-տենին կամ կայսերն. միայն 'ի հեռաւորս՝ եթէ հանգամանք խնասուցն վտանգաւոր լցեն, թոյլ տայ զանց առնել զայսու օրինօք ;

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ

ԵՕԹՆ ամենայն կղզիք Հոլանդացւոց՝ որք յա-րևելեան ծովու Հնդկաց, որպէս 'ի վեր անդր ծանուցեալ եմք՝ բաժանեալ են յեօթն սահմա-նաս որ կղզիս. և 'ի նոսա քաղաքք, գաւառք կամ նահանգքն՝ 'ի մեծ, 'ի միջակ և 'ի փոքր կա-ռավարութիւնս. այսինքն՝ 'ի քաղաքապետու-թիւն կամ 'ի կուսակալութիւնս, 'ի գործա-կալութիւնս, 'ի գաւառապետութիւն և 'ի փոխ գաւառապետութիւն ;

Քաղաքապետք կամ փոխ կուսակալք՝ որք են արտաքոյ Ճաւայի, այսինքն՝ 'ի Սումատ-րա, յԱմբոյնիա և 'ի Մակասար, ունին ընդ

իշխանութեամբ իւրեանց զքանի մի գործակալս · և գործակալք ունին 'ի ներքոյ իւրեանց զմի կամ զերկուս փոխ գործակալս՝ յօգնականս իւրեանց · որպէս զի ընդ ամենայն են երեք քաղաքապետութիւնք · երեսուն և երկու գործակալութիւնք և տասն փոխ գործակալութիւնք ·

Են և գործակալք ունին կարգեալք յայլեայլ տեղիս դաշնակից կայսերութեան և թագաւորութեան երկրականաց 'ի վերատեսչութիւն կարգադրութեան և կառավարութեան նոցա · և ամենայն գործ ատէրութեան 'նոցին՝ առնի սոցին խորհրդով և ընտրութեամբ ·

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՆԱՑՆ ուրեք հաստատեալ են ճարտարապետք շինուածոց տէրութեան · և վերակացուք ճանապարհաց · կամրջաց · գետոց և թափառանց կամ թղթարանաց ·

Ունին և համբարանոցս ամենայն արմտեաց · շտեմարանս պարենից զօրաց · հանդերձատունս և զինարանս · մաքսատունս · հարկատունս · գանձատունս · համարատունս և զանազան գործատունս · Հաստատեալ են և սեննակք որոց Եւրոպացւոց (Սէնկամր) և երկրականաց (բուդէմէստր) վասն հասարակաց · Ուր տիրեն և կառավարեն զամենայն անկատակ՝ և մերթ եւս կտակաւ մեռելոց զստացուածս · զոր և տոկոսօք շա-

հեցուցանեն վանդեռաշատ ժառանգաց. Իսկ ցոր-չափ ժառանգն տղայ է. միայ ընդ իշխանութը և խնամատարութեամբ սորա. Ըստ նորոյ օ-րինացն՝ հասակ տղայոյն և աղջկան լրանայ ՚ի 23 ամհասակի իւրեանց.

Կառավարիչք սորա կարգեալք են ՚ի տէրու-թենէ. որք են՝ գահապետ մի և երեք անդամք, ատենադպիր մի և այլ պաշտօնատարք. այսին-քն՝ գանձապետ, տոկոսառու, համարակալ և գրագիրք.

Նաև հաստատեալ են գանձարանք այրեաց, ուր ստանան ՚ի վարձուց ամենայն տէրունի պաշ-տօնատարաց՝ և մեծաց և փոքունց գրագրաց յա-մեան հարիւրին եօթն գիլդր. զոր և տոկոսեօք շահեցուցանեն. Իսկ յայսմանէ հասուցանեն ըզ-թօշակ այրեաց և որբոց պաշտօնատարաց. ՚Ի սմա կարգեալ կան վերատեսուչք, կառավարիչք և այլ գործակալք.

Ունին և զհիւանդանոցս Իւրոպացւոց, Չի-նէացւոց և երկրականաց. ուր խնամեն զհիւանդս զօրաց և զօրապետացն՝ ծրի. և ժողովրդոցն՝ փոքր վարձու. զի յաւուրն երկու և կէս գիլդր ստա-նան յԻւրոպացւոց կամ ՚ի Քրիստոնէից. իսկ ՚ի Չինէացւոց կամ յերկրականաց՝ եթէ չիցէ ծրիապէս ընկալեալ՝ ստանան յամեան երկոտա-սան գիլդր. Յորս են բժիշկք, դեղք և դեղա-տուք, սպասաւորք, զգեստ և կերակուր՝ զա-

ամենայն հոգացեալ 'ի տէրունեան գանձուց ։ Բայց 'ի մտանելն այսր հիւանդին 'ի հասարակաց՝ անաւի պարտ է ունել զգիր յումեքէ իբրև յերաշխաւորէ իւրմէ 'ի վերայ կառավարչի հիւանդանոցին ։

Ունին և որբանոցս ․ ուր ժողովեն զորբ մանկունս Քրիստոնէից ․ և սնուցանեն և ուսուցանեն զտղայսն՝ մինչև ցչափ հասակի իւրեանց․ և զաղջկունս՝ մինչև ցվիճակափոխութիւն նոցա ժամանակաւոր կամ յաւիտենական ։ Յորոց երևելին է 'ի Սամարանդ ․ յորում զետեղեալ կան հարիւրաւոր մանկունք ։ Այլ վասն այսոցիկ տանց՝ յամենի չորիցս անգամ՝ շուրջ առեն զգանձանակս յամենայն տունս Քրիստոնէից ․ և ժողովեն զտուրս ։ Նաև 'ի տուգանաց և յայլ եկամտից և 'ի քսակէ եկեղեցեաց հանեն սոցա մասն ։ Կարգեալ են և 'ի սոսա կառավարիչք ․ վերատեսուչք ․ վարժապետք և մայրապետք ։

Կան և բանդք և արգելանոցք պարտապանաց, պատժապարտաց և խելագարաց ․ յորս կարգեալ են բանդապետք, պահանորդք և վերատեսուչք ։

Հաստատեալ են և յամենայն երևելի տեղիս զտէրունեան համալսարան և դպրոցս ․ ուր ընթանան և ուսուցանեն զմանկունս Քրիստոնէից Հոլանդերէն, Գաղղիերէն, և զոմանս Անգղիերէն՝ փոքր վարձուք ․ և որչափ յաւելուն մանկունք 'ի միոյ ծնողէ, այնչափ և պակաս առ-

նունս զվարժ ուսմանց նոցա · յորս կարգեալ են խոհական վարժապետք , դաստուք , քննիչք և վերակացուք · ուր և յամին երկիցս կատարին զքննութիւն աշակերտաց ։

Են և ձրի դպրոցք վասն երկրականաց և չքաւորաց · յորս կարգեալ են Մալայացի վարժապետք , և ուսուցանեն մալայերէն լեզուաւ զպիտանաւոր ուսմունս ։

Է և պատուաստումն ծաղկի · զոր ուսուցեալ են երկրականաց · և ամենայն ուրեք հաստատեալ են տեղի և օր , յորս տանին զերեխայս երկրականաց և անանկայ ծաղիկ տալ ։

Թոյլ տուեալ է ամենայն ազգաց պաշտել զիւրեանց կրօնս՝ յորժամ ոչ խառնեսցեն զհանդարտութիւն հասարակաց ։

Քահանայք Հոլանդացւոց և Հռովմէական եկեղեցւոյ վասն Հնդկաց՝ ընտրին ի Հոլանդա · որք և տանին զռոճիկս ՚ի տէրութեան գանձուց տարի ։

Տուրևառութիւն նոր գերեաց միանգամայն արգելեալ է · միայն ՚ի կղզիս ինչ կան գրաւագրութիւնք մանկանց · զի ծնողք վասն չքաւորութեան գրաւեն զմանկունս իւրեանց ժամանակաւոր , և փոխարէն տանին զգումար ինչ դրամոյ · բայց եւ վասն այսորիկ ամենայն խստութիւն , անիրաւութիւն և նենգութիւն արգելեալ է ։

---

## ԳԼՈՒԽ ԺԶ.

### Սահմանեալ Տուգանք

Որ յապաղէ հատուցանել զհարկ կալուածոց և տանց՝ որոց ժամանակ է Յուլիս և Դեկտեմբերի. տուժէ 'ի վերայ գումարոյ հարկին՝ հարիւրին քսան գիլդր.

Կալուած կամ տուն. որոյ ոչ հատուցի հարկ 'ի տասն ամս. դատաստանաւ պատանդեալ 'ի տէրութենէ վաճառեսցի. Յորոյ և 'ի ձեռնեկեալ գնոյ հանեալ զծախս դատաստանի՝ և առեալ զհարկն հանդերձ տուգանօքն. մնացորդն՝ եթէ գոյցէ ինչ. դարձուցանի առ տէր կալուածոյն կամ տան.

Որ յապաղէ հատուցանել զհարկ ձիոց՝ որոյ ժամանակ է 'ի Մարտի. տուժեսցէ առ մի ձին քսան դիլդր.

Որ անփոյթ կայ հրամանի ոստիկանութեան վասն մաքրութեան որմոց տանց, կամրջաց. շինութեան ցանկոց. մաքրութեան ջրանցից և այլն. որ յամին մի՝ կամ երկիցս հրատարակի 'ի լրագրին. տուժեսցէ հինգ կամ տասն գիլդր.

Որ հարկանէ զերկրական կամ զՕրինէացի ոք 'ի հասարակաց՝ տուժեսցէ հինգ գիլդր. և եթէ 'ի պատուաւորաց՝ 'ի տասնէ ցքսան և հինգ գիլդր կամ ութն օր 'ի բանդ.

Եւ որ հարկանէ զԵւրոպացի ոք՝ 25 գիլդր. բայց ոչ երկիցս և երիցս նոյնչափ.

Որ առանց անցագրի 'ի բաց գնայ կամ փախչի աստի. եթէ կալանաւորեսցի նա կամ նաւապետն՝ որ տարաւ զնա, տուժեսցէ 1000 գիլդր. կամ փակեսցի յարգելանս զամ մի *։

Որ անփոյթ կայ առնուլ զհրամանագիր բը-

---

* Ոչ կարէ ոք 'ի բնակչաց աստի թողուլ զՃինիկս Հոլանդացւոց առանց անցագրի. յորում 'նշանակի անուն, հասակ և գործ շրջողին. ուստի առ յա երթալն և ուր. որ և կնքի և ստորագրի 'ի ռեսիդէնտէ կամ 'ի գլխաւորէ տեղւոյն. Բայց գիտելի է, զի Քրիստոնեայ ոք չկարէ գտանել զանցագիր. եթէ նախ քան զմեկ շաբաթ շրջման իւրոյ ոչ հրատարակեսցէ 'ի լրագրին. կամ տացէ զերկուս երաշխաւորս վասն նոյնչափ աւուրց 'ի պատասխանատուութիւն պարտուց իւրոց, եթէ ունիցի յետամնաց հատուցանելի ինչ. Իսկ երկրական ոք եթէ կամիցի երթալ 'ի Մոքքէ՝ պարտ է նախ հատուցանել զխուռն մաղչիլս, ապա տացի նմա անցագիր. Բայց եթէ կամիցի երթալ 'ի Սինկափուր՝ 'ի ծառայութիւն ուրուք՝ պարտ է տալ զերաշխաւորս վասն յխուռն մաղչլի. որ եթէ դարձցի անդրէն այսր, արձակեսցի երաշխաւորն. բայց եթէ գնասցէ անտի առ Մոքքէ, և դարձցի աստ Հաջն անուամբ, հատուսցէ երաշխաւորեալն յխուռն մաղչին. Եւ եթէ այր կամ կին ոք յերկրականաց շուել կամիցի յԵւրոպիա 'ի ծառայութիւն ուրուք, պարտ է վճարողն տալ երաշխաւոր. վասն չորս հարիւր գիլդրի. որ եթէ դարձուսցէ զնա կրկին ծախիւք իւրովք, արձակեսցի երաշխաւորն. բայց եթէ 'ի հասանելն յԵւրոպիա՝ բարձի թողի արասցէ զնա. առնուդայս չորս հարիւր գիլդր 'ի ծախս դարձման նորին առ հայրենիս իւր. Այլ Արաբացիք և Զինեցիք պարտին ունել զանազանելութեան գիր 'ի գլխաւորէ իւրեանց՝ առ 'ի շնորհել նոցա զանցագիր. Նաև ոչ ոք կարէ 'ի միոյ ռեսիդէնտութենէ երթալ առ միւսն առանց անցագրի. զի անդէն յետ դարձուցանի առ տեղին, ուստի եկեալ է. և շրջողն կամ տանողն կրեսցի զտուգանս. վասն անցագրի երթևեկողաց 'ի միոյ առ միւս ռեսիդէնտութիւն ոչ պահանջի երաշխաւոր։

նակութեան՝ տուժեսցէ ՚ի 100 գիլդերէ մինչև ց1000 գիլդեր . կամ բանդարկութիւն ամ մի ․

Որ մուծանէ այսր զգողունի ափիոն . պատանդեսցի ափիոնն . և տուժեսցէ 10000 գիլդեր կամ մի տարի ՚ի բանդ ․

Որ բառնայ ՚ի սայլ աւելի քան զչափ ծանրութեան կրողացն՝ տուժեսցէ 5 գիլդեր ․

Եւ որ կիր առնու զայն առանց հրամանագրի . զոր պարտ է առնուլ յամենայն տարեմուտ՝ տուժեսցէ 5 գիլդեր ․

Վարձաւորք կառաց եթէ լծեսցեն ՚ի կառս զտկար ձի , տուժեսցեն 100 գիլդեր ․

Եւ եթէ առանձին ՚ի կառս աւելի քան զերկու հոգի՝ 25 գիլդեր ․

Ամենայն կառաւորք եթէ ոչ կրեսցեն զջահ ՚ի գիշերի՝ կրեսցեն տուգանս 50 գիլդերաց ․

Չինէացի ոք կամ եւրոպական եթէ ոչ տանիցէ ընդ իւր զջահ ՚ի գիշերի , տուժեսցէ ութն գիլդեր կամ ութն օր բանդարկութիւն ․

Եթէ ձգեսցէ ոք զդէշ անասնոյ ՚ի գետ քաղաքին՝ տուժեսցէ 10 գիլդեր ․

Եթէ անասուն ուրուք մեռեալ ՚ի կալուած դրացւոյ վնաս պատճառեսցէ . տէր անասնոյն տացէ զվնասն և տուգանս 5 գիլդեր ․

Եթէ արձակեսցի ուրուք ձի կամ այլ անասուն ինչ և կալանաւորեսցի յորբանեկաց պուլիսին , տացի վարձ թափմանն՝ 5 գիլդեր ․

Որ տայ և որ առնու զպորտեմազիր ․ զդաշնագիր ․ զհրաշխաւորագիր եայլն ․ 'ի վերայ հասարակ թղթոյ կամ 'ի վերայ փոքրագոյն կնքաթղթոյ քան զսահմանեալ չափն , իւրաքանչիւր ոք տուժեսցէ 50 գիլդր ․

Որ փոփոխէ զթիւ ․ կամ այլայլէ զարժէս կնքաթղթոյ ( ստէմբլի ․) և կամ երկիցս 'ի կիր առնուցու զայն ․ տուժէ 1000 գիլդր ․ և պատժի իբրև զխարդաբերոյ յարգելանս կամ յաքսորանս ․

Որ անտարբեր լինի և ոչ ծանուցանէ թղթապետին տուժեսցէ օրական մի գիլդր ․ յօրէ յորում անտարբեր եղև մինչև ցօր յայտնելոյն ․

Նորեկ ոք ․ որ 'ի մտանելն 'ի քաղաք ինչ Հնդկաց Հոլանդացւոց՝ եթէ 'ի մէջ 24 ժամուց ոչ ծանուսցանէ զգալուստ իւր 'ի դիւանին եկողաց և գնացողաց ․ տուժեսցէ 25 գիլդր ․ և որ ընկալաւ զնա 'ի տուն իւր՝ 25 գիլդր ․

Որ 'ի մէջ երից աւուրց ոչ ծանուսցէ զծնունդ զաւակի իւրոյ նորածնելոյ՝ տուժեսցէ 30 գիլդր ․

Վարձողքն 'ի տէրութենէ զհարկ ափիոնի , և այլ վաճառուց և վաճառատեղեաց՝ պարտին մուծանել իւրաքանչիւր ամսոյ զհարկսն մինչև ցքսան և հինգերորդ օր նորին ․ այլ որ յապաղէ քան զայս ․ տուժեսցէ 'ի վերայ գումարոյ հարկին հարիւրին 20 գիլդր ․

Վարձողքն զպարէն ․ զգեստ և զայլ ինչ վասն զօրաց՝ եթէ ոչ յանձնեսցեն զայնս 'ի պաշ-

նոցրեալ աւուրն՝ կամ համեմատ տեսակին, ոչ միայն հատուցեն զծախս զին իւրոյն յայլ ուսու-տեղէ զնոյն, այլ և տուժեսցեն 'ի վերայ հատուցեալ գումարոյն հարիւրին 20 գիլդր,

Պ.եր վաճառեալ կալոյ ածոյ, տանց և նաւաց՝ եթէ ոչ փոխեսցի մինչև ցվեց ամիս, որ կատարի առաջի ատենին դատաստանի, զնոր և վաճառողն 'ի միասին տուժեսցեն 'ի վերայ ծախուց գրափոխութեանն՝ հարիւրին 20 գիլդր,

Նաւապետ որք մնեալ 'ի նաւահանգիստ ինչ Հնդկաց Հոլանդացւոց, եթէ յապաղեսցէ ներկայացուցանել 'ի մաքսատան զգիր նաւաբեռին իւրոյ աւելի քան զերկուս քսան և չորս ժամս, տուժեսցէ 200 գիլդր,

Որ տանց մաքսագրի բառնայ կամ իջուցանէ զբեռն նաւու, տուժեսցէ 500 գիլդր,

Որ 'ի միոյ նաւէ բառնայ առ միւսն 'ի նաւահանգստի, տանց հրամանագրի, տուժեսցէ 500 գիլդր,

Որ 'ի կիւրակէի կամ 'ի սուրբ աւուրսն իջուցանէ 'ի նաւէ՝ կամ բառնայ 'ի նաւ զնաւաբեռն ինչ տանց արձակագրի վերատեսչին մաքսատան, տուժեսցէ 500 գիլդր,

Նոյնպէս եթէ նախքան զծագել արեգական և յետ մտանելոյն՝ տարցի 'ի նաւ կամ իջուսցէ 'ի նաւէ զբեռն ինչ,

Որ 'ի նաւահանգստէ ինչ կամ 'ի ծովեզերց

ուրեք Հնդկաց Հոլանդացւոց մուծանէ զպատե-
րազմական հրացանս և զվառօդ ՚ի վաճառումն , պատանդեացն ամենայնն . և առ ժեացէ բերողն զառագանս քառապատիկ քան զարժողութիւն պատանդերոյն . բայց առ զանքն ոչ աւելցեն քան 10000 դիլդր * ։

Եւ որ գնեաց զայն՝ առ ժեացէ 1000 դիլդր ։

Որ մուծանէ կամ հանէ զնաւարեան ինչ արգելեալ ճանապարհաւ , պատանդեացն ինչքն ։

Որ մուծանէ յայլ ուստեքէ զպղինձի փողս ՚ի Հնդկիս Հոլանդացւոց ՚ի հաշիւ հասարակաց ուրուք , պատանդեացի այն՝ և առ ժեացէ բերողն զառ զանս քառապատիկ քան զարժողութիւնն . որում՝ պատասխանատու կացցէ և տէրն՝ յորում զատ այն , հանդերձ ՚ի նմա եղեալ ամենայն ընչիւքն ։ Բայց եթէ ՚ի միոյ ախոյեանտ թենէ տանիցի առ այլ , և ունիցի զգիր հաստատութեն ՚ի ախոյեանէ աեղւոյն , թող տացի մուծանել ուր և կամիցի ։

՚Նաւապետ մի՝ որ թափեսցէ զնաւախիճ իւր ՚ի նաւահանգստին , ուր խարսխեալ է , տուժեսցէ 10 դիլդր առ մի լաստն՝ որ է 2 թոն ։

Եթէ նաւապետ մի թողուցու զնաւահան-

---

* Այս արգել ոչ է վասն օրսորդական հրացանից՝ որ զայս յարկեղի , և արժէ աւելի քան զմի հարիւր դիլդր . և ոչ վասն վառօդի կոչեցեալ (Crepe) որ զայս ՚ի փոքրիկ ափի , և կշռէ ոչ աւելի քան զերկու պոնդս ։

գիստ մինչ ՚ի Հնդիկս Հոլանդացւոց առանց յառաջագոյն յայտ առնելոյ վերատեսչի նաւահանգստին և արձակելոյ ՚ի նմանէ, տուժեսցէ 10 գիլդր առ մի լաստն՝ ասա, կամ յն և պատահեսցի ՚ի տէրութեան Հոլանդացւոց ։

Նաւապետ մի ՚ի թողուլն զնաւահանգիստ մինչ՚ի Հնդիկս Հոլանդացւոց, պարտէ ցուցանել զգրօշակ իւր. որ զանց առնէ զայսու պատուով, տուժեսցէ 15 գիլդր. և նոյնչափ և վասն իւրաքանչիւր արձակման թնդանօթոց. և այս լոկ վառօդիւ, իսկ թէ գնդակաւ՝ 30 գիլդր.

Նաւապետ մի բերեալ աստ զօտարական ոք՝ չկարէ չու ել աստի. մինչ օտարականն ոչ տացէ երաշխաւորս ՚ի բնակչացն վասն բնակագրի իւրոյ. այլ թէ ոչ՝ պարտական է յետս առաքել զնա առ տեղին, ուստի եբեր զնա ։

Եթէ վարձու բեռնակիր նաւակք կախեսցեն ՚ի նաւու զգիշեր մի, կրկին հատուսցի վարձ նոցա. և եթէ մնալ ՚ի քաղաքն նախ քան զերեք ժամ զկնի միջօրէին՝ և ոչ առ օրին թափեսցեն զբեռինան, կրկին կէս վարձ հատուսցի ՚ի վարձողէն ։

Նաև եթէ վարձեսցէ ոք զնաւակս՝ և մնացեալ ՚ի քաղաքն ոչ յաջողեսցի նմա բառնալ ինչ առ օրին, կորուսցէ զկէս վարձուն. և եթէ հանիցէ ՚ի ծով յիջուցանել զբեռն, և անդրէն դատարկ դարձուսցէ, կորուսցէ զբոլոր վարձն.

## ԳԼՈՒԽ Ժ.

### Եկամուտ Տէրութեան

ԵԿԱՄՈՒՏ տէրութեան է նախ մաքս յելեւմուտ ապրանացն, որք մտանեն 'ի Ջաւա եւ 'ի Մադուրա* յԵւրոպիոյ, 'ի Կէպայ, յԱմերիկայ, 'ի Բրիտանեան Հնդկաց, 'ի Սիամայ, 'ի Քոչինչինայ, 'ի Մանիլլայ, 'ի Չինաց, 'ի Ջապոնայ եւ 'ի Պարսկաստանայ. եւ որք հանեն աստի առ յիշեալ տեղիսն.

Գումար գնոյ մտեալ ապրանացն յամին բովանդակի իբրեւ քսան եւ հինգ միլիոն գիլդր, յորս վերայ մաքս առնու. է որ հարիւրին 6. է որ 12. եւ է որ 24. Բայց առաւելագունից եւ կտաւեղինացն՝ հարիւրին 25 գիլդր. թող զըմպելիս, զգամբիր կամ քօթ, զմոմ եւ զծխախոտ յորոց մաքս առնու 'ի վերայ չափուց եւ կշռոցն.

Եւ գումար գնոյ հանեալ ապրանացն յամին բովանդակի իբրեւ վաթսուն եւ հինգ միլիոն. յորս վերայ մաքս առնու, է որ հարիւրին 2, եւ է որ 4 գիլդր. թող զհամեմունս, զխահվէ, զկլեկ եւ այլ ինչ, յորոց մաքս առնու 'ի վերայ կշռոց. զորոց 'ի ներքոյ կարգիլ ունիմք ըղ-

* Զջաւա եւ զՄադուրա առեալ՝ թէ եւ ոմանց զամենայն տեղիս 'ի Հնդիկս Հոլանդացւոց, բայց եւ բնակելի տեղիքն՝ ուր մտանեն եւ հանեն Եւրոպացիք եւ այլազգիք զվաճառս, են միայն երկու. այսինքն՝ Ջաւա եւ Սումատրա. յորոց առաջինն՝ է երեւելագոյն եւ գրեթէ խառնութ ամենայն վաճառաց

ցուցակ մաքսատուութեան ելեւմուտ ապրանաց , ընդ նմին եւ զեղչմանց եւ կարգադրութիւնս նոցին

Երկրորդն է Հարկ կալուածոց . տանց , չինէացւոց , գերեաց , կրպակաւորաց , պտղավաճառաց , երկվարաց , կառաց եւ ամենայն հրապարակական վաճառատեղեաց , քուէարկութեանց թղթախաղութեան եւ այլ երեւելի զբօսանաց չինէացւոց .

Երրորդն է վարձ տէրունական գետնոյ , Հընգանորդ կորեկոյ . տակ կամ բամ այլ արմտեաց եւ պտղոց . եւ Հնգանորդ կամ տասանորդ ընտացուածոց մտելոց . Այլ զայսմանէ ՚ի վերջոյ ունիմք առանձին խօսել յերկրորդ մասին .

Չորրորդն է պատկարեալք , թաղադրամք՝ գերեզմանացն , կնքեալ թղթագին (սէզլ) տան , կալուածոց եւ նաւուց գրաւաւորութեան ծախք , եւ գին հրամանագրի բնակութեան նորեկ օտար քրիստոնեայ ազգաց .

Հինգերորդն է շահ մենավաճառութեան ածխական վաճառանոցի , տուր եւ առութեան ափիոնի , Բ ափիոնոյ , համեմոցն Մոլուքեան կղզեաց , որք են ջուզ եւ մեխակ եւ ջայպաթրի . եւ յօրինման աղի . յորոց քաղէ շահ յամին աւելի քան երեքտասան միլեոն գիլտր .

Վեցերորդն է շահ խաւֆէի , շաքարի եւ լեղակի . զոր անբաւ քանակութեամբ գրաւեալ է տէրութիւնն . Նմանապէս յօրինէ զչայ . (թէյ)

և կլիմայն մեծաւ քանակութեամբ․ և հանէ զա-նագ յամին իբրև 40000 փիքուլ ՚ի հանքացն Բանկայ․ և զայս անագն տանի ՚ի Հոլանդա յանձնելով Ընկերութեանն Նէդըրլանդայ (Նէ-դըրլանդս հանդլ մաասխաբէյ․) և քաղէ անտի շահս բազումս․

Բայց՝ վասն այս ամենայն եկամտից տէրու-թեան՝ հաստատեալ կան զանազան պաշտօնա-տարք․ այսինքն՝ կառավարիչք․ վերակացուք․ վերատեսուչք․ հարկապահանջք․ մաքսապետք գանձապետք․ համարակալք․ և այլ վերաբե-րեալ մեծ և փոքր գործակալք․

Այս ամենայն պաշտօնատարք ՚ի մեծաց մինչև ցփոքունս պարտական են հնազանդել ամենայն սահմանադրական օրինաց և բանից․ ամենայն ա-չալրջու թէ հաստատուն և հաւատարիմ կեալ յիւրեանց պաշտօնի, և հնազանդ իւրեանց վեր-նագունից․ ուր եթէ գտցի ոք անհնազանդ․ զանցառու․ աշառու․ ծոյլ և արբեցող․ ոչ մի-այն անկանի ՚ի պաշտօնէն․ այլև եթէ գործեաց զինչ ինչ․ տուժեսցէ կամ զպատիժ կամ զտու-գանս․ և ամենայն ինչք նորա պատասխանատու են վնասուցն․

| ՀԱՐԿՔ | ՖՐԱՆԳ | ՍԱՆԹԻՄ |
|---|---|---|
| Հարկ կալուածոց և տանց առնու- քստ արժեցուցեալ գնոյ հա- րիւրին տարեկան .. .. .. | | 75 |
| Գլխահարկ կամ ծամնահարկ չե- նեցւոց՝ սկսեալ 'ի 15 ամենից 'ի վեր՝ տարեկան .. .. .. | 5 | ,, |
| Ի յիւրաքանչիւր տանէ Ջենեա- ցւոց 'ի միոյ՝ մինչև .. .. | 25 | ,, |
| Գլխահարկ գերեաց՝ յութնամենից 'ի վեր, տարեկան .. .. .. | 2 | 55 |
| 'Ի Պտղավաճառաց՝ որք մնան ա- ծեն 'ի փողոցս, և որք տանեն 'ի վաճառատեղիս, առնու առ մի շալակն 5, 6 և .. .. .. | | 14 |
| Վասն եկեղեցեաց առհասարակ Քրիստոնէից առ մի եկեղեցին տարեկան .. .. .. .. | 5 | 12 |
| Վասն երկանիւ կառաց երկրակա- նաց և չենեցւոց տարեկան .. | 50 | ,, |
| Վասն քառանիւ կառաց նս նս | 100 | ,, |
| Վասն պսակագրի Քրիստոնէից | 19 | 50 |
| Վասն ծննդագրի նս .. .. | 5 | 75 |

| | | |
|---|---|---|
| Վասն թաղագրի ևս (1850 ազատ) | 1 | „ |
| Գերեզմանագրին ևս. (ժամանակաւոր՝ որ չլինի քանի ամաց ամփոփի) այլ .. .. .. .. | 15 | „ |
| Մշտական. յորս վասն կառուցանի դամբարան, միայն գին գետնոյ .. .. .. .. .. | 100 | „ |
| Տանց՝ նաւուց և կալուածոց գրափոխութեանն ըստ արժողութեան գնոյն՝ հարիւրին .. .. .. | 5 | „ |
| Եւ ծախք չափուց և ատենական թղթոց իբրև հարիւրին .... | 1 | „ |
| Վասն հրամանագրի նորեկ օտար Քրիստոնէից .... .. .. | 100 | „ |
| Վասն Հոլանդացւոց. ևս ևս | 1 | „ |
| Եւ այլ գրուածոց ծախք իբրև. | 15 | „ |

Արժէք կնքաթղթոց են ¼. ½. 1. 2. 4. 8. 10. 12. 16. 20. 24. 30. 40. 50. 60. 80. 100. 150. 200 և 500 գիրշ. որոց կիրառութիւնն սահմանեալ է առ ամենայն գործ և խնդիր՝ ըստ չափու գումարին և ըստ արժանաւորութեանն. և որ օգտի 'ի չափն կամ անփոյթ կայ զկիրառութենէ նորա, կրէ տուգանս.

'Ի պարտեմագիր կամ 'ի դիր խոստման վաճառականաց՝ զոր կոչեն էքսէպոսալի, հաստատեալ է 'ի կիր առնուլ զնէգլն այսպէս.

| | | Փիաստր | Տ-լ |
|---|---|---|---|
| Ի 100 դհկնէ մինչև | ց500 | | 25 |
| 500է .. .. .. | ց1000 | | 50 |
| 1000է .. .. .. | ց1500 | 1 | |
| 1500է .. .... | ց2·000 | 2 | |
| 2·000է .. .. .. | ց40·000 | 4 | |
| 4 000է .. .. .. | ց10000 | 8 | |
| 100 000է .. .. .. | ց150·000 | 12 | |
| 150·000է .. .. .. | ց200·000 | 16 | |
| 200·000է .. .. .. | ց250·000 | 24 | |
| 250·000է .. .. | ց300·000 | 30 | |
| 300·000է .. .. | ց400·000 | 40 | |
| 400·000է .. .. | ց500·000 | 50 | |

Եւ այսպէս բարձրանալով իւրաքանչիւր տասն հազար գումարի՝ աւելու և յէգլ նորին ց10 դհկն։

ԱՓԻՈՆ

ՅԱՌԱՋ ժամանակաւ Տէրութիւնն ածրգաւ վաճառէր միայն զհարկ ափիոնին. և զբոլոր Պաշա բաժանեալ էր յերկս մասունս՝ այսինքն՝ ի Բէյամիա ի Սամարանդ և ի Սուրաքայիա. որոց գնողքն յաւելուին միայն զհարկ ափիոնին. և ինքեանք պատրաստէին զափիոնն. որ սխտոյանոյր յամին իբրև զհօթն հարիւր արկեղս կամ փոքուն. Յամին 1826 'ի ժամանակս Պարոն

Յովսեփայ Յովհաննիսի Ամիրեանց՝ հարկ ափիոնին Բատավիոյ էր 25·000 գիլդր · Սամարանգայ 144000 և Սուրաբայայ՝ 50·000 գիլդր · որք միանգամայն լինէին 199000·

Այլ յետոյ եհաս տէրութիւնն զգին ափիոնին ց21000 գիլդր առ մի արկղն · և վաճառէ միայն զափիոնն առանց հարկի · և բաժանեալ է զՃաւա 'ի բազում մասունս · և վասն իւրաքանչիւր մասին հաստատեալ է զչափ ինչ ափիոնի · որոյ գնողն պարտէ յանձնել միայն զափիոնն · զոր և 'ի տէրութենէ առնեալ յամենայն ամսամտի ·

ԱՃՐԴԱԿԱ՛Ն ՎԱՃԱՌ

ԱՃՐԴԱԿԱՆ վաճառն կատարի միշտ 'ի ձեռն տէրութեան պաշտօնէատարաց · ոչ ոք կարէ գնել յայսմ ինչ՝ եթէ ոչ՝ կամ 'ի ձեռն պատրաստի դրամոց՝ կամ առաջագոյն տալով զերկուս երաշխաւորս վասն հաստատեալ ինչ գումարի՝ որ գնել կամիցի · և այն գրով և կնքով նօտարի հասարակաց ·

Գնողն հատուցանէ զծախս հարիւրին եօթն գիլդր · և վաճառողն երբեմն մին և կէս գիլդր · Ժամանակ հատուցման գնողաց է չորս ամիս · և ստացման վաճառողաց՝ վեց ամիս · Բայց եթէ գնողն յապաղէ քան զչորս ամիսն · հատուցանէ զտուգանս հարիւրին ամսական երկու գիլդր ·

բայց ոչ թոյլ տայ անցանել զվեց ամիս ։ Եր-
վաճառողն կարէ ստանալ երբ և կամիցի՝ բա-
նալով զվաշխ հարիւրին տարեկան 6 դիլդր ։

## ՏՈՒՐԵՒԱՌՈՒԹԻՒՆ ՋԱԳԱՆԱՑ

ԲԱՑ 'ի պղնձոյ , 'ի քափուրէ և այլ մանրա-
ւոր իրաց՝ զորս տէրութիւն հանէ անտի ։ ըղ-
ձիւցեալ վաճառումն երեք կամ հինգ ամօք տայ
'ի վարձու ։ և վարձողն զոր ինչ տանի տանէ՝ և
անտի բերէ ։ զամենայն բառնայ 'ի նաւ տէրան ։

Այս տուրեւառութիւն կարի շահաւոր է տէ-
րութեանն և վարձողին ։ զի յամին միանգամ
միայն առաքի նաւ անդր յամենայն Յու լիսի ։
որ դառնայ անտի 'ի Դեկտեմբերի ։

Խանութն Ջապանայ բանի յամենայն Յուն-
վարի ։ որ լցեալ է բազմատեսակ գեղեցիկ և
ընտիր իրօք ։ Այլ գաղարին տաք մասգոյ և ե-
ւղոյ այար յերկուս կամ յերիս ամիսս ։ և ոչ
ոք երանէ անտի ձեռն դատարկ ։ զի ամենայն ոք
գտանէ ինչ՝ ըստ հաճոյս քմաց իւրոց 'ի գնել ։

Երևելագոյն վաճառք որքա են սակի ըմպե-
լի ինչ նորածնող կանանց ։ որ մաքրէ զարիւն
և յաւելու զկաթն ։ Այլ ազգ համեմաջուր ինչ
շօր ։ զոր 'ի կիր առնուն 'ի խոհարանս և 'ի սեղանս
Բրինձ զօրացուցիչ ակարաց ։ Մորամի յախ-
ճապակիք ։ պղնձագործ զամբիլ ղէք ։ սաուաք-
սեղէնք ։ թղթի միջնորմք ։ սամանք կամ թա-

ոյկ ջրոյ · փայտաշէն գեղեցիկ արկեղք՝ կարա-նոյք՝ գրագրանք՝ զգեստարանք՝ սնդուկք և այլ պէսպէս մեծ և փոքր տուփք 'ի պէտս զարդուց և այլ իրաց ·

### ՀԱՄԵՄՈՒՆՔ

ՋԱՒԶ · մեխակ և ջաւզատրի ( ջաւզի ծա-ղիկ ) են բերք Մոլուքեան կղզեաց · այսինքն Ամբոնայ · Բանդայ և Թեռնատայ · զորս տէ-րութիւնն 'ի վաղուց հետէ գրաւեալ ունի · և յամին յիւրաքանչիւր անսակէ ստանայ մեծ քանակութեամբ և դիւրագին գնով · Օ ի վասն մի պօնդ Ջաւզի հատուցանէ 40 տուկրա · վասն մի պօնդ մեխակի՝ 50 տուկրա · և վասն մի պօնդ ջաւզատրու՝ 60 տուկրա · զորս բերեալ 'ի Բը-թավիա՝ առաքէ տանի 'ի Հոլանդա յանձնա-րարեալ Ընկերութեանն Նէդէրլանդայ ·

### ԱՂ

ՏԷՐՈՒԹԻՒՆՆ յօրինէ զաղն 'ի ջուրց ծովու հազարաւոր կոյեամօք 'ի Պէկլո , 'ի Պարա-դէսի և 'ի Սեմարանգ · և 'ի նոյն տեղեաց առաքէ յամենայն գաւառս Ջաւայ և Սումատրայ ·

Տէրութիւնն առ մի կոյեամն ոչ աւելի ծա-խէ քան զեօթն գիլդր · այլ վասն հանելոյ ար-տաքս յայլս տեղիս՝ վաճառէ զմի կոյեամն 30 գիլդր · իսկ 'ի Ջաւա և 'ի Սումատրա 180 գիլդր · յորս 'ի գործ ածանէ յամին աւելի քան զերեք

Հազար կշռեամ. Այլ զայս հօթն գիլդր տանիմ, որ միայն Համտացանէ վարձ յօրինողացն մինչև ցհամբարանոցն. այլ անտի կրելոյն առ զանազան տեղիս. որոյ յաւելուն ծախք, զորս տայ ի վարձու. և առ մի կշռեամն Համտացանէ յ8ն ց24 գիլդր.

ԿԼԵԿ

Կլեկն՝ որպէս ասացաք ի նախընթաց գլուխն՝ Հանէ ընկերութիւնն ի Հանքացն Բանկոյ յամին իբրև 40000 փիկուլ. Առ մի փիկուլն ծախէ իբրև 16 կամ 17 գիլդր. զոր բերեալ ի Բաթաւիա՝ յանձնէ Ընկերութեան Նէդրլանդայ. և երբեմն ևս վաճառէ առ զմի փիկուլն 50 կամ 55 գիլդր.

ՇԱՔԱՐ

Բերք շաքարի 'ի Ճաւա՝ ընկերութիւն քան ամօք առեալ է 'ի վարձու զանազան անձանց՝ 'ի զանազան տեղիս. յորոց ստանայ յամին աւելի քան զերկոտասան հազար փիկուլ.

Ինքն սերմանել և հասուցանել տայ զեղէգն և զնա եփեալ կարել և յանձնել տայ վարձողին. իսկ միացեալքն՝ այսինքն՝ աղօրիք, եփանոցք, համբարանոց և այլն՝ են ի հոգողութեան վարձողացն. որ տացեալ զեղէգն և արարեալ շաքար յանձնէ ընկերութեան պաշտօնէութեան զնով. զի է՝ որ զառաջին տեսակն արժեցուցեալ 12 գիլդր. երկրորդն՝ 10½. և երրորդն՝ 9½ գիլդր. և է՝ որ

պակաս քան զայսոսիկ հաստատեցանէ . զոր սոսա-
ցեալ՝ նախ ՚ի բաց բառնայ զգլխն եղեգանն . և ա-
պա վճարէ զմնացորդն .

Սմանք վասն բարեյարմարութեան տեղւոյն՝ բազմահիւթ բուսոյն և առատ երութեան գնոյն՝ քաղեցին և քաղեն զբազում շահս . իսկ բազումք՝ ներհակն հանդիպեցելով՝ վնասեցան և մնասին .

ԽԱՀՎԷ

ԲՈԱՅ յոգոտ կաղու ածոյ՝ զմնացեալ բերս խահվէի Մոխայ և Պուրպոնեայ գրուեալ է. Տէրութիւնն ՚ի ձեռս իւր . որ յամենի ժողովէ աւելի քան զմի միլիոն փիքուլ . որոյ գին և ամենայն ծախքն մինչև ցհամբարանոցն՝ ոչ աւելունամ քան զութն գիլդր , բայց և ոչ սակաւ զհարկ դեմոյն , որ բերէ զխահվէի .

ԼԵՂԱԿ

Օ ԼԵՂԱԿՆ Տէրութիւնն սերմանեալ և յօրինեալ՝ այս երկրականաց ընդ վերատեսչութեամբ պաշտօնատարաց իւրոց . յորմէ գանէ յամենի զհարիւրաւոր հազար պօնդս . Գին և ամենայն ծախք նորա՝ մինչև ցամփոփումն յարկեղ , ոչ աւելու քան զմի և կէս գիլդր առ մի պօնդն .

ՉԱՅ ԿԱՄ ԹԷՅ

ԲՈՅՍ չայլին է՝ զոր տէրութիւնն սերմանէ , և է՝ զոր այս ՚ի վարձու , բայց ինքն յօրինէ ըզ-

չայն 'ի Բժամխա , Պ.լին և ամենայն ծովք նաւամինչև ցամաքում մեն յորկիր՝ ոչ աւելի քան զվաթսուն հինգ աստկրս առ մի ոտնոյն ,

'Ի սկիզբն վասն նոր ինչ լինելոյ չոյլի՝ կարի հաւանութեամբ 'ի գործ եմուտ 'ի Հոլանդա , յորմէ և քաղցին զբաղմամ շահս . բայց երկարաւ որ կիրառութեամբ՝ այժմ դրեթէ ձաշակամենեցուն տարածեալ է . քանզի ոչ համ ունի , և ոչ հոտ . վասնորոյ երեւի թէ՝ ոչ անագան այս ձի ղ տարրեաւութեան ցամաքելիլ ունի ,

### ԿԻՆԱՄՈՆ ԿԱՄ ԴԱՐՉԻՆ · ԿՕՇՆԻԼ ԿԱՄ ԴՈՄԷՋ · ԵՒ ՇԵՐԱՄ

Օ ՑԻՍՈՍԻԿ 'ի սկիզբան տէրու թիւնն կարի փութաջան եղև յաձեցուցանել . բայց ոչ այչափ քաղեայ զօղոտ անուն որչափ ջանս արար և ծախս հատոյց , Այլ այժմ միայն զդարչինն ենտանեմք առատ . զկօշնիլն՝ յայժ սակաւ , և զշերամ կամ մետաքսն միանգամայն բողբոջէ ,

### ՎԱՐՁՈՒ ԲԵՌՆԱԿԻՐ ՆԱԻԱԿՔ

ՀԱՍԱՐԱԿԱՑ են ամենայն վարձու բեռնակիր նաւակք . բայց են ը՛դ իշխանութեամբ տէրութեան . որ կարգեալ է զպաշտօնատարս 'ի կառավարել զայնս տալով 'ի վարձու , և պահելով զեկամուտ ծախուց և եկամտից .

Արծ նաւակացն է երկու պղինձ գիլդր առ

մի կոյեանն, որ է մի վաթսուն և մեկ ախոյնի. կամ արծաթ ռուփի. և մեծութիւն նոցա է յերեք կոյեանն մինչև ցասան կոյեանս.

Իւրաքանչիւր նաւտիկանէր 'ի վերջ ամսոյ ընկալնու 'ի վերակացուէն զհաշիւ եկամտիցն. և իւր բաժինն հոգւոյ գտանէ զկէս եկամտիցն. զի մնացեալ կէսն է վարձ տէրութեան, նաւակոմարացն և այլ պիտոյից. որ եթէ և պատահեսցի կորուստ ինչ բեռանց, նաւտիկանէրն է պատասխանատու.

## ԼՐԱԳԻՐ

ԼՐԱԳԻՐՆ է ընդ իշխանութեամբ տէրութեան, որ 'ի շաբաթ'ն երկիցս միայն մամլի. և ստորագրողքն կանխիկ հատուցանեն յամին 40 գիլդր.

Լրագիրն այս միայն 'ի Բթավիա. և վասն յայտարարութեանց հասարակաց՝ որք ծանուցանին 'ի նմա, եթէ ծիգ և եթէ կարճ. առնու առ հինգ բառն՝ զմի գիլդր. և երկիցս միայն հրատարակէ.

Բայց 'ի տարեկան գործոց և յայտարարութեանց պսակի, ծննդեան, մահու և կտակակատարութեանց և այլ ծանուցալուր բանից՝ չկարէ հասարակութիւնն դոյլ ինչ հրատարակել 'ի նոյն լրագիր. քանզի չէ ազատ, 'ի վերջոյ զայս մի ինչ ես արժան համարեմ յիշել. զի զ'ի վերն յիշատակեալ զամենայն բերս տէրութիւն

յանձնէ Ընկերութիւնն Ինգլանդայ. չկարէ նա յայլ ուրեք վաճառել, բայց միայն 'ի Հոլանդա՝ աճրդաւ. և ամենայն ծախք յանձնարարութեանն մինչև ցառուցումն փոխադրելոյն հատուցանէ աւելի քան հարիւրին 14 գիլտր.

Բազմաց կարծիք են՝ զի թէ տէրութիւնն զայս ամենայն բերս առանձնէր 'ի վաճառ, Ջավա թաւալէր 'ի մէջ ոսկւոյ և արծաթոյ. և ինքն փոխանակ զայսչափ ծախս հատուցանելոյ՝ ունէր շահիլ ևս. թող զմնջքն. Բայց թէ առ ինչ միտս առաքէ 'ի Հոլանդա, մինչև ցարդ ոչ ոք գիտաց. թէ ես ոմն զայս՝ և ոմն զայն պատճառս յառաջ բերէ, բայց ո՛ կարէ առնել զհաւաստին խորհրդոց քաղաքագէտ արանց՝ որք զցայգ և ցերեկ տքնին 'ի վերայ բարօրութեան հասարակաց. թէ ընդէ՞ր տէրութիւնն ընտրեաց զնոսա՝ քան զշահ իւր.

Այս քանի ամօք յառաջ՝ յորժամ ոսկի և արծաթ բնաւ աներևութացան, և առատ ելութիւն զնոյ դրամաթղթոյ, Ջավայ Բէնքին հանեալ էր հարիւրին ցվեց կամ ութն, և այն ևս կարի դժուարութեամբ գտանիւր. շշունչ էին յամենայն բերանս, թէ տէրութիւնն յառաջադրեալ է գնել զկէս բերոցն 'ի Ջավա վաճառել՝ առ 'ի բառնալ զնոսա և զնեղութիւն ժողովրդոյն. բայց փոխանակ զայս առնելոյ՝ տպեաց զքառասուն միլիոն դրամաթղթոյ արծաթ'ի ա-

սխալս կոչեցեալ, որոյ արժողութիւն է 120 պղինձ փող. և 306 փողն՝ մի մառչիլ ըստ տէրութեան արժեցուցեալ գնոյն. և ՚ի նոյն ժամու գնեաց զամենայն պատրաստի շուքորս ազատ կալուածոց՝ իբրև 50000 փիքուլ. և առաքեաց ՚ի Հոլանդա։ Սուտ երևի թէ՝ և ոչ թոռունք մի անսանել ունին զայս առաջադրութիւն. առ որ հաստատակութիւնս մինչև ցարդ ակնկալէ։

## ԳԼՈՒԽ ԺԹ

### Նշանոց և յարգատրութեան հաստատութեանց։

Աւս քան զամենայն վաճառս մեծեալ այսր՝ յառաջագոյն ներկայացոյ ցանկի առաջի մաքսապետին վաճառացոյց նորա. զոր թէ ոք զեղջ համարեսցէն՝ յաւելուն ՚ի գինն հարիւրին զերեսուն և ապա հաշուեն զմաքս նորա։ Բայց եթէ անընդունելի լիցի, ներկայացուցանի անասն ՚ի բաքանչիւր վաճառացն. և մաքսապետն հատանէ նոցա ըստ գնոյ աւուրն՝ սովորոյ զմաքսն. այլ ընդ այսմ ոչ յաւելու զնա խոստացեալ հարիւրին երեսուն։

Երկրորդ՝ յետ հաշուեւ երոյ զմաքսն՝ առնուն նաև ՚ի վերայ զամ մարի մաքսին հարիւրին հինգ վասն շինութեան ջրանցից կամ ճանապարհաց՝ ՚ի Բոր թամկոյ. որ սահմանեալ եղև յամին 1819 ՚ի ժամանակս կուսակալին Բարոն Ֆանտր Կապէլայ։

Երրորդ՝ ամենայն վաճառք Եւրոպիոյ . Ամերիկայ և Ասիայ՝ բաց յընկերեաց՝ որոց յատուկ են մաքսատուութեան հաշիւք . եկելոց այսր 'ի բուն տեղեացն օտարանշան նաւուք՝ սահման զմաքս հարիւրին 12 . կամ 24 և կամ 25 . բայց յեկելոց յաշխարհէն Հոլանդացւոց և Հոլանդացւոց նաւուք՝ սահման միայն զկէսն . այսինքն 6 . 12 և 12½ . Եւ եթէ յառաջնոյնն իցէ վեց՝ երկրորդինն ազատ է .

Այնպէս են և մաքս ընկերեաց՝ զի զոր ինչ հատուցանէ առաջինն . զնորին կէսն հատուցանէ երկրորդն .

## ՑՈՒՑԱԿ ԱՌԱՋԻՆ

Մաքս ըմպելեաց եկելոց 'ի բուն տեղեացն օտարանշան նաւուք .

| ԱՆՈՒԱՆՔ ԸՄՊԵԼԵԱՑ | ՉԱՓՔ | Գինք |
|---|---|---|
| Բիր՝ որ է գարեջուր . | վասն կէս տակառի՝ կամ մի օքսհօֆդի .. | 24 |
| Եւ եթէ բօթլով իցէ՝ | 100 բօթլի .. | 12 |
| Բրանդի որ է օղի Գաղղիոյ . | կէս տակառի .. | 45 |
| " | 100 բօթլի .. | 40 |

| ԱՆՈՒԱՆՔ ԸՄՊԵԼԵԱՑ | ՉԱՓՔ | ԳՐՇ |
|---|---|---|
| Բրանդի Ֆրուտ՝ պըտուղք պահեալ՛ի մէջ բրանտւոյ . . | 12 բօթլի .. | 6 |
| Բօրգօնդայ և այլ ընտիր գինիք . | 12 բօթլի .. | 5 |
| Լիկոռ՝ քաղցր և համեմեալ ըմպելիք ինչ . | 12 բօթլի .. | 6 |
| Լիզբոն՛գինի Փօրթգալոյ . | միոյ տակառի | 120 |
| Կլարէտ՝ կարմիր գինի գաղղիոյ . | կէս տակառի .. | 40 |
| ,, | 100 բօթլի .. | 20 |
| Կէպայ գինի . | միոյ տակառի | 50 |
| ,, | 100 բօթլի .. | 20 |
| Մադերագինին ընտիրն | միոյ տակառի | 80 |
| ,, | 12 բօթլի . . . . | 5 |
| Մ՛ինըրալ վատր՝ ջուր հանքային . | 100 կանի .. | 12 |
| Շամպէն՝ ըմպելի ինչ քաղցր և յոյժ զօրաւոր . | 12 բօթլի .. | 6 |
| Ջին կամ ջնէվէր՝ | | |

| ԱՆՈՒԱՆՔ ԸՄՊԵԼԵԱՑ | ՉԱՓՔ | ԳՐՇ |
|---|---|---|
| Օշինդրացւոց · | միոյ կէլտրի .. | 5 |
| Սիրօպ՝ օշարակ .. | 12 բօթլի .. | 4 |
| Սպանիոյ գինի .. | միոյ տակառի | 120 |
| Սպիտակ գինի .. | կէս տակառի | 40 |
| ,, | 100 բօթլի | 20 |
| Տեներիֆ գինի .. | միոյ տակառի | 50 |
| ,, | 100 բօթլի | 20 |
| Ռենիշ գինի՝ որէ գեր մանացւոց թթու-գինի .... .. | կէս տակառի | 40 |
| Ռենիշ գինի .... | 100 բօթլի .. | 20 |
| և ընտիրն | 12 բօթլի .. | 5 |
| Ռոմ՝ օղի · և այլ ամենայն օղի Եւրոպիոյ .. .. | միոյ տակառի | 120 |
| ,, | 100 բօթլի .. | 40 |
| Քաղցր գինի .. | 12 բօթլի .. | 5 |
| Քացախ գինւոյ · | կէս տակառի | 12 |
| ,, | 100 բօթլի | 12 |
| Եւ չամչի · .... | կէս տակառի | 9 |
| ,, | 100 բօթլի .. | 9 |
| Եւ գարեջրոյ .... | մի կէս տակառի | 6 |
| ,, | 100 բօթլի | 4 |

| ԱՆՈՒԱՆՔ ԸՄՊԵԼԵԱՑ | ՉԱՓՔ | Դրամ |
|---|---|---|
| Եւ արուեստարկեալ՝ | կէս տակառի<br>100 բօթլի .. | 56<br>50 |
| „ | | |
| Ամենայն կարմիր գի-<br>'նի ամփոփեալ յար<br>կեղ պակաս քան<br>զ40 բօթլն համարի<br>ընտիր և անուն. | 12 բօթլի .... | 5 |
| Ամենայն ապականեալ<br>գինիք համարին<br>իբրև զքացախ, և<br>անուն զմաքս որ-<br>պէս զքացախին. | | |
| Եւ այլ ամենայն ըմ-<br>պելիք՝ որք չեն յի-<br>շատակեալ յայսմ<br>ցուցակի 'ի վերայ<br>գնոյ ընծայուցին<br>հատուցանեն հա-<br>րիւրին, | | 42 |

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐՆ ՑՈՒՑԵԱԼ ՉԱՓՈՒՑ

* Բօթլն է սրուակ ինչ անգղիացւոց կամ այլ եւրոպացւոց, յատկապէս յօրինեալ վասն բրոյ, կարմիր գինւոյ և բրանդոյ. որ կրէ իբրև մի և կէս պօնդ ջուր.

Կէս տակառն կամ մի օքսհօֆդ և կամ օքսհէդն կրէ զչափ 300 բօթլի.

## ՑՈՒՑԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Մասն առաքելենաց և չառաքելենաց՝ էջեալ 'ի շոգենաւն փեղեաց . որոց գին հատանի միայն , և ոչ առնու- լեաց :

| | Գուլտ. | Սէնտ. |
|---|---|---|
| ՀՈԼԱՆԴԱՑԻՈՑ նաւով առանց վկայականի մասն իւրայն՝ զոր բերէ , եթէ և լցեն այնք 'ի Հոլանդացւոց յաշխարհէն՝ հարիւրին .... .... | 25 | |
| Հոլանդացւոց նաւով հանդերձ վկայականօք և հաստատութեամբ , եթէ բերէ զինչս իւր 'ի Հոլանդացւոց աշխարհէն՝ հարիւրին .... | 12 | 50 |
| 'Ի զանազան կողմանց Եւրոպիոյ , Ամերիկայ և յաշխարհէն՝ ընդ որ բարեկամեն Նեդրլանդացիք՝ հարիւրին | 25 | |
| Եւ ընդ որոց չեն բարեկամ՝ հարիւրին | 50 | |
| 'Ի Հնդկաց Հոլանդացւոց և 'ի բարեկամ երկրականաց տէրութենէ 'ի բազմակղզի ծովու արևելեան Հնդկաց օտարանշան նաւով՝ հարիւրին | 25 | |

Եւ ամբողջ տակառն՝ զլաւ 600 քօթլի .

Կանն է կաւճ ինչ , որ կրէ զլաւ երկու քօթլի .

Կէլցրն է արկղ ինչ , յոր պարունակեալ են 15 Ֆլաշկա . և մի Ֆլաշկն ունի զլաւ երկու քօթլի .

Հոլանդացւոց կէս տակառն՝ որով գայ բիր միայն , համարի չորեց երրորդ մասն օգսհօֆդի , որ է 18 դուզին 9 քօթլ .

Եւ դուզինն է 12 քօթլ .

| | |
|---|---|
| Եւ 'ի նոյն տեղեաց՝ Հոլանդացւոց ոչ կամ բարեկամ երկրականաց՝ անկրութեան նշանաւ նաւով և ուղղակի՝ Հարիւրին․ .. .. .... .... | 12 50 |

ՑՈՒՑԱԿ ՆՐՐՈՐԴ

Մաքս զանազան երաց Եւրոպէայ, Ափրիկէայ և Ասիայ՝ որք համաձայնին օտարանչան նաւով

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | [illegible] |
|---|---|---|
| Ալիւր .... .... | Հարիւրին .. | 24 |
| Աղ, ուստի և գոյ․ | արգիլեալ է .. | |
| Աղեալ միս․ ......... | Հարիւրին .. | 24 |
| Աղիւս․ .. .... | ” | 12 |
| Ապակեղէնք՝ հաստ կամ բարակ․ ......... | ” | 24 |
| Աղխտեալ միս խոզի եայլն․ .... .... | ” | 24 |
| Ատրճանակ՝ յարկեղս․ | ” | 50 |
| Ափիոն՝ 'ի Պաղա և 'ի Մադուրա․ .... | արգիլեալ է .. | |
| Բլէկ՝ անագ կարծր, գործեալ կամ անգործ | Հարիւրին .... | 24 |
| Գայլախազ վասն տար-եառութեան, .... | արգիլեալ է .. | |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | Գ. | Տ. |
|---|---|---|---|
| Գուլպախաղ վասն առանձին կիրառնլոյ .... | Հարիւրին .. | 12 | |
| Գիրք, աշխարհացոյց, ծովացոյց և երաժըշտական թուղթք, | „ | 6 | |
| Գիրք՝ վասն համարատանց . .... .... | „ | 12 | |
| Գոհարք՝ կազմեալ կամ անկազմ, ......... | ազատ .. .. | | |
| Գործիք նաւու .... | Հարիւրին .. | 12 | |
| Գնդոլայք ......... | „ | 12 | |
| Գրամք՝ ոսկի և արծաթի . ......... | ազատ .. .. | | |
| Երկաթ՝ ձոյլ, տախտակ, ևայլն . .... | Հարիւրին .... | 12 | |
| Երկաթեղէնք՝ գործիք, խարսխի նաւու, և այլն . .. .. | „ | 24 | |
| Զգեստ՝ տաւլի և կըտաւի, ........ | „ | 25 | |
| Էւ մետաքսի . .... | „ | 12 | |
| Թամբաքու՝ տերեւն , | պօնդն .. .. | | 16 |
| Ջուրութն՝ Հաւանայ | „ | 2 | |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | ՓԱՐԱ | [illegible] |
|---|---|---|---|
| Եւրոպիոյ և Ամերիկայ | „ | 50 | |
| Թութուն. կամ դե-ղունչ. ........ | պօնդն .. .. | | 40 |
| Թուղթ խաղաց, | հարիւրին .. | 24 | |
| Ժամացոյց .... .... | „ | 24 | |
| Ժապաւէնք և ոսկի և արծաթի թելք, | „ | 24 | |
| Իսարխախ՝ տես երկա-թեղէնք. .... | | | |
| Իսցխիլ. .... .. | „ | 12 | |
| Ծխախոտ, տես թամ-բաքու .... .. | | | |
| Իւղ բեհեկնի, կանեփի կամ ներկի. .... | „ | 12 | |
| Կահ և կարասիք տան | „ | 24 | |
| Կաշի և կաշուեղէնք, | „ | 24 | |
| Կոզի կամ կարաք. | „ | 24 | |
| Կղմինտր .. .. | „ | 12 | |
| Կով, ոչխար և այլ ա-նասունք. ... .. | գլուխ .. .. | | |
| Կտաւ կանեփոյ. | „ | 24 | |
| Համետ և այլ գործի հեծանելոյ. .. .. | „ | 12 | |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԹԻՒ | Գրուշ | Տոլար |
|---|---|---|---|
| Հոտաւէտ ջուր , | ,, | 24 | |
| Հրազէնք , .. .... | արգելեալ .. | | |
| Հրացան որսորդութեան յարկերու . | Հարիւրին .... | 50 | |
| Ձի , ջորի , էշ , եւայլն . | ազատ .. .. | | |
| Ձիւթ , կուպր , եւայլն . | Հարիւրին .. | 12 | |
| Մարմարիոն .. .. | ,, | 12 | |
| Միս՝ աղեալ, մխեալ, եւայլն . .. .... | ,, | 24 | |
| Մետաքս եւ մետաքսեղէնք . .. .. .. | ,, | 12 | |
| Մոմ՝ գործեալ, .. | պօնդն .. .. | ,, | 24 |
| Յախճապակի . .. .. | Հարիւրին .. | 24 | |
| Ներկ .. .. .. | ,, | 12 | |
| Ոսկեղէնք եւ արծաթեղէնք . զարդք կամ սպասք .. .. .. | ,, | 24 | |
| Ոսկեղէնք եւ արծաթի դրամք եւ ձոյլ . | ազատ .. .. | | |
| Ուտելիք , որք ոչ են յիշեալ յայսմ , .. | Հարիւրին .. | 24 | |
| Չուանք . .. .... | ,, | 24 | |
| Պանիր .. .... | ,, | 24 | |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | ԳԻՆՔ |
|---|---|---|
| Պատկերք, | „ | 12 |
| Պատերազմական գործիք .. .... | արգելեալ են .. | |
| Պղինձ և պղնձեղէնք, | հարիւրին .. | 24 |
| Պղնձի դրամք .... | արգելեալ է .. | |
| Պողպատ . . . . . | հարիւրին .. | 12 |
| Պողպատեղէնք, | „ | 24 |
| Վառօդ՝ համայն, որ կիր առնու վասն պատերազմի՝ արգելեալ է. Բարակն 'ի կանխաւր կամ'ի ափի վասն որսորդութեան՝ հարիւրին. .. .. | „ | 12 |
| Տօկաւք. .. .. | „ | 24 |
| Փայտ ազնիւ, և փայտաշէնք. .. .. | „ | 12 |
| Քսակ կանեփոյ (գօնի քիսակ,) .. .. | հարիւրին .. | 24 |
| Եւ այլ ամենայն իրք՝ որք ոչ յիշեցան յայսըմ ցուցակի .. .. | „ | 12 |

ՑՈՒՑԱԿ ՉՈՐՈՐԴ

Մասն երրորդ՝ եկելոց 'ի կղզեացն ծովուն Արևելեան Հնդկաց. և համաձեռն 'ի Ջաւա և 'ի Մադրաս .

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | Գիլտր |
|---|---|---|
| Գամբեր , եթէ գայ օտարանշան նաւով . | փիքուլն . . . . . | 18 |
| Նոյն եթէ գայ Հոլանտացւոց և նոյնանըման նշանաւ նաւով և ուղղակի . . . . . . . . . . | " | 12 |
| Թամբաքու , օտարանըշան նաւով՝ տերևն , | " | 10 |
| Նոյն չորութ՝ Սօլօայ կամ Թանատայ . . | պօնտն . . . . | 1 |
| Հոլանտացւոց կամ նոյնանման նշանաւ նաւով և ուղղակի . | հատուցէ զկէսն | |
| Մեղրամոմ՝ գործեալ և անգործն՝ օտարանըշան նաւով . . . . . . | փիքուլն . . . . | 20 |
| Հոլանտացւոց և նոյնանման նշանաւ նաւով և ուղղակի . . . . . . . . | " | 10 |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | ԳՐՈՒՇ |
|---|---|---|
| Կտաւեղէնք, բամբակի թել մանած ուրպէս 'ի ցուցակն երկրորդ. | | |
| Ոսկի, արծաթ (դրամ, ձոյլ կամ հողն.) | ազատ .. .. | |
| Գոհարք, մարգարիտ, ձի և այլ անասունք, | եւս .. .. | |
| Եւ այլ ամենայն բերք սոյն կղզեացն՝ օտարանըշան նաւով .. .... | հարիւրին .. | 6 |
| Հոլանդացւոց և նոյնանման նշանաւ նաւով և ուղղակի .. | ազատ .. .. | |

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՎԵՐՈՅ ՑՈՒՑԱԿԻՍ

ՈՒՂՂԱԿԻ ասելով իմանի այն՝ որ ոչ է մտեալ յայլ տէրութիւն վասն գործառնութեան ինչ. բայց եթէ 'ի ձեռն պատահման մտեալ ուրեք՝ ելցէ անտի առանց թափելոյ կամ ստանալոյ զբեռն ինչ՝ թերևս համարի ուղղակի.

Հոլանդացւոց նշանաւ նաւ ասի, որ վերաբերի 'ի Հնդիկս Հոլանդացւոց. և նոյնանման նշանաւ նաւ ասի՝ որ վերաբերի դրացի կամ բարեկամ երկրական տէրութեան 'ի մէջ բազմակղզեաց ծովու Արևելեան Հնդկաց. ընդ որոց են և նաւք Սիամայ.

## ՑՈՒՑԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մաքս զանազան իրաց՝ եկելոց 'ի Բրիտանեան Հնդկաց, 'ի Քօչինչինայ, 'ի Սիամայ, յաշխարհէն Չինաստանի, 'ի Ճապոնայ և 'ի Պորտուգալեանս՝ և հանելոց 'ի Ճավա և 'ի Մադուրա.

ՎԱՍՆ ամենայն վաճառաց՝ որք են խիկ բերք վերոյ յիշեալ տեղեաց, մուծեալ այսր օտարանշան նաւով, է՝ որ առնու հարիւրին 6. է՝ որ 12, և է՝ որ 24. իսկ վասն ըմպելեաց, ասուեղինաց և կտաւեղինաց՝ առնու ըստ կարգադրութեան Առաջին և Երկրորդ ցուցակին.

Վասն չինեացւոց վաճառաց՝ եկելոց չինեացւոց նաւով՝ ջօնգ կոչեցեալ՝ առնու մաքս միանգամայն 'ի վերայ նաւաբեռան միոյ՝ ըստ մեծութեան նաւոյն և ըստ տեղւոյն, առ որ վերաբերի նաւն. բայց օտարանշան նաւով եկեալ՝ առնու ըստ գնոյ իրացն հարիւրին 12.

Եւ ըստ նախընթաց կանոնի՝ զոր ինչ մաքս առնու վասն օտարանշան նաւով եկեալ ապրանացըն, զնոյն կէսն առնու 'ի Հոլանդացւոց կամ նոյնանման նշանաւ նաւով և ուղղակի եկելոցն. և եթէ առաջինն հատուցանէ հարիւրին 6. երկրորդն ազատ է 'ի մաքսից.

Յայս ցուցակի նշանակեսցուք զվաճառսն, յորոց առնու զմաքս պակաս կամ աւելի քան զհարիւրն 12.

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | Գրուշ | Տ[illegible] |
|---|---|---|---|
| Աղ և ալիւր . . . | արգիլեալ է . . | | |
| Թամբաքու՝ տերեւ , | փիւքուլն . . | 20 | |
| Զուրութն՝ Սանիլյ , և այլ տեղեաց , . . | զօնդն . . . . | 2 | |
| Թութուն , . . . . | ” | 1 | 0½ |
| Խուղ Եարգլի , քաշանի․ են վասն վառելոյ , | հարիւրին . . | 6 | |
| Խոտք և ծխամուխ , | ” | 6 | |
| Կաշ և կարասիք տան , | ” | 24 | |
| Կառք և կառանիւթք . | ” | 24 | |
| Կոտու կանեփոյ , . . | ” | 24 | |
| Ոսկի , արծաթ ( դրամ , ձոյլ և հողն ) և ամենայն անօթք . . . | ազատ . . . . | | |
| Ոսկեղէն և արծաթեղէն (զարդ կամ սպաս ,) | հարիւրին . . | 24 | |
| Մարգարիտ , գոհար և զարդք 'ի նոցունց , | ազատ . . . . | | |
| Քաղաթ , . . . . | հարիւրին . . | 24 | |
| Քանք (զօնի ,) . . | ” | 24 | |
| Ցորեան , . . . . | ” | 24 | |
| Ոզնալ և մեռալ մաք , | ” | 24 | |
| Եւ այլ ամենայն բերք . | ” | 12 | |

| ՎԱՃԱՌՔ ՁԻՆՈՒԱՑԻՈՑ | ԳԻՒՏԷ |
|---|---|
| ՄԱՍՆ մեծ ձոնգի՝ նկեալ ի Նինկ-պօյ՝ ածնու . . . . . . . | 6000 |
| Մասն փոքր նս նս նս նս . . | 4000 |
| Մասն մեծ ձոնգի՝ նկեալ ի Կանտօ-նայ ածնու . . . . . . | 5000 |
| Մասն փոքր նս նս նս նս . . | 3000 |
| Մասն մեծ ձոնգի՝ նկեալ յԱմուայ ածնու . . . . . . . . | 4000 |
| Մասն փոքր նս նս նս նս . . | 2000 |
| Մասն մեծ ձոնգի նկեալ ի Չէնչէ-նայ ածնու . . . . . . | 4000 |
| Մասն փոքր նս նս նս նս . . | 2000 |

## ԳԼՈՒԽ Ի

[illegible] ի Ջաւայ և ի Մաքասա-րայ [illegible] ։

ԹՈՂՈՒԼ զխահմէ, զհամեմունս և զայլ քանի իրս՝ որոց մաքսն հաստատեալ է ի վերայ կշռոց, չափոց և համրից, վասն այլ ամենայն

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Նախ քան զհաստատել այսպիսի մաքսաւորութեան՝ յամին եօթն կամ ութն չինեացւոց ձոնգ գային ի Ջաւա. այլ այժմ միանգամայն բարձեալ է երթեւեկութիւն նոցա. և զոր ինչ վաճառս չինեացւոց մածանին ի Ջաւա և ի Մաքասար, բերեն զայն օտարանշան կամ հոլանդանշան նաւուք ուղղակի կամ ի վերայ Սինկապուրայ.

բերոց կղզեաց՝ և այլ աշխարհաց մուծեալ այսր տարանաց՝ 'ի հանել առաքել առ այլ աշխարհ օտարանշան նաւով՝ առնու մաքս հասարակապէս հարիւրին 4 ըստ գնոյ իւրոյն · բայց Հոլանդացւոց նաւով հանեալ առ Հոլանդա՝ և վասն ումանց իւրոց՝ Հոլանդացւոց նշանաւ նաւով՝ հանեալ առ այլ տեղիս , առնու մաքս զկէս նոցին · զորոց նշանակեցաք 'ի ներքոյ ·

Բայց նախ գիտելի է , զի Հոլանդացւոց նաւատորմն , որ վերաբերի առ Հայրենիս Հոլանդացւոց · և Հոլանդացւոց նշանաւ նաւ՝ որպէս ասացաք 'ի վեր անդր՝ առ Հնդիկս Հոլանդացւոց · և օտարանշան նաւ՝ որ վերաբերի առ այլ Եւրոպացիս՝ ընդ որոց է և Ամերիկացւոցն ·

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ՉԱՓ ՀԱՑ և ԳԻՆ | [illegible] | [illegible] | Ո՞ր [illegible] |
|---|---|---|---|---|
| Աղ . . . | աղատ | | | |
| Բազամ՝ ներկափայտ ինչ . . | փիքուլն | | 20 | [illegible] |
| Բէնթ՝ հաղարան կամ ռոտան . | ,, | | 30 | [illegible] |
| Բրինձ . . . | ,, | | 10 | [illegible] |
| Գոհարք , մարգարիտ՝ կազմեալ կամ անկազմ . . . | աղատ | | | |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇՌՈՅ ՉԱՓ ՀԱՏ և ԳԻՆ | Փարայ | Ղրուշ | Ո՛ր նաւահանգստէն կու գայ |
|---|---|---|---|---|
| Թամբաքու Ճավայ . . | հարիւրին | 4 | | Հոլանտայ նաւերէն |
| Լուղ նարգլի կաքաւնի . . | փիքուլն | 5 | | |
| Լեղակ . . . | պօնդն | | 10 | Հոլանտա ու Հնդ. |
| Խահվէ . . . | հարիւրին | 12 | | |
| Խեցի կրիայի . | ,, | 4 | | ն. |
| Ծաղիկ ջաւզի ջավատրի . . | փիքուլն | 20 | | ն. |
| Կաշի կովի . . | 100 հատն | 8 | | |
| և ս գոմշոյ . . | 100 | 6 | | |
| Կափուր կամ քափուր Ճափանոյ . . . | կէս փիփ | 7 | | |
| Կոճղեղէնք Ճավայ . . | հարիւրին | 4 | | ն. |
| Կլէկ . . . . | փիքուլն | 4 | | ն. |
| Չի . . . . | մի հատն | 20 | | ն. |
| Մինաակ . . | փիքուլն | 19 | | ն. |
| Մոմ . . . | հարիւրին | 4 | | ն. |
| Շաքարն՝ առաջին և երկրորդ տեսակն . . | ,, | 6 | | ն. |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ՉԱՓ ՀԱՏ և ԳԻՆ | Ղրուշ | Փարա | Ո՞ր նաւահանգստէ եւ տեղէ |
|---|---|---|---|---|
| Կարմիր կամ երկրորդ տեսակին . . . | „ | | 50 | Հոլ. Նը. նաւահ. |
| Սոխի և արծաթի դրամք 'ի չինեացւոց հանեալ ան չին . | „ | 5 | | Թոյլ տուեալ է Եւրոպացւոց մինչև տանել 500 Գինէ քան այնչափ ծախելով . եթէ հրաման գրով. |
| Ցայլոց ու այլ տեղիս . . | „ | 4 | | |
| Պղինձ Ճափոնայ . . . . | փինքս ին | 7 | | Հոլ. Նը. նաւ. կէսն |
| Պղպեղ բիբար . | „ | 2 | | նս |
| Ճաւզ . . . . | „ | 19 | | |
| Ճաւզ անտառի | հարիւրին | 4 | | |
| Սանդալ փայտ . | փինքս ին | 1 | | |
| Սարանդ ( բոյն ծիծղկան ) . . | հարիւրին | 12 | | նս |
| Տրեխանք (որդն ծովու ) . . . . | „ | 4 | | |
| Սուրմ, օղի գունաւորեալ . . | տակառն | 12 | | |
| Ցքի 'ի Ճաւա արարեալ . . | տակառն | 6 | | նս |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԿՇԻՌ ՉԱՓ ՀԱՏԱԳԻՆ | Գ[illegible] | Տ[illegible] | Ո՞ր նաւահանգիստ իջ[illegible] տեղի |
|---|---|---|---|---|
| Բամբուր, տես զկամբուր .. | | | | |
| Եւ այլ ամենայն իրք՝ ոչ յիշեցեալ յայսմ ցուցակի, եթէ իջեն ընդ կըշռեալս եւ եթէ այլ տեղեաց .. | հարիւրին | 4 | | Հոլ. նաւ. եւ Հոլ. |
| Ոսկի եւ արծաթի դրամ կամ ընպասք ձոյլ կամ հող .. .. | „ | | 4 | Ն. |
| Պղինձ փողն .. | ազատ | | | |

## ԳԼՈՒԽ ԻԱ

Մաքսատանութիւն ՚ի Սումատրա՝ որ ընդ իշխանութեամբ Հոլանդացւոց ։

՚Ի ՍՈՒՄԱՏՐԱ վասն մուծեալ զանազան ապրանացն նոյն կարգ, կանոն եւ եղանակ պահի՝ որպէս ՚ի Ջաւա եւ ՚ի Մադուրա · միայն աստ

ոչէ որդեկեալ ափիոնն ․ բայց և կարի ծանր մաքս առնու․ որպէս

| | Գ․ԻԼՏՐ |
|---|---|
| Ճավանայ ափիոնն՝ որ գայ օտարանշան նաւով առ մի փիքուլն . . . | 500 |
| Եւ որ գայ հոլանտացւոց նաւով ՚ի Հոլանտայ՝ կամ Հոլ․ Հնդ․ նաւով ՚ի Ջավա և ՚ի Մատուրա ևս . | 200 |
| Փաթանայ և Բէնարէսայ ափիոնն, որ գայ օտարանշ․ նաւով ևս․ . . | 525 |
| Եւ որ գայ Հոլ․ Հնդ․ նաւով ուղղակի ՚ի բուն տեղւոջէ . . . . | 550 |
| Մալվայ ափիոնն՝ որպէս ՚ի վեր ևս . | 575 |
| ևս ևս ևս . . . . | 250 |
| Պարսկացւոց ափիոնն․ որպէս ՚ի վեր ևս | 500 |
| ևս ևս ևս . . . . | 200 |

Իսկ վասն հանեալ զանազան ապրանացն ՚ի Սումատրայ նոյնչափ մաքս առնու, և նոյն կարգ և կանոն պահի՝ որպէս ՚ի նախընթացս գըլուխն . միայն թէ են մասնաւոր իրք ինչ՝ որք են ընդ Սումատրայ, վասնորոյ և այլապէս առնուն զմաքսն, զորս նշանակեսցուք ՚ի ներքոյ ․

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ ՀԱՆԴԵՐՁ ՕՏԱՐԱՆՉ ՆԱՒՈՎ | ԿՇԻՌ ԿԱՄ ԳԻՆ | ԳՐՈՇ |
|---|---|---|
| Աղ Ջամայ . . . . | ազատ . . . | |
| Թէնխամին կամ բխօր՝ առաջին և երկրորդ տեսակն . . . . . . | Հարիւրին . . | 8 |
| Երրորդ տեսակն . . | ” | 4 |
| Գանբէր կամ քաթ Սումատրայ . . . . . | փիքուլն . . . | 2 |
| Գարխան կամ դաուչին . | ” | 2 |
| Ոծումք . . . . . | ” | 1 |
| Կափուր կամ Քափուր Բարուս . . . . . | ” | 100 |
| Ոսկեղէնք և արծաթեղէնք. կամ ոսկի և արծաթ՝ ձոյլ կամ հողն . . . | Հարիւրին . . | 4 |
| Պղպեղ կամ բիբար՝ սեաւն | փիքուլն . . | 6 |
| Սպիտակն . . . . | ” | 5 |
| Եւ այլ ամենայն բերք Սումատրայ՝ որք ոչ յիշեցան յայսմ ցուցակի . | Հարիւրին . . | 4 |

Եւ այս ամենայն վաճառք հանեալ Հոլանդացւոց նշանաւ նաւով հասուցանի ի վերոյ յիշեալ մաքսից կէսն ։

Ամենայն վաճառք այլ տեղեաց՝ որոց ընդ մու-

ծանելն առեալ է զմարմն · 'ի հանելն՝ որով նշանաւ և իցէ , առ ուր և հանիցի՝ ազատ է ,

Ամենայն բերք Սումատրայ կամ այլ կղզեաց և այլ տեղեաց՝ հանեալ անտի Հոլանդացւոց նշանաւ նաւով առ Բատավիա և առ ամենայն սահմանս քաղաքապետութեան Սումատրայ՝ ազատ է ,

## ԳԼՈՒԽ ԻԲ

### Ծանօթութիւն զանազան կարգադրութեանց Մաքսատան ,

Ա ԱՄԵՆԱՅՆ ըմպելիք մուծեալ այսր՝ եթէ տակառօք և եթէ արկեղօք , 'ի բաց բառնի 'ի գումարոյ մաքսիցն , է՝ որ հարիւրին 2 · և է՝ որ 3 · 4 · և 8 · ըստ 'ի ներքոյ յիշեալ եղանակի ,

Գինի՝ տակառօք եկեալ յԵւրոպիոյ հարիւրին . . . . . . . . . . . 5
Յայլ տեղեաց . . . . . . . . 2
արկեղօք եկեալ 'ի բոթլս՝ ուստի և իցէ . 2
Շամպեն՝ որ գայ միշտ 'ի բոթլս՝ եւ եւ . 8
Գարեջուր՝ տակառօք եկեալ յԵւրոպիոյ . 4
Յայլ տեղեաց . . . . . . . . . 5
բոթլով՝ ուստի և իցէ . . . . . . 8
Գինի պտղոց և քացախ գարեջրոյ և չամչի որպէս զգարեջուրն ,

Ամենայն ցքի տախտակք եկեալ յԻտալիոյ և յԱմերիկայ . . . . . . . . . 5
Յայլ տեղեաց . . . . . . . . . . 2
բօթլով եկեալ՝ ուստի և իցէ . . . . 2
Լիկօռ, ռեբօզ, պտուղք ՚ի բրանդիս և հանքաջուր . . . . . . . . . . 5
Բացախ՝ բօթլով եկեալ յորմէ տեղւոյ և իցէ . . . . . . . . . . 2

բ Ամենայն կշռելի իրք ըստ կարգադրութեան պարտ է կշռել ՚ի մաքսատան. բայց բազում անգամ՝ հաւատ նուիրեալ՝ թողու մուծանել առանց կշռելոյ. վասնորոյ տուրեան վասն կշռման ՚ի վերայ գնոյ իւրոյն հարիւրին՝ մի գիրշ.

գ Ամենայն վաճառք՝ եկեալք յայլ և այլ տեղեաց՝ եթէ ոչ կամիցի առ ժամայն հատուցանել զմաքսն նորին և մուծանել ՚ի քաղաքն, կարէ դնել ՚ի պահեստի ՚ի շտեմարան մաքսատան՝ կոչեցեալ Անարպօ, որոյ վասն նախ հատուցանի ՚ի վերայ գումարոյ վաճառուացն հարիւրին մի գիրշ. ապա պհատուեալ ամսական վարձ շտեմարանին. զոր տուեալ յերկու ամիս միանգամ. զորոց կարգել ունիմք զենի ցուցակ մի.

դ Վաճառք եդեալք ՚ի շտեմարան մաքսատան՝ ոչ կարեն մուծանել անտի ՚ի քաղաքն, եթէ լցեն արժէք նոցա պակաս քան զմի

հազար գիլդր. որոցվանն՝ նախ պարտ է վճա-
րել զվարձ շտեմարանին և զմաքսն, ուր և ա-
ռաջին կամ երկրորդ օր ամսոյն համարի կէս
ամիս . և վեշտասաններորդ օրն՝ մի ամիս ։

Դարձեալ՝ ի հանել զվաճառս անտի առ
այլ տեղիս՝ ոչ կարէ առնուլ զկտորակս
միոյ իրի. այլ զամբողջական մասն . եթէ ի-
ցէ արկղ՝ եթէ ծրար՝ կամ բեռն. և եթէ տա-
կառ կամ փիչքուլ. նախ պարտ է աւարտել
զվարձ շտեմարանին՝ ապա տանել ։

Այսպիսեաց վասն ոչ հատուցանի մաքս.
եթէ առաքիցի առ այլ տէրութիւն ։

ե Ամենայն վաճառք մուծեալ այսր յայլեայլ
աշխարհաց՝ ըստ որում գինք նոցա են զա-
նազան արժողութեամբ դրամոց. վասնորոյ
և հաստեալ է ի տէրութենէ զգին դրամոց զա-
նազան ազգաց առ գիլդըր այսոքիկ

| | Գիլ. | Ստ. |
|---|---|---|
| Առ մի սօն ստէրլինգ Անգղիացւոց | 13 | 50 |
| „ մի սպանիոյ մառչիլն .. .. | 2 | 55 |
| „ մի Կուամպանու ռուփլին .... | 1 | 15 |
| „ մի Ֆրանկ Գաղղիոյ .. .. | | 50 |
| „ մի կրօն Գերմանիոյ կամ բան-կօմարկ .. .. .. .. | | 87½ |
| „ մի դուքատ՝ ծղին կամ մաջար ոսկի .. .. .. | 5 | 50 |
| „ մի Գիկօն ոսկին .. .. .. | | 40 |

Եւ այլ ամենայն տեղեաց դրամք հաշուին նախ 'ի մարչիլ՝ ապա 'ի գիլտր ։

Բայց այլ է գին 'ի վերն յիշեալ դրամոցն 'ի մէջ վաճառականաց ․ զի այն ստէրլինգն համարի 14½ գիլտր ․ մարչիլն 3 գիլտր ․ Կումպանու ռուփին 1 գիլտր 55․ Փրանկն՝ 69 Տուկրա ․ Բանկոմարկն՝ 1 գիլտր ․ դուքատն 7½ կամ 8 գիլտր ․ և Պակոտն՝ 50 կամ 52 գիլտր ․ և այն արժէք ևս փոփոխին ըստ հանգամանաց ժամանակին ։

ՑՈՒՑԱԿ ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁՈՒՑ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԱՔՍԱՏԱՆ

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԱՐԿՂ․ ՏԱԿԱՌ․ ՓԻՔՈՒԼ․ | Վարձ [illegible] | |
|---|---|---|---|
| | | Գիլտր | Տուկր |
| Ալեւր 'ի տակառ՝ որ է իբրև 180 պօնդ ․ | առ մի տակառն | | 20 |
| Աղեւալ միս արջառոյ կամ խոզի ․ | ,, | | 20 |
| Աղաստակուա ․ | պրակն կամ փաթոյթ | | 04 |
| Ասուեղէն 'ի ծրարս կամ յարկեղս ․ | մի քառակուսի ոտն | | 05 |
| Արծիճ | մի փիքուլն | | 02½ |
| Ափիոն՝ Պարսից ․ | մի արկղն | | 75 |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԱՐԺՂ. ՏԱԿԱՌ. ՓՈՒ-ԹՈՒԼ. | Ղրշ. | Փրյ. |
|---|---|---|---|
| այլ տեղեաց . . | ,, | 1 | |
| Բաղամփայտ . . | մի փիքուլն . . | | 05 |
| Բամբակ . . . . | ,, | | 05 |
| Բորակ . . . . | ,, | | 07 |
| Բրանդի 'ի տակառս . . . . | մի տակառն . . . | 1 | |
| | կէս տակառն . . | | 40 |
| և 'ի բօթլս . . | 100 բօթլն . . . | | 40 |
| Բրինձ . . . . | մի փիքուլն . . . | | 05 |
| Գամբիր . . . . | ,, | | 07 |
| Գարեջուր . . . . | մի տակառն . . . | | 75 |
| | կէս և . . | | 30 |
| | 100 բօթլն . . . | | 30 |
| Գինի (կարմիր) . | կէս տակառն . . . | | 30 |
| | 100 բօթլն . . . | | 30 |
| Գոնի քսակ . . . . | մի ծրար կամ հակն . | | 20 |
| Գրամք արծաթի կամ ոսկի . . . . | 100 գիլդրն . . . | 1 | |
| Երկաթ . . . . | մի փիքուլն . . | | 02½ |
| Թամբաքու . . | ռու. մի փիքուլն . . | | 20 |
| Լիկոռ . . . . | 100 բօթլն . . . | | 40 |
| Լեղակ . . . . | մի արկղ . . . . | | 30 |
| Խաչքէ . . . . | մի փիքուլն . . . | | 07 |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԱՐԿՂ. ՏԱԿԱՌ. ՓՈՒԹՈՒԼ. | Վճար առանձին | |
|---|---|---|---|
| | | Դահեկ. | Տասն. |
| Կափուր կամ քա-փուր .... .. | տըրբն .... .. | | 50 |
| Կլէկ .... .... | մի փիքուլն .. | | 02½ |
| Կիսամետաղ (սը-պէլտր) .... | ,, | | 05 |
| Համեմունք .. | ,, | | 20 |
| Մազերա գինի .. | մի տակառն .. | 1 | |
| ,, | կէս տակառն .. | | 40 |
| ,, | 100 բօթլն .... | | 40 |
| Մետաքս և մետաք-սեղէն .. .. | մի արկղն .... | | 50 |
| Մոմ՝ գործեալ . | մի փիքուլն .... | | 20 |
| Անգործ .... | ,, | | 10 |
| Շաքար՝ ստո բա-բերք .... .. | ,, | | 07 |
| Ոսկեղէն և արծաթ-եղէն զարդ կամ սպաս .. .... | 1000 դիլ. արժողուն | 1 | |
| Չուան .... .. | փիքուլն .. .. | | 04 |
| Չուրութ Մանի-լայ և Հաւանայ. | 100 պօնդն .. .. | 1 | |
| Այլ տեղեաց .. | ,, | | 75 |
| Պղպեղ .. .. | մի փիքուլն .. | | 07 |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | ԱՐԿՂ. ՏԱԿԱՌ, ՓՈՔՐԻԿ. | Գուրուշ | [illegible] |
|---|---|---|---|
| Պղինձ . . . . . . | ” | | 05 |
| Պողպատ . . . . | ” | | 05 |
| Ջին ( օղի ) . . | մի կէլլոն . . . . | | 05 |
| Սանդալ փայտ . . | մի տակառն . . | | 05 |
| Ցորեան . . . . | ” | | 05 |
| Ցքի . . . . . . | մի տակառն . . . . | 1 | ” |
| Քացախ . . . . | ” | | 75 |
| ” | կէս տակառն . . . . | | 50 |
| ” | 100 բօթլն . . . . | | 50 |

ԳԼՈՒԽ ԻԳ.

կարգադրութիւն պահպանման իրաց (ոգելէց կամ ոգելածի.)

ԱՄԵՆԱՅՆ *կործանիւթ կամ հեղանիւթ իրք՝ որոց բարձեալ 'ի նաւ, թափեալ՝ մուծեալ 'ի համբարանոց, և հանեալ անտի՝ պակասին 'ի չափս և 'ի կշիռս, որ պատճառի 'ի չորութենէ, 'ի ժանգահարութենէ, 'ի թափմանէ, 'ի հեղմանէ, 'ի հալելոյ և ծորելոյ, տէրութիւն սահմանեալ է դչափ պակասման՝ ըստ որակութեան իրացն, և ըստ երկարելոյ ժամանակին հարկի-բորդս. և այս պակասուն եթէ յաւելուցու քան*

զտաճմանեալն, նաւապետն կամ համբարապետն պարտական են տուժել զգին նորին ըստ աւուրն արժէից. զորս կարգեսցուք զցուցակ 'ի ներքոյ.

ՑՈՒՑԱԿ ՊԱԿԱՍՄԱՆ ԻՐԱՑ

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | [illegible] | | |
|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] |
| Ալիւր .. .. .. | 2 | ,, | 1 |
| Աղ .... .. .. | ,, | ,, | 7 |
| 'Ի մայր համբարանոցին | 6 | 6 | ,, |
| 'Ի համբարանոց վաճառման .. .. | 4 | 5 | ,, |
| Աղեալ միս խոզի .. | 5 | 5 | 2½ |
| Արճիճ .. .. | ¼ | ¼ | ⅓ |
| Ափիոն .. .. .. | 5 | ,, | ,, |
| Բաղամ փայտ .. .. | 1 | ,, | ½ |
| Բամբակ .. .... | 4 | 6 | 2 |
| Բիբար .. .. .. | 1 | ,, | ½ |
| Բրինձ, նոյն .. .. | 2 | ,, | 2 |
| Հինն .... .... | 5 | ,, | 5 |
| Բորակ .... .. | 2 | ,, | 1 |
| Գարի .. .. .. | 1 | 2 | ½ |
| Գամար՝ խէժ ինչ, ան- | | | |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | [illegible] | | |
|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] |
| փակ կամ՝ բաց .. | 5 | 5 | 5 |
| Փակեալ յարկերս .. | 5 | 5 | 2 |
| Երկաթ .... .. | 1½ | ,, | 1 |
| Հին .. .. .. | 4 | ,, | 5 |
| Տափարակն .. .. | 2 | ,, | 1 |
| Թամբաքու .. .. | 2 | ,, | 1 |
| Թամբ հէնոյ՝ ամէն .. | 5 | ,, | 2 |
| Իւղ բեւեկնոյ .. .. | 2 | 2 | 2 |
| Ձկան .... .... | 5 | | 4 |
| Կովն .. .. .. | 5 | 5 | 2½ |
| Լեղակ .. .. .. | 1 | ,, | ½ |
| Խէժք .. .. | 2 | 2 | 1 |
| Խահքէ .... .. | 5 | 5 | 5 |
| Ծխամո խ .. .. | 5 | 5 | 1½ |
| Ծծումբ .... .. | 5 | 5 | 2½ |
| Կարաք .... .. | 1 | | 1 |
| Կափուր .. .. | ⅛ | ⅛ | ⅛ |
| Կիրկ .. .. .... | 5 | ,, | ½ |
| Կուպր .... .... | 1 | ,, | ½ |
| Համեմունք .. .. | 2 | 2 | 2 |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | [illegible] | | |
|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] |
| Հեղանիւթք, Բօթլով, Տակառաւ } ընդ որս են գինի և այլ ըմպելիք . | 4 | ,, | 4 |
| Ձէթ, բօթլով .... | 2 | 2 | 2 |
| Տակառիւ .. .. | 5 | ,, | 4 |
| Ձիւթ .. .. | 5 | ,, | 5 |
| Ձուկն աղեալ, .. | 5 | 5 | 5 |
| Ճրագու կոմի կամ ոչ խառն .. .. | 2 | 2 | 1 |
| Խոզի .. .. | 5 | ,, | 4 |
| Ճրագուի մոմ .. | 2 | ,, | 2 |
| Մանած բամբակի .. | 1 | ,, | ½ |
| Մեխ երկաթի .. .. | 1½ | ,, | 1 |
| Մեխակ .... .. | 1 | ,, | ½ |
| Միս չորացուցեալ .. | 5 | 5 | 5 |
| Մոմ .. .. .. | 2 | 2 | 1 |
| Ներկափայտ .. .. | 1 | ,, | ½ |
| Շաքար .. .. | 1½ | 1½ | ¾ |
| Օծեծած .. .. | 2 | ,, | 2 |
| Ներկ, չոր .... | 1½ | ,, | 1 |

| ԱՆՈՒԱՆՔ ԻՐԱՑ | Հարիւրորդք ի համեմատութեան և ի նաւի 'ի վերայ շարժման և կշռոյ | | |
|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | [illegible] |
| Թոռն . . . . . . | 5 | ,, | 4 |
| Ձայ . . . . . . | 1 | ,, | ½ |
| Ձոր հաց . . . . | 2 | ,, | 1 |
| Ձուան Եւրոպկոյ . . | 5 | 5 | 2½ |
| Ոյս կղզեաց կամ այլ տեղեաց . . . . | 2 | ,, | 1 |
| Պակսխմատ . . . . | 2 | ,, | 1 |
| Պղինձ Քափանայ . . | $\frac{1}{5}$ | $\frac{1}{5}$ | $\frac{1}{5}$ |
| Պողպատ . . . . | 1 | ,, | ½ |
| Քապարի . . . . | 1 | ,, | ½ |
| Քուզ . . . . . | 1 | ,, | ½ |
| Սագու . . . . | 1 | 2 | ½ |
| Սանդալ փայտ . . | 1 | ,, | ½ |
| Սոխ . . . . . | 6 | 6 | 3 |
| Ցքի . . . . . | 3 | ,, | 3 |
| Փուշուկ . . . . | 2 | ,, | 1 |
| Քաշանտանայ գետնանուշ . . . . | 2 | ,, | 2 |
| Ընդեղէնք . . . | 1 | 3 | ½ |

# ԳԼՈՒԽ ԻԴ

## Կարճառօտութիւն վաճառականաց 'ի գնելն և 'ի վաճառելն ։

ԱՄԵՆԱՅՆ բերք կղզեացս՝ որպիսի են խահ-ֆէ , շաքար , բրինձ․ լեղակ․ բիբար եւայլն , գը-նին զուտ դրամով . և որ ինչ բերք են օտար աշ-խարհաց վաճառին երեք՝ չորս՝ հինգ և վեց ա-միս ժամանակաւ ։

Վաճառականք աստ բաժանին յերկուս դասս . մին՝ որ գնէ կամ վաճառէ միանգամայն . և միւսն՝ որ գնէ կամ վաճառէ 'ի կտորակս կամ փոքր քանակութեամբ ։

Որք գնեն կամ վաճառեն միանգամայն՝ են բանակատարք կամ գործակալք տանց վաճառա-կանաց Եւրոպիոյ կամ այլ ազգաց . կամ որք տեր հաստատեալ են առանձին տուն վաճառա-կանութեան , և գնեն և վաճառեն մեծ քանա-կութեամբ 'ի մէջ կղզեացս . և զտուրեւառ իւրեանց տարածեն 'ի տար աշխարհս , այսինքն՝ 'ի Չին , 'ի Մանիլա , 'ի Սինկապուռ , 'ի Կալկաթա , 'ի Սիամ եւ 'ի Ծոցն Պարսից ։ Իսկ որք վա-ճառեն 'ի կտորակս՝ են Եւրոպացի կրպակա-ւորքն , Չինեացիք , Արաբացիք և երկրականք . որք գնեալ զվաճառս 'ի մեծաքանակ վաճառո-ղաց՝ ինքեանք վաճառեն հասարակաց փոքր քանակութ̃բ՝ զուտ դրամով կամ ժամանակաւ ։

Որդ՝ մեծաքանակ վաճառողն յետ յանձնե-լոյ զվաճառուն գնողին՝ խնդրէ սմանէ ՚ի փոխա-րէն զպարտեմագիր՝ կոչեցեալ Էքսէպտէնս կամ Էքսէպտասի . որ գրի Հոլանդերէն . Անգղիե-րէն կամ Գաղղիերէն ՚ի վերայ սեգլի ըստ չա-փու գումարին օրինակ՝ այսպէս .

ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆ 1000 ՌՈՒՓԻԱՍԻ .

՚Ի ԲԹ–ՀԷ– ՚Ի 18 Մ–ՅԻ–Է 1849

Զկնի երեք՝ (չորս՝ հինգ՝ կամ վեց ամսոց) խոստանամ հատուցանել Պարոն Մ. Անտօլայ կամ հրամանին ՚ի Պաւլայ Բէնքն զգումար մի Հազար ռուփիոց , որոյ ՚ի փոխարէն ստա-ցայ զապրանս .

Ի. Ի. Կ.

Իսկ գնողն Չինէացի . Արաբացի կամ երկրա-կան ոք իցէ , պարտ է ձեռնագրել զայն առաջի Նոտարի հասարակաց . յորմէ և կնքի և հաս-տատի վկայիւք .

Իսկ այս Էքսէպտասի անցուցանի ձեռաց ՚ի ձեռս ՚ի վճար պարտուց միոյ առ միւսն , կամ ՚ի Պաւլա բէնքն նուազեալ զվաշխն հարիւրին տարեկան ինն գիլդր՝ առնու ՚ի փոխարէնն զուտ դրամ .

Իսկ ՚ի լրանալ աւուր հատուցման սոյն Էք-սէպտասուոյ՝ շնորհեալ է երկարութիւն այլ ևս մի օր . զոր յայնժամ պարտ է անյապաղ հատու-

ցանել այնմ, յոյր ձեռն գտանիցի այն. զոր ա-
դրամով կամ այլով հաւատալի էքզէկուտաւով.
բայց եթէ պարտապանն անկարանայցէ թափել
զիւր էքզէկուտէնոն՝ վերջին ընդունողն վկայել-
տայ 'ի ձեռն նօտարի հասարակաց՝ ապահատոյց
զօրն նորա. և երկրորդ ձեռնագրողն պարտաւո-
րի հատուցանել զայն 'ի մէջ ութ աւուրց. Իսկ
պարտապանն եթէ ոչ կարիցէ փութով համեմա-
տել ընդ պարտատերց իւրոց՝ ընդունելով ըզ-
ժամանակ և զդաշն հատուցման ըստ ընձեռելոյ
միայորդ սահմանածոց իւրոց՝ համբաւի սնանկ.
ըստ նորոյ օրինաց վաճառականաց՝ հաստա-
տելոց 'ի 1 Մայիսի 1848՝ առ ժամայն մտա-
նի 'ի դատաստան. և պարտէ 'ի մէջ երից աւուրց
տալ զցուցակ հաշիւ ամենայն առնելեաց. տա-
լեաց և ամենայն ստացուածոց իւրոց մեծի ատե-
նին՝ ընդ որոյ իշխանութեամբ և լցէ՝ հանդերձ
հայցուածով և ծանօթութեամբ հանգամանացն
արգելման հատուցանելոյ զպարտան իւր. Յետ
ընդունելոյ ատենին զայս խնդիր, ամենայն ինչ
նորա գրի և կնքի դատաստանաւ. և ամենայն
հաշուէգիրք և գրուածք նորա պատանդին 'ի
Մէսկամին. և ինքն կայ 'ի ներքոյ իշխանու-
թեան ատենին՝ փակեալ 'ի տան կամ 'ի բան-
տի, մինչև 'ի վերահասութիւն ուղղութեան
համարոց իւրոց. և 'ի համեմատութիւն հա-
շուոց ամենայն պարտատերցն. յորս եթէ

գտցեն զամենայն ուղիղ, և մնաս նորա ոչ ա-
ւելի քան հարիւրին 25, այսինքն՝ եթէ կա-
րիցէ հատուցանել հարիւրին 75, ապա այն
այն ոչ է սնանկ, որում շնորհեսցի ազատութի.
և դարձուցանեն նմա ամենայն ինչք նորա՝ յա-
ւարտել ընդ պարտատերս իւր՝ ընդ միաբանա-
ցութեամբ երկուց կամ երից 'ի նոցանէ (պար-
տատերացն.) Բայց եթէ գտցեն մնաս նորա
աւելի քան զ 'ի վերոյ յիշեալն՝ յանձնեսցին
ամենայն ինչք և ստացուածք նորա մեծամասնին
'ի ներքոյ կառավարչաց սննկի սնանկ ստաց-
ուածոց (սէնտիքաթորին.) յորոյ վերայ կարգես-
ցի և անդամ մի 'ի դատաւորաց մեծի ատենին.
և ճշգրիւ քննեսցեն զպատճառ մնասու և կորս-
տեան սնանկացելոյն, զոր եթէ գտցեն ազալական
զանցաւոր կամ խաբեբայ. մատնեսցեն 'ի բանդ
կամ յարգելանս ըստ մնասու յանցանաց նորա. և
մեռանի անուն նորա մինչ իսպառ. Իսկ թէ որ
յանցանօք պարտաւորի այնպիսին պատժոց,
ծանուցանել ունիմք յերկրորդ մասին. այլ ա-
մենայն ինչք և ստացուածք և առնելիք նորա
ժողովեսցին 'ի Սէկուէստրէն, և բաժանեսցի 'ի
մէջ պարտատերաց նորա, բայց թէ Երբ և որքան
Տէրն գիտէ, քանզի ըստ պարսից առակին՝ Որ
ինչ ժողովի 'ի գողոց, լինի բաժին բաղդաւո-
րին." Աստ զի ծախք դատաստանին որ կարի
ծանր է վասն պէսպէս եղանակաւ կառավարելոյ

զայս օրէնս , և ծախք վէսկամբին և սէկուէս-
տրին ոչ սակաւ նուազեն զմնացորդ ստացուածս
սնանկացելոյն ։

Արդ՝ յետ հաստատելոյ զայս օրէնս՝ մինչև ցարդ 'ի Բաթավիա միայն անկան չորս տունք Եւրոպացւոց , յորոց երկուքն գուն գործեալ համաձայնեցան ընդ պարտատերս իւրեանց , և ընդունելով զնուազումն պարտուց և զժամանակ՝ կրկին կանգնեցան։ Իսկ մնացեալ երկուքն մատնեցան յայս օրէնս , յորոց մին համեստ գոլով՝ և զպատճառանս արգելման հատուցանելոյ ըզպարտս իւր իրաւացի գտանելով . ընկալաւ զազատութիւն , և դարձուցան նման ամենայն ինչքն նորա ընդ վերակացութեամբ երից 'ի պարտատերաց իւրոց՝ յաւարտել զամենայն պարտս իւր ։ Իսկ միւսն՝ որոյ զգործ գտին ըստ ամենայնի աղաւաղեալ , և զամենայն համարս նորա անուղիղ և խարդախ , և գտան արտաքոյ իրաւանց՝ վճռեցաւ 'ի բանդ վասն երկուց ամաց . և ամենայն ինչքն յանձնեցան Սէկուէստրին յաւարտել ։ Բայց բնր կեանք՝ որ տեսցէ զաւ արտումն սորա , և այն ես յետ բազում սրտնեղութեանց ստէպ ստէպ կոչելոյ 'ի յատեան դատաստանի և վէսկամբին և զանազան հարցաքննութիս ածելոյ և զերդումն 'ի վերոյ պահանջմանցն . հաւսկ յետոյ խնդրելոյ զերկուս երաշխաւորս վասն ստացման բաժնին . ապա հատուցանի . որ զու-

ցէ հարիւրին երկու իցէ կամ հինգ։

Այլ Եւրոպացի կրպակաւորքն՝ որք վաճառեն զինչս միով․ տասնով կամ հարիւրով․ ունին զսովորութիւն ՚ի չորս ամիսս միանգամ առաքել զտոմարակ գնոյ վաճառելոյ իրաց առ իւրաքանչիւր գնողն ՚ի պահանջել․ բայց վայ․ թէ որպիսի դժուարութիւն վճարելոյ լինի․ զի բազումք ՚ի վաղուն՝ ՚ի միւս օր՝ և ՚ի միւս շաբաթ ձգելով յամաց ամս երկարեն․ յաւելապէս այժմ՝ յոր բառ նորոյ օրինաց հասարակ անձինք ոչ պարտաւորին ՚ի բանդ վասն պարտուց․ միայն ինչք և ստացուածք նոցա (եթէ ունիցին ինչ․) ներկայ և ապագայ՝ են պատասխանատու պարտուց։

Եթէ ոք լոկ հայիցի ՚ի գնել և ՚ի վաճառելն կրպակաւորաց․ կարծէ թէ շատ փութով հարստանալ ունիցին նոքա․ բայց յորժամ մտածէ ՚ի քննին հաշուոյն՝ գտանէ զթաթ ճխտուն յոյժ ծանրակշիռ քան զշահուն․ քանզի ՚ի ժամանակս մեր իսկ՝ իբրև յընթացս քսան ամաց տեսաք ՚ի Բելգիա միայն՝ առաւել քան զքսան Եւրոպացի երևելի կրպակաւորս՝ թող զբազում Զինէցիս․ որք ՚ի կարծիս մարդկան ՚ի մեծի համարման էին, և ՚ի վերջոյ սնանկ համբաւեցան․ ունելով զմեծ զումար կորուստեան ՚ի վերայ բազմաց․ և ինքեանք պարտական այլոց՝ յխանաւոր և հարիւրաւոր հազարօք․ որք եւ անկարացան գոնեայ վճարել հարիւրին 20։

Յորոց մին եղև և դրիչս, որ ոչ չատացեալ ընդ անդորր վիճակ իւր՝ զոր երբեմն խաղաղութեամբ վայելէր, եղծ ագահութեան երբեր 'ի միտս զխորհուրդ մեծանալոյ. որ և ընկերացաւ ընդ ումեմն գաղղիացի պատանւոյ, որք թէև ազգաւ և քաղաքաւ յիրերաց յոյժ հեռի, բայց կարի սիրով կապեցան ընդ իրեարս, և միակամ խորհրդով միջամուխ եղեն 'ի մեծամեծ գործս, Զամս իբրև 'ի չորս՝ անխոնջ վաստակօք ցայգ և ցերեկ աշխատեալ՝ 'ի վերջոյ ընկեր նորա տուժեաց զանձն իւր 'ի շնորհս ցքարարաց. և սա եկաց ձեռն թափուր 'ի վերայ սառն քարի նըստեալ. զի ոչ միայն չեգիտ որում ցանկայրն, այլ և կորոյս զոր ունէր. և յաւելան նմա ծանրաբեռն պարտք. յորոց ներքոյ մինչ ցարդ ճընշի և ճռնչայ. և չգիտէ թէ երբէք թափիլ ունիցի անտի. Ճշգրտեցաւ 'ի սմա Ջուղայեցւոց առակն թէ՝ "Կերակրեցին խէր չտեսան, բայց մխեցին քոռացան." Զի այնչափ վաստակ և անդուլ ջանք սորա ոչինչ շնորհեցին, բայց միայն զցաւ մեծ. զոր Տէր բժշկեսցէ.

## ԳԼՈՒԽ ԻԵ

### Նոր Օրէնք

ՆՈՐ ՕՐԷՆՔՆ հաստատեցաւ 'ի 1 Մայիսի 1848 'ի Նորաշէն բարձր պատուանին՝ 'ի ձեռն կու-

սակայլն Յան Յակոբ Մոխիտոնեան հանդերձ միակամ ընդունելութեամբ խորհրդարանի Հնդկաց , ամենայն ատենականաց , մեծամեծ պաշտօնատարաց և օրէնսգիտաց՝ վասն ընդհանուր Հնդկաց Հոլանդացւոց ։

Այս օրէնք բաժանեալ են յերկուս հատորս . մին քաղաքական , և միւսն վաճառականական ։

Առաջինն բովանդակէ յինքն չորս գիրս . և իւրաքանչիւր գիրք բաժանեալ են 'ի բազում գլուխս և 'ի զանազան հատուածս 'ի վերայ ամենայն քաղաքական խնդրոց՝ վերաբերելեաց առ ամենայն անձն մեծի և փոքու , արուի և իգի , տհասի և չափահասի , սկսեալ 'ի մանկանէ՝ որ դեռ 'ի յարգանդի մօր իցէ , մինչև ցայն՝ որ կատարի 'ի կենաց . զի ամենայն արարք՝ բան եւ գործք մարդկան ընդ իւրս և ընդ օտարս՝ են ընդ այսու օրինօք . ուղղիլք են

Վայելումն կամ կորուստ քաղաքական օրինաց ։ Ընդ այսու օրինօք է մանուկն՝ որ դեռ 'ի յարգանդի մօր իցէ , և ծնցի կենդանի՝ կամ մեռեալ ։

Կերպ փոփոխելոյ անուան ինչ՝ և փոխադրութեան բնակարանի ուրուք ։

Անուանութիւնն՝ որ տեղի առնու պէսպէս եղանակաւ . ընդ նմին և արգելումն կամ ընդունումն ։

Հաստատակաբած և դաշնաւորեալ ամուսնութիւն ։

Պարտիք առն և կնոջ ։

Երկրորդ և երրորդ պսակ ։

Բաժանումն ընչից առն և կնոջ ։

Բաժանումն առն և կնոջ միանգամայն՝ կամ՝ բնակակցութեամբ ։

Հայրութիւն կամ՝ ծնունդք, կամ՝ ծնողք և սերունդք ։

Սահմանք արենակցութեան և ազգակցութեան յելեւէջս կամ՝ ի կողմնագիծս ։

Հայրենական իշխանութիւն և պարտիք զաւակաց ։

Դեռահասակք և հոգաբարձուք, տուչութիւն դեռահասակաց չափահասութիւն ։

Վերակացութիւն մանկանց և եկամտից նոցին ։

Հոգողութիւն կամ՝ խնամատարութիւն անխնամ ատացուածոց յաններկայութեան առն և կնոջ և մանկանց նոցին ։

Պէսպէս ստանալի շարժական և անշարժ ստացուածք վերաբերելի առն ինքեան՝ կամ՝ այլում ։

Ստացումն և կորուստ ընչից իրիք ։

Իրաւունք ստացողին գոյից իրիք և մերձակայ ժառանգաւորաց ։

Յաւելուլ ի շինուած այլոց զշինութիւն ինչ ։

Շինութիւն ի վերայ կալուածոց օտարի՝ առանց դաշնագրի ։

Ստացումն վարձուց գետնոյ օտարի ,
Վարձառութիւն կալուածոյ ,
Ժառանգութիւն յետ մահու առն ,
Կտակագրութիւն , կտակակատարութիւն և կառավարութիւն ստացուածոց կտակագրողին ,
Բաժանումն ստացուածոց մեռելոյն և իրաւունք ժառանգաց ,
Անտէր ստացուած և տիրապետումն ,
Պարտիք կամ պահանջ՝ և պարտատէր և պարտապան ,
Աւանդապահութիւն , գրաւադրութիւն եւ գրաւառութիւն ,
Կապակցութիւն , դաշնակցութիւն և միութիւն ,
Գնումն և վաճառումն և տուրևառք ի ձեռն փոխանակութեան ,
Վարձատուութիւն տանց և կալուածոց ,
Ընկերութիւն և միաբանութիւն ,
Ընծայումն կնոջ կամ արենակցաց ,
Ապահովութիւն ընչից ,
Փոխատուութիւն ընչից կամ դրամոց ,
Գործադրութիւն այլոց գոյից ,
Հաստատուն և տեղական եկամուտ ,
Յանձնարարութիւն և յանձնառութիւն ,
Խոստումն և երաշխաւորութիւն ,
Հաստատութիւն անձնական կամ գործնական խնդրոյ՝ գրով կամ ծանօթութեամբ , կարծեօք

կամ վկայիւք , երդմամբ կամ անցմամբ սահմանեալ ժամանակի ։

Արդ այս ամենայն զորս եդաք առաջի , էին միայն նիւթք կամ խնդիրք քաղաքական օրինաց . յորոց վերայ սահմանեալ է բազմակերպ բաժանումն մի պէսպէս եղանակաւ պատահելոց և եղելոց . ուստի և սահմանեալ են կանոնք վարելոյ զայնս ըստ արդար օրինաց ։

Իսկ երկրորդն բաժանեալ է յերիս գիրս . ընդ որովք անկանին ամենայն ազգ տուրևառութեանց , այսինքն՝ գործակալութիւն , յանձնարարութիւն և յանձնառութիւն . առանձին և ընկերական վաճառականութիւն . պէսպէս եղանակաւ դրամափոխ լինել և պարտամագիրս տալ . միջնորդութիւն վաճառման . համարակալութիւն . արկղապահութիւն և սպասաւորութիւն (խնչուրանս կամ աշուրանսի .) նաւավարձութի . նաւապետութիւն և այլ ծովային և ցամաքային տուրևառական գործառնութիւնք և պաշտօնատարութիւնք . հուսկ յետոյ անանկութի. զորմէ ի վերոյ գլուխ յիշեցաք ։ Եւ վասն այս ամենեցուն սահմանեալ են կանոնք վարելոյ զայնս ըստ օրինաց . որ և ամենայն գործառնեայ պարտական է պահել ճիշդ և ուղիղ օրագիր կամ օրահաշիւ , և զամենայն օրական գործառնութիւն իւր ելից և մտից , գնելոյ և վաճառելոյ , տալոյ և առնելոյ , ընդունելոյ և յանձ.

նելոյ եւայլն՝ մուծանել 'ի նա ։ Յամին երկեցա տանել զհամեմատութիւն հաշուի ․ պահել ըզթուղթն՝ զորս ստանայ յայլոց ․ և ունել զօրինակ թղթոց՝ զորս գրէ առ այլսն ․ և ամենայն մատեանք և գրուածք վերաբերեալք առ տուրևառական գործս պահելիք են մինչև ցերեսուն ամս ․

## ԳԼՈՒԽ ԻԶ

Անուանք մեծի և փոքու պաշտօնատարաց՝ որոնք կառավարէին անտիկ Հռովմայեցւոց ․ և կարգաւորէին ամենայն գործս տէրութեանն ․

ԱԴՄԻՆԻՍՏՐ՝ Հոգաբարձու կամ վերակացու գանազան շինութեանց ․ ճանապարհաց ․ կամրջաց ․ ողողանցաց տախտակի ․ հրաշիճշոյց գործեաց ․ եւայլն ․

Ադմինիստրատոր՝ տնօրինող կամ կառավարիչ կարգեալ 'ի վերայ գործոյ իրիք ․

Ադվօկատ՝ փաստաբան ․ ատենաբան ․

Ադվօկատ խը՝ ըրալ կամ ժընըրալ ․ ընդհանուր փաստաբան արքութեան՝ կարգեալ 'ի բարձր Ատենի ․

Ալտերմէնը Սըրկըրտարիօ՝ ատենադպիր խորհրդարանի Հնդկաց ․ ընդհանուր քարտուղար կամ դպիր տէրութեան ․

Ալտերմէնը Օտաֆանիսէր՝ գանձապետ տէրութեան գանձուց ․

Աննէմէր՝ յանձնող պարենից և այլ իրաց վաճառ զօրաց · որպիսի են՝ բրինձ · հաց , միս , ձէթ · փայտ · զգեստ · խոտ · չալթուք · ևայլն · զորս տէրութիւնն առ յամէ ամս 'ի վարձու ·

Աջունգտ սըքրըտարիս փան հըտ խօվըրնամէնտ · դպիր կամ՝ քարտուղար տէրութեան · որք են երկու 'ի դիւանատան ·

Աջունտ խրիֆիէր՝ տեղակալ ատենադպրի դատաստանին ·

Ասիստանտ՝ օգնական · փոխանորդ կամ՝ օգնող իրիք գործակալի ·

Ասիստէնտ ռէսիդէնտ՝ փոխանորդ կամ՝ օգնական ռէսիդէնտին · (յամենայն երեւելի տեղիս կարգեալ է մին ·)

Աֆսլախէր՝ կոչողն կամ՝ գին հրաւիրողն յաճրդանոցի ·

Բուքհուդէր՝ համարակալ · հաշուեկալ ·

Բեստուրդէր՝ հրամանատար կամ՝ կառավարիչ իրիք կողմանց ·

Բրանդսպուիտ մէստր՝ վերակացու հրաշիջայց գործեաց ·

Բօդէ՝ սպասաւոր դատաստանի · (յիւրաքանչիւր մասնաւորին կառավարութեան է մի կամ՝ երկու 'ի նոցանէ ·)

Բօմվախտր՝ զգօն շոյող մուծեալ և հանեալ ապրանացն 'ի Մաքսատան · զի մի լիցէ աւելի ինչ քան զանցագիրն կամ՝ մաքսագիրն ·

Յօամքսոր՝ կառավարիչ կամ վերակացու վարձու նաւակացն ։

Դիրէկտօր ը՝ կառավարիչ. վերատեսուչ, խնամակալու, տնօրինող ։

Չորս են Դիրէկտօրք 'ի Հնդկիս Հոլանդացւոց. և բնակութիւնք նոցա 'ի Բաթավիա. սոքա են իբրև անիւք տէրունական ամենայն գործոց. որովք հոլովին և ընթանան գործառնութիւնք ամենայն պաշտօնատարութեանց. զի 'ի սոցին կառավարութեան, խնամակալութեան և տնօրէնութեան են ամենայն ել և մուտ աշխարհին, հարկ՝ մաքս՝ բաժ՝ և այլ եկամուտ տէրութեան. բերք՝ արմտիք՝ և մշակութիւն անդոց և տնկոց, և այլն. Եւ այս ամենայն գործառնական պաշտօնատարութիւնք բաժանեալ են 'ի չորս՝ և որոշ անուամբ յանձնեալ սոցա. յորոց իւրաքանչիւր ոք կառավարէ և բարեկարգէ զիւրն ։ Որպէս Առաջինն՝ որ կոչի Դիրէկտօր խորհրդոյ փան Փինանսի, ունի զկառավարութիւն կամ վերատեսչութիւն գոյից, դրամոց. ելից և մտից ծախուց. ընդհանուր իշխանութիւն 'ի վերայ տէրունեան գանձատանց և մաքսանական կառավարութեն այլ և այլ տեղկաց. 'ի վերայ ընդհանուր համարակալութեան. հաշուոց ելևմտից ծախուց՝ և տարեկան համարատուութեանց համեմատութեան հաշուոց և փոգերանոցաց ։

Երկրորդն է Դիրէկտէօր փան Մէդդըլըն և Դոմէնըն. Սա կառավարէ և իշխէ 'ի վերայ բոլոր մաքսատանց, տուրևառութեանց և նաւարկութեանց, վարձատուութեանց և վարձառութեանց, հարկաց և բաժից, աղբերանոցի, կնքաթղթոց, հնգանորդաց կամ տասանորդաց ստացուածոց մեռելոց, վաճառման կալուածոց տէրութեան. հանքացն կլեկի, բերոցն սարանգլի, և յօրինման աղի մինչև ցմուտ նորուն 'ի մայր համբարանոցսն,

Երրորդն է Դիրէկտէօր փան Պրօդըլկոն և սիվիլը մագազէյն. 'ի սորին կառավարութեան են բերք և արմտիք. պատրաստութիւնք հարկաւոր իրաց և պարէնից զօրաց. ստացումն և վաճառումն ընչից, բերոց կամ արմտեաց. վարձումն նաւուց և յանձնումն նաւաբեռանց. վերակացութիւն մայր շտեմարանացն աղի. վերահասութիւն ամենայն ճարտարապետական գործոց, շինուածոց, սղոցանոցաց տախտակի և գերանակուտից. վերակացութիւն մեքենայական գործատանց, թափատանց, տպարանի և Ջափանայ տուրևառութեան։

Եւ չորրորդն է Դիրէկտէօր փան Կոլօնիէն. 'ի սորին կառավարութեան են մշակումն բրնձի. հարկ հերկեալ կամ անհերկ գետնոց՝ բերոց, տնկոց և աւազանաց. մաքրումն անտառաց և հատանումն գերանաց. աճեցումն ա-

միայն տնկոց · վաճառումն կամ վարձատրութիւն տէրունական գետնոց 'ի ներքին վայրան-
աճեցումն և բարեկարգումն տէրութեան երի-
վարաց ։

Դ·էրէկտոխուր ասին նաև մերատեսուչ կամ կառավարն Տիկարանոցի· գլխաւորն թափառանց· մերակացուն տպարանի և այլ միաբանական կառավարութեանց ինչ ։

Դ·ուր վարդէր · վճռակատարն կամ կալանաւորական դատաստանի ։

Օ ստոկօպէր · աղավաճառ ։ (Յամենայն գաւառի կարգեալ է 'ի տէրութենէ մի աղավաճառ ։)

Է·դըլիր · աւագ իշխան · խորհրդական կամ անդամ խորհրդարանի Հնդկաց ։ Որոց են էդըլերք 'ի Հնդիկս Հոլանդացւոց ։

Է·յկմէստր · կնքող չափուց և կշռոց ։

Է·քուպաժ մէստր · կազմածապետ նաւուց տէրութեան · այսինքն որ տայ զպիտոյս կազմածոց նաւուց և լնու զպակասութիւն նաւաստեաց · և այլն ։

Է·քսպլիդխոխուր · ստիպող · փութացուցանող կարգեալ 'ի վերայ գործավարաց կամ մշակաց տէրութեան ։

Է·քսպլօխոխուր · կալանաւորական դատաստանի ։

Ի·նժինիւր · ճարտարապետ շինուածոց և մեքենայական գործոց ։

Ինսպէկտիւր , վերակացու կամ վերադիտող զանազան գործոց ․ Հինգ կամ վեց ինսպէկտիւրք են ՚ի Զ̇ալա ՚ի ներքոյ Կէրէկտօրացն ։

Լանգմէտէր , երկրաչափ ։ Յամենայն երևելի տեղիս են մի կամ երկու երկրաչափք կարգեալք ՚ի տէրութենէ ՚ի չափել զտունն և զգետին բնակչաց ։

Լէդըն , անդամք կամ խորհրդականք դատաստանի ․ և այլ միաբանական կառավարութեանց․ որպիսի են վէսկամին , բուրգըմէստէրն , և այլն։

Լէֆտանանտ Խօֆըրնիւր Խընըրալ , տեղակալ կուսակալին ․ Այս պաշտօն տայ վիսպրիսիդէնտին խորհրդարանի Հնդկաց ․ յորժամ տեղի կուսակալին դատարկ լիցէ աններկայութեամբ կամ մահուամբ ։

Խըրգվօրն կլէրկ , երդուեալ գրագիր ատենի դատաստանին ։

Խօֆըրնիւր ․ կառավար ․ քաղաքապետ կամ փոխկուսակալ արտաքոյ Զ̇ալայ , ընդ որոց իշխանութեամբ են քանի մեծ և փոքր կառավարութիւնք ․ Այս պաշտօնատարք երեք են ՚ի Հնդիկս Հոլանդացւոց ․ մին ՚ի Պադանգ ․ մին ՚ի Մոլուկոս և մին ՚ի Մակասար ։

Խօֆըրնիւր Խընըրալ ․ կուսակալ կամ ընդհանուր կառավարիչ Հնդկաց Հոլանդացւոց ։

Խըրիֆիր , ատենադպիր դատաստանի ։

Կասիր , արկղապետ , անդ կապան մաքսատան

աճրդական վաճառանոցի · և այլն ·

Կլէրկ · գրագիր ·

Կլիւր մէտոր · ընտրող իրաց գնելոց վասն տէ-րութեան · որ քննէ զլաւ և զվատն ·

Կոմիս · վերադիտող · տեսուչ · քննիչ · Կո-միս ասեն կարգեալ անձինք ումանք ի վերադի-տել կամ վերահասու լինել գործոց · զինուա-ծոց · զտեղեաց · և այլն · կամ քննել զերկպառա-կութիւն · զվէճ · զզանազանութիւն · և այլն՝ ծագեալ ուրեք ի պաշտօնատարութեան · Ֆըրստը ըվէդը և դ ըրդ ը կումիս ասին՝ առաջին՝ երկ-րորդ և երրորդ աստիճանի գրագիրք · որք տան զօրինակ գրութեանց հասարակ գրագրոց · Ֆը-կումիս ասին վերադիտողքն կամ վերահասու լինողքն հանեալ և մուծեալ ապրանաց ի մաք-սատան · զի մի ինչ աւելի իցէ քան զանցագիրն կամ մաքսագիրն · և մի ինչ այլ՝ քան զոր նշա-նակեալ ի նմին ·

Կումիսարիս · ոստիկան · կարգադրիչ կամ ուղղիչ · Այս պաշտօն տայ երբեմն միոյ և եր-բեմն միւսոյ՝ յորժամ ծագի խռովութիւն կամ անկարգութիւն ինչ 'ի կողման ուրեք յուղղել զայնս · որ և ունի իշխանութիւն արձակելոյ ի պաշ-տօնէ կամ վնասապարտ առնելոյ զխռովարարսն ·

Կումիսարիս Ժընըրըլ · ընդհանուր ոստի-կան, կարգադրիչ կամ ուղղիչ · Սա երբեմնապէս կարգի ի 'Ինգըլանդայ ի կարգադրել կամ յուղ-

դէլ զամենայն ինչ 'ի Հնդկիս Հոլանդացւոց ․ որպէս 'ի ժամանակս մեր պատահեցան երկու կու-միսարիս խնդրալք Գուբիւսն և Ֆանդըրն բօս-խըքն ․ որք և արարին զբազում փոփոխութիւնս ․ զորոց ունիմք յիշել 'ի գլուխն իէ ։

Կօլէկտիւր ․ Հարկապահանջ ։ Բազում են կօլէկտիւրք 'ի Ճավա և յայլ ուրեք՝ կար-գեալք 'ի վերայ գետնոց ․ ցանքոց ․ բերոց ․ արմ-տեաց ․ և այլն ․ որք են 'ի ներքոյ փան կիւլտիւր Դիրէկտօրին ։ Դարձեալ կօլէկտիւր ասի գըլ-խաւորն կումիսաց մաքսատան ։ 'Ի սորա զգուշանեն օրինազանցքն մաքսատան մաքսանենգքն և պատանդումն մուծեալ այսր արգելեալ իրաց ․ որպիսի են ափիոն ․ աղ ․ պատերազմական զէնք և պղինձ փողք ։

Հափընմէստր ․ Հրամանատար կամ վերակացու նաւահանգստին ։ Ամենայն նաւք մտեալ 'ի նա-ւահանգիստն և ելեալ անտի՝ պարտին գալ 'ի ծանօթութիւն սորա ․ ուստի գալն ․ զինչ ունելն ․ երբ և յո՞ երթալն ․ զի՞նչ տանելն ․ և այլն ։

Հօֆդ ․ գլխաւոր ․ պետ ։ Յայս անուն կոչին հասարակապէս գլխաւորք երկրականաց և չի-նէացւոց ․ բայց կամեցեալ յառակայս ցանել զնոսա պատուանուամբ՝ աստիճանք նոցա որո-շին այսպէս ,

---

## ԻՆՔՆԱԳԼՈՒԽ ԿԱՄ ՀՊԱՏԱԿԵԱԼ ՎԵՀԱԶՈՒՆՔ

ՍՈՒՍՈՒՀՈՒՆԱՆ՝ կայսր․ սուլթան կամ ռաջա, Թագաւոր։ Պանգէրան, Թագաւորազն․ Պանգէրան ադիպատի, աթոռաժառանգ Թագաւորի․ Պանէմպահան, դուքս․ Ռադէն մաս՝ որդի Թագաւորազին․ Ռադէն, ազնուական կամ իշխանազն․ Կէայի, Պարոն․ Կակէք, ծերունի կամ գլխաւ որ գերդաստանի։

## ԳՈՐԾԱԿԱԼՔ ՏԷՐՈՒԹԵԱՆ 'Ի ՋԱՎԱ

ՌԻԳԷՆՏ, հրամանատար քաղաքի․ Տըմընգօնգ, կալանաւորակալ կամ պաշտպան օրինաց պօլիսի․ Պատի․ կողմնապահ քաղաքի․ Դըմանգ, գիւղապետ․ Լուրա, գործավար տէրունական հարկադրեալ մշակաց։

## ՆՈՅՆՔ Ի ԲԹԱՎԻԱ

ՄԱՅՕՐ ջակսա, հրամանատար քաղաքի։ Ջակսա, կալանաւորակալ կամ պաշտպան օրինաց պօլիսի։ Կօմանդան, կողմնապահ քաղաքի․ Աջուդանտ, փոխանորդ կամանդանտին․ Բէկ, գիւղապետ։ Մանդօռ, գործավար տէրունական հարկադրեալ մշակաց։

## 'Ի ԲԹԱՎԻԱ ԿԱՄ ՑԱՅԼ ԵՐԵՒԵԼԻ ՏԵՂԻՍ ԳԼԽԱՒՈՐՔ ՉԻՆԷԱՑՒՈՑ

ՄԱՅՕՐ․ ընդհանուր գլխաւոր քապիտէն, պետ․ լէֆտընանտ՝ տեղակալ չինացւոցն։

Հօֆկումիս · գրագրապետ ։ Յամենայն գլխաւոր պաշտօնի են մի կամ երկու հօֆկումիսք 'ի վերահասութիւն գրութեանց միւս գրագրաց ։

Մագիստրատուր · ատեան · իշխող կամ կառավարիչ կողման իրիք արտաքոյ Ք̃աղայ ։

Նօտարիս · նոտար հասարակաց ։ Սա հաստատեալ է հրամանաւ տէրութեան վասն հասարակաց · որոց ամենայն օրինական գրուածք դաշնագիր · գրաւագիր · պարտեմնագիր , երաշխաւորագիր · կտակ եւայլն· սովաւ գրին եւ հաստատին ։

Շէֆ · գլխաւորն պաշտօնի ինչ ։

Պակհիուսմէստր · շտեմարանապետ ։

Պակհիուսկնէխտ · ծառայ շտեմարանի , որ ստանայ կամ յանձնէ զիրս 'ի շտեմարանի ։

Պրէզիդէնտ · դատաւոր ատենի կամ աթոռակալ ամենայն միաբանական կառավարութեանց , որպիսի են մէնկամըն , բուէրմէստէրն եւայլն ։

Պրօկիւրիւր · օրէնսգէտ · փաստաբան ։

Պրօկիւրիւր ժընըրալ · պաշտպան օրինաց բարձր ատենի ։

Սապիր , բանդապետ ։

Սխաւտ , կալանաւորական պոլիսին ։

Սխէրպրէխտէր · դահիճ ։

Սուպրինտէնդէնտ , վերակացու 'ի գետնաչափական պաշտօնի , 'ի Ճարտարապետական եւ մեքենայական գործատանց ։

Սըքրէտարիս , ատենադպիր պրիզիդէնտու-թեան , սորա պաշտօն է և պահել զցուցակ ծննդեան և մահուան հասարակաց և կատարել զամուսնութիւն ։ Սըքրէտարիս ասին և ատե-նադպիրք այլոց երևելի մտաբանական կառա-վարութեանց ։

Սխէպսմէտէր , նաւաչափ ։ Սա կարգեալ է 'ի տէրութենէ 'ի չափել զնաւս հասարակաց ,

Վէյկմէստր · թաղապետ ։

Վիզիտատիուր , քննօղն նաւուց ։ Սա կար-գեալ է 'ի տէրութենէ քննել զնաւս՝ եթէ ար-ժանի է մտանելոյ 'ի ծով՝ կամ՝ ապահովելոյ ։

Վիսպրիզիդէնտ , դահափոխան ։ Երկու են Վիսպրիզիդէնտք 'ի Հնդիկս Հոլանդացւոց · մին՝ 'ի խորհրդարանի Հնդկաց՝ դահափոխան կու-սակալին և յաններկայութեան նորա 'ի Ջաւա՝ ետեզակալ · և միւսն՝ է դահափոխան դատաւո-րի բարձր ատենի ։

Տակսատիուր · արժեցուցանող · գին դրող ։ Երկու են երդուեալ տակսատիուրք · մին պաշ-տօնեայ տէրութեան 'ի գնահատել զտուն և ըզ-կալուած հասարակաց · և միւսն 'ի գնահատել զստացուածս մեռելոց · որ առնու զվարձ վաս-տակոցն 'ի ժառանգաց հանգուցելոյն ։

Տէկէնար · գծագրող ձևոց շինուածոց տէրուե ։

Տէյդսխրէյֆէր · ժամանակագրող ։

Տրանսլատիուր , թարգմանիչ ։ Բազում են

երդուեալ թարգմանիչք 'ի զանազան լեզուաց առ Հոլանդացւոց լեզու ։

Բաուհեր · խորհրդական կամ անդամ բարձր ատենի ·

Բէջխատրատուր ։ արձանագրող ելից և մտից 'ի Հնդիկս Հոլանդացւոց ։ կամ որ պահէ զցուցակ անուանց և թուոց բնակչաց ։

Բիգխդէնտ · գաւառապետ ։

Բօւմէստր · քննող կամ վերադիտող շինուածոց տէրութեան ։

Ֆէնդումէստր ։ վաճառապետ աճրդանոցի որ զգուշանայ · զի մի աներաշխաւորեալ ոք գնեսցէ ինչ ։ կամ որ կարէ գնել՝ մի գնեսցէ աւելի քան զերաշխաւորեալ գումարն ։

Ֆիսկալ · պաշտպան օրինաց մեծ ատենին · կալանաւորակալ օրինազանցից և պատանդող զինչս տուգանաւորելոց ·

Ֆօրզէտր · աթոռակալ միաբանական կառավարչաց Քրիստոնէական պէտոյից ։ գերեզմանատանց · աւետարանական և եկեղեցական միաբանութեանց ։

Օնդէրկումիս · ստորին կումիս 'ի մաքսատան ։

Օնտֆանխէր · մաքսապետ ։

Օպզինէր · կամ օպսինդէր · վերադիտող կամ վերահասու լինող ցանքոց · արմտեաց · բերոց · և այլն · որք են բազում և 'ի ներքոյ հրամանատարութեան չորրորդ Դիրէկտորին ։

Օպպըր Բըֆելհեբըր · ընդհանուր կամ՝ բարձր Հրամանատար · այս պատուանուն մերըն-ծայի կուսակալին նեգրլանդեան Հնդկաց · և ընդ-հանուր սպարապետի զօրացն Հնդկաց ·

Օպպըրհօֆդ · գլխապետ՝ կարգեալ 'ի վե-րայ այլ գլխաւորաց ·

*Արդ 'ի վերջոյ պայս մի ինչ յուշ առնել ընթերցողաց արժան է · զի ոչ յամենայն ու-

* Բթավիա գոլով մայր ամենայն քաղաքաց 'ի Հնդիկս Հա-լանդացւոց՝ 'ի նմա կատարին գլխաւոր գործառնութիւնք · կամ հաստատեալ են երևելի պաշտօնք տէրութեան · որպի-սի են՝ ընդհանուր կառավարութիւն կամ կուսակալութիւն Հնդկաց Հոլանդացւոց · դիւանատուն կամ նամակատուն տէրութեան · խորհրդարան Հնդկաց · Բարձր ատեան դա-տաստանի · զինուորական բարձր ատեան դատաստանի · ընդ-հանուր կառավարութիւն տէրունական ամենայն գործոց՝ յո-րոց վասն են և չորս կառավարչարանք չորից կառավարողաց · ընդհանուր համարակալութիւն · կնքաթղթարան · ընդհա-նուր գանձարան · սեննեակ հրամանատարութեան հաստացանելի և ստանալի տամակաց · տպարանն · տուրևառութիւն ջրա-փանայ · աղացանց տախտակի · և սեննեակ ընդհանուր համա-րատուութեան՝ յորոյ մերատեսչութեան է ուղղութիւն հաշ-ուոց և համարոց բազմանդակ ելից և մտից աշխարհին և մտա-բանական կառավարութեանց աւանդապահութիւն դրամոց սեննեկի որբոց, թոշակաւորաց · եկեղեցւոյ · դպրոցաց · աղ-քատաց, և այլն ·

Այլ մեծ ատեան, մէնկամր և զուգըմէտարն՝ որպէս 'ի Բը-թավիա, նոյնպէս են և 'ի Սամարանգ, 'ի Սուրբայեա, 'ի Պա-դանգ՝ յԱմբոն և 'ի Մակասար ·

Իսկ գաւառապետութիւնն, լանդրատ պաշխ և համարա-տուն տանց կալուածոց հասարակաց, մաքսատուն, հարկա-տուն · գանձապետութիւն կամ արկղապետութիւն անդրդա-

րեք նոյնչափ պաշտօնատարք՝ զորս յիշեցաք ՚ի վեր ․ կախեալ կան ՚ի գործ ․ այլ բազում ուրեք ՚ի Գովա և յասիական արտաքոյ Գովայ չեն աւելի գործակատարք անկրօնութեան քան թէ տասն կամ տասնեւհինգ անձինք ․ յորոց մին կատարէ զչորս կամ զհինգ պաշտօնս ․ որպէս ռեսիդէնտ մի՝ է և պրեզիդէնտ ․ փօրգէտէր ․ և ինսպէկտօրութ գաւառի իւրոյ ․ սուպրինտէնդէնտ ․ և այլն․ և սեկրետարիս մի ռեզիդէնտութեանն՝ է և խորհրդոյ լանդրատին ․ ալֆէնը օնտֆանթէր ․ նօտարիս ․ ֆանդիսմէստր ․ և այլն ․ այսպէս խմն և զայլսն ․

---

## ԳԼՈՒԽ ԻԵ

Համառօտ ժամանակագրութիւն Եւրոպացւոց ՚ի Հնդիկս Գովա՝ և նշանաւոր եղելոցն ՚ի ժամանակս եւրոպ և յետ դարուց ․

ՅԱՄԻՆ 1510 ԼՈՒՍԻՏԱՆԱՑԻՔ առին զԳովա ․ և ՚ի 1515 զՄոլուկա ․

1595 Հոլանդացիք մուտ առին ՚ի Գովա ․ և ՚ի 1599 ՚ի Մոլուկա ․

1602 Հաստատեցաւ Ընկերութիւն Հոլանդացւոց արեւելեան Հնդկաց ․

---

*նոց ․ կառավարութեան շահմարանաց ․ արդարադատութեան ․ թագաւորն և այլն՝ եթէ ՚ի Բաթավիա ․ և եթէ յայլ ամենայն գաւառս և ՚ի կղզիս միապէս կատարին ․ այլ վեհագոյնք և բուղըլքատէրքն ունին գործակալս յիւրաքանչիւր գաւառի ․

ՅԱՄԻ 1610 Պիտր Բօտ եղև առաջին կուսակալ կողմանցս , և արար զբնակութիւն իւր 'ի Ճակատրա , որ և այս անուանեցաւ Բաթաւիա . և Հաստատեաց 'ի նա զտուն վաճառականութեան . Սա ընդդիմացաւ Սպանիացւոց 'ի Թեռնատ և Տիդօր . եդ զդաշն ընդ Բանտացիս , ընդ Սոլօրայ , ընդ Թիմուրայ և ընդ Սէլանայ .

1619 'Ի Ճակատրա կառուցին զբերդ մի' անուանեալ Բաթաւիա . զոր և արարին գլխաւոր տեղի ընկերութեան արևելեան Հնդկաց .

1638 Հօլանդացիք գրաւեցին յինքեանս զտուրևառութիւն Ճափոնայ .

1751 Եղև պատերազմ ընդ Բանտամացիս 'ի Ճավա . և մահտարաժամ 'ի Բաթաւիա .

1795 Անգղիացիք առին 'ի Հօլանդացւոց զՍէլան , զՄալաբար , զԿորոմանդէլ , զՉինչրա , զՄալաքա , զՄոլուկս և զԳլուխն Բարեյուսոյ .

1800 Անգղիացիք պաշարեցին զԲաթաւիա . աւերեցին զՕնրուստ . և վերջ եղև ընկերութիւն արևելեան Հնդկաց .

ՅԱՄԻ 1802 Հաշտեցան Անգղիացիք ընդ Հո-
լանդացւոց, և միայն զՍէլան պա-
հելով ընդ իւրեանս՝ զմնացեալ
կալուածն յետ դարձուցին նոցա։
1808 Կարգեցաւ կուսակալ կողմանցս
'ի դիմաց Գաղղիացւոց Ճ. նրալ
Գանդէլսն՝ այր հնարագէտ և քա-
ջակորով։ Սա կանգնեաց զնշան
Գաղղիացւոց 'ի Ճաւա․ արար
զբազում փոփոխութիւնս օրինաց
և կարգադրութեանց. սաստ և եր-
կիւղ էած 'ի վերայ երկրական կայ-
սերաց և թագաւորաց․ փլատակ ա-
րար զպարիսպս երևելի տեղեաց․
և հատ զճանապարհ թղթատարու-
թեան 'ի Ճաւա․ յոր ծայրէ 'ի
ծայր՝ այսինքն 'ի Սէրանգայ մինչև
ցՊանջուվանգի ընթանայ 825½
մղոն․ հիմն էարկ և երևելի և մե-
ծակառոյց շինուածոյ միոյ 'ի Բը-
թավիա․ բայց դեռ ոչ հասեալ
յամբոկ գործոյն՝ կոչեցաւ յետս 'ի
Փարէզ։
1811 'Ի չուել Գանդէլսին՝ կարգեցաւ
կուսակալ ապա Ճ. նրալ Ճան-
սէնս՝ այր վաստակաւոր և պատախոր-
հուրդ․ ուստի Անգղիացիք իսկոյն

**ՅԱՄԻ** պաշարեցին զԲաթավիա և տիրեցին նմա յամսեան Սեպտեմբերի · յոր և կարգեցաւ տեղակալ կուսակալութեան Սըր Ստամֆօրդ Ռաֆէլըն · որ և արար զպատմութիւն Ճաւայ :

**1814** Ազատեցան Հոլանդացիք 'ի լծոյ Նապոլէոնին · և անգղիացիք յետս դարձուցին Հոլանդացւոց զբոլոր արևելեան Հնդկաստանոց՝ պահելով յիւրեանս միայն զԳլուխն Բարեյուսոյ ( Կէպ · )

**1816** Կարգեցաւ թագաւոր Նէդըրլանդայ Վիլէմ առաջինն՝ Պրինս Օրանջիոյ Նասաւ՝ մեծ Հերթօխլուքսէնբուրգայ : 'Ի սոյն ամ կրկին կանգնեցաւ նշանն Հոլանդացւոց 'ի Ճաւա, և կարգեցաւ կուսակալ կողմանցս Բարոնֆան Գըր Կապէլըն· որ էր այր հեզահամբոյր՝ մեծահամբաւ և բարեսիրտ : 'Ի ժամանակս սորա Ճաւա էր բազմարդիւն և ամենայն տուրևառութիւնն շահեկան · բերք աշխարհին առատ և ամենայն ուրեք բաց վաճառականաց · որով ոսկի և արծաթ յոյժ առատ · ամենայն

ՅԱՄԻ պաշտօնատարք զոհ 'ի վարձս իւր-
եանց . և ամենայն հայցողք գտա-
նող զերաւացի խնդիր իւրեանց .
Սա և մահապարտաց եւ պատժա-
պարտաց երբեմն շնորհէր զթողու-
թիւն . տէր էր տնանկաց և հայր
որբոց . Սա սկիզբն արար շինել
զջրանց կամ'զծովակս Բէթավիոյ
1818 Պատերազմ ընդ Պալէմբանգայ .
և վտարումն Սուլթանի տեղւոյն
առ Բէթավիա , և փակումն զնա 'ի
պատերազմական նաւի .
1821 Ընկաւ կոլէրամահ կամ փորբերան
'ի Ջաւա , որ և մեծամեծ մահունս
արար բնակչացն . 'Ի սոյն ամի իսկ
տիրեցին Հոլանդացիք Պալէմբան-
գայ . որոյ տիրապետող էր քաջա-
համբաւ Ջ'նրալ Դըկօկն .
1824 Թշնամացան Բօնացիք' որ 'ի Սե-
լեբես .
1825 Հոլանդացիք ետուն պատերազմ
ընդ Բօնացիս , յաղթեցին նոցա և
արկին զնոսա 'ի ներքոյ դաշանց .
Յարեաւ և ապստամբութիւն 'ի
Ջոկջոկարտա' որ 'ի Ջաւա , 'ի
18 Յուլիսի . և գլուխ ապստամ-
բողաց էր Դիպօնէգօրօ . Սա էր

ընդհանուր հրամանատար թագաւորութեան Ճօկջօկարտայ, և մերակացու զեռահասակ Սուլթանին. որ ընդ ապստամբելն իւրում արձակեաց զհրովարտակս առ ամենայն գաւառապետս և առ մեծամեծս աշխարհին՝ գրեալ այսպէս՝

"Այս հրամանագիր գայ յինէն ի Պանգէրան Արջօ Դիպօնէգօրայ, որ ընկալեալ է յերկնուստ զզօրութիւն գործելոյ զերկիր ՚ի կողմն արևմտեան Սուրբինգ լերին. և որ կամի շահատակել ՚ի սուր և պատերազմն Աստուծոյ՝ ի հալածել զամենայն Հեթանոսս ՚ի կղզւոյն Ճավայ, և անդէն հաստատել զհաւատս Մարգարէին մեծի, յորոյ վերայ եղիցի խաղաղութիւն, Զեզ հրամայեմ ամենեցուն մեծամեծացդ և գաւառապետացդ. մի ևս տայջիք զհարկ. այլ գուն գործեսջիք անհետ առնել ՚ի կղզւոջէ աստի զամենայն Քրիստոնեայս և զամենայն Չինէացիս. որք ոչ խոստովանեսցին զկրօն մեր՝ ըսպանանեսջիք. իսկ որք դարձցին ՚ի հաւատ մեր կեցցեն. բայց ամենայն ինչք և ստացուածք նոցա յարքունիս գրաւեսցին, և ինքեանք թըլպատեալք և ծառայեալք լիցին.

Վա՜յ այնորիկ՝ որ ոչ առասցէ զկամս իմ, ձգեսցէ ՚ի վերայ իւր զանէծս Աստուծոյ և միանգամայն զցասումն իմ. բայց որ անսայցէ հրա-

մանի խմում՝ ժառանգեսցէ զպատիւ, զմեծութիւն և զճոխութիւն, ինքն և ամենայն ծնունդք իւր։"

Այսու թղթով եգիտ գրեթէ աւելի քան զերկու միլիոն հոգիս ՚ի կողմն իւր, որոց ընդդէմ Հոլանդացիք ունէին միայն զերեսուն հազար զօրս յեւրոպացւոց և յերկրականաց։

1826 ՚Ի 1 Յունվարի եռեղակալ կուսակալութեան կարգեցաւ՝ ընդհանուր հրամանատար զօրացն՝ որ աստ, Ջեներալ Դըքօկն, և Բարոն Ֆանդէր Կապէլն դարձաւ ՚ի Հոլանդ։

՚Ի սոյն ամի եկն Սումատրիա Ջեներալ՝ Դըբիւս դը Խոխիգնիս՝ ազգաւ Բէլգացի. այր խըստասիրտ և ինքնախորհուրդ։

Սա էր ընդհանուր վերատեսուչ, կառավարիչ և կարգադրիչ տէրութեան ամենայն գործոց. որ և արար զբազում փոփոխութիւնս օրինաց. եբարձ միանգամայն զթղթադրամս. եհատ զին ոսկի և արծաթի դրամոց՝ մուծելոց այսր. յաւել զվարձ թղթատարութեան ՚ի Ջավա՝ իբրև հարիւրին 50. յաւել զվարձ պաշտօնատարաց. եւ ընկէց զբազումս ՚ի պաշտօնէ։ ՚Ի սմանէ եղև և պարտաւորութիւն անիրաւ պահանջմանց ինն հարիւր և երեսուն հազար գիլդերաց ՚ի Պարոն Յովսեփայ Յովհաննեսեան Ամիրեանց, զոր յիշեսցուք յառաջին Մասին. և սա աւարտեաց զհիմնարկեալն ՚ի Գանդելայ՝ զմեծ ծախուց

շինուածն 'ի Բէթավիա՝ զոր և անուանեաց Պա-
յատ . ուր այժմ կատարին ամենայն երևելի գոր-
ծառնութիւնք տէրութեան ։

1828 Հաստատեցաւ Դրամանոցն Հասարա-
կաց 'ի Բէթավիա՝ Ճավա Բէնք կոչեցեալ . որոյ
գլուխ դրամոցն է երկու միլիոն գիլտր՝ բաժա-
նեալ 'ի չորս հազար բաժինս՝ իւրաքանչիւր բա-
ժին հինգ հարիւր գիլտր ։ Արդ՝ գին միոյ այսր
բաժնի բարձրացաւ երբեմն մինչև ց1750 գիլտր .
քանզի յայնժամ իւրաքանչիւր բաժին շահիւր
յամին 170 գիլտր ։ Բայց յետոյ իջաւ մինչև
ց500 գիլտր՝ պատճառեալ 'ի մեծամեծ վնասուցն .
զորս քանի ամօք յառաջ կրեաց նա 'ի մեծամեծ
վաճառականաց ոմանց սնանկացելոց . և մինչ
ցորդ ջանայ միայն լնուլ զկորուստ իւր ։ Այլ
այժմ սկսեալ է կրկին բարձրանալ . որ 'ի վերջին
աւուրսն վաճառեցաւ ց480 գիլտր ։

1830 Ջերբակալ եղև Դիփոնեգորօ և աք-
սորեցաւ 'ի Մենադօն . ուստի և դադարեցաւ
խռովութիւնն Ճավայ ։ Պարձու Դրիւս 'ի
Հոլանդայ . և կարգեցաւ կուսակալ կողմանցս
Ճնրալ Ֆանդըն Բօսխն . այր փորձառեալ
յամենայն գործս տէրութեան ։ Սա ածեցոյց
զտունկս խահֆէի 'ի Ճավա . Հաստատեաց զբա-
զում շաքարանոցս՝ տնկեալ 'ի վարծու քսան ա-
մօք . բարձրացոյց և զգանս լեղակի . եդիտ ըղ-
յօրինումն չայի . տարածեցոյց զտունկ դարխա-

նի. արար զկօշնիլ (զումգ.) և զփորձ փորձեաց անձին և զմեծութս. բայց անսեալ զի մնասի, ի բաց եթող։ Տէրութիւն արար նաև զբոլոր բերս խաչքէի երկրականաց. և զբաւ հայ յարքու-նիս զկայսերական և զթագաւորական կալուածոն Սուրակարտայ և Ջօկջօկարտայ։ Սա եդ և ըղ-տարեկան հարկ ի վերայ վաճառականաց. ար-տեսատուրաց և նաւավարաց՝ Պատէնտ կոչե-ցեալ. որ առնէր միայն ցմի և կէս տոկի։

1833 Ֆանդըրն Բօսխն եղև կումիսարիս Ջեն-րալ կողմանցս, և Ջեներալ Բաւդն կարգեցաւ կուսակալ։

1834 Ֆանդըրն Բօսխն դարձաւ ի Հոլանդա, և ամենայն կառավարութիւն տեղւոյս յանձ-նեցաւ միայն Բաւդին. որ հետևեալ նախորդի իւրում՝ եւս աւելի աճեցոյց զեկս Ջաւայ։ Յայսմ ամի հաստատեցաւ սահմանադրութիւն օրինաց վասն նորեկ օտար Քրիստոնէից առ-նելոյ զբնակութիւն իւրեանց ի Բաթաւիա միայն. և հրամայեցաւ ամենեցուն ստանալ զգիր բնա-կութեան. որում՝ գին հաստատեցաւ վասն նախ քան զայս թէ եկողացն՝ մի գիլդր. եւ յետ նորին՝ 110 գիլդր. յորոց առաջինն համարի իբր քա-ղաքացի. և կարէ բնակութիւն առնել՝ ուր և կա-միցի. այլ երկրորդն համարի օտարական, որ բաց ի Բաթաւիա՝ յայլ ուրեք չկարէ բնակիլ. զորոց լիովին գրեսցուք 'ի գլուխն եօթն։ 'Ի ժա-

մանակս սորա կառուցաւ 'ի Բաթավիա և երևելի եկեղեցի մի ժողովրդական տրօք · զոր անուանեցին Վիլլեմս Կէրկ · յոր և ծախեցին աւելի քան զերեքհարիւր և յիսուն հազար գիլդէրս 'ի շինուածն միայն · թող զմեծածախս ըսպաս վայելուչ նմին ։

1836 Դարձաւ առ Հոլանդա Կուսակալն Բաուդ · և կարգեցաւ 'ի տեղի նորա Ջէնրալ Դը Էրէնս' որ էր ընդհանուր հրամանատար զօրաց ։

Սա երկպատկեաց զմաքս եւրոպէից վաճառուցն 'ի Ջավա և 'ի Սումատրա · հիմն էարկ ճարտարաշէն ամրոցին 'ի Բաթավիա' կոչեցեալ Պրինս Ֆրէդերիկ' յանուն թոռան Վիլլեմայ Առաջնոյ, որ 'ի հիմնարկութեան ամրոցին ներկայ գտաւ ։

1840 Վախճանեցաւ Դը Էրէնս 'ի Բօյտէնզօրգ և կարգեցաւ տեղակալ նորա Հօֆէնդօրօֆն · և ապա' Մէրկուսն · որ և 'ի 1843 եղև կուսակալ կղզեացս ։

1844 Վախճանեցաւ Մէրկուսն 'ի Սուրաբայեա · և կարգեցաւ տեղակալ նորա Րէյնստ ։

1845 Առաքեցաւ կուսակալ կղզեացս Ջան Ջակոբ Ռօխուսն' Մինիստր ֆան ստաատ · որ հաս այսր և կալաւ զաթոռ իւր 'ի յամսեանն Սեպտեմբերի ։ Սա է այր մի մեծահամբաւ , խոնարհամիտ և իմաստնախոհ · կրէ զքանի մի բարձրապատիւ նշանս' ստացեալ յիւրմէ և յայլոց թագաւորաց ։

Մինչև ցարդ 1849 կառավարէ սա զարևելեան Հնդկիս Հոլանդացւոց, յորում և արար զքանի մի երևելի գործս յօգուտ հասարակութեն. այսինքն՝ տպեաց զքառասուն միլիոն դրամաթուղթս՝ կոչեցեալ ռեխիպլս, (տամնակ ստացման,) յոր և յետոյ յաւել եւս զկէս չափուն, Եւրոց զգեր զդրամափոխութեան առնի առ Հոլանդա. Իջոյց զվարձ թղթատարութեան ՚ի Ջաւա՝ իբրև հարիւրին 50. Իջոյց և զմաքս խահվէի, զի յառաջ քան 1848 ՚ի 27 Մայիսի հատուցանէր առ մի փիքուլն 4 գիլդր. և ապա հարիւրին 12 գիլդր. ՚Ի 1846 երաց պատերազմ ընդ Բալի Բիլինգայ վասն ապախտ առնելոյ նոցա զնաւակին գաչինան, և անարգելոյ զթարձրագահութիւն Հոլանդացւոց. զորմէ լուեալ գրեալ եմք ՚ի գլուխն երորդ.

Այլ՝ այժմ ուրախ եմք գրել, զի առաջարկութիւն Բալիացւոյն խաղաղ ընկալեալ եղև ընդ իշխանութեամբ Հոլանդացւոց՝ ՚ի ձեռն քաջ զօրապետին Միխիլսայ, զորոյ զշուամնէն առաջ՝ գրեցաք ՚ի վեր անդր. Ուստի և ամենայն խստապարանոց դրացիք նոցա ծանեան զզօրութիւն Եւրոպացւոց, որք հինգ հազարօք ընդդէմ կացին վաթսունից և հարիւրոց հազարաց տեգաւորաց նոցա. և իբրև զխուխս ցիր և ցան արարեալ՝ ՚ի պարտութիւն մատնեցին. Բայց տրտմեմք, զի որ եղև առաջնորդ այսր պանծալի յաղ-

թութեանց՝ ինքն ոչ ժամանեաց յաղթական
պսակին ․ քանզի մերձ 'ի համբառնալ 'ի ծայր՝
քաջամարտիկ տիրապետութեան իւրոյ՝ և յըղ-
պուշանալն ընդդէմ գիշերային յարձակման թըշ-
նամեացն՝ յետ տիրելոյ Կաստմելայ՝ ընկալաւ
զմահաբեր վէր հրացանի ․ և զկնի ութ և տասն
ժամուց եթող զհամայն աւերելիս իւր և զբովան-
դակ զունդս և զընդդաշեսս զօրաց 'ի Բալի և 'ի
Բաւաւ՝ յանտանելի ցաւս և 'ի տրտմալի վիշտս
կորստեան իւրոյ 'ի 25 Մայիսի ։ Որոյ զդիակն
բերեալ առ 'ի Բեթավիա՝ ամփոփեցին 'ի հող
'ի 1 Յունիսի՝ զինուորական պատուով ․ և այն՝
այնպիսի շքեղաշուք հանդիսիւ՝ զորպիսի Բեթա-
վիա երբէք չէր տեսեալ ․ և ոչ կարէր իսկ ա-
ռաւել քան զայն մեծ երևելութիւն ցուցանել
յուղարկաւորութեան ուրու մի քաջայաղթ շա-
հատակի ։ Յորում ամենայն զինուորական դասք
կազմ զինուք ․ և իշխանական դասք մեծաշուք
զգեստիւք ․ և մեծարուք և մեծատունք սգաւոր
հանդերձիւք երևեալ այսօր՝ մեծախումբ կացու-
ցին զհանդէսն ․ որով և արձանացուցին զանմե-
ռան յիշատակ քաջազնիս 'ի սիրտս բնակաւոր ա-
րանց՝ կալ և մնալ անմոռաց զօվուք անուան յաղ-
թօղին Սումատրայ և Բալւոյ՝ յազգաց յազգս ։

Հարկաւոր համարիմք ընդ սմին կցել իբրև
զամբարտակ յիշատակի հանգուցելոյն զայսպա-
բարութիւն Կուսակալին վասն մահու նորա ։

## ԱՌ
## ՀԱԶԱՐԱՒՈՐՍ · ՀԱՐԻՒՐԱՊԵՏՍ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՍ

ԹԱԳ. ԶՕՐԱԳԼՈՒԽՆ՝ Յովաւ Ա. Փ. Մի-խիլյն որ բազում անգամ առաջնորդեաց զձեզ ՚ի ճակատ յաղթական մարտի · ձեզ և ինձ յոյժ սիրելին · որ զրաւեալ ունէր զձեր և զիմ մտերմութիւն · այլ ոչ ես կեայ · զի զմահ դիւցազանց մահացաւ նա ։

Այսօր ընկալայ զանակնունելի և զապշեցուցիչ զոյժ · թէ նա ՚ի հետամտութիւն և ՚ի ջանս պանծալի հանդիսադրութեան պատերազմական գործոյն ՚ի Նալի · և ՚ի զգուշանալ իւրում ընդդէմ զինչերային յարձակման թշնամեացն Կասումբայ՝ արտապետեալոյն յիշիմ՝ ՚ի 25 նոյն ամսոյ ընկալեալ զվէր մահու՝ և զկնի սակաւուց վախճանեալ է ։

Շողշողուն չքով հանդիսացոյց նա զպատիւ զինուց մերոց · և վեհանձնութեամբ և խոհեմութ ՚ի հպատակութիւն և ՚ի խաղաղութիւն պատրաստեաց զապստամբ տէրութիւնս Նալոյ ·

Արդ՝ մերձ ՚ի ծայր կատարման պանծալեաց և զժամանակիր գործոյն՝ զոր յանձնեալ էի նմա՝ խոյեցաւ ՚ի մէնջ ։

Նոյն շոգենաւով՝ յորում չուեալ էր նա աստի՝ բերցի աստ մարմնեղէն մնացուած նորա ·

առ որ 'ի վաղուց ձեօք հանդերձ՝ ցուցից զվերջին պատիւ ։

Անուն նորա քաջայաղթ պսակաւ արժանացուսցի 'ի պատմութեան Նէդըրլանդեան Հնդկաց․ և յիշատակ նորա միշտ արժանաւոր համբաւօք կացցէ մնասցէ 'ի մեզ և 'ի սերունդս մեր՝ երախտապարտ յիշողութեամբ ։

Գրեցաւ 'ի Բաթավիա 'ի 31 Մայիսի 1846·

Եպարքոս տէրութեան՝ Կուսակալ Նէդըրլանդեան Հնդկաց․ և Բարձր Հրամանատար Ծովու և Ցամաքի զօրութեան Նորին Վեհափառութեան՝ յարևելեան կոյս Կէպայ ։

ՌՈՒԽՍՈ՛Ն

Այս կուսակալ ազատ կացոյց 'ի մաքսից նաև վասն օտարականաց զՄակասար 'ի սկիզբն 1847։ Կառոյց և զնոր դատարան բարձր ատենի 'ի Բըթավիա․ և փոխադրեաց զայն 'ի Պալատէն այսր 'ի սկիզբն Մայիսի 1848․ և 'ի նոյն օրին հաստատեաց զնոր օրէնս քաղաքականս և վաճառականականս՝ զորոց ծանուցաք 'ի գլուխն 25։

Սա կառոյց և զերևելի մաքսատուն 'ի Բաթավիա՝ որ նորոգ աւարտեալ է․ կառուցանէ և 'ի դաշտավայրի միում զբանտ և հիւանդանոց վասն երկրականաց և չինէացւոց․ (հինն գոլով վնասակար առողջութեան․) որ մերձ է յաւարտիլ։

Օ՜ այսչափ ինչ արար սա մինչև ցարդ յօ-
գուտ Հասարակաց և ի յիշատակ արքայավայել
մեծութեան իւրոյ. որում յուսամք տացէ Տէր
զկեանս երկար. զի մնասցէ հաստատուն յիշխա-
նութեան իւրում, և առաւել ևս աւելցին բարի
յօժարութիւնք նորին ի բարեբաստութիւն Հը-
պատակաց իւրոց։

oo:*:oo

## ՊՍԱԿ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

# ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԻԹԱՂԻՈՅ

### ԲՈՎԱՆԴԱԿԵԱԼ ՅԵՐԵՍՈՒՆ ՅՕԴՈՒԱԾՍ

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

## ԲԹԱՎԻԱ

Նաւահանգիստ · Գետ · Փողոց և Շինուած ։

ԲԹԱՎԻԱ բազում են երևելի քաղաքք 'ի մէջ բազմակղզի ծովուն Արևելեան Հնդկաց, բայց երևելագոյն՝ բազմաշէն և բազմամարդն է Բթաւիա՝ որ 'ի Ճաւա. զի է մայրաքաղաք Հնդկաց Հոլանդացւոց, անդի մեծ ծաւալ վաճառականաց, բնակարան նորեկ օտար քրիստոնեայ ազգաց, և նստարան փոխարքային կամ կառավարին Հոլանդացւոց։

Բթաւիա՝ որ անկանի 'ի հիւսիսային ծովեզրն Ճաւայ՝ 'ի հնումն կոչէր Ճակատրա. այլ զայս նոր անուն էառ 'ի դղեկէն, զոր Հոլանդացիք կառուցին յամի 1618 յարևելեան եզեր Ճիլիւօնգ գետոյն, որ հասարակ անուամբ կոչի Կալի Բսար (մեծ գետ.) և անցեալ ընդ քաղաքամէջն թափի 'ի խորշ անդր Ճակատրայ։

'Ի մտանել քո 'ի նաւահանգիստ սորա՝ ոչ երևի քաղաքն վասն կարի հեռաւորութեանն

և շրջապատեալ լինելոյ բազմախիտ ծառովք · Թէ ևս տեսանեին գլուխք քանի մի երևելի շինուածոց 'ի յետուստ ծառոյն · բայց ոչ ինչ հաճոյ Թիւն ցուցանեն տեսողաց ։ 'Ի նաւահանգստի սորա երբեմն 40 կամ 50 նաւք գտանին զանազան ազգաց · յորոց առաւելագոյնքն են Հոլանդացւոց և Հնդկաց · և սակաւք 'ի նոցանէ Անգղիացւոց · Ամերիկացւոց · Գաղղիացւոց և այլոց · ընդ որոց և են բազմուԹիւն նաւակաց Չինէացւոց և երկրականաց · և վանկանք Սիամացւոց ։ 'Ի խաղաղ եղանակի բազում անգամ տեսանեին մերձ 'ի բերան գետոյն մեծամեծ կոկորդիլոսք · որք իբրև զբուն նարգլի ծառոց պառզեալք յերես ջուրց՝ սպասեն որսոց և գիշոցն՝ որք ելանեն 'ի գետոյն առ ծով · լինին երբեմն ճաշ նոցա և աղերջանիկ ձկնորսք և նաւաստիք ։

'Ի Կոյանէ նաւացն ուր խարսխին՝ ցմուտ ջրանցից կամ ծովագետոյն ԲԹամբոյ՝ է մի կամ կէս մղոն լայնուԹիւն · վերջնոյն՝ 80 ոտ · խորուԹիւնն ց10 · և երկայնուԹիւնն մինչև ցՊողեակն ԲԹամբո · ուր փակի յառաջ գետոյս · և իջանեն ի ցամաք երկու մղոնօք ։ Յանձրևոյին եղանակի կարի վտանգաւոր է բերան գետոյս · յորում երբեմն երկու և երեք օր երԹևեկուԹիւն բեռնակիր նաւակաց և մակուկաց արգելեալ լինի · և յամենայն ուրուք խռովեալ եղանակի բարձրացուցանեն զսեաւ նշան առ 'ի

ցոյց վտանգի. յորում եթէ վստահիցի ոք՝ ջրասոյզ կորնչի.

Արդ այս գետ նախ քան զամն 1819 բաց էր մինչև ցմերձակայս դղեկին Բթավիայ, ուր բազում անգամ բեռնակիր նաւակք վարեալ 'ի հողմոց անկանէին 'ի ձախին կամ յաւազուտ տեղիս. յորս էր՝ որ ջրասոյզ լինէին. և էր՝ որ մազապուրծ զերծանէին, բայց և ոչ թարց վնասու բեռանցն. Այլ յետոյ հրամանաւ Բարոն Ֆանդըր Կապէլ կուսակալին թումբս կառուցին յերկոսին եզերս սորա յիւրաքանչիւր կողմանց երկաղար ցցօք հաստ և երկայն գերանաց ամրացուցեալ. յորս և ամանցին քարինս, զհող և զայլ ամենայն աւերածս քաղաքին՝ որք այժմ լեալ են ամրակուռ և հաստատուն թումբք անխարտակելի ընդդէմ բռնութեան ալեացն՝ յորոց 'ի խուռնեալ եղանակի խաղան 'ի վերայ և ոչ վնասեն. Զայս պիտանի մեծագործութիւն հետ զհետէ շարունակեցին մինչև ցծովն. այժմ վտանգաւոր է միայն բերան նորա. և այն 'ի խռովեալ եղանակի, ուր եթէ հնազանդեսցեն սաստ նշանին՝ ոչ ոք տեսանէ զվտանգ ինչ. Առ այսմ, քանի ամօք յառաջ փոյթ կալաւ Տէրութիւնն անքոյթ առնել. զի մերձ յառաջեալ դղեակն Բթավիա փակեաց զյառաջ գետոյն. և եբաց զայլ երկու գետս յերկուց կողմանց խաղացուցեալ 'ի ծով. որ և ոչ սակաւ օգուտս ընծայեաց նմին.

Մանաւանդ յայս գետ՝ ընդ երկայնութիւն սորա գտանին հարիւրաւոր բնակելի նաւակք և մակոյկք նաւավարաց և ձկնորսաց . ոմանք առագաստիւք , ոմանք թիակօք և ոմանք առ սանօք քարշեալ մուտ և ել առնեն ՚ի ծովէ առ քաղաքն . և ՚ի քաղաքէ առ ծովն ։ Իսկ տեսանին բազմութիւն նաւակաց երկրականաց և չինէացւոց որք կոչին մայեանք , տօպք , սինչալանք եայլն . որոց սաստ և անդ խառնախառնալ թափին կամ՛ տատանան զբնուին ,

Հասեալ մերձ ՚ի տեղին , ուր իջանի ՚ի ցամաք զառաջինն գտանի յաջակողմեան եզր գետոյն նորոգ կառուցեալ մաքսատունն՝ որ դեռ չէ մըտեալ ՚ի գործ . զկնի նորա գործատուն տէրունեան ճարտարապետին Թօբօմգայ . և ապա մաքրանոց ջրոյ , ուր մաքրեն զջուր գետոյն յօգուտ նաւավարաց և վաճառնոց նոցա չափով . Իսկ կից սորա ՚ի նորոյ կառուցին զպանդոկ մի վասն նաւավարաց ։

Առ եզերբ ծովագեան , յորում է փոկարան նորա և իջարան առ ցամաքն . Առաջին անցեալ յայն կոյս կամ՛ յարեւմտեան կողմն գետոյն՝ նախ գտանի մեծավաճառատեղին ձկանց՝ նորոգ կառուցեալ ՚ի Տէրութենէն , ուր ամենայն ձըկնորսք պարտական են թափել զձկունս իւրեանց յամենայն աւուր և անդուստ վաճառել ՚ի ձեռն մեծավաճառացն՝ որք են չինէացիք . որք վար-

ծեալ են 'ի Տէրութենէն դոյս վաճառ յամին երրև հինգ հազար գիլդըր։ Իսկ տառապեալ ձըկնորսքն՝ որք 'ի քսան և չորս ժամս աշխատին 'ի ծովու, և մատնեն զանձինս վտանգաց 'ի վտանգս հազիւ գտանեն զպատառորդս վասն տակաց իւրեանց։ Օգնի սորա է վաճառատեղի ինչ նոյնպէս կառուցեալ 'ի Տէրութէն՝ յորում են իբր և 55 կամ 40 փոքրիկ կրպակք վարձեալ 'ի չինեցւոց, ուր վաճառեն զամենայն պիտոյս նաւատեաց. զընդեղէնս, զձկունս, զբանջարեղէնս, զխեցեղէնս, զյախճապակիս և այլն։ Նոյն յետ սորա է ջրանց մի բեռնակիր նաւակաց, որոց 'ի ծովագնացոյն մտեալ այսր՝ անցանեն առ ներքին գետն որ կոչի Ալոյս՝ կառուցեալ ճարտար արուեստօք. զի ունի երկաւս փորանոր և ձուաձև լայն և ընդարձակ աւազանս քառակուսն զետեղելոյ տասն բեռնակիր նաւակաց։ Ընջապատեալ է հաստահիմն քարաշէն բարձր թմբովք և արկեալ երկաթէք դրունս 'ի ներքուստ և արտաքուստ։ Իրդ յորժամ բեռնակիր նաւակք կամիցին մտանել և ելանել ընդ այսր բանան նախ զարտաքին դուռն՝ մինչև մտեալ բոլոր նաւակացն յաւազանն անդր, ապա փակեն զայս և բանան զմիւսն, որոց ելեւմուտ կատարի ընդ ելեւմուտ ջրոյն։

Յետ զխառնելոյ զայսոսիկ այժմ ժամ է մտանել 'ի քաղաքն. որոյ երկու են մուտք՝ մինն յարևելից կողմանէ, և միւսն յարևմտից կողմա-

նէ դէպ առ Հարաւ ։ Բայց սկիզբն արասցուք
նախ յարեւելից կողմանէ, որ է տեղի ելանելոյ
'ի ցամաք եւ մուտ ամենեցուն առ քաղաքն ։ Աչ-
հեալ 'ի փակարանէ գետոյն է երկայն կամուրջ
մի՝ ընդ որ պարտ է անցանել ։ յորոյ յանդիման
է փոքրիկ դաշտ մի ։ ուր յառաջ էր մաքսա-
տունն Եթավկոյ ։ զոր վասն անյարմարութեան
տեղւոյն փլատակ արարին ։ եւ այժմ՝ 'ի տեղի նո-
րա կառուցեալ են գհամբարանոց չայլ՝ լայն՝ եր-
կայն եւ բարձր ։ Իսկ 'ի ձախակողմ կամրջին է
Գողեակն Եթավկա, որոյ մասն պարսպի քանի
ամօք յառաջ էր 'ի զննին անցորդաց ։ բայց այժմ
միանգամայն հիմնայատակեալ՝ նշան ինչ բնա-
ւոչ երեւի ։ Յառաջոյ սորա է Ճանապարհ մի
առ քաղաքն, որ նախ մածանէ 'ի կոտա ինտան,
(անդամանդեայ բերդ ։) յորում են Տէրութեան
մեծամեծ ամբարանոցք անազի, (կէկկի ։) երկա-
թի, համեմաց եայլն ։ որք կառուցեալ են 'ի ժա-
մանակս ընկերութեան Արեւելեան Հնդկաց հաս-
տահիմն ամրակուռ, լայն՝ երկայն եւ կրկնայարկ ։
Աստ է եւ մեծ թնդանօթ մի պաշտելի յիմար
երկրականաց ։ յորոյ ներքոյ ծխեն զխունկս, եւ
'ի վերայ ձգեն զխունջս ծաղկանց վասն յաջող
ելից խորհրդոց իւրեանց ։

Ելեալ ընդ դուռն սորա՝ է սկիզբն քաղաքին ։
ուր անկանի յուղղակի Ճանապարհն դէպ առ
դատաստանատունն ։ Երկոքին կողմանք դրանս

Ընդերքուստ քաղաքին են երկխորշեայք 'ի մէջ որմոյն . յորս եդեալ են երկու երկու սեաւ արձանք առն և կնոջ , իբրև ութն ոտն բարձրութեամբ և երեք ոտն ստուարութեամբ 'ի կերպ և 'ի զգեստ Պալմիւրացւոց՝ աշտէս 'ի ձեռին . 'Ի կէս Ճանապարհին են և այլ երկու Ճանապարհք . մին յարևելս՝ ընդ որ ուղղակի երթայ 'ի Կամզօնդ Բանդատն և Սինչար և անտի 'ի զանազան փողոցս յորս 'ի հնումն էին երևելի բնակարանք Հռոլանդացւոց . այլ այժմ աւերակք են և այգիք անկոց և եթ . Իսկ միւսն է յարևմուտս , որ հանէ 'ի Փասար Պլասնդ , յորոյ աջակողմն՝ են կրպակք չինեացւոց , և 'ի ձախակողմն տունք վաճառականաց դատաստանատուն քաղաքին , որ է երկայն մեծ և երևելի շինուած իմն , յորում կատարեն զանազան գործառնութիւնք տէրութեան վերաբերելի հասարակաց . զի 'ի սմա են ատեան սորին դատաստանի , ատեան երկրակոնաց , ատեան սորին կարգեալ դատաւորի կամ կառավարչի քաղաքին՝ այսինքն է Սենեկէնտին : Այս և 'ի սմա է ատեան ժողովրդական դօրոց . աստ պահին և յիշատակագիրք կամ դիւան հասարակաց պատկէ՝ ծննդեան և մահու . և ցուցակ բնակչաց , մտողաց և ելողաց քաղաքիս . ուր և ընտրելի անցողիր չուողաց 'ի քաղաքէս .

Յարևելեան կողմն սորա է բանդ և փակարան պաշտպանաց և պատժապարտից երկրա.

կանաց և Չինէացւոց. և յարևմտեան կողման է գիւմնաստուն ատենադպրի դատաստանին, ուր յառաջ էր բանդ և արգելան. Բրիտանէից. ՚Ի կողմանէ սորա է նիւ մ պօրա ստրատ ( փողոց նոր դրան՝ ) ընդարձակ ճանապարհ մի՝ որ ձգի մինչ ՚ի կամուրջն կոչեցեալ պլիտաւ բրտար ( այն է գետն մեծ ) զի ՚ի հնումն աստ էր մեծ գետն քաղաքին՝ ուր արտաքուստ պատեալ էր պատնշօք, որոյ մինչև ցայժմ ոչ երևին հետք աւերակացն, այլ դրանն միայն անունն լոկ. Յայսմ ճանապարհի են իբրև երեքտասան տունք վաճառականաց յերկուս կողմանս, և քանի կրպակք չինէացի արուեստաւորաց. յորմէ ձգի և ճանապարհ մի յաջակողմն առ մեծ գետն. որոյ ՚ի մի կողմն են կրպակք կառաշէն չինէացւոց և ՚ի միւսոյն Փավա Բանք ( սեղանական կամ լումայատուն հասարակաց. ) ընդարձակ իմն շինուած յորում և են քանի մեծ և փոքրիկ ամբարանոցք. գանձատուն, և համբարատուն նոյն.

Ոչ հեռի ՚ի կամրջէն պլիտաւ բարէ՝ զոյ և ճանապարհ մի առ ձախակողմն՝ որ հանէ ՚ի դաշտավայր ինչ կոչեցեալ Մատէրատա, ուր է տէրունեան համբարատունն թուոց տանց եւ կալուածոց Բեթավլիոյ, և պահին անդ երկրացոյցք ամենայն ազգաց ՚ի Փավա. Սա է և կնքարան չափուց և կշռոց վասն ուղղելոյ զամենայն չափ և կշիռս յամենայն տարւոջ յամ:

սեանն Յունուարի ։ Ընդհատ ընդ այս կամուրջ Պլոտ բաար՝ յառաջի անկանին երեք ճանապարհք ։ Մին ուղղակի առ կաւատրատ ( փողոց կովուց. ) որ ի հնումն էր անդի կաթնավաճառաց և կային գոմք կովուց ։ Իսկ երկուքն ընդ յարևմուտս և յարևելս Արևմտան հանէ ի Ջինէացւոց Թաղն. և արևելեանն՝ ի կամուրջն կամպօնդ մուքա ․ ընդ որ անցեալ՝ կամպօնդ մուքա անկանի ՚ի ձախակողմն Երկայնութիւն նորա է իբրև ¼ մղոն ․ յարևմտեան կողմանէ ընթանայ մեծ գետ , և յարևելեան կողմանէ են մեծ և փոքր բնակարանք ազնուացն Փուրթքէնց ։

՚Ի կամուրջէն Կոմպօնդ Մուքայ ուղղակի ընթացեալ առ յարևելս անուի յերկարաձիգ ճանապարհ մի , յորում են և զանազան փողոցք ․ ի հնումն էին աստ հարիւրաւոր տունք Բրիտանէից ․ այլ այժմ գրեթէ անմայիք ․ և ճանապարհք և գետնատունք նոցա աւերեալք ։ Իսկ յաջակողմն յանդիման կամրջին է մեծախառնոյց և գեղեցկաշէն հին եկեղեցին Հոլանդացւոց ․ որոյ առաջոյ է լայն և ընդարձակ ճանապարհ առ Քակատրա ։ ՚Ի հնումն աստ էր երկու եղի անդին ՚ի Թամզիա ․ որ էին մեծամեծ տունք և երեւելի շինուածք Հոլանդացւոց ․ բայց այժմ անգլ նոցա եղեն այգիք անկոց և պարտէզք բանջարոց ։ Այս ճանապարհ որ գնալ և ունի ընդնախկին զուարճալի դրութիւն իւր՝ է իբրև մի

և կէս մղոն երկայն, լայնութիւն նորա է իբրև 80 ոտ՝ բաժանեալ յերիս անցս ճանապարհորդաց. ուր ՚ի միում ընթանային կառք, ՚ի միւսումն սայլք. իսկ ՚ի միջին անցան հետևակք՝ հովանաւորեալ երկաշար հնացեալ ծառովք. Յառաջն՝ յերկոսին կողմանց ճանապարհին էին և ջրանցք քարաշէնք՝ որք այժմ աւերեալք են.

Աստուրատ ընթանայ մինչև ցկամուրջն Աբրուկուտայ կամ Մօլընֆըլիտայ (փոքուց աղօրեաց.) որ է իբրև վեց քարընկէց ճանապարհ. Յերկուս կողմանս Աստրատայ են տունք վաճառականաց՝ կրպակք Զէնէացւոց. և գործատունք զանազան արուեստաւորաց. որք են՝ կառագործք. դարբինք. պղնձագործք. ժամանակագիրք. դերձակք. և այլն. ՚Ի սորա ձախակողմն են և երկու ճանապարհք առ արևելս՝ որք կոչին Պլինանսիա՝ ուր ՚ի միում է սեննեակ որբոց երկրակալաց և Զէնէացւոց անուանեալ Իուղիլ Մէտոր. ուր պահեն զմեծ գումար դրամոց դեռահասակ ժառանգաց.

Այս կուտ կամ Մօլընֆըլիտ է երևելի ճանապարհն Իթալիոյ. որ ընդ գետեզրն ընթանայ մինչև ցՃարմօնին (տուն միաբանութեան) երկայնութիւն նորա է մի և կէս մղոն. և լայնութիւն ըստ կարի արձակ, հարթ և ուղղակի դէպ առ հարաւ. Իսկ երթևեկ կառացն ընթացեալ ՚ի սմա զօր և գիշեր կարէ լինել յաւուր ին վեց

կամ եօթն հարիւր ։ Գետն մեծ՝ որ խաղայ 'ի ձախակողման սորա՝ ոչ սակաւ զուարճութիւնս ընծայէ անցորդաց. յառկայէս յուռճացեալ ժամանակի , զի երկուքին եզերք նորա յօրինեալ են զառ 'ի վայր միշտադալար թմբովք մինչև ցըզօտի տախտակաձև ցցոց գերանացն . և յայսկոյս արարեալ ցանգապատս , որպէս և յայլ ամենայն ուղիս գետեզերց՝ երկայնաձիգ գերանօք ընդդէմ վտանգաց կառաց և երիվարաց . Հովանաւորեալ միաշար տնկօք կանաչազգեղ բազմամեան ծառոց ։

Իսկ յաջակողմ ճանապարհիս են յամենայն ուրեք մեծ և փոքր շինուածք. այսինքն տունք՝ կրպակք և գործատունք Չինէացւոց Հանդերձ փոքրիկ Մզկթաւ միով Մահմետականաց ։ Նաև տուն որբոց և ջրաղաց մի ցորենոյ ։ Այս սակաւուք յառաջ ընթացեալ գտանին և երևելի բնակարանք Եւրոպացւոց Հանդերձ երկու երևելի պանդոկօք. յորոց միոյն կոչի Հօթըլ դը պըրօվինս. և միւսն Հօթըլ դը մարին ։ Եւ յայսկոյս կամ յարևելեան կողմն պետոյս՝ 'ի սկիզբն տեսանի դաշտավայր ինչ հաւանկինի , որոյ 'ի Հարաւային կողմն են ջրաղաց և Հացանոց մի . ըզկնի նորա սղոցանոց տախտակի՝ ուր ջրային զօրծեօք հատանեն զտախտակս 'ի մեծամեծ գերանաց վասն տէրունեան շինուածոց ։ Յետ որոյ է անկելանոցն երկրականաց և 'ի միջին վայրի դաշ-

տես 'ի նորոյ կառուցանի բանդ , արգելարան և հիւանդանոց երկրակալաց և Չինէզացւոց : Ըս-պա փոքր մի հեռի աստի առ հարաւ է գործա-տուն՝ ուր յօրինեն զպղնձեայ ցքահան գործիս : Յետ որոց են մեծ և փոքր տունք Եւրոպայ-ւոց՝ տունք երկրակալաց և կրպակք Չինէզաց-ւոց : Մզկիթ մի . այգիք անկոց և մարգագե-տինք մինչև ցխտտուսա Անձվէկայ՝ յանդի-ման Հարմոնեայ :

'Ի Կրուկուս կամ Սօլինֆլիտ գոն և քանի մի երեւելի փողոցք առ արեւելս և յարեւմուտս : Ընդ արեւմուտ՝ փողոցն անուն 'ի Չինէզացւոց թաղն կից ընդ կամրջին . ապա 'ի Կամփօնդ Ջա-վա , Գանգ կոտապան և Գանգ շօլան : 'Ի մեր-ձին երկուն բնակին բազմութիւնք Եւրոպացւոց . իսկ յառաջնումն՝ Չինէզացիք միայն :

Յարեւելս են Մանգաբար և երկու Ճանա-պարհք առ Մաւլաբար : Մոնկօբար՝ ուր բը-նակին շատք 'ի զանազան ազգաց . հանէ առ Մն-տիօն՝ հին գերեզմանատուն Չինէզացւոց՝ ուր է և կատուն մի , առ Ջակարտա և առ Գրուն-ունդ Սարի :

'Ի սկիզբն Մանգաբարայ 'ի հարաւա-կողմն է պատարկ քառակուսի դետին մի , ուր էր յառաջ զանձատուն և Թափառուն տէրու-թեան . ապա վաճառանոց և այժմ կրթարան ժա-ղովրդական զօրաց : Ըստէն է Ճանապարհ յայն-

կոյս գետոյն մինչև ցերկրորդ կամուրջն՝ Սա-
վարսար (ագարակ մեծ․) որոյ ընդ մէջ հատանել
են Ճանապարհք առ Սնոփօն, առ Փասար Բա-
րու՝ վաճառատեղի երկուշաբաթի աւուր․ և առ
Գանգ Պէչինգան․ Կրուկուս՝ յանդիման Հար-
մօնեայ բաժանի ՚ի չորս Ճանապարհս․ մին՝ ուղ-
ղակի առ Տնաբանդ․ որ է ընդարձակ բարձր դե-
տին ինչ՝ զոր առնեն վաճառատեղի ուտելեաց
և այլ իրաց՝ յամենայն չորեքշաբաթի և ՚ի շաբա-
թի․ ըստ օրինակի Մ՝էզանին Ջ ու զայ յաւուրս
կիւրակէից․ Նաւի զնոյ ՚ի Ջ աւուր ՚ի Ջ աւ-
պօնգան, ՚ի Ջ պօն․ առ Գերօզօլ և յայլ կող-
մանս եւրոպացւոց, չինեացւոց և երկրականաց․
Երևելի է և գեղեցիկ Ճանապարհն Տնաբանդայ․
զի ՚ի սմա է գերեզմանատուն Բրնատնէից յաջ
կողման․ և ՚ի գլուխ անդ ուր ոյն՝ պատեալ ապա-
տակ որմովք չորեքկուսի՝ ընդ որ հոյին շիրիմք
երևելեաց մայենաչակերտ յօրինեալք և զամ-
բարանք գերդաստանաց․ Սինի զղուան մի մեծ․
և զուխթ լայնարձակ․ ուստի տեսանին յիշատա-
կարանք կամ՝ արձանագիրք նախնի կուսակալաց․
Ընդարձակութիւն գերեզմանատանս է իբրև
5 կամ 6 քառակուսի ասպարէզ․ յոր ՚ի դա-
րուց հետէ սկսան թաղել զմեռեալս․ և զուցէ
բիւրք բիւրուց մեռեալ են յայս զուռն ան-
կեանելի․ բայց ոչ տեսանին անդ աւելի քան
հարիւր շիրիմք․ և յետ ՚ն զամբարանք մի ռե-

ոց ։ քանզի սովոր են 'ի մի կողմն թաղել զմեռեալն մինչ ցլրանալ տեղւոյն՝ որ տևէ ցերկու կամ ցերիս ամս , ապա սկիզբն առնուն 'ի միւս կողմն ։ և զոր ինչ ոսկերոտիք գտանին 'ի պեղելոց անտի՝ ամփոփեն 'ի սննդակ մի ։ որոց 'ի բազմանալն այրեն ։ Յայսմ Ճանապարհի են և բնակարանք Անգղիացւոց , և գետ մի՝ որ խաղայ 'ի յետուստ Արուկատայ ։ մտանէ 'ի թաղն Զինէացւոց և ապա խառնի ընդ մեծի գետոյ քաղաքին , որոյ եզերք հովանաւորին Նոճի ծառովք ։

Առ արևմուտ՝ Ճանապարհն հանէ 'ի զօրանիստ տեղի հեծելազօրու Հոլանդացւոց ։ ապա 'ի լայնածաւալ դաշտ մի , որոյ երկայնութիւնն է 5 մղոն , և լայնութիւն նորա 3 մղոն՝ յորմէ երթայ և 'ի զանազան տեղիս՝ 'ի թաղն Զինէացւոց ։ յառաջին թափառումն 'ի Բանթամայ Ճանապարհին , 'ի Տանջօն՝ որ է նոր գերեզմանատուն Զինէացւոց ։ և 'ի զանազան կալուածս , 'ի գիւղօրէս և 'ի փողոցս՝ որ առ Արուկատաւ ։ Այս գեղեցիկ դաշտ իբրև զթատրոն մի՝ կարի հաճոյական և զուարճալի տեսարանս յանդիման առնէ աչաց անցորդաց 'ի ժամանակս ցանքոց ։ զի տեսանին 'ի նմա ափիւռ կանաչագեղ և դալար բոյսքն որիզոյ ։ և 'ի շրջապատն բազմախիտ և բարձրաբերձ ծառք նարգլի և տանկք զանազան պտղոց ։ Խաղաղն ջուրք սառ և անդ 'ի փոքրիկ առուակս՝ որք և ուրեք կարկաչմամբ

Հոսին 'ի վայր ։ 'Ի միոյ կողմանէ երեւի թաղն Չինէացւոց ․ եւ 'ի միւսոյ կողմանէ յետ կոյս շինուածոցն Կրուկուտոյ ․ մասն Նօրդվէկայ եւ Գերեզմանատան Քրիստոնէից ։ Իսկ յայլ կողմանց՝ գերեզմանատունն Չինէացւոց ․ եւ զանազան մեծ եւ փոքր գիւղօրէք ․ յորս են եւ քանի մի թրծանոցք աղիւսի ․ կղմինտրի եւ խեցի անօթոց եւ ներկանոցք կրի՝ որք կոչին Լիօ ։

Միւս երկուքին ճանապարհքն են Ռէյսվէկ եւ Նօրդվէկ յայսկոյս եւ յայնկոյս գետոյն ․ որ խաղայ 'ի Կրուկուտ ։ Ռէյսվէկ է 'ի կողմն հիւսիսոյ ․ եւ Նօրդվէկ 'ի կողմն հարաւոյ դէպ արեւմուտս ։ Առաջինն ընթանայ մինչեւ ցդռնաւոր կամուրջն Վէլդֆրիտոյ ․ եւ երկրորդն մինչ ցկամուրջն՝ որ 'ի յարեւմտեան անկիւն Պրինսփրէդէրիկ ամրոցին ։ Այս ճանապարհ ունի եւ զմասն հարաւոյ մինչեւ ցկամուրջ ճանապարհին Տանաբանգայ՝ որ է իբրեւ հինգ քարընկէց ։

Երեւելի են այս երկուքին ճանապարհք մեծամեծ բնակարանօք եւ վայելուչ շինուածովք ․ բայց գերազանց է Նօրդվէկ յորում է Հարմօնին ․ Սինեակ Օրոց քրիստոնէից ․ Տուն որբոց Անգղիացւոց ․ Տուն կուսակալին եւ երեւելի պանդոկ մի Եւրոպացւոց՝ որ կոչի Հօտըլ դըր Նէդըրլանդըն ։ Հարմօնին՝ կամ միաբանութեան Բաթավիոյ՝ կառուցեալ է յանկիւն երկուց ճանապարհացն Ռէյզվէկայ ․ յորոյ առաջոյ ընթանայ դէպ

տը յարևելս և 'ի կողմանէն տը Հարաւ՝ է մեծ և ընդարձակ շինուած՝ մի՝ յոր պարունակիլ կարեն հնգետասան հարիւր ոգիք ։ Ունի յառաջոյ գերիս մեծամեծ դահլիճս ։ Դահլիճն արևելեան կողմն է տեղի պարուց հանդիսաւոր աւուրց կամ միաբանական խնջոյից ։ Միջինն՝ որ ունի յառաջոյ զարահ կամ ճեմելի մի և ձգի մինչև ցներքս՝ է ժողովարան միաբանելոցն ։ Իսկ երրորդն՝ որ 'ի կողմ արևմտեան՝ է տեղի ընթրանաց երիտասարդաց ։ ուր են սեղանք բիլիարդից՝ նարդից և թղթոց ։

Հարիւրաւոր են սենեակք միաբանելոցն 'ի նոյն տան ։ ուր և յամին միանգամ կատարեն ընխնջոյս ։ յոր մտանեն անդամքն միայն ։ Որ կամի կցորդիլ նոյն միաբանութեան՝ քննի 'ի կառավարչացն և ընտրութեամբ մուծանի ։ որ նախ պարտի հատուցանել 450 դոլար ։ տարեկան 8 դոլար ։ և ամենայն ծախք տանն ։ խնջոյից և այլ պիտոյից այսու տուրք հատուցանին ։

'Ի յետուստ Հարմօնեայ 'ի կողմն արևմտեան՝ է միաբանարան մի գիտութեան և արուեստից ։ 'ի սմա են երկոտասան սենեակք յերևելեաց և 'ի գիտնոց ։ և պահին անդ զանազան ձեռագիր մատեանք գիտութեանց և արհեստից ։ Ամենայն ոք կարէ մատուցանել այսմ Հաստատութեան գնորահնար ձեռագործ կամ զարդուեստ իւր ։ որ թէ արժանասցի հաւանութեան՝ դնէ զթուղթ մեծա-

բանից հանդերձ պարգևօք ։

Իսկ ՚ի կողմն արևելեան է առանձին սենեակ մի, ուր ժողովեալ պահին զհազարաւոր առարկայս աչաց ՚ի զննին հասարակաց. յորս են և չորացուցեալ կամ լցեալ բազմատեսակ և գոյն զգոյն թռչունք, անասունք, գազանք, սողունք և ժժմունք. ոսկերոտիք և գանգ մարդոյ, արձանք և պատկերք, զէնք երկրական թագաւորաց, հին և նոր դրամք զանազան արքայից, պէսպէս քարինք, կառաբոյսք, ծովային խեցիք և այլն. որք տանեն զտեսարան մի զբօսալի հետազօտութեան ։

Սիրուն է տուն Կուստոկալին, որ կառուցեալ է ՚ի տէրութենէն. բայց չէ այնչափ հոյակապ որչափ վայել էր բնակողին ։ Այս տուն մինչև ց1847 կրկնայարկ էր. իսկ յայնմ հետէ ՚ի բաց առին զվերին զառիկոնն և յաւելին ՚ի նա յաջ և ահեակ զմեծամեծ սենեակս ։ Նաև բազմացուցին զարտաքին բնակարանն յերկուց կողմանց ։ Յետուստ տանս անկանի առ կողմն Կօնէնիսպըրկէյիայ (արքունի պալատին) և գեղեցիկ այգի մի գոյնզգոյն ծաղկանց ։

՚Ի Սոֆիգվէկ են և այլ երկու փողոցք ընդ հիւսիս, մին կոչի Գանգ պչնագան, և միւսն Գասարբարու. երկոքին ևս բազմաշէն յորս բնակին Ռուսոցիք, Մոլդաւացիք և Չինէացիք ։

Նոյնպէս և ՚ի Նորդվէկ են երկու փողոցք

առ հարաւ՝ որք ձգին մինչև 'ի դաշտն արքու-նի · մինն կոչի Գրանդ սիերրի · յոր բնակին Եւ-րոպացիք · և միւսն զանգ Գրանբեր՝ որ է առաջ Նօրդվէկայ և մօտ երից Ճանապարհաց առ դաշտն արքունի ։

Ճարտարապէտն ամրոցն Պրինս Ֆրեդրիկ՝ կա-ռուցեալ է յայնկոյս արևելեան եզեր գետոյն Նօրդվէկայ 'ի կողմն հարաւոյ, որոյ հիմնար-կութիւնն եղև 'ի 1836 և աւարտեցաւ 'ի 1844 ։

Յարտաքուստ սորա ոչինչ տեսանին եթէ ոչ երկու շրջապատ պարսպաց թումբք անառիկք · որք են իբրև ներքին և արտաքին պարիսպք ամ-րոցին · յորոց ներքինն երկպատիկ բարձր է քան զարտաքինն ։

Այնք են և հաստատ գլուխք պարսպացն՝ որք երեւին իբրև զուարճալի մարգագետինս յար-մար վասն ճեմելոյ · զոր և արտաքին պարիսպն հովանաւորէ կանաչազարդ ծառովք ։

Ներքին պարիսպն պատեալ է լայն խրամօք · և արտաքին պարիսպն յառաջոյ ունի զմի խը-րամ · և յայլ երից կողմանց զգետն Մէլզբէր-գայ՝ որ յարևելեան անկիւն ամրոցին բաժանի յերկուս առաջս ։ Մին պատէ զհարաւ և զա-րևմուտ կողմն պարսպին · մտանէ 'ի Նորդվէկ · խաղայ 'ի Կրոնկոտ · և թափի 'ի խորշն Բա-կարայ · Իսկ մին ևս պատէ զարևելեան կողմն պարսպին և անցեալ ընդ Մէլզբէրգ՝ մտանէ

'ի Պօնտոնգորի · և անտի 'ի Ֆակատորա · ուր և կրկին միացեալ ընդ մասին իւրոյ՝ խաղայ առ կամպօնգ Մուքա · և անտի 'ի ծով · Ներքին պարիսպն է խիտ ամրոյն · որ 'ի մէջի իւրում ունի շրջապատ զմբէթին և զներքին ընդարձակ սենեակս · բոլորն քարուկիր և կրով ամրապէս կառուցեալ · Ի սոյն սենեակս պահին ամենայնսակ զէնք · և են բնակարանք զօրաց · պատուհանք թնդանօթից և ծակք հրացանից · որովք տեսանի յառաջատ նոցա բովանդակ դաշտն արքունի · և ամենայն տունք 'ի շրջապատի նորա · Իսկ արտաքին պարիսպն ունի 'ի մէջի իւրում զկամարայարկ զաղանածածուկ տեղիս · յորս ոչ ումեք թոյլ տան մտանել · և 'ի մուտ սորա արարեալ է անցս 'ի ներքին պարսպէն այսր ընդմէջ խրամիցն՝ որ 'ի վերուստ ծածկի ջրով ·

'Ի վերայ ներքին պարսպի կառուցեալ է և բուրգն դիտանոց մի · յորմէ հայի առ հիւսւոր տեղիս · յոր և եդեալ է զանգահար ժամացոյց մի՝ որ 'ի չորեց կողմանց ցուցանէ զժամս աւուր · Իսկ 'ի մէջին տեղի ամրոցիս է խողովակաւոր ջրհոր մի արուեստակեալ · յորմէ զցայգ և զցերեկ բղխէ ինքնին քաղցր ջուր · որ 'ի 24 ժամս կարէ լնուլ զքառասուն հազար սրուակս ·

Սէնէչ կոչին քաղաքիս է այնպէս գեղեցիկ զուարճալի և բարեօք՝ որպէս Կօնէնխոս Պլէյն 'ի դաշտին արքունի · որ անկանի 'ի յետուստ

՚Նորվեկայ ։ Պուշտա այս է քառակուսի եւ շրջագայութիւն նորա լինի երկու և կէս մղոն ։ Յիւրաքանչիւր կողմանց է լայն և ընդարձակ Ճանապարհ ․ և 'ի շրջապատս նորա են երեւելի այգեստանք կամ բնակարանք Եւրոպացւոց , ընդ որոց են և երկու տունք Հայոց ․ յորոց միոյն (տուն Հանգուցեալ Աղայ Յակոբայ Յարութիւնեան՝) քան զամէնն երևի բարեձև և գեղեցկաշէն ։ 'Ի յարևելեան կողմանէ գմբեթաձև եկեղեցին Հոլանդացւոց՝ կոչեցեալ Վիլլէմ Կերկ՝ որ կառուցաւ 'ի 1834 ։

Միջավայր դաշտին է հարթ և հաւասար , երբեմն զինուոց զինու խաղի միշտ կանաչ և դալար սիզօք պատեալ ։ 'Ի սմա երբեմն 'ի հանդէս հանէին զուէրունեան և զքաղաքացի զօրս ։ 'Ի սմա է և կրկէս ձիընթացից , զոր կատարեն յամին երկիցս հանդերձ զանազան խաղարկութեամբ 'ի զբօսանս հասարակութեան ։ Կառուցեալ է աստ 'ի մերձաւորութենէ կրկէսին և գետակոց մի , յոր զնին առ արտաքոյ ձիընթացիցն կատարեն 'ի հետեւեալ գիշերին զենիջ այս պարուց և ընթրեաց՝ յոր մտանեն միաբանեալքն միայն հանդերձ ընտանեօք իւրեանց ․ յորոց բազումք են Անգղիացիք ։ Տուրջ զդաշտաւս են և ներքին Ճանապարհք վասն հեռաւորաց ․ յորոց երկոսին կողմանս անկեալ են ծառք ամբողջ 'ի հովանաւորութիւն անցորդաց ․ բայց դեռ չէին 'ի գործ ․ մի-

պյն գեղեցիկ և մանմկացուցանեն շարակցութիւնք բազմաստ ծառոց զանտառութիւն դաշտիս ։

Բայց յերից կողմանց փոքրաց 'ի մտանել և յելանել 'ի սոյն դաշտ՝ են և չորս ճանապարհք 'ի չորս անկիւնս նորա ․ յորոց երկոքին են երևելիք ։ Մին 'ի քունջ արևմտեան հարաւոյ՝ որ հանէ առ Պարապատան՝ որ է մին 'ի յերևելի կողմանց քաղաքիս ․ յորում են զանազան փողոցք և կոլուածք և բնակարանք զանազան ազգաց ։ Սա է և մատուռն Անգղիացւոց՝ որ առ 'ի չգոյէ քահանայի՝ այժմ փակեալ է ։ Իսկ միւսն է 'ի քունջ արևմտեան հարաւոյ՝ որ կոչի Գրանդ սկատ՝ և ձգի մինչև ցճանապարհն Տանաբանդայ ։ Սա են եկեղեցին և երկու տունք Հայոց ․ և այլ բնակարանք Եւրոպացւոց ․ յորոց բազումք են Անգղիացւոց ։ Անցեալ ընդ դըռնաւոր կամուրջ Մէլդֆրիդայ՝ են երկու լայն և ընդարձակ ճանապարհք ։ Մին առ հարաւ՝ որ հանէ 'ի Մատրուպլէնս ․ միւսն առ հիւսիս՝ մինչև ցկամուրջն Գուռնունգ սարւոյ ։ 'Ի սմա են երևելի բնակարանք Եւրոպացւոց ․ թատրոնն Էթամլիոյ և մեծ դպրոցն ուէրուլթեան ։ Սաոի մտանէ նաև 'ի Փատար Բազար ․ և է ճանապարհ մի առ փողոցն Մատրուպլէյն կոչեցեալ ։ Յայս կողմն Փատարբազարուայ՝ են կրպակաւորք չինէացւոց , և վաճառատեղի ամենայն երկուշաբաթի աւուրց ։ Իջեալ ընդ կամուրջն

Գունունգ Մ՚արուոյ՝ յահեակ ընթանոյ Մ՚անգաբար և Ջ՚ակատրա, յորս են քանի մի տունք Եւրոպացւոց. դաշտայրայք. մարգագետինք, այգիք տնկոց և մասն հին գերեզմանատան չինէացւոց. Իսկ յաջ ընթանոյ մինչև ցմեծ կամուրջն յաւարտ Վ՚էլթէվրէդայ՝ իբրև մղոն մի, յորս մեն երևելի տունք և պանդոկ մի Եւրոպացւոց՝ որ կոչի Հօտէլ Վ՚իլլեէմդը Տմէդը. տունք և կրպակք չինէացւոց և տօնավաճառատեղի ամենայն կիւրակէ աւուր.

Վ՚աթերլուպլէնն է գեղեցիկ դաշտ մի քառակուսի. շրջագայութի նորա իբրև եօթն ասպարէզ. ի չորից կողմանց նորա են լայն և ընդարձակ ճանապարհք. և շուրջ զդաշտաւն անկեալ մաշար ծառք կանաչագեղ.

'Ի մէջ դաշտին կանգնի սիւն մի բարձր իբրև 50 ոտն և ստուար իբրև երկու գիրկ. եդեալ 'ի գլուխն արձան արծուոյ 'ի յիշատակ տօնի յաղթութեան Վ՚աթերլուայ.

Աստ է և կրթարան Տէրունեան զօրաց. և հանդիսարան աւուր ծննդեան վեհափառ Թ՚ագաւորին Ն՚եդըրլանդայ. նաև հրճուարան զբօսանաց հասարակութեան 'ի քաղցր եղանակ երաժշտութեան յամենայն կիւրակէի աւուր՝ սկսեալ 'ի հինգ ժամէ մինչև ցվեց և կէս ժամ երեկոյի.

Յարևելեան կողմն դաշտին կառուցեալ են Պ՚ալատ տէրունեան գործառնութեանց. Կ՚ան-

կորդիա (միաբանարան զօրականաց.) և նոր դատարանն բարձր ատենի։ Յանդիման Կոն-կորդիայ 'ի կողմն հարաւոյ՝ է զինարանն տէրու-թեան և հանդերձատուն զօրաց։ Իսկ 'ի միւս կողմն նորա են տունք զօրականաց, սպա-րապետին 'ի կողմն արեւմտեան, և եկեղեցին Հը-ռոմայեցւոց, ժողովարանն գաղտնադաւան աղան-դաւորաց (Փրեմասօն) որ ըստ նոցա՝ Եղբայ-րակցաց ասի տուն. և բանտն Եւրոպացւոց 'ի կողմն հիւսիսոյ։

Ըրէ՝ որպէս յիշեցաք 'ի մասն առաջին՝ այսր Պալատի հիմն եարկ Գ. Նորայ Դանդէլսն 'ի 1810, և աւարտեաց Ալ. միստրես Դըբիւսն 'ի 1828, որ է երեւելագոյն և մեծագոյն շինուածն 'ի Հնդիկս Հոլանդացւոց։ Երկայնութիւն նորա ձգի 'ի հիւսիսոյ ց'հարաւ իբրև 500 ոտն. և լայնութիւն նորա յարևմտից յարևելս՝ 90 ոտ։ Բարձրութիւն նորա է 50 ոտ, բաժանեալ յե-րիս առանձին շինուածս. մին 'ի միջի, և երկու-քըն յաջ և յահեակ։ Միջինն է երկպատիկ մեծ քան զմիւսն. երեքին ևս երեք տակ, յորս են զանազան սենեակք զանազան գործառնութեանց տէրութեան համատարած գործոց 'ի Հնդիկս Հո-լանդացւոց. որք են գանձատունն, հարկատունն, համարատունն, թափատունն, դիւան մատենից, և հաշուէգրութեան. վերատեսչարան, խորհր-դարան Հնդկաց, ատարան, և այլն՝ և այլն։ Ըստ

էր և առեալ բարձր դատաստանին, զոր ՚ի 1 Մա-
յիսի 1748 փոխադրեցին ՚ի վեր անդր յիշեալ
՚նորոգ կառուցեալ Դատարանն՝ առ երինմին.

Երկու ձանապարհք են ՚ի Մ_ատրլու դաշտէն առ հարաւ. Մին ՚ի կուսէ արևմտից՝ որ հանէ ՚ի բանակ զօրաց և ՚ի հիւանդանոց տէրուԹեան. Հիւանդանոցն է մեծ և ընդարձակ տեղի՝ կառուցեալ յեզր գետոյն Մ_էրդ Փըրիդայ. յորում են զանազան բնակարանք հիւանդաց և բարձր և ստորին աստիճանի զօրականաց. ՚Ի միջին տեղին է և գեղեցիկ տուն մի վասն հիւանդ զօրապետաց և հասարակաց. Են և տունք բժշկաց, դեղանոց, խոհարան, շտեմարան, և այլն.

Գեղեցիկ է և զօրանիստ տեղին, որոյ շրջագայուԹիւնն է իբրև 9 կամ 10 ասպարէզ, շուրջ զորով կառուցեալ գեղեցկայարմար շարունակ բնակարանք յիւրաքանչիւր գունդ և կարգի զօրանց ուրոյն ուրոյն. են՝ որ մի տակ, և են՝ որ երկու տակ. բաւական վասն 10 հազար արանց, յորոց մեծի մասն միշտ դատարկ է.

Իսկ միւս ձանապարհն է ՚ի կուսէ արևելեան՝ որ ընԹանայ մինչև ցմեծ կամուրջն յաւարտ Մ_էրդ Փըրիդայ, որ է իբրև մղոն մի. զորոյ զկէս արևմտեան կողմն պատէ բնակարանն զօրաց. և կէս արևելեան կողման է զինարանն և հանդերձատուն զօրաց. և ՚ի մնացեալ կէսն են տունք եւրոպացւոց, կրպակք և գործատունք չինէա-

ցւոց ։ Իջեալ ընդ կամուրջն մեծ՝ ցաւ արտ Սկեղֆերիդայ ։ ձգի լայն և ընդարձակ ճանապարհ մի՝ մինչև յՍ՛Նաւր Կօմնէլիս, որ է երկք մղոն ։ և անտի առ զանազան կալուածս և առ երկրամէջսն ՚ի Պ՛ավա ։ Կարի զուարճալի է այս ճանապարհ ։ յորում են բազում գեղեցկաշէն ապարանք ։ դաշտօրայք ։ մարգագետինք ։ այգիք անկոց ։ և զործառոնն չայի ։

՚Ի Ս՛Նաւր Կօմնէլիս է և փոքրիկ գղեակ մի յեզր գետոյն ։ բազում կրպակք և բնակարանք Զինուորաց ։ և վաճառատեղի ամենայն հինգշաբաթի աւուրց ։ և փոքր հեռի աստի ՚ի բացատեղի է և վառօդարանն ակրունեան ։

Եւ յետ նկարագրելոյ զարեւելեան կողմն քաղաքիս՝ դարձցուք դէպ յարեւմտեան կողմն՝ որ թէպէտ յայժ սորին է. քան զայս չենուածոյք ։ բայց արժանի որո թեամբ մեծ է և երեւելի ։ զի զրեթէ բովանդակ հարստութիւն քաղաքիս վաճառք և բերք ՚ի նմա բովանդակին ։

Յարմէ սկիզբն առարեալ ՚ի փականէ ծովակերոյն՝ նախ անցանել պարտ է ընդ կամուրջ մի՝ վերնափակ զրամբ և առաւ մնանել ՚ի քաղաքն ։

՚Ի մէջ քաղաքին յաջոյ են ակրանեան ամբարանոցքն այն ։ և ՚ի ձախմէ վարձարան բեռնակիր նաւակաց և զինուորան նաւուց՝ որ կառուցեալ է ծախիւք վաճառականաց ։ ՚Ի յետոյ սորա է իջեան նաւահանգստին ։ ուր են

տէրունեան պաշտօնատարք ՚ի վերակացութիւն ելից և մտից ամենայն նաւուց ։ Ապա անցեալ տարի՝ մաքսատունն և շտեմարանք նորին. յորս լի են վաճառք զանազան աշխարհաց . զկնի սորա է գետն մեծ՝ որ անցանէ ընդ մէջ քաղաքիս. որոյ յայսկոյս և յայնկոյս են ընդարձակ ճանապարհք . և յերկուց կողմանց մեծամեծ տունք վաճառականաց , ընդ որոց է և տուն ընկերութեան Հոլանդացւոց , և աճուրդարան ընկերութեան ։ Բազմութիւն բեռնակիր նաւակաց , որք ընդ երկայնութիւն եզերաց գետոյն կացեալ թափեն կամ՝ առնուն զբեռինս զօրն ողջոյն . բազմութիւն կառաւորք և ձիաւորք՝ որք յայս և յայնկոյս յախուռն ընթանան ՚ի գնել և ՚ի վաճառել . և հազիւ բաւեն վարձկանք՝ որք կշռեն կամ կրեն զբեռինս՝ կարի նշանաւոր կացուցանեն զտեղին ։

Եւ աստէն անցեալ մտանես ՚ի թաղն Զինէացւոց , ուր նախ է Պինատկէյլ երեւելի վաճառատեղին ամենայն իրաց , և բազմախուռն բնակարանք կրպակաւորաց և արհեստաւորաց ։

Աստէն երեք ճանապարհք են առ այլ և այլ վայրս. մին յարեւելից յարեւմուտս ՚ի Հիւանդանոց Զինէացւոց . ՚ի թաղն Արաբացւոց և ՚ի պանդոկաչէն և անցէն անդր ։ Իսկ միւս երկուքն ՚ի կուսէ արեւելից և ՚ի կուսէ արեւմտից առ հարաւ ։ ՚Ի կուսէն արեւելից ընթանայ առ մեծ

գետն Չինէացւոց · ի Տօկօտնիկա · ի տուն Չինէացւոց գլխաւորին , 'ի Կլէնտէն և յայլ փողոցս ։

'Ի Կլէնտէն և ի Տօկօտնիկա են և երկու կըռատունք ։ 'Ի կուսէ արևմտից երթայ 'ի Քըլակէ · 'ի Տօնկայիօ · ի Կօնսի՝ որ է տեղի քուէտխապըցուն Չինէացւոց · յորում՝ յամենայն երկրէ ժողովեալ բազմութն փորձեն զբաղըս խաղեանց ։ Նստ է և Մ-ոյեանգ կամ՝ Թատրոն Չինէացւոց , որոյ վարձողն՝ դումարէ զխաղացողս 'ի սեղան քուէից խորոյ ։ Նստի մնանէ 'ի փասար Գ-լոբ , 'ի զանազան փողոցս և 'ի Յանքէ Ճանապարհն Խանթամայ , յորոյ զրեթէ մինչև ցերեք մղոն պատին Չինէացիք ։ Նյս ամենայն տեղիք զորս նշանակեցաք ի թաղսն Չինէացւոց՝ էին երևելիքն միայն . յորս են անթիւ խանութք և կրպակք վաճառականաց և արուեստաւորաց և մեծ․ մեծ բնակարանք հարստաց և երևելեաց ։ Կան և բազմաթիւ գերմակ և անուշան փողոցք , յորս բնակեն զանազան անձինք ի զանազան գաւուց ։

## ՍԱՀՄԱՆ ԲԹԱՎԻՈՅ

ԶԲԹԱՎԻԱ ի հիւսիսոյ սահմանէ ծովն Ջավայ , յարևելից՝ Կրաւանդ , ի հարաւոյ՝ Բօիտնզօրգ , և յարևմտից՝ Խանթամ , որ է իբրև 70 քառակուսի մղոն ։

### ԲԱԺԱՆՈՒՄՆ

ԲԱԹԱՎԻԱ բաժանի 'ի քաղաքս . 'ի շրջակայս իւր եւ յերկրամէջս . Քաղաքն եւ շրջակայ վայրք իւր բաժանեալ են յեօթն վիճակս եւ 'ի քսան եւ չորս կողմանս : Երկրամէջն բաժանեալ է յարեւմտեան կողմն 'ի Տանգարանգ . յարեւելեան կողմն 'ի Բէկասի . 'ի հարաւային կողմն 'ի Մէսթր Գօռնէլիս : 'Ի հարաւային արեւելեան կողմն 'ի Պատինազօրգ . եւ 'ի հիւսիսային արեւմտեան կողմն՝ 'ի Զուբանբուրգին . յորս են 8672 քարաշէն տունք եւ 45000 բամբու աշէնք . եւ բնակիչք նորա ըստ ամենայնի՝ են 302.225 ոգիք . յորոց 5761 են Քրիստոնեայք . 262950 Մալայացիք . 33505 Չինեացիք . 1430 գերիք 'ի զանազան ազգաց . 654 Արաբացիք եւ Բանկալցիք . եւ 26 Հայք :

### ՕԴ

'Ի ՀՆՈՒՄՆ՝ մինչ ամենայն ազգ Եւրոպացւոց բնակէին 'ի քաղաքին . որ է մերձ առ եզր ծովուն . վասն բազմախուռն բնակութեան , որով հողմն ոչ կարէր շնչել ազատ . եւ վասն անբու գետառուաց եւ մերձակայ ճահճային տեղեացն՝ օդն էր խոնաւ եւ շոգխախառն . վասն որոյ եւ յոյժ անառողջ . այլ այժմ մեծ մասն բնակարանաց քաղաքին փոխեցեալ են , եւ զբազմագետառուս եւ զճահճային տեղիսն լցեալ

*ուր և հողմն ծովու և ցամաքի հնչէ ազատ․ վասն որոյ կարի զանազանեալ է ։*

*Իսկ արտաքոյ քաղաքին վասն բարձրութեան դիրինն , հեռաւորութեան ծովեզերն և բարեյարմար լայն և ընդարձակ շինուածոցն ամենայն ուրեք՝ օդն բարեխառն է և առողջարար․ մանաւանդ ի դաշտին արքունի , ի Վելտֆրիդ 'ի Ճանապարհին Մէստր Կօռնէլիսայ , 'ի Պաբաղատան , 'ի Տանաբանգ , 'ի Ջատի , և յայլ ներքնագոյն վայրս ։ Ի կողմն հարաւոյ որպէս ասացաք 'ի մասն առաջին , յամենայն ուրեք 'ի Ջաւա․ որչափ հեռանայ մարդ 'ի ծովէն՝ այնչափ և գտանէ զգետինն բարձր․ և օդն բարեխառն և առողջարար ։*

ՋՈՒՐՔ

*ԱՄԵՆԱՅՆ գետք՝ որք են 'ի սահմանամէջին Բաթավիոյ՝ գան 'ի Բօյթնզօրգայ , որոց երևելիքն են Չիդանի կամ Տանգարանգ՝ որ յՕնտօնգ Ջաւայ թափի 'ի ծով․ Չիլիօնգ կամ մեծ գետ՝ որ սահմանս զգետն Անքէ՝ զեկեալն 'ի Տանգարանգայ , և զգետն Տանաբանգայ , և ընթացեալ 'ի մէջ քաղաքին Բաթավիոյ՝ խառնի առ ծովն Չիլուամար՝ որ է Վելտֆրիդայ գետն , Սա յաւարտ Կամպօնգմուքոյ սահմանս և զգետն Անչօլայ , որ գայ 'ի Չէնչինայ , և մերձ 'ի Տանջօնգ Պրիօկ թափի 'ի ծով․ Այս գետք յանձ-*

րեւոյին եղանակի կարի յորդանան · որք և երբեմն զեզերսն արտաքս և լնուն զբազում տեղիս ջրով · յատկապէս ընդ մէջ քաղաքին · ուր բազում տունք ի ներքս առ և յարտաքս առ պատին ջրովք զքանի մի աւուրս · և յայսմանէ յառաջ գան բազմիցս ջերմախտութիւն · յօդացաւութիւն և այլ հիւանդութիւնք ·

## ԲԵՐՔ

ՍՄԵՆԱՅՆ ազնիւ պտուղք և բանջարեղէնք · զոր յիշեցաք յառաջին մասին՝ առատութեամբ գտանին ՚ի Բթավիա · բայց խակք և լեղակ կարի սակաւ · Առատ են և կով · գոմէշ · ձի · խոզ և այլ անասունք · վայրենիք գրեթէ ոչ գոն · այլ ընտանի հաւ · բադ · սագ · աղաւնի և այլ թռչունք , և զանազան ձկունք ծովու և գետոյ յոյժ առատ են · բայց թանկագին · գտանին և պէսպէս սողունք և ժժմունք վնասակարք ·

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՄԵՆԱՅՆ վիճակս և ՚ի կողմանս քաղաքին Բթավիոյ կարգեալ են գլխաւորք ՚ի Մալայեցւոց · որք կոչին կոմընդաւորք · ադջուդանտք բէկ և նուրայք · ընդ որոց են և յիւրաքանչիւր գեղի և թաղի գիւղապետ և թաղապետ · և ՚ի թաղսն Չինէացւոց պետք և փերակացուք ՚ի նոյն ազգէ · Եւ այս ամենեքեան են ընդ հրա-

մնտաարութեամբ կառավարչին Բթավիոյ . որ է Ռէզիդէնտն . և ամենեքեան պարտական են աչալրջութեամբ հսկել յապահովութիւն հասարակութեան : Որ ամենայն անկարգութի և խռովութիւն ժողովրդոցն են ընդ սանձողութեամբ սոցա . որք կալանաւորեն զապստամբիչսն , զխռովարարսն . զգողս և զայլ օրինազանցս , և ածեն առաջի Ռէզիդէնտին : Յորոց զթեթև յանցաւորսն ինքն դատէ և պատժէ . իսկ զքրէականսն թողու ատենին երկրականաց . յորում ինքնէ դատաւորն . իւր սեկրէտարին է ատենադպիրն , և գլխաւորք Մալայացւոց և Չինէացւոց և երկու այլ Եւրոպացիք անդամք ատենի իւրոյ :

Նաև յիւրաքանչիւր նահանգի կարգեալ է Եւրոպացի գլխաւոր մի իբր յօգնական Ռէզիդէնտին , և յիւրաքանչիւր տեղւոջ գոյ և ատեան մի երկրականաց , և ամենայն կառավարութիւն այնց կողմանց թողեալ է 'ի հոգս գլխաւորացն՝ որք առանց աշխատ ատենիւրոյ զՌէզիդէնտն Բթավիոյ՝ ինքեանք դատեն և պատժեն զյանցաւորսն . բայց և ընդ վճռաւք զը-տեալն կարէ բողոքել յատեան ռէզիդէնտին :

Այսպէս են և կառավարութիւնք յամենայն գաւառս 'ի Ջավա և արտաքոյ :

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՎՏԱՆԳԱՒՈՐ ՊԱՏԱՀԱՐԱՑ

ՔԱՋԱԽՈՀ կառավարութիւն քաղաքիս կարի զգուշութեամբ հոգ տանի վրէժ ունել հրկիզութեան, մարդասպանութեան և այլ խառնակութեանց․ զի յամենայն գլխաւոր թաղս եւ 'ի կողմանս քաղաքին ուրեք 'ի քառուղս, և ուրեք 'ի կէս մղոն հեռաւորութեամբ յիրերաց՝ հաստատեալ է զպահս զգուշանողաց․ ուր յամենայն գիշերի սկսեալ յութն ժամէ երեկոյեան մինչև ցհինգ ժամ առաւօտուն հսկեն բնակչաց։ Որոց պաշտօն է՝ նախ շրջել փողոցէ 'ի փողոցս 'ի զգուշութի աւազակաց․ երկրորդ՝ կոչնաւորել զանցորդս յերկրպակինաց և Ձինէացւոց՝ որք ոչ տանեն ընդ իւրեանս զջահ, որոց պատիժ է կամ բանդ ութն աւուրց կամ տուգանք ութն գիլդերաց․ և երրորդ հսկել առ վտանգ հրկիզութեան, մարդասպանութեան, և այլ խառնակութեանց։ Իւրաքանչիւր պահապանի կախեալ կայ տախտակ մի զոր բաց 'ի կիր առնլոյ 'ի գիշերի վասն ցուցանելոյ զպահս ժամուց․ նաև 'ի պատահել վտանգի ինչ եթէ 'ի գիշերի և եթէ 'ի տունջեան՝ իսկոյն հնչեցուցանեն զայն․ և այն ուրոյն եղանակաւ, զի 'ի հրկիզութեան՝ հարկանեն փոյթ ընդ փոյթ և երկայն․ իսկ 'ի մարդասպանութեան և յայլսն երեք երեք ընդհատմամբ․ և ընդ հարկանել միոյն

հետևելին միւ ոք՝, որով ՚ի քանի մի բոպէս սփռելուցին ց յոյժ հեռաւոր տեղիս ։ Նոքա բազմութիւնք ՚ի կարգադրեալ անձանց յամենայն կողմանց փութան առ տեղի վտանգին ․ որք ՚ի հըրկիզութեան՝ տանին ընդ իւրեանս զշիջանողական գործիս, զորս ՚ի պատրաստի ունին ՚ի զանազան տեղիս ․ և յայլ դէպս պատահարաց՝ տանին զզէն, զասր ․ զբիր և այլն ։ Ընդ սոցա հետևելին և ժողովրդական զօրք և զօրապետք ՚ի զգուշութիւն աւարառաց ։ Ընդ՝ Ներկայանան և Ասիստէնտն ․ Նախագահ կամ օժանդակ նորա ․ Եկեղեցականին ․ Եւ և յերկրականաց և ՚ի չենեցող ոգ գլխաւորք մինչև անցցէ վտանգն ։

## ԼԵԶՈՒ

Երեք են լեզուք զորս ՚ի կիր առնուն ՚ի Բըթավիոյ ․ Եւրոպացւոյն ․ Մալայերէն և Չինէացւոյն ։

Եւրոպացւոց լեզուքն՝ են Հոլանտեցերէն, Գաղղիերէն ․ Անգղիերէն և Գերմաներէն ․ որք խօսին միայն ՚ի մէջ Եւրոպացւոց ․ յորոց սակաւք են՝ որ ոչ գիտիցեն զմի կամ զմիւս լեզուդրացւոյն ։ Իսկ Մալայացւոց լեզուէ՝ զոր առհասարակ ամենայն ազգ և բնակիչք խօսին, եւ զոգյես գործածութիւն ամենեցուն այսու լեզուաւ կատարի ։

Բայց զՉինէացին միայն վարեն ազգ նոցա,

զի չիք ոք յօտար ազգաց, որ հաւանեալ կարէ գչամ՝, չի, չօ լեզուանոյա ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀՈԼԱՆԴԱՑՒՈՑ ԼԵԶՈՒԻ

ԹԷՊԷՏ Հոլանդացւոց լեզուն չէ այնպէս տարածեալ և օտարաց հեշտըմբռնելի՝ որպէս Գաղղիացւոց և Անգղիացւոյն, զոր բաց ի Հոլլէս Հոլանդացւոց և ՚ի Նէդէրլանդ՝ այլ ուրեք չըկարծեմ թէ ՚ի կիր առնուն՝ այն ևս գրեթէ յիւրեանս միայն, բայց ճոխութեամբ և արուեստիւք չէ պակաս քան զմիւսն. զորմէ համառօտիւ իմն տալ զծանօթութիւն արժան համարիմ ։

Ուսանիլ ուրուք զայս լեզու՝ պարտ է նախ կրթել զինքն ՚ի հնչմունս ձայնաւորացն, որք են հինգ սուղ և հինգ երկայն. եօթն երկաձայն և վեց եռաձայն ։

Սուղն է՝ յորում հնչումն ձայնի ունի զմի միայն ձայնաւոր տառ. և երկայնն է՝ յորում հնչումն ձայնի ունի զերկու միաձայն ձայնաւոր տառս. իսկ երկձայնն է՝ որ յերկուց այլևայլ ձայնաւոր տառից բաղկացեալ է ՚ի մի ձայն. և եռաձայնն է՝ որ յերից այլևայլ ձայնաւոր տառից բաղկացեալ է ՚ի մի երկայն ձայն. զորոց օրինակ տալ ՚ի մերոց ձայնաւորաց չէ հնար. այլ ուսմամբ պարտ է իմանալ. և որ ոչ քաջապէս ուսանիցի զհնչմունս զայսոսիկ ձայնաւորաց՝ չկարէ ուղիղ արտասանել զբառսն. զի բազում

բառք գոլով նմանաձայն՝ միայն որոշին ՚ի սուղ և յերկայն ձայնից։ Եթէ ոչ գիտասցէ ոք զոր-զութիւն և զերկայնութիւն բառս աստիճանի ձայնին, զայլ ինչ նշանակեսցէ քան զոր ասելն կամիցի։ Այլև անհամար բառք ունելով մեղմ՛ սուղ, և զմեղմ՛ երկայն, սուր սուղ և սուր երկայն ձայնս․ թէ ոչ գիտասցէ ոք զաստիճան ձայնիցն՝ ան-հասկանալի առնէ զբանն․ այսպէս խմն և փան երկաձայն և եռաձայն ձայնաւորաց․ որք ու-նին զկարգ դժուարահնչիւն ձայնս։

Բառք Հոլանդացւոց աւելի են քան վաթ-սուն կամ եօթանասուն հազար․ յորոց առաւե-լագոյնքն են բարդ, յարաբարդ, բաղադրեալ և ածանցական։ Ունին և զբազում՝ օտար բառս ընտելս և անընտելս, զորս ՚ի կիր առնուն յօրի-նական բառս ՚ի կարճել զբանն․ ընդ որոց են և անհամար բառանշան տառք։

Բարդ կամ յարաբարդ բառք նոցա լինին զօդ-մամբ երկուց կամ երից բառից ընդ միմեանս․ որք են գոյական ընդ գոյականաց․ ածականք ընդ ածականաց և ընդ թուական անուանց․ դեր-անուանք ընդ գոյականաց․ բայք ընդ գոյակա-նաց և ընդ ածականաց․ մակբայք ընդ մակբա-յից ընդ գոյականաց և ընդ ածականաց․ նա-խադրութիւնք ընդ գոյականաց և ընդ ածա-կանաց․ յորոց ոմանք միայն զօդին ՚ի ձեռն տառից, իսկ մնացեալքն բառ ընդ բառի յարե-

րով ։ Եզական անուանք լինին յոգնական ի ձեւոն ս՝ տառի կամ ըն՝ մասնկան ։ Նոյն սակաւք ստանան էս կամ էրն ։ Բազում անուանք ՚ի յոգնականն փոխեն զձայնաւոր տառն , որևն զերկայն ձայնաւորն , կրկնեն զվերջին բաղաձայն տառն , և գրեթէ առ հասարակ զվերջատառսն փոխեն ՚ի դ ։

Իւրաքանչիւր գոյական անուն յատկացուցեալ է ՚ի սեռ իւր՝ լինել արական , իգական կամ չէզոքական ։ որ խնդրի կամ զօրութեամբ բառիցն ։ կամ վերջաւորութեանց մասնկացն ։ Ուստի և յօդք , ածականք , ցուցական և ստացական դերանուանք՝ որք միշտ վարին ընդ գոյականաց՝ պարտին համաձայնիլ նոցա ըստ սեռին , ըստ թուոյն և ըստ հոլովմանն ։ Անտարոյ ՚ի գիտել զՀոլանդերէն մեծ զգուշութեամբ պիտի չօգտել ՚ի սեռն գոյականաց , այս թէ ոչ՝ սղալ հեռացուցանէ և զայլ ամենայն վերաբերեալս նորա ։

Զօրութեամբ բառիցն խնդրին սեռք գոյականացն այսպէս , զի որք ունին զնշանակութիւն մեծութեան , կարողութեան , աշխատութեան և ահարկութեան՝ են արականք ։ և որք ունին զնշանակութիւն նուազութեան , փափկութեան , պատուաբերութեան , գեղեցկութեան և այլն ։ են իգականք ։ Իսկ որք արտաքոյ են այսց երկուց յատկութեանց՝ են չէզոքականք ։

Չորս են հոլովք անուանց՝ ուղղական , սեռա-

կան․ տրական և հայցական․ իսկ մնացեալ հոլովքն նախդրիւ ձևանան․ բայց երեք են օրինակ հոլովմանց անուանց ըստ երից սեռից գոյականաց ։

Երեք են յօդք՝ անորոշ․ որոշեալ և չէզոքական․ որք և հոլովին ըստ անուանցն ։

Ածական անուանք ունին զսեռս, զթիւ եւ զհոլով՝ ըստ գոյականացն՝ ընդ որոց յարին ։

Վեց են դերանունք՝ էական․ անձնական․ ստացական․ հարցական․ ցուցական և յարաբերական ։

Էականաց և ստացականաց առաջին և երկրորդ դէմքն յայտնին ըստ ինքեանց․ այլ երրորդ դէմքն յածականան երիւք սեռիւք ։

Բայք են կանոնաւոր․ անկանոն և փոփոխական․ նաև բարդ կամ բաղադրեալ և անցողական ։

Բարդ կամ բաղադրեալ բայք են՝ որք ՚ի խոնարհելն ՚ի զանազան ժամանակս անջատին ՚ի բարդեալ կամ ՚ի բաղադրեալ բառէն․ և են որք միայն անանջատ ։

Ամենայն բայք ՚ի կատարեալ․ յանցեալ և յապառնի ժամանակսն լրանան օժանդակ բայիւք ։

Համաձայնութիւն մասանց բանի լինի նախ յօդից ընդ գոյական անուանց․ գոյականաց ընդ գոյականաց․ ածականաց ընդ գոյականաց․ Երկրորդ դերանուանց ընդ անուանց և ընդ բայից․

անուանց ընդ բայից և բայից ընդ անուանց եւ ընդ այլոց մասանց բանի ։

ԶԵՒ ՇԱՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՌԻՑ

'Ի ՀՈԼԱՆԴԱՑԻՍ այնպէս են ձև շարակցութեան բառից առ 'ի լինել բան կամ' ասութիւն ինչ․ բայց գլխաւորագոյնքն երեք են․ այսինքն՝ նախ՝ որ անունն հանդերձ վերաբերելովքն նախադասիցի բային․ և բայն հանդերձ խնդրովն և վերաբերելովք խնդրոյն՝ յետադասեսցի անուանն․ Երկրորդ՝ որ բայն անմիջաբար նախադասեսցի անուան․ և այլք՝ զկնի անուանն․ և երրորդ՝ որ 'ի մէջ անուան և բային անկանիցի այլ մասն բանի և բայն դիցի 'ի վերջ բոլորին ։

Գործածեալ կատարեալ բան մի է պարզ, բարդ և լայնեալ ։ Պարզն է՝ որ լոկ անուամբ, բայիւ և խնդրով կատարի բանն ։ Բարդն է՝ որ 'ի գանազան կատարեալ բանից առնի ամբողջ բան մի ։ Եւ լայնեալն է․ որ բազմապատկութեամբ սահմանաց, շրջաբանութեամբ, միջադրութեամբ և մեկնաբանութեամբ ընդլայնի բանն․ որ 'ի կիր առնի միայն 'ի գովեստ և 'ի պարսաւս և յայլ վսեմոճս ։

Ընդ այսոցիկ են և ուսուցմունք ընտրութեան և պատշաճապէս շարակարգութեան բառից․ որպէս զի բառքն իցեն ըստ բուն նշանակութեան վսեմ և սովորական, հարկաւոր և պիտանի․ և

այնք ըստ արուեստի քերականութեան ՚ի բուն տեղւոջն գետեղեալք՝ բայց հեշտալուր ․ քաղցրաձայն և գեղեցիկ յարմարութեամբ շարակարգեալք ․ զորս յուսանիլ մեծ օգնութիւն պիտոյ ․

ԿՐՕՆ

Երեք են և կրօնք ՚ի Բաթավիա՝ քրիստոնէականն , մահմետականն և հեթանոսաց ․

Եւրոպացիք և սերունդք նոցա՝ քրիստոնեայք են , որք խոստովանին զՅիսուս Քրիստոս գոլ ճշմարիտ Որդի Աստուծոյ և Փրկիչ աշխարհի ․ Գոն և պապականք ՚ի նոսա՝ որպէս և Պռոտէստանք , որոց են և առանձին եկեղեցիք , ուր յամենայն կիւրակէի և ՚ի սուրբ աւուրս՝ քարոզի բանն կենաց , և սաղմոսիւք և երգովք հոգևորօք օրհնի Տէրն տերանց ․ Գոյ և ՚ի հնոց անտի կառուցեալ եկեղեցի մի ՚ի քաղաքին՝ ուր բնիկ քրիստոնեայքն բնակին (Սանիք յորջորջեալք․) և աստ ՚ի լեզու մալայեցւոց կատարին պաշտօնք և քարոզ․ զի առ հասարակ հասկանայցեն ․

Իսկ հասարակ Մալայեցիք և Արաբացիք են մահմետականք ․ որք դաւանին զկեղծ մահմետին և կատարեն զծէս դենի իւրեանց առանց արգելման ․ Ունին և զքանի մի մզկիթս , յորս ամենայն ուրբաթու աւուր խմբեալ կատարեն զաղօթս և ընթեռնուն զգուրանն ՚ի լուր ժողովրդոց ․

Իսկ Չինէացիքն են հեթանոսքն՝ որք պաշ-

տեն զԴիոս չաստուածն հայրենեաց իւրեանց. կատարեն և զպէսպէս ձէս և սովորութիւնս հեթանոսականս. զորոց յիշատակեալ եմ՝ 'ի մասին առաջին։ Ունին և երկու մեհեանս 'ի Բաթավիա ուր պաշտեն չաստուածն և զմոխիր ցեղի իւրեանց։

Բայց թէ քրիստոնեայք, թէ մահմետականք և թէ հեթանոսք բնաւ ոչ գայթակղին զիրեարս. և անձնիւր պաշտէ զիւր կրօն առանց խռովելոյ զօտարին։

## ՄԻՋՈՑ ԱՊՐՍՏԻ

'Ի ՀՈԼԱՆԴԱՑԻՈՑ՝ բազումք են պաշտօնատարք և գրագիրք տէրութեան, և սակաւք՝ վաճառականք, նաւավարք և արհեստաւորք։ Այնպէս են և Գերմանացիք։ Անգղիացիք են վաճառականք, նաւավարք և գրագիրք։ Իսկ Գաղղիացիք՝ վաճառականք. գրագիրք և արհեստաւորք։ Հայք են վաճառականք։ Արաբացիք են վաճառականք՝ որպէս և նաւավարք։ Չինեացիք՝ վաճառականք. վարձաւորք զանազան մենավաճառութեանց. վարձկանք և արհեստաւորք։ Իսկ Մալայեցիք՝ երկրագործք, պտղավաճառք, ձկնորսք. վարձկանք. նաւաստիք և ծառայք. յորոց սակաւք են վաճառականք և արհեստաւորք։

Վարձ պաշտօնատարաց Տէրունեան հաստացանի ամսական, որպէս 'ի ներքոյ։

Գ·ԻՒՏ։

Կուսակալի վարձն է հանդերձ ծախուք սեղանոյ .. .. .. .. .... 12·500

Առաջին աստիճանի, գահակալեալն Խորհրդարանի Հնդկաց .. .. .. 3·000

Երկրորդ աստիճանի՝ որք են անդամք վերոյ յիշեալ խորհրդարանին, և ատենակալ կամ դատաւոր բարձր ատենի .. .... .. .. .. 2·400

Երրորդ աստիճանի՝ որք են կառավարիչք կամ վերատեսուչք Տէրութեան ընդհանուր գործոց և ոմանք փոխ-կուսակալք .... .... .. .. 1·500

Չորրորդ աստիճանի՝ որք են գաւառապետք կամ ռէզիդէնտք և վերատեսուչք զանազան գործոց .. .. 1·200

Հինգերորդ աստիճանի՝ որք են գըլխաւ որք զանազան մեծամեծ պաշտօնի, այսինքն գանձապետ, մաքսապետ, Ճարտարապետ և այլն .... 1·000

Վեցերորդ աստիճանի՝ որք են ատենադպիրք բարձր դատաստանի, դիւանապետ, փոխ-ռէզիդէնտք, տըպարանապետք և այլն .... .. 800

Եօթներորդ աստիճանի՝ որք են անդամք ստորին դատաստանաց, ատենադպիրք ռէզիդէնտաց, ամբա-

Գին։

բանտապետք, գլխաւորք թափա-
տանց և այլն .. .. .. .. 600

Հինգ են դասք տէրունեան գրագրաց · յորոց առաջնոյն հատուցանի 500· երկրորդին՝ 500, երրորդին՝ 220· չորրորդին՝ 150, և հինգերրորդին ՚ի 50 գիլդէ սկսեալ մինչ ց100 գիլդր ·

Այլ այսոքիկ ամենեքին պարտական են յութն ժամէ առաւօտուն մինչև ցերեկ ժամ՝ զկնի միջօրէին լինիլ առ ոտս պաշտօնի իւրեանց, և ամենայն աշալրջութեամբ և փութաջանութբ կատարել զյանձնարարեալ գործն, և որ ծոյլն կայ է կամ՝ արբեցող ՚ի բաց հալածի ·

Եկամուտ վաճառականաց, որպէս յամենայն աշխարհի՝ և այսր կախի զշահեկանութենէ տուր և առութեան իւրեանց · որ յար յեղյեղի · Օ՛ է՝ որ ՚ի սուղ ժամանակի ճոխութեամբ դարձ անու առ հայրենիս · և է այլ ոք՝ որ զարև և զանձրև կրէ ՚ի ցերեկի · և անքնութիւն և մտատանջութիւն ՚ի գիշերի · և ՚ի վերջոյ վարձ նորա է սնանկութիւն · Բայց և մարդասիրութիւն պարտատեարցն բազմիցս ազատ կացուցանէ զնա ՚ի պարտուցն՝ շատացեալ որչափի կարեցէ նա հատուցանել, եթէ ստուգութեամբ համար ցուցցէ ունելոյն · ապա թէ ոչ մատնեսցի ՚ի դատաստան, ուր ըստ նորոյ օրինացն՝ որ հաստատեցաւ ՚ի Մայիսի սկիզբն 1848, ճշդիւ յուզե-

լոց են յամենայն գործս նորա ․ և եթէ յան-
ցաւոր գտաւ՝ կրեսցէ զպատիժ ըստ յանցանացն ․
որոյ երկու են եղանակ ․ մին աննենգ և միւսն
նենգաւոր կամ խաբեբայական ․

## ԱՆՆԵՆԳՆ Է

Որ ԹԷ ծախեաց աւելի քան զհրամանս իւր ․
Որ թէ վնաս կամ կորուստ իւր միանգամայն ․
կամ մասն յառաջացաւ ՚ի դրաւադրութենէ , ՚ի
խաղուց և յայլ բաղդովի պատահմանց ․

Որ թէ գլուխ դրամոյ իւրոյ պակաս էր քան
զգումար տուրևառութեանն զոր վարէր հա-
րիւրին 50․ Որ թէ նախ քան զսնանկանալ իւր՝ ՚ի
մէջ վեց ամսոց զոր ինչ գնեաց ժամանակաւ ,
վաճառեաց զայն առ ձեռն պատրաստ դրամով և
պակաս գնով ․ Որ թէ տոմսակ պարտուցն , գիր
դրամափոխութեան , ընդ ունելութիւն հատուց-
ման և այլ սոյնանմանք՝ առաւելուցուն քան
զստացուածս իւր ․ Այնպիսւոյն պատիժ է
բանդարկութիւն , թեթևն՝ մի ամիս ․ և ծանրն՝
հինգ տարի ․

## ՆԵՆԳԱՒՈՐ ԿԱՄ ԽԱԲԵԲԱՅԱԿԱՆՆ Է՝

Որ ԵԹԷ խարդախութեամբ անցոյց ՚ի հաշիւ ,
յօրագիր կամ ՚ի համեմատութիւն հաշուի իւրոյ
զծախս կամ զվնաս ոչ եղեալս ․ Որ եթէ ծած-

կեաց ՚ի պարտատեարց իւրոց զդրամս կամ զդրամարժէս ինչ, զպարտիս այլոց առ ինքն, զվաճառս կամ զայլ ինչ շարժական ստացուած։ Որ եթէ առանց գնելոյ կամ վաճառելոյ, տալոյ կամ ստանալոյ զփոխարէնն՝ յայտնի կամ գաղտնի էառ կամ արար զգաշն պարտականութեան վասն երրորդին *։

Որ եթէ ստութեամբ եմոյծ ՚ի հաշիւ կամ յօրագիր իւր զվաճառումն շարժական և անշարժ իրաց, զփոխատուութիւն կամ զընծայս։ Որ եթէ գնեաց վասն իւր կամ վասն իւր կնոջ կամ վասն մանկանց շարժական կամ զանշարժ ստացուած ինչ այլոյ անուամբ։

Որ եթէ դրամափոխ եղև, կամ ետ զպատուէր հատուցման և զայլ ինչ նման սոյա, առանց ՚ի պատրաստի ունելոյ զփոխարէնն քարշեալ գումարին կամ զհամար պարտուց ընդ ընդունողին։

Որ եթէ ընդ իւրով իշխանութեամբ եղեալ զայլոյ ստացուած ինչ առանց կարողական գրոյ կամ պատուիրանի վաճառեսցէ. և զգինն նորա ծախիցէ ըստ հաճոյս իւր, և չկարիցէ յետ վըճարել։

Այնպէս և եթէ հաւատացեալ նմա զդրամ

---

* Այս վերջին զանցառութիւն օրինաց կարի հասարակ է և ՚ի մէջ պատուելի և աննենգ վաճառականաց, և դիտումն առ փոխադարձ օգնականութիւն։

կամ զբամբարժէս ինչ՝ ՚ի շահ անձին իւրոյ վարեացէ. և չկարիցէ յետ վճարել.

՚Ի վերջ ամենայնի՝ որ ՚ի պատրել զպարտատեարս՝ զանց առնու պահել զպատշաճ օրահաշիւ կամ օրագիր տուրևառութեան իւրոյ. կամ որ եմոյծ ՚ի նա զանուն զղութիւն կամ զպատրանս ինչ՝ մինչ դժուարանալ գիտել զստոյգ մնացուած հաշուի նորա. Իբր կամ որ աղաւաղեաց կամ կորոյս զմին կամ զբոլոր հաշիւ ելևմտից իւրոց. այնպիսին է քրէական յանցաւոր. և արկանի ՚ի բանդ պատժապարտաց. որոյ թեթևն է մի տարի, և ծանրն՝ տասն տարի. կամ աքսոր ՚ի Հնդկաց Հոլանդացւոց ՚ի բոլոր կեանս իւր. Իբր վճիռ դատապարտութեան նորա հրատարակի ՚ի լրագրին և դնի ՚ի տեղւոջն. որ դատապարտեցաւ. Այնանման յանցաւոր է, և զնոյն պատիժ կրէ՝ որ եղև համախոհ և գործակից նենգաւ որ սնանկացեալն, որ յօգուտ նորա և ՚ի վնաս պարտատեարցն կամակից եղև ՚ի զաղել ըզբոլոր կամ զմասն ընչից նորուն, որ եղև սուտ փոխատու. վաճառով կամ ընծայընկալ. ևայլն.

Սխալ կամ եկամուտ գրագրոց վաճառականաց մարթ է առաւել հաստատուն համարել քան տեարցն իւր. զի նոքա եթէ շահին և եթէ վնասին՝ սոքա անխախտ տանին զվարձ վաստակոց իւրեանց. յորոց զխաւարայն՝ այսինքն հաշուէակալայն հատուցանի 4 կամ 500 գիլտր.

և ստորայնոյն կամ՝ գրագրայն 'ի հարիւրէ ցե- րեք հարիւր .

Զինէացւոց վարձկանք են 'ի զանազան կար- գի . զի արկղապետաց վարձ յիսնէ մինչ ցհա- րիւր դիլդր մ՟ճարի . և Սրուսատաւորացն 'ի 20է մինչև 960.

Իսկ Մալայեցւոց վարձկանք և ծառայք հա- սուցանին յութն գիլդրէ սկսեալ մինչև ցերե- սուն գիլդր .

## ԲԱՐՔ . ՍՈՎՈՐՈՅԹՔ . ԵՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀՈԼԱՆԴԱՑԻՈՑ

ՀՈԼԱՆԴԱՑԻՔ՝ ընդհանրապէս առեալ՝ բա- րեբնոյթք են և խոնարհամիտ . չափաւոր 'ի ծա- խըս . բայց և մաքրասէր . հիւրընկալ . ընկերա- սէր և հայրենասէր . Ըստ խնայողութեան մասին ոմանք թէ և համարին զնոսա փողասէր . այլ ոչ զլանան . 'ի տուրս աղքատաց . որբոց և այ- րեաց . և յիրս ազգասիրականս են կարի առա- տաձեռնք . Ունին զբօսանս զանազան խաղուց . զթատրոն . զհնչոյս . զպարս . զերգ . զքնար և զայլ զուարճալի զբօսանս . յորս և պատրաստեն ծախել դրամս ըստ կարեաց .

Քաղաքավարութիւն և զգեստ նորոյ Հո- լանդացւոց են իբրև զգաղղիացւոց . որք են նո- րասէրք և յայժ զանազան 'ի հին Հոլանդացւոց.

զի այժմեան ձեր տանց, կահուց, կառաց և զար-դուց այնչափ տարբերք են 'ի հնոցն, որչափ նո-րահնար գիտութիւնք և արուեստք ։ Նմանա-պէս ծախք սոցա յոյժ առաւելեալ են քան զա-ռաջնոցն, զորոց 'ի վերջ գրքոյս ծանուցանե-լոց եմք ։

Սովորութիւն է սոցա յառաւօտուն յետ յառնելոյն 'ի քնոյ՝ ըմպել զխահվէ կամ զթէյ և կամ չօքօլատ, ընդ նմին և ուտեն զպատառ մի հացի ընդ այլ իւրոց ։ Ապա յութն ժամուն զգեստաւորեալ ելանեն 'ի վերայ պաշտօնի ի-րեանց ։ ուր 'ի մետասան ժամուն ուտեն զթե-թև նախաճաշիկս, և յերեք ժամուն զկնի մի-ջօրէին դառնան 'ի տուն ։ Արդ ոմանք իսկոյն, և ոմանք 'ի հինգ կամ վեց ժամու երեկոյեան ուտեն զճաշ իւրեանց ։ չափաւոր կերակրովք, հացիւ և սակաւ ինչ պտղովք ։ Ըմպելիք սոցա հասարակապէս է կարմիր գինի, և զարեջուր, զորս ըմպեն 'ի միջօրէի, 'ի ճաշուն կամ յերե-կոյեան ։ Տիկնայքն առաւելապէս ըմպեն զօշա-րակ կամ զհանքաջուր ընդ գինւոյ Գերմանիոյ ։ զՄադերեան կամ զայլ զօրաւոր գինի ոչ մշտա-պէս 'ի կիր առնուն ։ և զբրանդի կամ զայլ ցքի ինչ հազիւ երբէք ։ իսկ զայլ ամենայն ազնիւ ըմպե-լիս միայն յաւուրս հանդիսից հանեն 'ի խնջոյս ։

Զբօսանք նոցա յետ ճաշելոյն է՝ զի ոմանք կառօք, ոմանք ոտիւք ելանեն շրջել ։ իսկ ոմանք

՚ի Թատրոն երթան, ՚ի միաբանարանս. կամ յայց առ բարեկամս մինչև ՚ի տասն կամ մետասան ժամ գիշերոյ. որք՝ ժամ ննջելոյ ։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԱՀ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ։

ԱՅՍ ամուսնութիւն հեշտ ոչ կատարի ։ Ամենայն ծէսք և ծանծաղութիւնք հարսնախօսու-թեան ՚ի Պոլսոյ առ ոչ ինչ են ՚ի կշիռ կար-գաց և կանոնաց տեղւոյս ։

Օյսմանէ առցուք աստ զգրածն բարե-կամի միոյ ։ «Ամուսնացողք պարտին երեք շա-բաթով յառաջագոյն հարսնախօսիլ յատե-նին * մատուցանելով անդր զերկու Պարոնայ՝ զքաղաքացեալս երկրին՝ երբեմն զերաշխաւոր կամ վկայս՝ որք լինին նոցա միմեանց ընդ մանրախոյզ քննութեամբ և հարցափորձիւ Ատենին, Պա-հանջի նախապէս հաստատութիւն լինելոյ զու-

* Հարսնախօսելն կամ ըստ Հոլանդացւոց առաջնապատկն ըստ նորոյս օրինաց այժմ կատարի յետ հայցուածով. որ առնի ՚ի խօսեցեալ փեսայէն և ՚ի հարսէն առ պաշտօնատարն ամուս-նութեան՝ յայտնելով ՚ի նմա զանուանս, զտեղի ծննդեան, զգործ, և զբնակութիւն իւրեանց. և խնդրելով ամուսնացու-ցանել զնոսա հանդերձ խոստմամբ ներկայացուցանելոյ նմա զամենայն պահանջելի թուղթս, այսինքն՝ վկայական ծննդագիր, ընդունելութիւն ծնողաց, և այլն. Իսկ պաշտօ-նատարն առեալ զայս հայցուած այլովքն հանդերձ՝ եթէ չիցէ ինչ ընդդէմ օրինաց, ընդունի և առժամայն հրատարակէ զառաջադրութիւն նոցա և ամուսնացուցանէ զնոսա ըստ վե-րոյ գրեցելոյն ։

զկցն անայր և անկլին ․ յորոյ յողոգս յաւէտ քան զամենայն՝ են մկայ.քն երկոքին ։ Սանուն ՚ի գիր զանուն ․ զՀասակ ․ զանդի ծննդեան և մկրտուԹեան ․ զպաշտօն կամ գործս երկաքանչիւրոցն ․ նոյն և զանուանս ծնողաց նոցա ․ զՀասակ, զանդի ծննդեան և մահուան՝ (ԹԷ մեռեալ իցեն ․) և մկրտուԹեան ․ ապա գլխովին զՀաւանուԹի և ՀամաձայնուԹիւն նոցուն առ միմեանս ․ յորս ամենայնի մկոյել պարտին երկու Պարոնայքն՝ զորոց զանուանս ․ զՀասակ և զգործսն Հարցանեն նոյնպէս՝ և գրեն ։ Այլ և Հարկ է անմոռանալողայն զմկայական ցուցանել ՚ի Մէխամրէն ․ (այն է որբոց ժառանգաբան՝ ԹԷ իցէ կոչել զտունս այդպէս ․ ըստ որում ժառանգուԹիւն որբոց անդ խնամել ունին ․) առ այն ԹԷ՝ չունի զանառարս Հաչիւ ինչ ընդ տան այնմիկ ։ Յամենեցուն պաՀանջի ուրեմն ստորագրել զանուանս իւրեանց ՚ի գիրս գլուանին ․ յայնմ՚Հետէ Հրատարակի առաջադրուԹիւն նոցա յորմն դատաստանատան ՚ի լուր ամենեցուն զիրիս եօԹնեակս առ ուրց ․ զի ԹԷ գուցէ ումեք օրինաւոր արիԹ յարդել նմին՝ իրաւեկ տարացէ կառավարուԹեանն ։ Իսկ եԹէ կամին պսակիլ՝ ներկայեալ անդէն զոյգքն ՚ի տան անդր ատենին՝ Համդերձ երաշխաւորօքն իւրեանց, որք ՚ի մերս են խաչեղբայր և փեսաղբայր ․ որոց ընկերել կարեն ԹԷ կամիցին խնամիք և Տաչտչանի ուր ծանր

իմն եղանակաւ կատարի այն "մեծ խորհուրդ." որ զառաջինն են խօսք Ատենադպիրքն Սա ըզգեցեալ զհանդերձս իւր սարկաւագական՝ նստի յաթոռ 'ի բարձրագահ տեղւոջ. որում յանդիմանին և փեսայ և հարսն բազմեալք առ իրեարս 'ի վերայ աթոռոց։ Սկսանի յայնժամ քաղաքական սրբութիւն նորա՝ ընթեռնուլ յորոշ ձայն և բան զճառ ինչ հակիրճ 'ի վերայ սառացեալ "մեծի խորհրդոյն," և զպարտեաց և վարուց ամուսնական վիճակի անշուշտ 'ի վերայ նոյն իսկ սկզբանց հիմնելոց՝ որպէս ուսանի 'ի քրիստոնէական կրօնից՝ և ոչ պակաս ինչ ազդու քան զամէրական ընթերցանելեան եկեղեցւոյ։ Զայս առնէ կամ 'ի լեզու Հոլանդացւոց, կամ Մալայեցւոց. ըստ հասողութեան պսակողացն։ Ապա առեալ 'ի բերանոյ նոցա զկրկնումն և զստուգութիւն որոց 'ի հարսնախօսութեանն անդ ունին վկայեալ, զի կայ առաջի իւր մատեանն, նա զի և զհաւանութիւն նոցա և զընդունելութիւն. պատուիրէ փեսային ամուսնել զաջն յաջ հարսին. և պսակէ զնոսա կոչելով "Այր և կին." Եւ անդէն յառն կացեալ՝ պարզէ զձեռն առ փեսայ և հարսն, և շնորհաւորէ զնոցա միութիւնն։ Յետոյ ստորագրեն միւս ևս անգամ զանուանս իւրեանց 'ի մատենին. նոյն արարեալ և երաշխաւորացն շնորհաւորեն զնոսա. որոց օրինակին հետևելով և միւս բազմական բարե-

կամացն . ամենեքին դարձ առնուն՝ արկանելով անդ ՚ի գանձանակն անտերունջ որբոց, թո՛ ե թէ, որոց յօժարիցին հաղորդել զաւուրս իւրեանց . Բազումք յԵւրոպացւոց շատ իսկ համարեալ զայս պակ և մաւ երական՝ ոչ ևս գիտեն յեկեղեցին . Սակայն և լոկ եկեղեցական պակն աստ չէ բաւական մաւերական կացուցանել զամուսնութիւն քաղաքական օրինացն . և յիրաւի ոչ ևս իշխէ իսկ առաջինն ձեռնտու լինել ՚ի կատարումն այնորիկ . զի և քահանայք են ընդ իշխանութեամբ Տէրութեան . և ծնունդք թէ իցեն զանցանողացն , ՚ի շարս անհարազատից դիցին ՚ի դիւանագրին ."

Ամենայն ամուսնացելոց շնորհի ՚ի վեր առենէն պատկագիր կամ՝ կնիք ամուսնութեան վասն հաստատութեան , յորում ցուցանի օր ամուսնութեանն , անուանք , հասակք , տեղի ծննդեան , գործ և բնակութիւն ամուսնացելոցն և տեղի ամուսնութեան հանդերձ կնքովք պակողին և Պրէզիդէնտին ,

## ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Թէ եւ բազումեն օրինադրութիւնք և զանազան արգելք ամուսնութեան , բայց մեք դիցուք աստ զգլխաւորսն միայն ,

Ոչ կատարի ամուսնութիւն , եթէ փեսայն և հարսն չեն միակամ՝ հաւան և ընդունակ իրերաց ,

Ո՛չ ամուսնացուցանի առանց հրամանի Կուսակալին, եթէ տղայն ոչ է ժամանեալ 'ի հասակ տասնևութ ամաց և աղջիկն տասն և հինգ.

Ո՛չ ամուսնացանի երկրորդ և երրորդ ազգ արեանառու կամ մերձաւոր ընտանիս ընդ իրեարս՝ եթէ ոչ հրամանաւ Կուսակալին, որ ոչ շնորհէ առանց քննելոյ զիրս հանգամանացն.

Դատաստանաւ հաշուեալ շնացեալքն չկարեն բնաւ ամուսնանալ ընդ իրեարս.

Բաժանեալ կամ արձակեալ այր և կին՝ որ դատաստանաւ կատարի, չկարեն բնաւ ամուսնանալ ընդ այլում.

Այրի կին ոք չկարէ ամուսնանալ յետ մահու առն իւրոյ նախ քան զլնանալ երեք հարիւր աւուրց.

Այրակոյս կին ոք չկարէ ամուսնանալ, եթէ չիցէ համբաւեալ կորուստ առն նորա մահուամբ յակնատես վկայէ՝ մինչև ցտասն տարի, յորում ապա շնորհի արձակութիւն վճռօք դատաստանի իբրև այր նորա մեռեալ. և ամենայն ինչք և ստացուածք նորա կառավարի մինչև ցերևումն առ յաւուրց անտի՝ յորում վճռեցաւ մահ նորա. կամ մինչև ցհարիւր ամ հասակի առն, ապա բաժանեսցին ստացուածքն 'ի մէջ ժառանգացն ըստ օրինի բաժանման ստացուածոց առն հանգուցելոյ.

Դեռահասակ պատանի կամ օրիորդ մի չկարէ

ամուսնանալ առանց ընդունելութեան ծնողաց · և եթէ չունիցին ծնողս · պարտ է լինել ընդունելութեամբ վերակացուի կամ կառավարչաց որոց սենեկին (վէսկամըրի ·)

Նաև չափահաս պատանի կամ օրիորդ · որ դեռ "չէ ժամանեալ 'ի հասակ երեսուն ամաց՝ նոյնպէս նախ քան զամուսնանալն պարտէ ստանալ զհաւանութիւն ծնողացն · բայց եթէ ծագեսցի 'ի մէջ նոցա անմիաբանութիւն · ոչ կարէ ամուսնութիւնն տեղի ունել՝ եթէ ոչ միջնորդութեամբ դատաստանին ։

Նորեկ պատանի կամ օրիորդ չկարէ ամուսնանալ նախ քան զլրանալ վեց ամսոյ · բայց եթէ հրամանաւ Կոսակալին · կամ հրատարակելով զյայտարարութիւն ամուսնացելոցն նաև 'ի տեղւոջն ուստի եկեալն իցէ ։

Նմանոյն ինչք և ստացուածք առն և կնոջ հասարակ են 'ի մէջ նոցա · եթէ նախքան զամուսնանալն չարարին զդաշն իմոյ և քոյի · Ըստ նորոյս օրինաց դաշնաւորեալ ամուսնացողքն պարտին 'ներկայացուցանել զդաշնագիր իւրեանց յատենի դատաստանին · զի արձանագրեսցի 'ի դիւանի անդ · ապա թէ ոչ՝ անզօր է ։ Մյաքան վասն ամուսնութեան ։

ԾՆՈՒՆԴՔ

ՄՏԵՆԱԳՑՆ օրինաւոր ծննդեան արձանագրի 'ի դիւան հասարակաց՝ յատեան Ռէզիդէնտին , զի

յետ ծնանելոյ մանկան, եթէ արու իցէ՝ և թէ էգ՝ պարտական են ծնօղքն 'ի մէջ երից աւուրց ծանուցանել 'ի վեր յիշեալ ատենին. ուր ներկայանայ Հայր մանկան. և եթէ Հայր մանկանն աններկայ իցէ կամ վախճանեալ, մերձաւոր ընտանի ոք հանդերձ երկու գրոցի վկայիւք՝ և գրի անդ ծնունդ մանկանն. ժամանակ ծննդեան տեղին՝ ուր ծնաւ, անուանակոչութիւն նորա անուանք ծնողաց և վկայողաց ընդ հասակ, գործ և բնակութիւն նոցա. ապա շնորհի ծննդագիր կամ կնիք հաստատութեան վասն օրինաւոր ծննդեան մանկանն։ Վկայքն չկարեն լինել մերձաւոր ընտանիք։ Անօրինաւոր ծնունդք ծնեալք 'ի Հարճից կամ յանարգ անկողնոյ՝ և ոչ գրին 'ի սոյն դիւանի, եթէ ոչ ըստ յետագոյ օրինի։

Հարճածնունդ, որոյ մայր է չինէացի կամ Մոլայեցի, և հայրն քրիստոնեայ ամուրի, գրի 'ի սոյն դիւանի, եթէ Հայր մանկանն խոստովանեսցէ զնա զաւակ իւր։ Որդի անհարազատ, որոյ մայրն քրիստոնեայ իցէ այրի՝ գրի ևս 'ի սոյն դիւանի, բայց առանց նշանակելոյ զանուն հօր նորա. կամ որոյ հայրն է ամուսնացեալ ոք, և զեռ կենդանի կին նորա, պարտէ նմա որդեգիր առնել այլում։

Անօրինաւոր ծնունդք 'ի Հարճից կարեն օրինաւորիլ. նախ՝ յորժամ հայր նոցա ամուս-

նաւոյն ընդ մօր նորա յոր կրօնէ և իցէ՝ առանց փոխելոյ զհաւատն *։ Երկրորդ՝ յորժամ հայրն խնդրէ 'ի Կուսակալէն զօրինաւորել նորա՝ որ և շնորհի. բայց եթէ հայր մանկանն ունիցի զամուսին՝ պարտէ և կնոջ միաբանութիւնն լինել յայն խնդիր. յայնժամ այնպիսին լինի օրինաւոր ժառանգ ստացուածոյ հօր կամ մօր յետ մահու նորա ։

## ՄԱՀ

ԱՄԵՆԱՅՆ մեռեալք թաղին առ հրամանաւ վերոյ յիշեալ ատենին, և անուանք նորա գրին 'ի գիւան հասարակաց ։ Զի կտակակատարք կամ երկու յազգականաց ննջեցելոյն ներկայանան 'ի նոյն ատենի, յայտնեն զժամ մահուն, զտեղին, զանուն, զհասակ, զգործ և զժամն յորում կամին ամփոփել զնա. ուր շնորհի նոցա թաղման հրամանագիր. որ և խնդրոյն առաջի առ գերեզմանապահն 'ի պատրաստել զգերեզման ։

## ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԹԱՂՈՒՄՆ

ԱՌԱՔԻ 'ի կտակակատարաց կամ յազգականաց մեռելոյն թուղթ շրջաբերական առ բարեկամս և առ ծանօթս 'ի կոչ յուղարկաւորութեն. և հրամայի գլխապետին թաղողաց՝ որք են յաղ-

* Նոր օրէնքն ոչ քննէ զկրօն ամուսնացելոցն, այլ զհանգամանս և զընդունելութիւն նոցա ։

զէ փութեքէշաց ՚ի պատրաստել զհանդերձանս ննջեցելոյն՝ որք են պազպաղ կամ արկղ․ սեաւ ծածկոցք․ կառք և թաղողք․ զորս ՚ի դէպ ժամու առաքէ նա ՚ի տուն ննջեցելոյն։

Այլ երբև պատրաստ գտանիցին ամենայն՝ լուանան զմեռեալն և պատեալ զդի նորա ազնիւ կտաւօք՝ դնեն յարկղ, և բաց թողուն մինչ ցգումարիլ յուղարկաւորացն․ ապա փակեալ զարկղն և արկեալ ՚ի վերայ նորա զսեաւ ծածկոց, մուծանեն ՚ի կառս․ և յառաջացեալ տանեն ՚ի գերեզմանն։ ՚Ի հասանել ՚ի դուռն գերեզմանատան իջուցանեն զմեռեալն ՚ի կառաց․ և թաղողքն բարձեալ զնա հանդերձ հետևմամբ յուղարկաւորացն մտանեն ՚ի ներքս․ և տարեալ ամփոփեն ՚ի գերեզմանի․ և ապա դառնան ամենեքին ՚ի տուն իւրեանց։

## ՕՐԷՆՔ ՅԵՏ ՄԱՀՈՒ ԱՌՆ ԿԱՄ ԿՆՈՋ

ԱՄԵՆԱՅՆ կտակաւ և անկտակ մեռելոց ստացուածք՝ են ընդ օրինօք վէնկամբի․ այսինքն սեննկի որբոց։ Յետ մեռանելոյ ուրուք, եթէ ունիցի զկտակ՝ բանի այն ՚ի ձեռն նօտարի հասարակաց և յանձնի ամենայն հոգ. կառավարութեան ստացուածոցն կտակակատարաց նորա՝ որք պարտական են առ ժամայն յանձնել զկտակ մեռելոյն ասացեալ սեննկին․ զորոյ առնու զօրինակն և կրկին յետ դարձուցանէ նոցա։

Մնացեալն եթէ չէ մնանկ՝ խմոյն հրատարակեն 'ի լրաթղթին զմահ նորա և կոչեն զպարտատէրս և զպարտապանս նորին 'ի մէջ երից ամսոց ներկայանալ յատարտումն հաշուոց. և կատակատարք պարտական են 'ի մէջ վեց ամսոց կատարել զամենայն գործ կատակատարութեանն. և տալ համարս ստացուածոցն տայեալ Մենեկի Մբրոցն. Բայց եթէ մինչև ցվեց ամիսն չկարասցեն աւարտել. թոյլ տուեալ է խնդրել զժամանակ. այլ ես զվեց ամիս յետ որոյ պարտաւորին տալ զհաշիւս և հատուցանել Տէրութեանն հնգամնորդս կամ՝ զտասանորդ 'ի զուտ ստացուածոց հանգուցելոյն.

Զ հնգամնորդս առնու յոյնկլխի ստացուածոց. որոց ժառանգորդ է եղբայր կամ՝ քոյր կըտակագրողին. Իսկ զտասանորդս առնու յոյնկլխի ստացուածոց՝ որոց ժառանգորդք են ընտանիք կամ՝ ազգականք կտակագրողին անդր քան զեղբայր կամ՝ զքոյր. Այլ եթէ այր է կնոջ ժառանգն. և կին՝ առն, կամ՝ օրինաւոր զաւակք ծնողաց. և ծնողք՝ զաւակաց, հատուցեն ոչ ինչ. բայց պարտէ գոյշ կալ չյապաղել անդր քան զվեց ամիսն տալ զհաշիւ աւարտեալ կամ՝ անաւարտ ստացուածոց՝ նաև սորին պաշտօնատարի որ կոչի ըէխտ փառն սկսեալին օֆէրխամխա. ապա թէ ոչ տուժեսցէ տուգանս 'ի 50է ց100 դիդեր. Իսկ մնացեալ ստացուածքն կառավարին

ըստ զօրութեան կտակին. յոր եթէ ծագեսցի վէճ ինչ կամ երկբայութիւն. պարտի դատաստանաւ աւարտիլ.

Իսկ եթէ մեռեալն սնանկ է կամ աղքատ ոմն, և կտակակատարքն չկամիցին ձեռնամուխ լինիլ 'ի գործ կտակակատարութեան՝ պարտին առնել զգիր վկայական յերկուց դրացեաց. յընտանեաց կամ բարեկամաց հանգուցելոյն. մատուցանել յատեան տեղւոյն խնդրելով զարձակումն 'ի կտակակատարութենէ. Իսկ եթէ չիցեն ընաւ ձեռնամուխ ընդունելի լիցի խնդիր նոցա, եւ յանձնեսցի կտակակատարութիւն սենեկի սընանկ ստացուածոց. որոյ կառավարիչք են անդամք սենեկի որբոց, որք յետ ժողովելոյ զըստացուած սնանկ մեռելոյն, նախ հատուցանեն զծախս թաղմանն. և ապա զմնացեալսն բաժանեն 'ի մէջ պարտատիրացն.

Այլ յորժամ մեռանի ոք անկտակ՝ Սենեակն Որբոց է կտակակատար նորա, և ըստ օրինի կըտակակատարաց պարտի հոգ տանել զամենայն գրելոյն օրինաց. զի նախ թաղէ զմեռեալն. ապա տիրէ. ժողովէ և վաճառէ զամենայն շարժական և անշարժ ստացուածս նորա. հատուցանէ և ստանայ զամենայն փոխառութիւն և զխոստատուութիւն նորա. և իբրև կատարէ զամենայն գործ կտակակատարութեան. առնէ զհաշիւ ըստացուածոց հանգուցելոյն. հանէ 'ի դումարէն

նախ զամենայն ծախս՝ զոր արար վասն թաղման, զհնգանորդս կամ զտասանորդս տէրութեան, և զկանոնեալ վարձս վաստակոց իւրոց՝ որ է հարիւրին երեք՝ վասն ստացման, հարիւրին երկու՝ վասն հաւաքման, և հարիւրին մի և կէս՝ վասն մնացորդ զուտ ստացուածոցն ։ Ապա զմնացեալն բաժանէ 'ի մէջ օրինաւոր ժառանգաց հանգուցելոյն ըստ յետագայ կանոնիդ ։

Առաջին՝ ժառանգորդ ստացուածոց անձն ուրուք հանգուցելոյ՝ են իւր ամուսինն և հարազատ զաւակունք կամ թոռունք ։

Երկրորդ՝ 'ի պակասիլ կամ 'ի չգոյէ սոցա՝ են ծնողքն, եղբարք և քորքն, կամ սերունդքն եղբարց և քերց ։

Երրորդ՝ 'ի պակասիլ կամ 'ի չգոյէ սոցա՝ են հօրեղբայր, մօրեղբայր, հօրաքոյր, մօրաքոյր կամ սերունդք նոցա ։

Իսկ չորրորդ՝ 'ի պակասիլ կամ 'ի չգոյէ սոցա, են հայրենական կամ մայրենական այլ ընտանիք հանգուցելոյն, թուեալ մինչև ցերկոտասան ազգատոհմն. ուր 'ի պակասիլ միոյն՝ է միւսն. և 'ի չգոյէ ընտանեաց միոյ կողման, այսինքն՝ հօր կամ մօր՝ զտեղին լնու միւս կողմն ։

## ԲԱԺԱՆՈՒՄՆ ՍՏԱՑՈՒԱԾՈՑ Ի ԺԱՌԱՆԳԱՒՈՐՍ ԱՆԿՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ ։

Թէ եւ ՚ի վեր անդր նշանակեցաք զժառանգորդս ստացուածոց անկտակ մեռելոց՝ բայց արժան է գիտել, թէ որով եղանակաւ բաժանի այն ՚ի մէջ ժառանգաւորացն, զոր վճարեսցուք յետագայ կանոնիւքն ։

Հարազատ ծնունդք ՚ի միոյ հօրէ՝ են ժառանգ ստացուածոյ ծնողացն, հաւուց եւ հաններց, եւ այլ արենակցաց մինչեւ ցորդւոց յորդիս՝ առանց զանազանելոյ զծնունդս նոցա, եթէ յառաջնոյ եղեն՝ եւ եթէ յերկրորդ կամ՝ յերրորդ ամուսնութենէ ծնեալք ։ Սոքա հաւասարապէս ստանան զբաժին ՚ի ստացուածոց հանգուցելոյն՝ յորժամ ամենեքեան են յառաջին աստիճանի արենակցութեան՝ որպիսի են եղբարք եւ քորք ։ Բայց ՚ի պակասել միոյ եղբօր կամ քեռ, եթէ ունիցի ժառանգս, նորին բաժինն տացի ժառանգին նորա. բայց եթէ չունիցի ժառանգ, բաժանեսցի այն ՚ի մէջ կենդանի եղբարց եւ քերցն ։

Իսկ եթէ հանգուցեալն չունիցի բնաւ սերունդս, ոչ կենդանի ծնողս, ոչ քոյր եւ ոչ եղբայր, ապա ստացուած նորա բաժանեսցի յերկուս հաւասար բաժինս. մին ՚ի մէջ ընտանեաց հօրն. եւ միւսն՝ ՚ի մէջ ընտանեաց մօր. որք են հօրեղբայր եւ մօրեղբայր, հօրաքոյր եւ մօրաքոյր՝

կամ սերունդք և այլ ընտանիք նոցա՝ մինչև ցերկոտասան ազգատոհմս ։ Որ լցէ անդր քան զերկոտասան ազգատոհմն՝ չկարէ լինել ժառանգ ։

Հայր կամ մայրն են ժառանգ բոլոր ստացուածոց հանգուցեալ որդւոյ իւրեանց ․ եթէ չունիցի նա բնաւ սերունդս կամ եղբայր կամ քոյր ։

Հայր և մայրն իւրաքանչիւր ժառանգեն զերորդ մասն ստացուածոց անսերունդ հանգուցեալ որդւոյ իւրեանց ։ Եթէ լցէ հանգուցելոյն այլ ևս մի եղբայր կամ մի քոյր ․ և միւս մի մասն տացի եղբօր կամ քեռն ․ բայց եթէ ունիցի աւելի քան զմի եղբայր կամ զմի քոյր՝ կէս ստացուածոցն տացի ծնողացն , և կէսն բաժանեսցի 'ի մէջ եղբարց և քերց կամ ժառանգաց նոցին ։

Յորժամ կամ հայր կամ մայր անդուստ հանգուցելոյն ․ նախ քան զորդին իւր մահացեալ իցէ , կէս ստացուածոցն զնայ կենդանի ծնողին ․ եթէ կայցեն նորա այլ ևս մի եղբայր կամ քոյր ․ Զմին յերից բաժնոց եթէ լիցին նորա երկու եղբարք կամ քորք ։ Զմին չորից բաժնից եթէ լիցին աւելի քան զերկուս եղբարս կամ քորս ․ և մնացեալ երեք բաժինն բաժանեսցի 'ի մէջ եղբարց և քերց և 'ի մէջ ժառանգաց նոցին ։

Ոչ ոք 'ի յայլ ընտանեաց ժառանգել կարէ զգոյս անդստակ հանգուցելոյն ․ բայց միայն եղբարք և քորքն և ժառանգ նոցա՝ եթէ ծնողք հանգուցելոյն չլիցին կենդանի ․ և չունիցի բնաւ

օրինաւոր կամ՛ ապօրինաւոր սերուն՛դ ոք ։

Եղբարք և քորք հաւասարապէս տանին զբաժին ստացուածոց հանգուցելոյ եղբօր իւրեանց, եթէ ամենեքին են 'ի միոյ հօրէ և 'ի միոյ մօրէ. բայց եթէ են 'ի զանազան անկողնոյ կամ՛ յամուսնութենէ, ապա բաժանի ստացուածն յերկու հաւասար բաժինս. մինն տրի եղբարց և քերց, և միւսն հայրենական և մայրենական ընտանեաց ։ Իսկ եթէ լիցեն նոցա միայն խորթ եղբարք կամ՛ քորք 'ի կողմանէ հօր կամ 'ի կողմանէ մօր, նոքա ժառանգեն զբոլոր ստացուածս, և այլ ընտանիք միւս կողմանն գըտանեն զոչինչ ։

'Ի պակասիլ եղբարց և քերց, որպէս և սերնդոց միոյն կամ՛ միւսոյն, ստացուածն բաժանի 'ի մէջ սերնդոց միոյն՝ և ազգականացն միւսոյն ։

'Ի պակասիլ եղբարց քերց, և սերնդոց նոցին՝ ստացուածն բաժանի յերկուս 'ի մէջ մերձաւոր ընտանեացն եղբարց և քերցն ։

Իսկ եթէ չիցեն հանգուցելոյն եղբարք և քորք և ոչ նոցին սերունդք և ընտանիք՝ լինին զաւեղի նոցա հօրեղբարք, մօրեղբարք, հօրաքորք, մօրաքորք, կամ՛ ժառանգաւորք նոցին. և 'ի պակասիլ միոյ կողման՝ յառաջ գայ միւս կողմն, որպէս ասացաք, մինչև ցերկոտասան ազգատոհմն

## ԽՐԱԽՈՒՆՔ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՊՕՐԻՆԱՒՈՐ ԿԱՄ ԱՆՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿԱՑ։

Ապօրինաւոր մանկունք չկարեն լինել ժառանգ ստացուածոց հօր կամ մօր, եթէ ոչ են օրինօք ծանուցեալ կամ օրինաւորացեալք ՚ի հօրէն կամ ՚ի մօրէն, որպէս ասացաւ յօրէնս ծննդոց։ Սակայն եթէ հայր ոք կամ մայր եթող ըզմանկունս օրինօք միայն ծանուցեալ՝ մասնաւորի և նոցա ՚ի ստացուածոց հանգուցելոյն ըստ յետագայ կանոնացս։

Եթէ հանգուցեալն ունիցի օրինաւոր ծնունդըս, օրինօք ծանուցեալ ապօրինաւորքն ժառանգեն միայն զմին յերից բաժնից ստացուածոց հօրն։ Իսկ եթէ ոչ ունիցի օրինաւոր ծընունդս՝ այլ միայն սերունդս օրինաւոր ծնընդոց․ և կամ միայն եղբարս կամ քորս, և կամ սերունդս նոցա, ժառանգեն զկէս ստացուածոյն․ իսկ եթէ հանգուցեալն ունիցի միայն ըզհայրենական կամ մայրենական ազգականս, որպիսի են՝ հօրեղբայր, մօրեղբայր և այլն, ժառանգեն զերիս մասն ՚ի չորից բաժնից։

Եթէ օրինաւոր ժառանգք են ՚ի զանազան աստիճանի ազգատոհմութեան, որպէս զի և բաժանումն ստացուածոց լինիցի զանազան կերպիւ՝ պարտական են ժառանգքն մասնաւորիլ ապօրինաւոր մանկանցն յիւրաքանչիւր բաժնից ըստ վերին կանոնադրութեան՝ որչափ ինչ և հասանիցի։

Եթէ հանգուցեալն չունիցի բնաւ զօրինաւոր ժառանգս, ապօրինաւորն ժառանգէ զբոլոր ըստացուած Ճանաչող հօր կամ մօր իւրոյ ։

Պոռնկորդի կամ'դուստր ոչ կարէ մտանել ՚ի ժառանգութիւն ստացուածոց ծնողաց ։ Այլ այն օրէնքն շնորհեն անոր որչափ ինչ վայելէ վասն ապրուստի նորա. եթէ չիցէ հօր կամ մօրն հոգացեալ զայն 'ի կենդանութեան իւրում ։

Ապօրինաւոր ծնունդ ոք մեռեալ առանց սերնդոց, ամենայն ինչք և ստացուածք նորա ժառանգէ հայր կամ'մայրն՝ որ իւր ծանուցեալ իցէ զնա. և եթէ յերկոցունց ես ճանաչեալ, ապա կէսն տացի հօրն և կէսն մօրն, կամ'նոցին ժառանգաւորաց ։

Ապօրինաւոր ծնունդ ոք մեռեալ առանց սերնդոց՝ դարձցին ամենայն ինչք ընկալեալ ՚ի ըստացուածոց հօր կամ' մօր՝ որ նախ քան զինքն մեռեալ՝ առ օրինաւոր ժառանգս նոցա ։ Եթէ դեռ կայցեն իրքն յիրեանն ՚ի ստացուածս նորա՝ դարձուսցին իսկ իրքն, ապա թէ ոչ՝ գին իւրացն. և մնացեալ ամենայն ինչք նորա սեփհականք՝ տացին քերց և եղբարց իւրոց ։

Ոչ կարեն ապօրինաւոր ծնունդք ժառանգել զստացուածս հայրենական կամ'մայրենական ազգականաց, կամ'վերջինքն ժառանգել զառաջնոց ստացուածս, եթէ ոչ լիցին ըստ յետագոյ համգամանաց ։

Յորժամ ազգական ոք հօր կամ մօր ապօրի- նաւոր ծննդոց մեռանիցի առանց ժառանգաւո- րաց , և առանց ամուսնոյ՝ նոքա լնուն զտեղի նոցա : Կամ եթէ ապօրինաւոր ծնունդ ոք մե- ռանիցի առանց սերնդոց , և չունիցի զկենդանի ծնող կամ եղբայր կամ քոյր , և ոչ իսկ ամուսին , ամենայն ինչք և ստացուածք նորա տայցին ազ- գականաց հօր կամ մօր , յումմէ և ծանուցեալ եղև : Իսկ եթէ յերկոցունց ևս ծանուցեալ , կէսն ՚ի ստացուածոյն տացի ազգականաց հօր , և կէսն՝ ազգականաց մօր :

ԻՐԱՒՈՒՆՔ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ, ՅԵՏ ՄԱՀՈՒ
ՄԻՈՅՆ ԿԱՄ ՄԻՒՍՈՅՆ

Յետ մահուան առն՝ կինն ժառանգէ զկէս ըս- տացուածոյն , եւ է հաւասար բաժանորդ մը- նացեալ կեանսն ընդ այլ ժառանգաւորս , եթէ չունիցին այր և կին ՚ի մէջ իւրեանց զդաշն իմն և քայլ : Ոչ մտանէ ՚ի հաւասարութիւն բաժան- ման պարգև ինչ՝ որ ընծայեալ իցէ ՚ի ծնողաց :

Եթէ հանգուցեալն չունիցի ժառանգս ոչ յե- տագայս և ոչ նախընթացս , ամենայն ինչք և ստացուածք իւր մնան կնոջն : Իսկ որ ունիցի զդաշն իմ և քայլ՝ չկարէ աւելի ինչ ստանալ քան զիւրն , և որ շնորհեցաւ նմա կտակաւ կամ ՚ի կենդանութեան առնն :

Երկրորդապսակ կինն չկարէ ստանալ յաւել

քան զբաժին մի ընդ ժառանգացն, կամ ըստ պատաՀման չորրորդ մասն ստացուածոց առն, յորժամ՚ այրն ունիցի զաւակս յառաջին կնոջէն.

Պաշտնաւորեալ կինն, որոյ դրամք անցեալ իցեն 'ի ձեռս առն իւրոյ՝ Համարի առաջին 'ի պարտատերաց նորա.

Այն * բաժանեալ յառնէ՝ չկարէ մասնիլ 'ի ժառանգութիւն ստացուածոց առն, միայն եթէ ինքն եղև խնդրող բաժանման վասն յանցանաց առն. և եթէ չունիցի զբաւականին ապրուստ՝ լցուցանել կարօտութիւն նորա 'ի ստացուածոց առն.

Այն բաժանեալ սեղանաւ և բնակութեամբ միայն, ունի զիրաւունս ստանալոյ զկէս 'ի ստացուածոց առն, եթէ ոչ ստացաւ զայն 'ի բաժանմանն.

Այսպիսի են և իրաւունք առն յետ մեռանելոյ կնոջն: Ամենայն ինչ առաւելս լինին 'ի վերայ այնորիկ՝ որ մեռանի աղքատ կամ՚ մանուկ՝ զի յըն-

* Բաժանումն առն և կնոջ լինի չորս բանիւք. մին վասն անՀաւատարմութեան անկողնոյ. երկրորդ՝ վասն չար գիտաւորութեամբ բարձի թողի առնելոյ միոյ զմիւսն. երրորդ՝ վասն քրէական յանցանաց իրիք՝ որ անկանի ընդ վճռօք պատուակորոյս պատժոց. և. չորրորդ՝ վասն վտանգելոյ միոյ զկեանս միւսոյն. Յայնժամ ամենայն յաջողուածք և բերք ամուսնութեան նոցա անկանին առ այն՝ որ խնդրեաց զբաժանումն 'ի յանցաւորէն, միայն թէ տացի ապրուստ յանցաւորին ցորչափ կենդանի իցէ, եթէ չիցէ այլ դաշն ինչ 'ի մէջ նոցա՝ արարեալ նախ քան զամուսնութիւն իւրեանց.

տանեաց որք կամ՝ Տան Սրբոյ Թադէ վ՞նս , եւ ընդ ամփոփել մարմնոյն 'ի հող․ ամփոփին եւ ամենայն գործք նորա , ըստ Պաւղոսից առածին թէ՝ “ մեռաւ եւ 'ի հող դարձաւ , եւ հաշիւ նորա աւարտեցաւ ։”

## ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԿՏԱԿԱԿԱՏԱՐԱՑ

Որ միանգամ յանձն էառ զկտակակատարութիւն , եւ ձեռնամուխ եղեւ 'ի գործադրութիւն , կապեալ է ընդ այն մինչեւ ցաւարտ նորա ։ Ուստի կտակակատար ոք չկարէ թողուլ զկտակակատարութիւն իւր՝ եթէ ոչ հրամանաւ դատաւորի․ եւ այն՝ նախ քան զյանձնառնուլն 'ի կատարել իւր զայն գործ ։

Ամենայն զանց առարեալ եւ թողլուեալ վնասոցն՝ պատասխանատու են կտակակատարք ինքեանք եւ ինչք իւրեանց ։

Կտակակատար ոք յետ ընդունելոյ զայն գործ վասն առնելոյ հաստատութեան պարտի կամ 'ի ներկայութեան նորին ժառանգաց կամ միոյ 'ի կառավարչաց Սրբոյ Սինհոդին , եւ կամ 'ի ձեռն նօտարի հասարակաց առնել զցուցակ ամենայն շարժական ստացուածոց հանգուցելոյն․ եւ աճուրդաւ վաճառել ։ Իսկ եթէ ժառանգքն կամիցին զմասն կամ զբոլորն պահել՝ պարտական են ամենայն իրաց գին հատանել 'ի ձեռն ատենական արժեցուցանողաց․ եւ զգինս նոցա մուծա-

նեյ 'ի հաշիւ ստացուածոց հանգուցելոյն ։

Հրեշտակ կամ պարգեւ թողեալ կտակաւ՝ ե-
թէ է 'ի ձեռն պատրաստի՝ պարտին առ ժամայն
հատուցանել 'ի հաստատիլ կտակին . բայց եթէ
չիցէ այնպէս՝ չկարեն երկարել աւելի քան ըզ-
մէկ ամիս կամ զերկոտասան . և եթէ ոչ գուցէ
գլխաւոր պատճառ ինչ՝ հրեշտակեալն ունի զի-
րաւունս ընդ սահմանել հրեշտակին՝ պահանջել նաև
զտոկոսն յապաղման նորա յօրէ անտի՝ յորում
հաստատեցաւ կտակն ։

Արտակտակարք եթէ չիցեն յայլ ինչ պատ-
ճառաց հարկադրեալ՝ չկարեն երկարել զաւար-
տումն կտակակատարութեան աւելի քան զամիս
բայց և ոչ անցանել կարէ անդր քան զերկու
ամիս , յորում պարտէ լրումն առնուլ ամենայն
գործոց հանգուցելոյն ։

Արտակտակարք չկարեն փոխել զհրաման կը-
տակին , եթէ ոչ հրամանաւ դատաւորի . և
այն՝ յօգուտ պարտատիրաց կամ դեռահասակ
ժառանգաց հանգուցելոյն ։

Յետ աւարտելոյ զամենայն գործս կտակա-
տարութեանն , և փակելոյ զհաշիւ ստացուա-
ծոյն՝ պարտին հոգ տանել բաժանման կամ ա-
պահովման մնացորդաց հաշուին , զի եթէ ժա-
ռանգքն ներկայ իցեն և չափահաս՝ բաժանեսցի
'ի մէջ ժառանգացն . և եթէ աններկայ կամ դե-
ռահասակ , կամ դիցի 'ի Սենեակ Ազգոցն՝ կամ

'ի վերայ անշարժ ստացուածոց ․ մինչեւ 'ի ներկայանալ կամ 'ի լրանալ հասակի ժառանգացն ։ Աստ հասակ տղայի կամ աղջկան լրանալ 'ի 25 երորդ ամին ։

## ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍԵՆԵԿԻ ՈՐԲՈՑ ։

ՍԵՆԵԱԿ Որբոց հաստատեալ է 'ի տէրութենէն լինել կառավարող անկատար մանկերոց ․ տէր անտէր ստացուածոց ․ եւ հայր եւ կառավարիչ գեռահասակ որբացեալ մանկանց ։

Արդ որպէս ասացաք 'ի նախընթաց գլուխն՝ սա 'ի գործ դնէ զկառավարութիւն իւր վասն անկատար կամ անտէր մանկերոց ընդ ամենայն եւ ընդ ամենեսին ըստ օրինի կառավարողաց առնել խիստ եւ ճշգրիտ տակաւին քան զհրամայեալսն յօրինաց ․ որ եւ յետ առանալոյ ․ հաստատանելոյ կամ աւարտելոյ զամենայն հաշիւս հանգուցելոյն ․ Միացեալ ստացուածոյն հօր տանէ ըստ արժանւոյն 'ի շահեցուցանել ․ մինչ 'ի լրանալ հասակի ներկայ եւ յայտնի ժառանգաց ․ կամ մինչ յերեւիլ աններկայ եւ անյայտ ժառանգաց անտէր ստացուածոց ․ որոց եւ ոչ յանձնի ժառանգութիւն առանց հաստատութեան վկայականաց քաղաքապետին կամ գլխաւորաց ազգին ․ յոր ծնեալ են ժառանգքն , եւ ոչ ընդունի զմին առանց ընդունելութեան միւս ժառանգաց ։

Ըստ հաստատուն է կտակն և կենդանի ժառանգութեն մինչև ցերեսուն և երեք ամի, ապա անզօր է մին՝ և մեռեալ միւսն. զի ընդ այս միջոց երեսուն և երեք ամաց՝ հաստատեալ է ժամանակ կոչման ժառանգաց անտէր ստացուածոց. որ քանիցս ծանուցանի ՚ի լրագրին ՚ի ձեռն ատենի դատաստանին. և որ երեւի յետ անցանելոյ երեսուն և երեք ամաց՝ չկարէ ստանալ ըզժառանգութիւնն ։

---

## ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԿՏԱԿԻ ։

ՀԱՍՏԱՏՈՒՆ է կտակն, յորժամ արարեալ լցէ այն ՚ի ձեռն նոտարի հասարակաց առաջի երկուց վկայից. յուշի մնաց կտակարարին և ստոյգ ձեռնագրեալ ։

Հաստատուն է կտակն, որ թէև գրեալ լիցի առանձին ՚ի կտակարարէն, բայց ձեռնագըրեալ առաջի նոտարին և նորին երկուց վկայից. որոց և ՚ի ներքոյ կտակին կամ յատուկ գրուածով խոստովանեալ կամ վկայեալ զինկուէն նմին ։

Հաստատուն է կտակն՝ որ եթէ գրեալ լիցէ ՚ի կտակարարէն ՚ի ծածուկ, ձեռագրեալ փակեալ և կնքեալ. բայց և առաջի նոտարին և չորից վկայից արարեալ յայտարարութիւն վաւերականութեան այնորիկ եւ ձեռագրեալ անդ ՚ի կտակակատարէն, ՚ի նոտարէն և ՚ի վըկայողացն ։

Հաստատուն է կտակն, յորժամ բնակիչ մի Նեդրլանդական Հնդկաց գաւառացի յայլ աշխարհ, և արարեալ լիցէ անդ զայն ըստ սովորութեան և օրինաց տեղւոյն հանդերձ արժանահաւատ ստորագրութեամբ.

Հաստատուն է կտակն, յորժամ արարեալ լիցէ այն ի ժամանակս պատերազմի, ի բանակի զօրաց առաջի զօրապետի միոյ և երկուց վկայից.

Հաստատուն է կտակն՝ յորժամ արարեալ լիցէ այն ի ճանապարհորդութեան ծովու՝ առաջի նաւապետին կամ նաւուղղչի միոյ, և երկուց վկայից.

Հաստատուն է կտակն յորժամ արարեալ լիցէ այն 'ի ժանտամահ ժամանակի, 'ի տեղի՝ ուր ոչ գուցէ նօտար հասարակաց, 'ի ձեռն պաշտօնատարի տեղւոյն հանդերձ հաստատութեամբ երկու վկայից.

Այլ այս վերջին երեք եղանակաւ գրեալ կտակքն անզօր են, յորժամ կտակարարն յետ վեց ամսոց մեռանիցի.

Նաև վկայութիւնն ոչ է ընդունելի, եթէ վկայքն չեն լեալ չափահասակք, բնակիչք տեղւոյն՝ ուր յօրինեցաւ կտակն, և անտեղեակք լեզուին՝ յոր գրեցաւ կտակն կամ յայտարարութիւն կտակին.

Ոչ կարէ որդի կամ թոռն կամ մինչև չորրորդ ազգն, և կամ այլ մերձաւոր ընտանի ոք կը-

տախտակագրողին լինել վկայ ՚ի կտակին ։

Կտակն՝ որ ոչ է արարեալ ըստ ձեւոյ կանոնադրութեանն՝ անզօր՝ է ։

Կտակն՝ որ արարեալ է բռնի կամ խաբանօք կամ ՚նենգութեամբ՝ անզօր է ։

Կտակ՝ որ արարեալ է նախ քան զլրանալ 18 ամաց հասակի կտակարարին՝ անզօր է ։

Կտակն՝ որ արարեալ է ՚ի լեզուակապ հիւանդէ, և ոչ իսկ ՚նորին ձեռամբ գրեալ զբոլորն և ստորագրեալ՝ անզօր է ։

Կտակն՝ որ ոչ է ձեռնագրեալ ՚ի կտակարարէն և ոչ յայտ արարեալ ՚ի նօտարէ հասարակաց հանդերձ երկու վկայիւք զպատճառ արգելման ձեռնագրութեն կտակարարին՝ անզօր է ։

## ՆՈՐԵԿ ՕՏԱՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ

ԱՄԵՆԱՅՆ նորեկ ՚ի Բթաւիա, եթէ չեն նորա բարեկամք հիւրընկալնուլ զնա, գոն առ-ա ջորս երեւելի պանդոկք, զորոց յիշատակեցաք զտեղիսն ՚ի ստորագրութեան անդ Բթաւիոյ, որոց անուանքն են Հօտէլ դը Պռօվինս, Հօտէլ դը Մարին, Հօտէլ դըր Նէդըրլանդն և Հօտէլ Վիլլէմ դը Տվէդը, յորոց ՚ի միումն կարէ բնակել զբնակին թեւն իւր, հատուցանելով զվարձ բնակարանի և ուտելեաց՝ օրական 5 գիլդըր կամ ամսական 100 գիլդըր՝ եթէ վասն շարունակ բնակութեան. և ՚ի փոխարէն զը-

տանէ զսենեակ մի վայելչապէս կահաւորեալ , զնախաձաշելիկ , զծոյշ և զպաստուոր , այլ ոչ ըն-դելլիս · առ որ եթէ ունիցի զաւր ախորժակ , ոչ լինի այն փոքու ծախիւք ·

Դարձեալ եթէ չեն նմա 'ի պատրաստի կառք և երիվարք 'ի բարեկամաց · կան վարձու կառք յամենայն անկիւնս քաղաքին , զոր կարէ ունիլ երբ և կամիցի , վասն կէս աւուր հատուցանե-լով երեք զելղր , և յաւաւօտէ մինչև ցերեկոյ վեց · որոց միջոց գործածութեան թուին վեց և երկոտասան ժամք , ընդ նմին և չորհի ժամ մի երկարելոյ · Նաև կան վարձու * կառք յեւ-րաքանչիւր պանդոկի · մի և նոյն ծախուք և կանոնիւք · բայց յաւել քան երկու անձինք չկարեն գնալ 'ի միում կառի · զի որդելեալ է 'ի տէրութենէն վասն վարձեալ կառաց · Մա-նուկ կամ երեխայ մի կարէ զետեղ և լցէ բաղ-միլ 'ի մէջ նոցա ։

* Կերպարկութիւն կառաց առտ այնքան հարկաւորի որքան հասարակ պիտոյք կենաց ոչ առ դիւրութեան , այլ վասն կա-րի հեռաւորութեան տեղեաց 'ի տեղիս' ուր կատարին գործք · Եւ ուր անհնար է հետի երթևեկս առնել թորց վտանգելոյ զառողջութիւն անձին 'ի սաստիկ խորշակէ արեւու որչափ և 'ի թացութենէ անձրևաց · Ուստի յոյժ ցանկալի լինէր ունել և առտ' զառաձևան շրջողին' զ·աչակաւոր Պոլանկինն Բանգա-լայ , առկայն Մալայիք մեր կարի թոյլ և պղերկ են 'ի կրել զայն յուս իւրեանց' զոր կործիցին թերեւս առաջան կենդա-նեաց · Այլ թէ Անգղիացիք իբրև տիրէին' փորձեցին մատա-նել այսր զայս սովորութիւն , այլ չյաջողեցաւ նոցա վասն այն իսկ պատճառի ·

## ՕՐԻՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՆՈՐԵԿ ՕՏԱՐ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ

Նորեկ օտար Քրիստոնեայքն, այսինքն որք չիցեն ազգաւ Հոլանդացիք՝ ՚ի հասանելն աստ՝ պարտ է յընթացս քան և չորս ժամուց ներկայանալ յատեան ակիզիդէնտին, և ծանուցանել զգալուստ իւր. ուր առեալ զանուն, զհասակ. զտեղի ծննդեան, ուստի և որ նաւով գալն, զգործ և ուր օթևանելն՝ անցուցանեն մի առ մի ՚ի դիւան եկողաց և գնացողաց ՚ի Բաթավիա, Առնուն ՚ի նմանէ անդէն նաև զերկուս երաշխաւորս վասն երից ամսոց. յետ որոյ եթէ կամիցի՝ երկարել աստ ՚ի Բաթավիա, պարտի ՚ի ձեռն խնդրագրոյ (որ արժէ նմա 25 գիլդր՝) առնել ՚ի կուսակալէն զհրամանագիր բնակութեան. մատուցանելով անդէն և զկրկին երաշխաւորս ՚ի քաղաքականացելոց, որոց է պատասխանատուել վասն ազգաց վնասուց առաջնոյն ընդդէմու- րութեան ծագելոց աստ ՚ի պատճառէ հիւանդութեան, աղքատութեան և յայլ ձախող պատահարաց. Մինչ զի եթէ հարկ լիցի նմա ՚ի բաց առաքել աստի, ամենայն յառաջիկայ ծախք կամ վնասք անտի կրեսցեն այն երկու երաշխաւորքն Գին ստացեալ բնակագրին է 110 գիլդր. Օտնի ստացման այսորիկ՝ զոր ոչ զլացան երբէք՝ կոչի նա յատեան ժողովրդական զինուորութեան,

և հրաւիրի մտանիլ 'ի դասս նոցա . ուստի ոչ կարէ ձողոպրիլ թուրց գլխաւոր իմն առթի . զի թէ չիցէ տկարամարմին , հիւանդոտ , կոյր , խուլ , զօսացեալ , ևայլն՝ որ և քննողութեամբ և վըկայականաւ երդուեալ բժշկաց արձակեալ , ոչ թողանի 'ի բաց ։ Նոյց և թէ ազատի՝ պարտ է հաստուցանել ինչ տարեկան ըստ հանգամանաց անձին , 210 գիլդրէ իջանելով ցերկու գիլդր ։

Եւ որ մտանէ 'ի զինուորութիւն , եթէ հետևակազօր՝ տան նմա միայն զհրացան , զվառօդամանն և զմեծ զդակ , իսկ զմնացեալ զգեստուցն՝ և զփոքրիկ գլխարկէն ինքեան է հոգալ ծախելով 'ի քսակէն իբրև 70 գիլդր ։

Այլ եթէ 'ի դասս հեծելազօրաց ցանկայ մտանել , տան նմա զզոյգ մի ատրճանակաց , ըզվառօդամանն , զսուր և զգդակն մեծ , իսկ զմընացեալ զգեստն և զձին յիւր իսկ քսակէ պարտի պատրաստել ։

Այս զինավարժութիւն հաստատեալ է կատարել յԱպրիլի ամսոյ սկսեալ՝ մինչև ցելս Սեպտեմբերի , երկիցս յիւրաքանչիւր ամսոյ . բաց 'ի վարժելոցն՝ որք միայն միանգամ՝ առնեն , Եւ որ ծուլանայ յայս բանի պարտիս՝ հատուսցէ տուգանս՝ յառաջին անգամ՝ վասն բացակայութեան՝ 5 գիլդր , զոր յաղագին երկպատկի Երկրորդ զանցառութեան՝ 10 , և յերրորդումն դնի յարգելանս մի կամ երկու օր ։ Սակայն կա-

րէ հիւանդութեան միայն պատճառաւ բացակա-
յիլ՝ մատուցանելով զվկայական բժշկին ։

Եթէ պատահիցէ հրկիզութիւն ուրեք ՚ի տան-
ջեան կամ ՚ի գիշերի , պաշտօն սորա է իսկոյն
վառել ՚ի զէն և ՚ի զօրս ներկայանալ ՚ի տե-
ղին , ուր և պատրաստ ՚ի տալ զպատերազմ,
եթէ հարկաւոր ինչ իցէ ․ կայցէ ՚ի դիմաց ըն-
նակչացն , և ՚ի զգուշանալ կողոպտից ։ Այն
առնի և յայլ ամենայն պատահարս տագնապից ։
Ամենայն ոք ունի զերիս ամիս ՚ի տարւոջ ան-
դորս պաշտօն ։ Զանցառուին 5 ղրշ տուգանք ։

Այս օրէնք զինուորութեան ընթանայ ՚ի
վերայ իւրաքանչիւր առն Բրիտանեցի եթէ
երկրածին իցէ , և թէ Եւրոպացի կամ օտար
ազգ ՚ի 18 ամաց մինչև ց45 ամ հասակի իւրոյ ․
և որ անցեալ իցէ զ45 ամօք՝ դադարի ․ այլ հա-
տուցանէ ըստ հանգամանաց վիճակին ։

Զօրապարզայ՝ որպէս յիշեցաք յայլուր՝ ար-
գիլեալ է բնակչաց յայլ ուրեք ՚ի Ջավա՝
արտաքոյ Բթավիոյ ։

ԵՐԿՐԱԿԱՆՔ ԲԹԱՎԻՈՅ

Թէ են երկրական բնակիչք Բթավիոյ՝ բաց
՚ի Մալայեցւոց՝ են և Ջավայիք , Սունդա-
դացիք , գերիք և այլ զանազան ցեղք ազգայն
յիշատակելոց յառաջին մասին՝ բայց հասարակ
անուամբ բոլորքն և ս կոչին Մալայացիք ․ ո-
րովհետև ամենեքեան ՚ի նոյն լեզու խօսին՝ ըղ-

նոյն զգեստ զգենուն . և զրեթէ միապէս ունին զձևս և զսովորութիւնս իւրեանց ։ Քանզի եթէ խառն բնակութիւն և եթէ խառն ազգակցութի նոցա ոչ որոշէ զմին 'ի միւսոյն . վասնորոյ զոր ինչ ասացաք զՄ՚ալայեցւոց՝ զնոյն իմա և վասն այլոց բնակչացն Թիմորոյ ։

Յառաջին մասին 'ի հատուած ազգաբանութեան լիովին ասացաւ զբնութենէ և զբարուց Մ՚ալայեցւոց . բայց այն զրեթէ վերաբերէր բնակչացն Սումատրայ՝ որք զանազանին 'ի Մ՚ալայեցւոցն Թիմորոյ, զորոց ասասցուք ինչ ինչ զբարուց և զսովորութեանց աստ առ սեղեաւ ։

Թէև անուն մարդախոշոշ և վայրագ բնաւորութեան Մ՚ալայեցւոց յառաջին ժամանակս սարսեցուցանէր զլսողս ։ որպէս և օդ Թիմորոյ . բայց զոր օրինակ այժմ բարեխառնեալ է օդն , նոյնպէս և բնութիւն Մ՚ալայեցւոց փոխարկեալ է առ մարդավար և ընտել կենակցութիւն . որոց թէպէտ բնական միտումն քինախնդրութեան երբեմնապէս երևի՝ բայց առաւել 'ի նախանձ կնոջ , և ընդդէմ լլկանաց և անիրաւութեանց* ։ Ապա թէ ոչ էր աներ-

* Որպէս ոչ բազմօք յառաջ 'ի սահմանակցութեանն Թիմորոյ՝ իբրև քառասուն մղոնաւ հեռի աստի , 'ի կղզեակ իմն կոչեցեալ Չքանդի Ուգիկ պատահեցաւ արկած ինչ . որ կարի ահ և դողումն էած 'ի միտս դրացեաց . զի 'ի մուտ գիշերի տէր կալուածոցն՝ Պարոն Կամպիլլն ազգաւ Հոլանդացի և ամուսին նորա , հինգ 'ի մատաղ մանկանց նոցա և երկու Եւ-

կիւղ և անկասկած՝ եթէ ընաւ արտացեն քեզ չարիս․ այլ ընդ հակառակն գտցես 'ի նոցանէ ըղձի բարերարութիւն, պատիւ և ազնուութիւն, յորժամ զխոհեցես զեղանակն վարելոյ ընդ նոսա։

## ՊԱՏՃԱՌ ԽՍՏԱՄԲԱԿ ՎԱՐՈՒՑ ՄԱԼԱՅԱՑՒՈՑ ԵՒ ԳԵՐԵԱՑ ՅԱՌԱՋ ԺԱՄԱՆԱԿՍ

ՆԱԽ քան զգալ Եւրոպացւոց և Ե՝ րոպացւոց՝ ամենայն շահամոլամտութիւն կղզեացս ան-

բոպացի մերձակացուք ցանքացն միանգամայն մաշեցան 'ի բերան որոյ բնակչացն․ Եւ այս՝ ոչ միայն 'ի պատճառս բուռն անիրաւութեանցն՝ զորս միշտ կրէին նոքա ձնշելով 'ի գործ և 'ի բաժս արտաքոյ քան զամփոփեալն, այլև հրապարակաւ պատժելոյ զակամուոր ծերունի մի 'ի նոցունց՝ վասն զրկելոյ զոէր իւր 'ի սակս քանի հատ բամբուսց․ վատնանելով զայն 'ի ծածուկ առանց հատուցանելոյ զհաս տէրունի․ թէ և յետոյ աւելի քան ութսուն ոգիք յապստամբութն պատժեցան 'ի սուր, 'ի կախաղան և յաքսորանս 'ի տէրութենէ․ բայց զինչ օգուտ կորուսելոյն, որ ազատելով զմի կամ զերկուս փոքր յերկրականաց 'ի քաղկ իւր․ փախանակեաց զիւր և զիւրայնոց զարիւն Թանկագին․ Յարմէ եթէ 'ի ժամ զենմանն խնդրէր ինչ փոքկանս անձին, կարծեմ զկալուածն միանգամայն և զբոլոր ինչս իւր ոչ խնայէր 'ի ծախել․ զոր այսպէս զիւրայնով կորոյս 'ի փառս ազահութեան․ Այսպէս եւ քանիցս անգամ և 'ի քանի տեղիս պատահեցան այսպիսի չար արկածք, որն վասն ըըլկանաց և անարգանաց, և որն վասն անիրաւութեանց և խոտութեանց․ Բայց երկրականք տեղւոյս ոչ այնչափ վշտանան յանիրաւութեանց մինչև բառնալ զկեանս, որչափ յաւուրջն երկուցն, զոր ընաւ տանել ոչ կարեն․ Այնչի թոյլ տուեալ է նոցա 'ի մեռ կալուածոց փախուրել զատուն իւրեանց առ մեւն յորժամ կրեսցեն ուրեք զանիրաւութիւն ինչ, կամ բողոքել յատեան ատեանն 'ի պահանջել զիրաւունս յանիրաւողին, որպէս և առ նոյն զայս բողոքեցա․ բայց 'ի մեւն՝ ինքնին վրէժխնդիր լինին զինու և մինչև ցմահ պատերազմ են։

ցեալ էր 'ի ձեռս Մալթայեցւոց, զոր յետ գալստեան սոցա խաղաղ կորուսին ։ Թէև այս կարեվէր խոցեալ զնոսա · բայց առաւել ևս խոցեցան՝ յորժամ զկղզին անկան ընդ իշխանութ՟ Հոլանդացւոց ։ Քանզի Հպատակութիւն օտար իշխանութեան և Հնազանդութիւն անսովոր օրինաց՝ կարի դժուարին լինէր նոցա տանել ։ Վասնորոյ և 'ի դոյզն ինչ խստութեան · ըստ բնաբոյս բարուց իւրեանց՝ քինախնդիր լինէին մինչև ցկեանս · որք և բազում անգամ զխաստոզին և զիւրեանց կենաց 'ի միասին խզէին զկապ· այլ այժմ եթէ երկարաւոր սովորութի և եթէ քաղաքական իմաստախոհ կառավարութիւն Հոլանդացւոց ածեալ է զնոսա 'ի մարդավարութիւն և յընտելութիւն ։

Իսկ որչափ վասն գերեաց՝ ասելի է, թէ նախ քան զարգելուլ զվաճառ գերեաց՝ ամենայն ծառայք և աղախինք Եւրոպացւոց գերիք էին · զորս ամ յամէ բերեալ 'ի զանազան կղզեաց աստ վաճառէին ։ Այն և զի սոքա զոգցես վայրենիք էին յաւէտ քան թէ մարդիկ · զորս յածելն 'ի յուղղութիւն՝ բազում անգամ զչարեալ սպանանէին զտեարս իւրեանց · որոյ վասն ասի 'ի յառակս թէ՝ "Ի թողուլ Փորթքեչոյ զայս աշխարհ՝ 'ի մերձին պատարագին անիծանեցին զՀոլանդացիս, մաղթելով զյաջողութի սատանայի իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ՝ զերկու կամ զե-

րիս գերիս ։ Այլ 'ի 1815 ընդ արգելուլ վաճառի նոր գերեաց, հինքն սկսան օր աւուր պակասել. յորոց այժմ մնացեալքն են կարի սակաւաթիւք, և համայնք այն ընդածինք՝ որք ակնածեն 'ի տեարց իւրեանց իբրև 'ի հարանց. և ինքեանք խնամին 'ի նոցանէ իբրև զաւակս. յորոց և բազումք վասն հաւատարմութեան ազատեալ լինին 'ի կենդանութեան կամ յետ մահու տեարցն ։

## ԶԳԵՍՏ. ԲՆԱԿԱՐԱՆ, ԿԱՐԱՍԻ. ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՄԱԼԱՅԵՑՒՈՑ

ԵՐԵՔ են տեսակք զգեստուց Մալայեցւոց. սոսկական. ձոխ կամ շքեղ. և սուրբ կամ կրօնաւորական ։ Առաջինն շինականք զգենուն. երկրորդն՝ մեծամեծք կամ փարթամք. և զերրորդն՝ հաջիք ։ Սոսկական զգեստ արանց է՝ երկայն կամ կարճ բաճու 'ի խոշոր չթից, որոյ կարճն ձգի մինչև ցմէջքն՝ և երկայնն ցծնգունս. վարտիք 'ի գունաւոր կտաւոյ ։ Սարօն (կամ սփածանելի) որ կապի կամ սփածանի 'ի միջոյ մինչև ցվայր ծնգաց 'ի վերայ վարտեացն, և թաշկինակ մի՝ որ կապի 'ի գլուխն ։ Իսկ կանանցն է բաճու մի որ ձգի մինչև ցվայր ծնգաց, և սարօն որ սփածանի 'ի ստեանց մինչև ցկրունկն ։

Ջոխ կամ շքեղ զգեստն արանց կայանայ 'ի շապիկ մի, 'ի ներքին և վերին բաճկոնս 'ի վար-տիս, 'ի սարօն, 'ի գուլպայս, 'ի կօշիկս և 'ի թաշկինակ գլխոյ. ուր ոմանք ագանին նաև զկարճ կամ զերկայն վերարկու: Շապիկն առնի յազնիւ կտաւոյ, վերին բաճկոնն՝ վարտիք և վերարկուն 'ի բեհեզոյ, 'ի մետաքսէ կամ 'ի չու-խայէ: Իսկ կանանցն է լանջանոց մի, բաճու, սարօն և սլէնդան (միկնոց կամ շալ.) զոր կը-րեն 'ի յուս կամ 'ի թիկունս իւրեանց՝ համայնք 'ի բեհեզոյ. 'ի մետաքսէ և կամ յայլ ազնիւ նիւթոց:

Կրօնաւորական զգեստն է շապիկ. և եր-կայն և ծոցաւոր պատմուճան մի 'ի սպիտակ կամ 'ի գունաւոր կտաւոյ. վարտիք և երկայն վե-րարկու, և խոյր մի սպիտակ կտաւոյ. և հո-ղաթափք կամ օղք նման Արաբացւոց: Արք Մալայեցւոց ոչ պահեն զմօրուս. արք և կա-նայք կապեն զհերս գլխոյ:

Բնակարանք երևելեացն են նման տանց Եւ-րոպացւոց՝ քարաշէնք. կահ և կարասիք նոցա փայտաշէնք և ըստ չափու զարդարեալք: Իսկ ռամկայն են բամբուաշէնք, թէ տունք և թէ կարասիք նոցա:

Մալայացիք 'ի բնէ սիրեն զմաքրութիւն. որք եթէ զտուն իւրեանց, և եթէ զգեստ միշտ մաքուր և յստակ պահեն. և բաղու մք յաւու-

րըն երկնիցս կամ աւելի սառն ջրով լողանան ։ Բայց ՚ի խաղինս ոյ ։ ունին զամենայն զուարթ մը-սեղի և զծխունս ։ Հասարակական կերակուր չինականաց է ձաւ կն ․ կամ աղի ձու բայլ եւ-խարշեալ բրինձ ։ Ձգինի կամ օղի ոչ ըմպեն ։ բայց բազումք ՚ի նոյանէ ծխեն զափիոն ։ Սի-րեն զբօսանս յոյժ ․ բայց չեք նոցա այգային զբօսացուցիչ խաղ ինչ ։ Գտանին միայն ՚ի նո-սա պարացիկք՝ որք կոչին ռօնգէն ։ և խաղար-կուք կամ դերասանք որք՝ կոչին տօպէնք ․ որոց եթէ պար ։ եթէ երգ և եթէ խաղք՝ կարի զզուե-լի են օտարաց ․ չցուցանեն ինչ զարհեստ կամ զգայմունս ․ թէև ինքեանց արդարև յոյժ հա-ճոյական ։

Նուագարանք նոցա են զամբլանգ և անկը-լօնգ ․ զորոց ծանուցեալ եմք յառաջին մասին գրոցս ․ և երկոքին եւս անախորժ են լսելեաց ։

Արդէն իսկ ասացաք թէ մալայացիք են մահ-մետականք ․ և թէ ոսան ընկալան զայս կրօն՝ ծանուցեալ եմք ՚ի մասն առաջին ՚ի հատուածն կրօնից ․ բայց յոյժ սակաւ ոմանք գտանին՝ որք կատարելապէս գիտիցեն ինչ զդաւանութեան իւրեանց ։

Սամիկք բուռական համարին լոկ լահլա հիլ-լլահ ասելն ․ և զայս թլպատելով կոչել մահ-մետական ․ այլ ձնացեալ մասամբք՝ ըստ զա-նազան կարծեաց իւրեանց յաւէտ կռապաշտ են քան մահմետականք ։ Քանզի սնոտի աւարա-

ղութիւնք նախնի հեթանոսաց և դիւապաշտ մոլորութիւնք դեռ ևս անջնջելի լինին 'ի նոսա, որպիսի են հաւահմայութիւնք, գերեզմանապաշտութիւնք. ծառապաշտութիւնք. երկիւղ կամ՝ սարսափ չար հոգւոց և 'ի դիւաբնակ կործեցեալ տեղեաց.

Ամբուր հիւանդի (* "աղօթել,") ծխուած դարչահոտ խոյս վասն 'ի բաց վանելոյ զչարակնութին, առասպելեալ նշանք յաջողութեն կամ ձախորդութեան. և այլն, հաւատ 'ի զօրութիւնս զանազան քարանց և ականց. իբր թէ ընդ պահիլն տալոց լցեն նոցա յաջողուածս. զոյժ մարմնոյ. արժանի անձանց բարեբաղդութեան. խափանելոց զարկածս և չար դիպուածս. կապելոց զլեզու՝ և այլն, որք անուանին 'ի նոսա մուսափկա. (քարոզեալ՝ նիւթք ամենք) բառու բանի (մաղնիսանման քար լինչ,) բերդուրի փանդան

* Իսկ չեն սոքա այնքան սոզանաց արժանի, որք սակաւ են 'ի խաւարի անհաւատութեան կան, այնինչ ցաւօք և զարհուրանօք է մեզ հայել 'ի բաղմապիսի և հանգունակ մոլորութիւնս անապաշտս, յորս սատակազգայն իմն նախապաշարմամբ կան թաղեալք տակաւին միտք բաղմաց 'ի պաշտօնէից լուսաւորեալ հաւատոյ մերոյ. Այլ երջանիկ է այրն՝ որոյ հոգի վառեալ է ճշմարիտ աստուածպաշտութեամբ. և զեւր պաշտօն և երկրպագութիւն բերէ միայն միայնոյ երկնաւորին, որ արար զինքն և առեղծ զայլ ամենայն ինչ 'ի վայելումն իւր. Վասնորոյ խաւար գիշերին վասն նորա է զօր պայծառ. ամենայն այսպիսի ունայն պաշտամունք երկիւղ և արհաւիրք արարածոց ոչ ինչ են՝ և ոչինչ համարին նմա.

(կաթնանիշ քար ինչ․) ինտան բութակ․ (սեաւ անդամանդ ) եւայլն․ կարի յաճախեալք են 'ի նոսա ։ Իսկ կատարեալքն թէ եւ չեն միանգամայն ազատ 'ի մոլորապաշտութենէ․ բայց և պահեն զամենայն աւանդութիւն կրօնի իւրեանց․ զի Թլպատեն զտղայս 'ի 10 կամ 'ի 12 ամաց հասակի․ զոր և ոմանք կատարեն մեծաւ հանդիսիւ ։ Աղօթեն յաւուր ին հինգ անգամ․ պահեն զծոմ յամսեանն Ռամազանի․ կատարեն զզատիկ յետ պահոց․ և զնոր տարի յամսեանն Ռաբըլավալ․ զոր ծննդեան մահմէդի․ և յամենայն ուրբաթի երթան 'ի մզկիթ աղօթել․ որք նախ լուանան զոտս․ զձեռս , զերեսս․ զգլուխս․ և ապա բոկ ոտիւք մտանեն 'ի ներքս․ որոց և սովորութիւն է 'ի մտանելն նախ դնել զաջ ոտն 'ի ներքս , և յելանելն զձախ ոտն արտաքս՝ որ է նշան յարգանաց ։ Արշնակ նոյա է զոս մեծ՝ զոր հնչեցուցանեն 'ի ժամ աղօթից․ չունին զանգակ և ոչ զծնծղայ ։ Նոքա ոչ ուտեն և ոչ ըմպեն , ոչ ծխեն և ոչ զլուացեն․ այլ պատիւ և ահ մեծ տանին՝ համարելով իբրև զտուն Աստուծոյ․ ուր և լռութեամբ կացեալ կամ 'ի ծունկս անկեալ աղօթեն ։ Ոմանք 'ի գնալն 'ի մզկիթ․ զգենուն զհանդերձս սպիտակս 'ի նշան մաքրութեան․ բայց յայսպիսի Ճերմակազգեցաց զգուշանալ պարտ է , նա մանաւանդ՝ որք հաջիք կամ կարդացողք են նոյա․ քանզի յամառեալ դո-

լով 'ի կարծիս մոլար հաւատոյ իւրեանց՝ ոխե-րիմ թշնամիք են օտար կրօնից ․ յատկապէս՝ քրիստոնէական հաւատոյ ․ վասնորոյ և ոչքա ․ այն է՝ հաջիքն էին սկզբնաւորք ամենայն խռովութեանց ․ որք 'ի զանազան ժամանակս ծագեալ եղեն 'ի Ջաւա և 'ի Սումատրա ։ Ո 'ի յամենայն ապստամբութեան գլուխ և առաջնորդ լինէին խաժամուժ ամբոխ և գրգռէին զնոսա 'ի մարտ ․ քանզի ոչինչ համարէին ըզզօրութիւն Հոլանդացւոց ․ և զհրաշէնս նոցա ապաղօր ամենայն համբաւէին ․ բայց փորձն բազմիցս եցոյց ամբոխաց զստութիւն կարգացողաց իւրեանց ։

## ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՄԱԼԱՅԵՑՒՈՑ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ Մալայեցւոց կատարի 'ի բազում մեծաւ հանդիսիւ ։ Նախ ընտրի հարսն 'ի ծնողաց փեսային ․ գին հատանի նմա՝ իբրև օժիտ , որ 'ի նոցանէ կոչի մաս կավին ( ամկի ամուսնութեան ․) հրաման առնու 'ի Կոմանդանէն և սպասի 'ի հաջեաց ։ Որք և առնեն զօրէնս նախ քան զպսակելն ․ քննեն եթէ որդոյն թլպատեալ իցէ ․ եթէ ճշմարիտ Մահմեդական իցէ , եթէ իցէ 'ի չափ հասակի 12 կամ 15 ամաց , եթէ զգայ զսէր կնոջ ․ և եթէ հարսանեացն ոչ է գերի կամ անհաւատ ոք ․ Պարծեալ՝ որ հիւանդ է մարմնով և ակար միտք ,

որ անմիաբան է ընդ ընտրութիւն ծնողացն. և ուխտեալ է երթալ 'ի Մաքքա՝ ոչ թոյլ տայ ամուսնանալ։

'Ի կատարել զխորհուրդ պսակին, պարտին ունել զերկու վկայս յերեւելի արանց 'ի ներկայ Էմինայն ընտանիք՝ բարեկամք և ծանօթք փեսային և հարսին կոչին 'ի հարսանիս. և զգեցուցեալ զփեսայն 'ի շքեղ հանդերձս, խոյր կապեալ 'ի գլուխ նորա՝ իբրև զթագ իմն. և հեծուցեալ յերիվար՝ առաջնորդեն փեսաւէրքն երգօք և նուագարանօք առ տուն հարսին։ Եւ իբրև հասեալ անդր՝ ծնողք և ազգականք հարսին՝ ընդ առաջ ելեալ ստանան զփեսայն և ըզփեսաւէրսն 'ի ներքս. ուր պատրաստին օշարակօք, խահվէիւ, քաղցրաւենիօք և պտղովք։ Ապա առեալ զհարսն՝ բազմահարուստ զգեստուք և զարդուք զարդարեալ՝ նստուցանեն 'ի պատգարակ գեղեցկաշէն, և դառնան 'ի տուն փեսային։ Ուր իջուցեալ զփեսայ և զհարսն՝ մուծանեն յառագաստ նոցա, որ է գահ մի փառաւոր զարդարեալ բեհեզօք և ծիրանեօք։ Յոմանց յերիս աւուրս և յոմանց եօթն աւուրս կատարի հանդէս հարսանեացն. և 'ի նոյնչափ օր պարտին փեսայ և հարսն նստիլ 'ի նոյն գահ փառաւոր։ Են և ոմանք՝ որք զփեսայն պահեն 'ի տան հարսին զերիս աւուրս։ Զայս մի ինչ ես արժան է գիտել, զի որպէս 'ի Ջուղա կոչնականքն

Հարսանեաց առաքեն զթաբաղս 'ի տուն փեսա-յին կամ հարսին՝ սոյնպէս և սոտ՝ ամենայն ոք առաքէ զընծայս ինչ ըստ կարեաց իւրոց․ ոմանք զհաւ․ և ոմանք զսագ կամ զբադ․ կամ զոչխար կամ զպտուղ և կամ զքաղցրաւենիս․

## ՄԱՀ

Որպէս ամենայն Մահմետականք՝ սոյնպէս և Մալայացիք տան զմահն ճակատագրին․ և յատ-կապէս 'ի կարծիս են թէ, որ յայսմ կեանս կը-րեաց զատանջանս․ զնեղութիւն և զանարգանս, 'ի հանդերձեալն գտցէ զանդորրութիւն, զխն-դութիւն և զփառս․ Վասնորոյ մեռանողն սի-րով ընդունի զմահ իւր․ և կենդանի ազգականք նորա ոչինչ կարի ցաւօք տրտմին ընդ կորուստ սիրելւոյ իւրեանց․ որք և 'ի մխիթարելն զին-քեանս ասեն, "ապա բօլէ բուատ․ տուան Ա-լահ պունիայ սուքա․" (զի՞նչ կարեմք առնել կամք Տեառն) որ 'ի մեզ ասի՝ Կամք Տեառն օրհ-նեալ եղիցի․

Մալայեցիք կարի սիրեն ուտել զճաշ մեռե-լոյ․ զոր և կոչեն մաքան միննում օրանգ մատի, (ուտել ըմպել զճաշ մեռելոյ․) ուր ժողովին բազմութիւնք յընտանեաց, 'ի բարեկամաց և 'ի ծանօթից․ ընդ նմին և հաշիւք ոմանք վա-յելեն զճաշն՝ պատրաստեալ 'ի ստացուածոց կամ 'ի մերձաւորաց մեռելոյն․ և կամ յարկե-

դէ ողորմութեան՝ որ կոչի բէթիլ մալ․ Բազմականք կամ յայտականքն 'ի մուտ իւրաքանչիւր ազգականաց մեռելոյն բարձրաձայն հնչմամբ գոչեն "Հա՛ Հա՛ ալլահ, Հա՛ Հա՛ ալլահ (մի՛ Աստուած · մի՛ Աստուած ։) Իբր զայս կրկնեն աւելի քան հարիւր անգամ․ որ կարի ձանձրացուցանէ զլսելիս ։

## ԹԱՂՈՒՄՆ ՄԵՌԵԼՈՑ

ՄԵՌԵԱԼՆ լուանի և պատանի 'ի սպիտակ կտաւ, և եդեալ 'ի վերայ տախտակի՝ կամարաձև ծածկի շերտիւք բամբուկոյ, Նոյա արկեալ 'ի վերայ նորա սփռոց ինչ 'ի բեհեզոյ, և 'ի վերայ նորա արկանեն զփունջս ծաղկանց, եւ բարձեալ 'ի յուս իւրեանց տանին 'ի գերեզման՝ և ամփոփեն զմարմին նորա 'ի հող՝ առանց արկղի. Յետ թաղելոյ զմեռեալն, են՝ որ կատարեն զաղօթս 'ի վերայ գերեզմանի նորա ցքառասուն օր, զի յամենայն օր առաքեն զհօջի մի կարդալ տալ զղուրանն 'ի թողութիւն մեղաց նորա ։ Ունին և զսովորութիւն տալոյ եօթնօրեայ՝ քառասնօրեայ, հարիւրօրեայ, տարեկան և հազարօրեայ ճաշ հոգւոյ մեռելոյն ։

## ՆՈՐԱՁԵՒ ՏՈՒՆՔ ԲԹԱՎԻՈՑ, ԿԱՐԱՍՒՔ ԵՒ ԾԱԽՔ ԵՒՐՈՊԱՑՒՈՑ

ԹՒԷՊԷՏԵՒ բազում են ձևք տանց հնոց և նորոց . մեծ, փոքր, միջակ, միտակ, երկատակ, և այլն. բայց այժմեան հաւանեալ ձև

տանց այն է՝ որ կառուցեալ է 'ի վերայ լայն և ընդարձակ գետնոյ. 'ի բաց օդի և յերևելի տեղւոջ. որ ունի զմեծութիւն ըստ երկայնութեան 75 ոտից. և ըստ լայնութեանն 55ից. եւ ըստ բարձրութեանն 'ի գետնոյ մինչև ցյատակեալ տեղին երեք կամ չորս ոտ. և 'ի յատակեալ տեղւոջէն մինչև ցառաստաղն 18։ Իսկ որ ունիցի զճեմելիս երկու. այն է՝ վարանդա. մին 'ի յառաջոյ. և միւսն 'ի յետուստ. և 'ի միջին տեղի դահլիճ մեծ. և յիւրաքանչիւր կողման դահլճին՝ զերկուս կամ զերիս ընդարձակ սենեակս. և 'ի նոսա չափաւոր դրունս և զպատուհանս։ Առաստաղն տախտակամածեալ. և տանիքն ծածկեալ կղմնդրօք. յատակն յօրինեալ թրծեալ մեծ աղիւսօք կամ սալիտակ մարմարիոնօք. Ճեմելիքն 'ի յառաջոյ սիւնազարդեալք և վանդակեալք. և 'ի միջոյ կամ 'ի կողմանց՝ արկեալ զեղեցկայարմար ընդարձակ աստիճանօք. և յերկուքին կողմանէ տան՝ կամ 'ի միջոյ արարեալ լայն ճանապարհ մինչև ցդուռն դաւթին. և անտի գեղեցիկ կամարօք առ արքունի ճանապարհն։ Նաև որ 'ի յետուստ տանն յերկացունց կողմանէ ունիցի զչափաւոր արտաքին շինուածս. այսինքն՝ որոյ 'ի մի կողմն են շտեմարան ուտելեաց և ըմպելեաց. խոհարան բապստարան. բնակարան ծառայից. ջրանոց. փայտատուն. բաղանիս՝ և այլն. իսկ 'ի միւս կողմն

են կտաւատուն , ախոռ ձիոց եւ բնակարանք կա-
ռավարի եւ տպատանենկայ , խոտատուն կամ
յարդանոց եւ հաւանոց ։ Գոմունք եւ պատուհանք
համակ ներկեալ 'ի կանաչ , եւ առաստաղքն 'ի
սպիտակ . եւ գետինն ստի եւ անտի արուես-
տարկեալ 'ի պարտէզ ծաղկանց եւ անկոց ։ Նայա-
պլին տունն 'ի դաշտին արքունի՝ արժէ 30.000
գիլդր . 'ի Կրուկուտ՝ 'ի Գրունո գաւառի , 'ի
Պյարտապատան , եւ 'ի հեռաւոր մայրս . 18.000.
եւ 'ի Ճանապարհին Տանաբանդայ , 'ի Օւէզվէկ
'ի Նորդվէկ եւ 'ի Վէլդրֆրէդ՝ 24.000.

Կահք եւ կարասիք տանց են պէսպէս լուսա-
փայլ լապտերք կամ կանթեղք . եւ այլ Ճրա-
գարանք՝ համակ Բրօնզեայ ( որ է խառնուրդ
հրահալելեաց ,) եւ ապակեզարդք , հայելիք , գե-
ղեցկանկար պատկերք , աթոռք , սեղանք , բազ-
մոցք , պՃնասեղանք , լուացարանք , շքեղ ան-
կողինք , պահարանք զգեստուց , սփռոցք , ըմ-
պանք սեղանոյ , եւ այլն ։ Որ առ 'ի միջակ եւ յար-
մարապէս զարդարել զտունն ըստ վերոյ նկարա-
գրութեանն , ոչ ծախի պակաս քան ութն կամ
տասն հազար գիլդր . եթէ փայտեղէն կարասիք
են եւ բոլորշէն եւ կազմեալք 'ի Մահագնեայ
փայտից . բայց եթէ կազմեալ 'ի Բեթուլեան եւ
յՍմընեան փայտից՝ ծախի կիսով չափ . յորս
են եւ կառք եւ երիվարք 'ի զանազան տեսակաց եւ
'ի զանազան գնոց ,

'Ի կառաց երեւելագոյնն և հասարակաց գոր-ծածկլեքն են՝ երեք. այսինքն՝ մի Վիկտորիա՝ որ է քառանիւ և երկանիստ՝ շքեղագոյնն արժեցեալ 1500է ց2000

Երկրորդ Բարուշէժ՝ քառանիւ և միանիստ ես 1200է ց1500

Երրորդ Բէնդի կամ Բգի՝ որ է երկանիւ եւ միանիստ ես 400է ց500

Ընտիրն յերիվարաց գայ 'ի Մակասարայ. որ արժէ 150է մինչ 200 գիլդր ։ 'Ի Բիմայ. ի Թիմուրայ և 'ի Սանդալվուդայ. որք արժեն 100է մինչ ց150 գիլդր. Իսկ երիվարք Ջա-վայ են տեսակ տեսակ, ուստի և զանազան գնոց, յորոց ոմանք արժեն 25 գիլդր. և ոմանք մինչև 200 և 300 ։

Գտանին երբեմն և Թզուկ ձիք, որք չեն մեծ քան զոչխար, և պահին միայն 'ի տես կամ 'ի զբօսանս մանկանց ։

Յաղագս ծախուց Եւրոպացի բնակչացն Թէ և դժուարին է զատոյգ հաշիւ տալ աստ, զի ամենայն անհատ ծախէ ըստ կարեաց վիճա-կի իւրոյ՝ կամ ևս յաւէտ՝ ըստ քմաց. բայց և եթէ առաջի արասցուք աստ զմիջոց ծախուցն՝ որք են վարձ տան և ծառայից, գին ուտելեաց ըմպելեաց, զգեստուց և այլն, յայնժամ չիցէ դժուարին իմանալ թէ որ կամիցի այսպէս կամ այնպէս կեալ, որչափ արդեօք բովանդակեսցէ

ամսական ծախք տան նորա ։

Վարձք տանց են ըստ մեծութեան և ըստ տեղւոյն՝ ուր շինեալ է ։ Յորոց են՝ որք արժեն 25, 30, 40, 50, եայլն. մինչև ց100 գիլդր. և են՝ որք արժեն 110, 120, 130, եայլն, մինչև ց200, 250 և 300։

Այլ վարձ տան ըստ 'ի վեր անդր ստորագրութեան՝ է որպէս 'ի Կրուկուտ, 'ի Գունունդարի, 'ի Պարապատան և 'ի Հեռաւոր վայրս՝ յամսին 150 ։

'Ի Ճանապարհին Տանաբանգայ, 'ի Ռէզվէկ և 'ի Վէլդրֆրէդ՝ յամսին 240։

'Ի Կօնինգս Պլէյն (կամ յարքունի դաշտին) 250։

ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁ ԾԱՌԱՅԻՑ

| | Գիլտր | Ստուէր |
|---|---|---|
| Ծառայ մի՝ սպասաւորելու տեառն | 10 | ,, |
| Նաժիշտ կամ աղախին մի .... | 10 | ,, |
| Մառանապետ կամ (բօթլէր).. | 12 | ,, |
| Խոհարար (երկրական) .. .. | 12 | 50 |
| Բանդայցի .. .. .. .... | 20 | ,, |
| Չինէացի .. .... .... | 30 | ,, |
| Կառավար .. .... .. | 12 | 50 |
| Նպաստանակ՝ որ զգու շանայ 2 կամ 3 ձիոց .. .. .... | 8 | 33 |
| Պարտիզպան .. .. .. | 7 | ,, |
| Թափիչ (որ առ ամսին լու անայ | | |

| | | |
|---|---|---|
| 3 անգամ) .... .. .. | 6 | 66 |
| Որ հօրն բով առ Հայրիկն .. | 8 | ,, |
| Խօսք վասն մի ձիոյ ամսական .. | 5 | ,, |
| Եւ թեփոյ եայլն .... .. | 2 | ,, |
| Մանուռ .. .... .... | 25 | ,, |
| Կօրարար կլին .... .... .. | 10 | ,, |
| Կամ վասն մի կտոր հանդերձին .. | ,, | ,, |
| **ՎԱՐՁ ՈՒՍՄԱՆՑ ՄԱՆԿԱՆ** | | |
| Ի ՏԷՐՈՒՆԵԱՆ Պօղոսյին թէ մի | 10 | 10 |
| թէ երկու .... .. .. | 16 | ,, |
| Յայլ դպրոցս՝ յորս ուսուցանի զե- | | |
| րկոլեզուս և գրոց .... .. | 25 | ,, |
| Եթէ սեղանակից և բնակակից .. | 75 | ,, |
| Վասն ուսման երաժշտութեան | | |
| յամիս 8 անգամ դաս տալոյ .. | 35 | ,, |
| **ԳԻՆՔ ՋԱՆԱԶԱՆ ԻՐԱՑ** | | |
| 12 ՃԱՒՈՒՑ միջակ գին .. .. | 2 | 50 |
| 3 Նալ .. .. .... | 1 | ,, |
| 1 Սազ .. .... .... | 1 | ,, |
| 1 Ճնդկահաւ .. .. .. | 3 | ,, |
| 4 Աղաւնի .... .. .. | 1 | ,, |
| 3 Փօնդ միս արջառոյ .. .. | 1 | ,, |
| 4 Փօնդ Խոզի .. .. .. | 1 | ,, |
| 1 Ազդր կամերի ոչխարի .... | 1 | 50 |
| 1 Փօնդ կոզի-կարագ .... .. .. | 2 | ,, |

| | | |
|---|---|---|
| 1 Տակառ որ է 12 Պօնտ կոգի կամ | | |
| իւղ Հոլանդայ .. .. .. | 18 | ,, |
| (երբեմն 10 կամ | 12) | ,, |
| 1 Փիքուլ սպիտակ բրինձ .... | 6 | ,, |
| (երբեմն 8 և | 9) | |
| 1 Սայլ փայտ այրելոյ · որ է | | |
| 3 կանգուն երկայն 6 կանգուն | | |
| բարձր, և 1 կանգուն լայն .... | 3 | 50 |
| 1 Փիքուլ իւղ նարգլի, որ է 82½ | | |
| բօթլ .. .. .. .. | 30 | ,, |
| (երբեմն 20 — | 25) | |
| 5 Կաթի Շաքար .. .. .. | 1 | ,, |
| 6 Կաթի խահվէ .. .. .. | 1 | ,, |
| 1 Կաթի չայ .... .. .. | 2 | ,, |
| 4 Բօթլ կաթն .. .. .. | 1 | ,, |
| 1 Փիքուլ աղ .. .. .. .. | 6 | 66 |
| Բանջարեղէնք համեմունք և պը- | | |
| տուղք յամին .... .. .. | 15 | ,, |
| 12 Բօթլ գարեջուր .. .. | 10 | ,, |
| 12 Կարմիր գինի (կլարէտ) .. | 12 | ,, |
| 12 Մադերա գինի լաւն .. .. | 36 | ,, |
| Միջակ .... .... .. | 24 | ,, |
| Հասարակ .. .... .. | 15 | ,, |
| 12 Բօթլ կօնեակ բրանդի .. .. | 20 | ,, |
| Միջակն .. .. .. .. | 15 | ,, |
| Հասարակն .. ...... .. | 12 | ,, |
| 1 Արկղ ջին (օղի Հոլանդացւոց) | | |

| | | |
|---|---|---|
| 15 մեծ բօթլն .. .. .. | 15 | ,, |
| 12 Բօթլ Պօրտ գինի .. .. | 36 | ,, |
| 12 Շամպէն .. .. .. | 48 | ,, |
| 25 Բարաքօթլ մինրալ վատր (Հանքային ջուր) .. .. | 12 | ,, |
| 1,000 Զուրուֆ Մանիլյա թիւ 4 | 45 | ,, |
| թիւ 3 .. .. .... | 55 | ,, |
| թիւ 1 .. .. .. | 110 | ,, |
| 1 զոյգ կօշիկ .. .. .. | 5 | ,, |
| 1 Հատ գդակ .... .. | 16 | ,, |
| 12 Շապիկ .. .. .... | 36 | ,, |
| 12 Ներքին բաճկոն Ճերմակ (վասկէթ) .. .. .. | 18 | ,, |
| 12 Վերին բաճկոն (ջակէտ) .. | 36 | ,, |
| 12 Վարտիկ ներքին (Շալդրաղ) | 18 | ,, |
| 12 Եւս՝ վերին (Պէնտոլոն) .... | 36 | ,, |
| 1 Եւս՝ ի չուխայից .. .. | 50 | ,, |
| 1 Բաճկոն, ջակէթ. նոյն .... | 50 | ,, |
| 1 Վերարկու եւս (կօտ) .. .. | 75 | ,, |
| 12 Թաշկինակ .... .... | 7 | ,, |
| 1 Մետաքսեայ փողպատ .... | 6 | ,, |
| 12 Գուլպայ .. .. .. | 10 | ,, |
| 1 Ընդամ մազ կտրողի . .. | 1 | ,, |
| 1 Ընդամ այց բժշկի .. .. | 2 | 50 |
| 1 Ընդամ դեղի ըստ Հաճոյս դեղավաճառի, որոյ փոքրագինն է.. | 2 | ,, |
| Օտարագինն.. .. .... | 6 | ,, |

Արդ 'ի համառօտ ցուցակէս Հարկաւոր ծա-
խուց Ընթանկոյ` որ և հազիւ զանազանի 'ի միւս
երևելի քաղաքս Պ'աւլայ` յայտնի երևի, զի չեն
թեթև ինչ. որպէս զի` եթէ գերդաստան մի ըն-
տանեաւ իցէ 'ի տան միում ըստ նկարագրելոյ
'ի վերագոյնդ. և ունիցի զկառս և զձիս կամ
զմեց երկվարս. ըստ չափու տնտեսութեան
իւրոյ զծառայս և զմայեկչութիւնս, ոչ կարէ
պակաս քան զամենայ 800 կամ 1000 գինդր դը-
րամով լնուլ զբովանդակ ծախս իւր. եթէ և
չշռայլիցէ անդր քան. — Թէ և չիցէ մի կամ միւս
միջոցաւ բաղդաւորեալ, 'ի փոքու ինչ ժամա-
նակի ճնշի 'ի ներքոյ ծանրագոյն պարտուց 'յո-
րոց Տէր փրկեսցէ.

## ԴՐԱՄՔ. ՉԱՓՔ ԵՒ ԿՇԻՌՔ

Թէ և 'ի մասն առաջին ուրեք ուրեք յիշա-
տակեալ է մեր զտեսակ և զարժէս դրամոց, և
զչափ և զկշիռ իւրոց ինչ, բայց ոչ զամենայն.
վասնորոյ Հարկաւոր Համարիմ աստ առանձին
Հատուած կարգել վասն այնց, և 'ի մի վայր
բովանդակել զգործեալսն. որք են

100 Պուլոնքն` փող, առնեն մի պղինձ գինդր
առւփի.

100 Սէնտքն` տուկրա, կամ 120 պու խաքն
են մի ախիպլս` (քաղաթ առուփի.)

140 Գուրուշքն՝ 1 արծաթ գիլդր՝ (զուգ արծաթ ռուբլի.) և 144 գուրուշքն են գին մի ռուբլիանոց սէգլի՝ կնքաթղթոյ.

| | Վաճառի | Տէրութեան |
|---|---|---|
| 1 Սպանիու մարչիլն է | 5 ախակիս | 2 55 |
| 1 Կումպանոյ ռուբլին՝ | 1 35 | 1 15 |
| 1 Վիլլէր պլան՝ ոսկի դահեկան. | 11 ½ | 10 |
| 1 Գուկատոնն՝ | 48 ց50 | 40 |
| 1 Պօն սուէրլինկն | 14 | 12 50 |
| 1 Գուկատ նորն՝ | 6½ | 5 50 |
| հինն | 7½ց18 | |

Այլ յայսցանէ հատորակայ՝ի գործածին միայն պղինձ ռուբլին և ախակիսն. իսկ մնացեալքն միայն տուրեւառին որպէս այլ վաճառք. որք երբեմն յաւելուն և նուազին ՚ի գինս իւրեանց.

ԶԱՓՔ ՀԵՂԱՆԻԹՈՑ.—1 Կանն է 2 բօթլ. 35 բօթլքն են մի տակառ. 1 տակառն է 40 քաթի կամ 100 պօնդ. և 2½ տակառն մի փիքուլ կամ 50 քաթի. Այս չափարանք ՚ի կիր առնուն միայն ՚ի վաճառս ձիթոյ.

12 Բօթլքն առնեն 1 դուզին. և 4 դուզինքն՝ մի անկէր.

500 Բօթլքն կամ 25 դուզինքն մի փատ՝ (կէս տակառ,) կամ մի օքսհօֆթ. և 600 բօթլքն կամ 50 դուզինքն՝ մի փայփ (տակառ) և այսոքիկ են չափք ըմպելեաց.

ԸՆԴԵՂԻՆԱՑ ։—8 ԲԱԹՍԿՔ՛Ն առնեն մի գանթամ՝ (գրիւ.) մի գանթամն է 10 քաթի ․ և 10 գանթամքն են մի փիքուլ ։

1 փիքուլն է 100 քաթի կամ 125 պօնդ․ 1 քաթին է 16 դայիլ․ և 1 պօնդն՝ 12 դայիլ․ 1 դայիլն՝ 1½ մառչլաքաշ կամ 9 մսխալ ։

27 փիքուլքն առնեն մի կոյեամ 'ի Բթավիա, այլ 'ի Չէրիբօն և 'ի Սուրբայեա 30 փիքուլքն և 'ի Սամարանգ և 'ի Թէգալ 28 փիքուլքն ։ Ըստ միայն բրինձն վաճառի գանթամով և կօյեամով․ իսկ այլ բերք փիքուլով․ Ոսկի և արծաթն՝ դայիլով կամ մառչլաքաշով ։

ԿՃԻԹ ՆԱԻԱԲԵԹԱ՛ՆՑ ։—16 ՓԻՔՈՒԼՔՆ առնեն մի տօն․ և 2 տօնքն՝ մի լաստ ։

ԿՏԱԻԵՂԻՆԱՑ ։—27 ԴԻՒՄՔ կամ ինչք (բոյթ ․) առնեն մի էլ․ և 36 դիւմքն՝ մի անգղիական եարդ ։

Դարձեալ՝ 4 էլքն են 5 անգղիական եարդք՝ 10 էլքն՝ 6 գաղղիական եարդք կամ 7 մէտէրք ։ 14½ էլքն՝ 10 նէդէրլանդեան էլք․ և 100 էլքն՝ 103 գերմանացւոց էլք ։

ԳԵՏՆԻ ։—12 ԴԻՒՄՔ՛Ն առնեն մի փուտ՝ (ոտ․) 6 փուտն՝ մի փադամ (գիրկ ․) և 2 փադամքն՝ մի րուդ՝ (ձող․) 475 րուդքն՝ մի պալ՝ (ցից ․) և 4 պալքն՝ 5 մղոնք ։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ

## ԳԼԽՈՑ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐ ԳԻՏԵԼԵԱՑ ՊԱՐՈՒՆԱԿԵԼՈՑ ՅԱՌԱՋԻՆ ԵՒ ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ ՃԱՎԱՑ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ


| | Գլ. | Էջ |
|---|---|---|
| *Սահման և տարածութիւն բազմակղզի ծովու արևելեան Հնդկաց* ....... ....... | ա | 1 |
| *Եղանակ տարւոյ և հողմ* ....... ....... | բ | 3 |
| *Թիւ և ազգք բնակչացն* .. .... .... | գ | 5 |
| *Բաժանումն կղզեացս, ընդ նմին և սահման, չափ և թիւ բնակչացն* ....... .. .. | դ | 35 |
| *Որպիսութիւն օդոյ* ....... .... .... .. | ե | 43 |
| *Տէր գիշերահաւասարին ի Ջավա և յայլ կղզիս* ....... .. .. .... .... .. | զ | 48 |
| *Եւրոպացի և Հայ բնակիչք* ....... .... | է | 49 |
| *Բերք* .... ....... ....... .... | ը | 63 |
| *Պիտանութիւն նարգլի ծառոյ* ......... | թ | 72 |
| *Միջոց ապրուստի երկրականաց* .. .. .... | ժ | 79 |
| *Ներքին ջուրք լերինք և հնութիւնք* .... | ժա | 85 |
| *Լեզու* .. .. .... ....... .... | ժբ | 96 |
| *Կրօն* .. .. .. .. .. .. | ժգ | 109 |
| *Բնիկ կառավարութիւն* .. .. .. .. | ժդ | 116 |
| *Օրինական կառավարութիւն* .. .. .. | ժե | 119 |
| *Կարգադրութիւն և օրէնք վասն Ըստենակականաց* .... .... .. .... .... | | 124 |

| | Գւ. | Էջ |
|---|---|---|
| Իշխանութիւն եւ պաշտօն իւրաքանչիւր ատենի .... .. .... .... .. | | 126 |
| Բաժանումն կառավարութեանց .... .. | | 134 |
| Քաղաքական կարգադրութիւն .... .. | | 135 |
| Սահմանեալ տուգանք .. .. .. .. | ժդ | 139 |
| Եկամուտ տէրութեան .. .. ...... .. | ժե | 146 |
| Ծանօթութիւն հարկատուութեանց եւ տէրութենական մենավաճառութեանց .. .. .. * | ժը | 149 |
| Եղանակ եւ կարգադրութիւն մաքսատուութեանց | ժթ | 160 |
| Ցուցակ առաջին մաքս ըմպելեաց՝ եկեալ ի բուն տեղեացն .. .. .. .. .. | | 161 |
| Ցուցակ երկրորդ մաքս ասուեղինաց եւ կտաւեղինաց .. .. .. .. .. | | 165 |
| Ցուցակ երրորդ մաքս զանազան իրաց Եւրոպիոյ, Ամերիկոյ եւ Կէպայ .. .. .. | | 166 |
| Ցուցակ չորրորդ մաքս իրացն՝ եկեալ ի կղզեացն արեւելեան Հնդկաց եւ մուծեալ ի Ջավա եւ ի Մադուրա .. ...... .... | | 171 |
| Ցուցակ հինգերորդ մաքս զանազան իրաց՝ եկեալ ի Բրիտանեան Հնդկաց, ի Քօչինչինայ, ի Սիամայ, յաշխարհէն Չինէացւոց, ի Ճապանայ եւ ի Պարսկաստանայ եւ մուծեալ ի Ջավա եւ ի Մադուրա .. .. | | 173 |
| Մաքս զանազան իրաց՝ հանեալ ի Ջավայ եւ ի Մադուրայ առ զանազան տեղիս .. .. | | 175 |
| Մաքսատուութիւն ի Սումատրա՝ որ ընդ իշխանութեամբ Հոլանդացւոց .. .. .. | իա | 179 |
| Ծանօթութիւն զանազան կարգադրութեանց մաքսատան ...... .... .... .... | իբ | 182 |
| Ցուցակ ամսական վարձուց շտեմարանի մաքսատան .. .. .. .. .. ...... | | 185 |
| Կարգադրութիւն պակասման իրաց (ափիզէջ կամ ափիլլամի) .. .. .. .. | իգ | 188 |


* Այս գլխակարգութիւն մոռացմամբ չեղաւ յիւրում տեղւոջ, այլ՝ նիւթն պատշաճակեալ ամբողջ կայ անդ. Տպ-գիր.

| | Գլ. | Էջ |
|---|---|---|
| Կարգադրութիւն վաճառականաց ՚ի գնելն և ՚ի վաճառելն .... .. .. .... | ժդ | 193 |
| Նոր օրէնք .. .. .. .. .. | ժե | 199 |
| Ընտանիք մեծի և փոքու պաշտօնատարացն՝ որովք կառավարին Հնդիկ Հոլանդացւոց և կատարին ամենայն գործք տէրութեան .. .. | ժզ | 204 |
| Համառօտ քաղուած գալստեան Եւրոպացւոց ՚ի կղզին Ջավայ. և նշանաւոր եղելոցն ՚ի ժամանակս երից և կէս դարուց .. .. .. | ժէ | 217 |

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ԲԹԱՎԻԱ

| | |
|---|---|
| ՆՈՒԻԱՀԱՆԴԻՈՍ, գետ, փողոց և շինութիւն .. | 235 |
| Սահման Բաթավիոյ. բաժանումն և օդ .. .. | 261 |
| Ջուրք. բերք. կառավարութիւն .... .. | 263 |
| Կարգադրութիւն ընդդէմ վտանգաւոր պատահարաց .. .. .. .. .. | 266 |
| Լեզու. ծանօթութիւն Հոլանդացւոց լեզուի | 267 |
| Կրօն .. .... .. .. .. .. | 273 |
| Միջոց ապրուստի Եւրոպացւոց ...... .. | 274 |
| Բարք, սովորութիւն և կենցաղավարութիւն Հոլանդացւոց ...... .... .... | 280 |
| Ամուսնութիւն, ծնունդ և մահ քրիստոնէից . | 282 |
| Ցուցարկաւորութիւն կամ թաղումն ...... | 289 |
| Օրէնք յետ մահու առն և կնոջ ...... .... | 290 |
| Բաժանումն ստացուածոց ՚ի ժառանգաւորս անկտակ մեռելոց .... .... .... | 294 |
| Իրաւունք ժառանգութեան ապօրինաւոր զաւակաց .. .... .... ...... | 297 |
| Իրաւունք առն և կնոջ յետ մահու միոյ կամ միւսոյն ...... ...... ...... | 299 |
| Օրինադրութիւն վասն կտակակատարաց .... | 301 |
| Կարողութիւն սննկի որբոց .. .... .... | 303 |
| Հաստատութիւն կտակի .... .. .... | 304 |

Նորեկ օտար քրիստոնեայք .. ...... .. 306

Օրինադրութիւն վասն Նորեկ օտար քրիստոնէից 308

Երկրականք Բաթաւիոյ .... .... .. 310

Պատճառ խստամբակ վարուց մալայացւոց և գերեաց յառաջ ժամանակին ...... .... 312

Զգեստ, բնակարան և կարասի, կենցաղավարութիւն և կրօնապաշտութիւն մալայացւոց. 314

Ամուսնութիւն և մահ մալայացւոց .. .. 319

Թաղումն մեռելոց ...... ...... .. 322

Նորաձև տունք Բաթաւիոյ. կարասիք և ծախք Եւրոպացւոց .. .... ...... .... 322

Դրամք, չափք և կշիռք .......... .. .. 330


ՎԵՐՋ

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԻԿԱՆՍ

ՓԱՌՔ, պատիւ եւ գոհութիւն ամենասուրբ Երրորդութեանն, որ արժանի արար զնուաստութիւն մեր 'ի կատար հասուցանել զայս պիտանի եւ պատուական մատենիկ՝ անուանեալ ՋԱՂԱ՝ յաշխատասիրութենէ Արժանապատիւ Պարոն Գէորգայ Ա. Զաքարեանց Նոր Ջուղայեցւոյ, բազմաշխատ գիտնականին բնակելոյ 'ի Թավլիս։

Զպատուականութենէ որոյ՝ համառօտիւ որքան եւ հնար լիցէ ասել, ասեմք. զի եթէ ոք քսանամեայ եւ աւելի բնակիցէ ուրեք, ոչ կարէ անձամբ անձին քաղել զայնքան օգտակար ծանօթութիւնս զբնական եւ զգրական հանգամանաց աշխարհին, զկենցաղավարութենէ ժողովրդոց, եւ զպէսպիսութենէ օրինացն՝ որքան միանգամ եւ եթ մտադիր վերծանութեամբ սորուն։

Պատուելի Հեղինակն յետ բազմամեան աշխատանացն 'ի վերայ գործոյն՝ տուլին շրջաբերականաւ մատուցանէ զայն պատուելի հասարակութեան ազգի մերոյ՝ 'ի Ջուղա։

Պատուելի Ազգ. Հայոց Բնակեալ 'ի Ջուղա.

Կցորդեալ ընդ այս՝ առաջի ամենեմ՝ պատուելութեան ձերոյ զՄակարիր եւ զՍուշերձ նորոգ աշխատեալ գործոյ իմոյ 'ի վերայ սոյն կղզւոյ, զոր ընչին երկն ծառայութեան իմոյ՝ ա-

ուղարկեալ եմք Աստուծով 'ի լոյս ընծայել 'ի Կալկաթա , անուամբ պատուելի Համազգեացդ իմոց ․ որ և յուսամ դիւրելոց է ձերում բարեհաճ հաւանութեան ․

Ըստ որում 'ի ծախս տպագրութեան սորա վասն հինգ հարիւր օրինակաց հարկաւորի ըստ ծանուցանելոյ արժանահաւատ անձին՝ անդ ․ իբրև մի հազար հինգ հարիւր Գիլդր ․ և զայս անբաւական անձամբս անձին հոգալոյ՝ համարձակիմ դիմել առ Պատուելիսդ իմ խնդրելով զի ամենայն ոք ըստ իւրում կարեաց եւ յօժարութեան հաճելոց է 'նպաստել 'նմին , որով հնար լիցի զայս բարի առաջադրութիւն 'ի գլուխ հանել ․

Արդ դիտումն մեր է յանձնել զաշխատութեան տպեցման մատենիկիս՝ Յարգելի Վերատեսչին Արարատեան Աշխարհի 'ի Կալկաթա , զի յետ տպմանն , որպէս զհարիւր օրինակս 'ի պէտս պատուելի խմբի մերոյ այսր՝ զմնացեալն ընծայել նոյն օրագրի Բազմաշխատ և Գիտնական Վերատեսչին՝ Պարոն Մեսրովբայ Դ․ Թաղիադեանց ․ զի 'ի վաճառմանէ և արդեանց նորին՝ թերևս կարողասցի 'նա 'ի լոյս ընծայել զմի 'ի յերկուց թերակատար տպագրութեանց իւրոց , որք են՝ կամ զմնացորդս Ճանապարհորդութեան իւրոյ ․ կամ զերկրորդ հատորն Պատմութեան Հնդկաստանու ․ և կամ զերկասին 'ի միասին , եթէ առատասցին արդիւնք ․ Կատարելով ձեր զայս խնդիր իմ ․ պարտական կացուսջիք զիս երախտապարտ սիրոյ ձերում ․ Եւ ես եմ

Պատուելի համազգեացդ իմոց

'Ի ԲԹԱՎԻԱ Հաւատարիմ և Խոնարհ Ծառայ

Յուն․ 18․ 1849 ԳԷՈՐԳ Ա․ ԶԱՔԱՐԻԱՅ

Իսկ որ իւրօք յօժարեցան թէ անուամբք և թէ արդեամբք իւրեանց կենագործել զմատակ Հեղանակին առ 'ի լոյս և յօգուտ լուսութեան ազգիս՝ են հետագայ պատուելի Համազգիք մեր 'ի Ջաւա ․ որոց վարձս բարեաց պարգևեսցէ ամենեցուն Բարերարն՝ երկնաւոր և երկրաւոր օրհնութեամբք՝ ամէն ,

| | Գ. Ի. | | Գ. Ի. |
|---|---|---|---|
| Տէր Գ. Ա. Բարաղամեան | 15 | Ստեփաննոս Մարտիրոս .. | 20 |
| Բ. Անդրէասեան ....... | 200 | Մ. Ս. Ճէհրիմանեան .. | 50 |
| Յ. Ս. Մկրտչեան .... | 50 | Մարգար Սուքիասեան .. | 100 |
| Յովհան Յարութիւն .. | 25 | Պօղոս Անդրէասեան .. | 200 |
| Գրիգոր Յովսէփեան .. | 50 | Աղէքսանդր Ստեփանոս .. | 20 |
| Մինաս Գ. Յովակեմ .. | 20 | Կոռնէլիոս և Դանիէլ Յ. Յովհաննիսեան .... | 40 |
| Մարիամ Յ. Յարութիւն և Թագուհի Մանուկ | 200 | Կարապետ Անդրէասեան | 50 |
| Գէորգ Ջօրաքեան .... | 15 | Ստեփաննոս Յարութիւն | 25 |
| Մանուկ Որդանանեան . | 50 | Յարութիւն Յ. Ղարիբ | 10 |
| Նիկողայոս Մարտիրոսեան | 5 | Պետրոս Ն. Մարտիրոս .. | 10 |
| Գալուստ Մարտիրոսեան | 50 | Մանուկ Կոստանդեան .. | 5 |
| Յովհաննէս Բ. Ծատուր | 15 | Ծատուր Ա. Թովմասեան | 15 |
| Ղազար Յովհանեան .. | 50 | Ա. Պ. Աշանուրեան .... | 25 |
| Մկրտիչ Յ. Եղիկ .... | 50 | Գումարի | 1365 |

Կատարեցաւ տպագրութիւն սորա յամի Տեառն 1852 ի Մարտի 20, որ լինէրորդ էր հայրապետութեան Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ Առաքելաշաւիղ կաթուղիկոսի ամենայն Հայոց, և երկրորդ առաջնորդութեան սրբոյ վանիցն Ամենափրկչի տեառն Թադէոսի Բէկնազարեանց՝ արք եպիսկոպոսի.

Յորմէ եթէ բարի ինչ այն Աստուծոյ և ազգին՝ պատիւ. իսկ եթէ թերութիւն՝ զայն մերումս մնաւոր և բազմազբաղ տկարութեան տուեալ՝ զներումն շնորհել առատացարուք, զի և դուք թողութեան արժանասջիք. ամէն.

Ս. Պ. ԹԱՂԻԴԵԱՆՑ

0003944